

ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՒՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN "HAYBUSAK" UNIVERSITY

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Հատոր 8, 2023



YHU SCIENTIFIC JOURNAL

Vol 8, 2023

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

SOCIAL SCIENCES

ԵՐԵՎԱՆ - YEREVAN - 2023

Խմբագրական խորհուրդ.

Աբրահամյան Մարտին – ֆիզմաթ գդ, պրոֆեսոր, գլխավոր խմբագիր

Բոստանջյան Վարդան – տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Եղիազարյան Անուշ – մանկավարժական գդ, պրոֆեսոր,

Պետրոսյան Հայկ – մանկավարժական գդ, պրոֆեսոր

Պետրոսյան Տիգրան – կենսաբ. գթ, դոց, խմբագիր

Սաֆարյան Գառնիկ – իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր,

Ղազարյան Հայկ – ֆիզմաթ գդ, պրոֆեսոր

Վահրադյան Հասմիկ – կենսաբ.գդ, պրոֆեսոր

Գասպարյան Հրաչիկ – քիմ. գթ, դոցենտ

Հովհաննիսյան Եվա – հոգեբ. գթ, դոցենտ

Մալխասյան Լիանա – իրավաբ. գթ,

Բալայան Նաիրա – բան. գթ, դոցենտ

Բալոյան Մարիանա – բան. գթ. դոցենտ

Օտարերկրյա անդամներ՝

Balasanyan Diana – Dr. Pedagogy, PhD philology, La Laguna University, Spain

Babayan Arsen – Dr. med., Head of Spaine & Joint Center, Munch, Germany

Mohammad Arus – Dr. med., Neurosurgical Center, Hamburg, Germany

Oliver Seeman – Dr. med., Spitaler Schaffhausen, Psychiatriezentrum Breitenau, Switzerland

Noble K Kuran – PhD Biotechnology, Pandakasalayil Hill View Kampancode, Kollam, Kerala, India

Maria Angelo-Kattar - M.D, Ph.D, M.Sc., Dermatology Overseas Director, American Academy of Anti-Aging Medicine Dermatologist, Shape Clinic, Kuwait

ԵՀՀ Գիտական հանդես, հատոր 8, 2023, Երևան: Էդիթ Պրինտ, 2023, 196 էջ

Հանդեսը պարունակում է Երևանի «Հայբուսակ» համալսարանի ակադեմիական համակազմի, այլ բուհերի և գիտական հիմնարկների գիտական և գիտամեթոդական աշխատանքներ՝ տնտեսագիտության, մանկավարժության և հոգեբանության, բանասիրության, իրավագիտության, բժշկագիտության ու բնական գիտությունների ոլորտներում:

ISSN 2953-8181

© «Հայբուսակ» հրատ., 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բոստանջյան Վ., Կիրակոսյան Գ. - ՀՀ-ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ	5
Մկրտչյան Լ. - ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	14
Մաճկալյան Ա. - ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ – ՈւՄ	19
Манукян К., Геворгян Г. - ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ АГРОТУРИЗМА В РА	24
Գվիդոնյան Կ., Գեվորգյան Գ. - ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	31

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ և ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սահակյան Ա. - ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԿՐՏԱԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ	37
Պետրոսյան Բ. - ՇԵՂՎԱԾ ՎԱՐՔՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՍՈՑԻԱԼ - ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	45

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Բալայան Ն. - ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԵՐԳԻԾԱՆՔՈՒՄ	51
Балоян М. - ДИССОЦИАЦИЯ ЛИЧНОСТИ В РАССКАЗЕ “ДРУГОЙ Я” ВАНЯ ВЭЙЛАНЯ	61
Ohanyan L. - UNHAPPILY EVER AFTER: THE UNIQUE PERCEPTION OF MORALITY IN ANDERSEN’S FAIRY	68
Khachatryan Ye. - ESTUARY ENGLISH AND ITS LINGUISTIC FEATURES AS AN ACCENT	73
Եղիազարյան Ա., Ստեփանյան Ա. - ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԳԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	78

ԻՐԱՎՈՒՆՔ

Սաֆարյան Գ., Մալխասյան Լ. - ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ	88
Սաֆարյան Գ., Հարությունյան Լ. - ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՌԻԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱՀԱՍԿԱՅՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ	99
Սիրունյան Ռ. - ԺԱՌԱՆԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲՆԱԳԱՎԱՌ	120
Մուրադյան Գ. - ՎԻԵՏՆԱՄԱԿԱՆ ԵՎ ԱՖՂԱՆԱԿԱՆ ՍԻՆԴՐՈՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ	132
Թորոսյան Վ., Մարտիրոսյան Ն. - ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՕՐՈՔ....	141
Ստեփանյան Հ. - ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ	152
Առաքելյան Գ. - ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ և ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ...	161
Մուրադյան Մ. - ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ	170
Մարինոսյան Յա. - ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ	180
Մարինոսյան Յա. - ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆ ԻՋՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	189

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.61484/29538181-ss.8.23-5

ՀՀ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Վարդան Բոստանջյան, Գևորգ Կիրակոսյան

*Երևանի պետական համալսարան
Ընդունված է տպագրության, 01.08.2023*

Ամփոփագիր. Ուսումնասիրված է ՀՀ սպառողական վարկերի շուկան: Վերլուծության է ենթարկվել սպառողական վարկերի ծավալը և կառուցվածքը, այդ ուղղությամբ վարկավորման հիմնախնդիրներն ու դրանց լուծման ուղիները: Քննարկվել են պատասխանատու վարկավորման իրականացման հիմնական մոտեցումները և ներկայացվել են այդ ուղղությամբ կոնկրետ առաջարկություններ:

Հիմնաբառեր. բանկային համակարգ, վարկավորում, ֆինանսավարկային կազմակերպություններ, վարկային միջոցներ, վարկունակություն, ֆինանսական կայնություն

Պատասխանատու վարկավորման համատեքստում հատկապես առանձնանում են սպառողական վարկերը, որոնք հանդիսանում են վարկատու կազմակերպությունների հետ բնակչության հարաբերությունների արդյունք՝ փոխառու միջոցների ներգրավման ու սպառողական նպատակներով օգտագործման հետ կապված: Հարկ է նշել, որ վարկավորման այս տեսակը մյուսների համեմատությամբ ունի որոշակի առանձնահատկություններ: Վարկատու կազմակերպությունները, որպես կանոն, հիմնականում ցածր տոկոսադրույքով վարկավորում են այն հաճախորդներին, որոնք ունեն կայուն եկամուտ, դրական վարկային պատմություն կամ, այլ խոսքով, ռիսկայնության ցածր մակարդակ: Բնակչության մի զգալի հատված, հիմնականում սոցիալապես խոցելի խավերի ներկայացուցիչներ, ովքեր չեն բավարարում նշված պայմաններին, վարկատու կազմակերպությունների կողմից դիտարկվում են որպես ռիսկային հաճախորդ և հնարավորություն են ունենում ստանալ միայն բարձր տոկոսադրույքներով վարկեր: Սպառողական վարկերի արդյունավետ տոկոսադրույքներն, ի տարբերություն մյուս վարկատեսակների, համեմատաբար բարձր են:

Ընդհանուր առմամբ, որոշ վարկատեսակների ռիսկայնությունը մյուսների համեմատությամբ ավելի բարձր է՝ պայմանավորված գերվարկավորման հնարավորությամբ: Այսինքն, նման վարկերի մարման համար շատ հաճախ վարկառուները հարկադրված են նոր վարկեր ձևակերպել: Դա, իր հերթին,

նպաստում է բնակչության սոցիալական վիճակի վատթարացմանը՝ դրանից բխող բացասական հետևանքներով: Նման զարգացումներից խուսափելու համար կարևոր նշանակություն է ձեռք բերում պետական կարգավորումը՝ այդ թվում նաև սպառողներին նման վարկավորումից զերծ պահելու և պաշտպանելու համար: Տարբեր վերլուծությունները ցույց են տալիս, որ հատկապես սպառողական վարկերը պարունակում են լուրջ ռիսկեր: Դրա մասին են վկայում այդ վարկերի միջին տարեկան արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև վարկերի նվազագույն չափերն ու ժամկետները, որոնք շատ դեպքերում անհամատեղելի են պոտենցիալ հաճախորդների միջին վիճակագրական ամսեկան եկամտի հետ: Սպառողների կողմից վարկային պարտավորության կատարման անհնարինության կամ դժվարության դեպքում նրանք վերաձևակերպում են վարկը, դրանում ներառելով նախկին վարկի չմարված մասը և տոկոսները, կամ վերցնում են նոր վարկ՝ նախկինը մարելու համար: Արդյունքում, սպառողները ստիպված են լինում անընդհատ մարել նույն «թարմացված» վարկը: Անշուշտ, դա չափազանց ռիսկային է, քանի որ սպառողը կարող է հայտնվել սոցիալական առումով վտանգավոր ու խոցելի իրավիճակում:

Ընդհանուր առմամբ, վարկային միջոցների մատչելիությունը շատ հաճախ դիտարկվում է որպես ֆինանսական ծառայությունների շուկա մուտքի ընդլայնման կարևոր միջոց: Այս առումով, ֆինանսական հասանելիության գնահատման ցուցանիշներից մեկն է հանդիսանում մանրածախ վարկերի ծավալը: Վարկային միջոցների հասանելիությունը բնակչության համար ապահովում է ավելի շատ հնարավորություններ սեփական տնտեսական ծրագրերի իրականացման համար: Միաժամանակ, պետք է նկատի ունենալ, որ սպառողական վարկերի գծով պարտքի մեծ ծավալը բնակչության համար կարող է ունենալ բացասական հետևանքներ: Վերջիններս հիմնականում դրսևորվում են մանրածախ վարկային պրոդուկտների ոչ պատասխանատու տրամադրման և օգտագործման պատճառով: Միևնույն ժամանակ, մի շարք գործոններ կարող են բացասաբար անդրադառնալ հաճախորդների կողմից վարկային միջոցների ձեռքբերման հետ կապված պատասխանատու որոշումների կայացման վրա՝ հանգեցնելով պարտքի անկառավարելի աճի:

Սպառողական վարկավորման փորձը ցույց է տալիս, որ վարկառուները շատ հաճախ թերագնահատում են սպասվելիք պարտքային բեռը և գերագնահատում են այն սպասարկելու սեփական հնարավորությունները: Տնային տնտեսությունները երկարաժամկետ հատվածում կայուն և որակյալ կենսապայմաններ ապահովելու նպատակով ներգրավվում են վարկային միջոցներ: Հայտնի է, որ եկամուտները, որպես կանոն, ավելանում են մարդու տնտեսական ակտիվ կյանքի սկզբնական փուլում և գնալով նվազում են ծերության տարիքում: Դրանով պայմանավորված, ներգրավվող պարտքը հնարավորություն է տալիս տնային տնտեսություններին հարթեցնել սեփական

ծախսերը կյանքի ընթացքում: Սակայն նրանցից շատերը կուտակում են ավելի շատ պարտքեր, քան այն մարելու կարողություններն են:

Պարտքի կուտակման առաջին գործոնը ֆինանսական անզգուշությունն է, որի հետևանքով կայացվում են ֆինանսական վատ որոշումներ: Այն, իր հերթին, կապված է վարկի մարման իրական ծավալի մասին ոչ համարժեք պատկերացումների հետ: Վարկավորման պայմանների թափանցիկության անբավարար մակարդակը, ֆինանսական գրագիտության ցածր աստիճանը, սեփական ֆինանսներն արդյունավետ կառավարելու անկարողությունը հանդիսանում են եկամուտների և ծախսերի սխալ պլանավորման պատճառներ: Արդյունքում, հնարավոր անբարենպաստ իրավիճակների հավանականության թերագնահատումը նման վարկառուների համար դառնում է վարքագիծ: Պարտքի կուտակման երկրորդ հիմնական պատճառն անկանխատեսելի իրավիճակների առաջացումն է՝ ինչպիսիք են օրինակ եկամուտների անկումը (աշխատանքի կորուստ), չնախատեսված ծախսերը (թանկարժեք բժշկական սպասարկում) և մի շարք այլ պատճառներ: Հաջորդ պատճառն աղքատությունն է, որը դրա մեջ հայտնված մարդկանց ստիպում է իրենց ընթացիկ կարիքները հոգալու համար վերցնել վարկեր՝ չնայած դրանց մարման քիչ հավանականությանը: Սովորաբար դա տեղի է ունենում այն դեպքերում, երբ վարկատուները վարկային պատմության և անհրաժեշտ այլ տեղեկատվության բացակայության պատճառով հնարավորություն չեն ունենում օբյեկտիվ պատկերացում կազմել հաճախորդի ընթացիկ ֆինանսական վիճակի մասին: Ավելին, շատ հաճախ վարկի պահանջմունքն առաջանում է հենց մեծ ծավալի պարտքի պատճառով:

Ընդհանուր առմամբ, գոյություն ունեն պարտքի գնահատման տարբեր միջոցներ: Եվրոպական Միության անդամ երկրներում այն չափվում է հետևյալ չորս հիմնական հատկանիշներից ելնելով [1]:

- տնտեսական (պարտքի մարման գումար),
- ժամանակային (միջինժամկետ և երկարաժամկետ),
- սոցիալական (մինչև պարտքի մարումը իրականացվելիք հիմնական ծախսերը),
- հոգեբանական (պարտքի պատճառով առաջացող սթրեսը):


Պարտքի գնահատման համար անհրաժեշտ է համադրել մի քանի չափանիշներ: Եվրոպական հանձնաժողովի կողմից 2010 թվականին փորձ է կատարվել մշակել չափից շատ պարտքի համընդհանուր սահմանում, որը կիրառելի կլինի ինչպես ԵՄ անդամ պետությունների, այնպես էլ այլ երկրների համար [2]: Մասնավորապես, առաջարկվում է տնային տնտեսությունները համարել չափից շատ պարտքային պարտավորություններ ունեցող, եթե առկա և ակնկալվող ռեսուրսները բավարար չեն առանց կենսամակարդակի նվազեցման ֆինանսական պարտավորությունները կատարելու համար: Պարտքի չափման միավորը պետք է լինի տնային տնտեսությունը, քանի որ

առանձին անձանց եկամուտները սովորաբար միավորվում են մեկ տնային տնտեսությունում: Բացի այդ, դիտարկվող ցուցանիշները պետք է ընդգրկեն տնային տնտեսությունների ֆինանսական բոլոր պարտավորությունները. փոխառություններ, սպառողական վարկեր, վարձավճարներ և այլն: Հարկ է նշել, որ չափից շատ պարտքը ենթադրում է ընթացիկ ծախսերի իրականացման անկարողություն և, հետևաբար, պետք է դիտարկվի որպես կառուցվածքային, այլ ոչ թե ժամանակավոր վիճակ: Սեփական ֆինանսական պարտավորությունների կատարման համա տնային տնտեսությունը պետք է էապես կրճատի իր ծախսերը կամ գտնի եկամուտների ավելացման ուղիներ:

Տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ չափից շատ պարտքի դիսկը հատկապես աճում է վարկառուի համար անբարենպաստ տնտեսական պայմանների ձևավորման դեպքում, ինչի հետևանքով մեծ փոփոխությունների են ենթարկվում եկամուտները և ծախսերը [3]: Դրա հավանականությունը հատկապես բարձր է այն վարկառուների համար, ովքեր վարկային միջոցներ են ներգրավում հիմնականում ոչ բիզնես նպատակներով, ինչպես նաև աչքի չեն ընկնում ֆինանսական գրագիտության բարձր մակարդակով: Մինչդեռ, դրա բացասական հետևանքներն անդրադառնում են ոչ միայն կոնկրետ անձի, այլև հասարակության վրա: Վերջինիս տեսանկյունից չափից շատ պարտքը դրսևորվում է հետևյալ ասպեկտներով՝ ունենալով որոշակի հետեւանքներ.


- *տնտեսություն*. չափից շատ պարտքը դանդաղեցնում է տնտեսական աճը և զարգացումը, սահմանափակելով վարկերի հետագա հասանելիությունը,
- *սոցիալական*. չափից շատ պարտքը և դրամական հոսքերի անկումը հանգեցնում են սոցիալական շերտավորման խորացմանը, ինչպես նաև աղքատների համար հնարավորությունների կրճատմանը,
- *քաղաքական*. կարգավորող մարմինների կողմից չափից շատ պարտքի սահմանափակման անկարողությունը կարող է ստանալ քաղաքական երանգ,
- *արդարության ընկալում*. վարկատուները կարող են դիտարկվել որպես պատասխանատվությունից ազատված արտոնյալներ, իսկ նրանց կողմից խաբված հաճախորդները՝ պաշտպանությունից զրկվածներ:

Հայաստանում սպառողական վարկավորման իրավական հիմքերը սահմանվում են 2008 թվականին «Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքով, որն ուղղված է ֆինանսական ոլորտում սպառողների իրավունքների պաշտպանությանը, ֆինանսական համակարգի նկատմամբ հանրության վստահության բարձրացմանը և ֆինանսական միջնորդության ավելացմանը [4]:



Գծապատկեր 1. Ռեզիդենտների տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ տեսակային խմբերի [5]

Օրենքով տրվում է կրեդիտավորման պայմանագրի հասկացությունը, կարգավորվում են կրեդիտավորման պայմանագրերից բխող հարաբերությունները, դրանց տեսակների առանձնահատկությունները և պարտադիր պայմանները, տարեկան տոկոսադրույքի հաշվարկման կարգը և պայմանները, կրեդիտավորողի պատասխանատվությունը, սպառողների իրավունքները և այլ պայմանագրերի հետ կապված այլ հարաբերություններ:



Գծապատկեր 2. Բանկերի և վարկային կազմակերպությունների հիպոթեկային և սպառողական վարկային պորտֆելը [5]

ՀՀ-ում ընդհանուր վարկերի կառուցվածքում սպառողական վարկերի տեսակարար կշիռը բավականաչափ բարձր է: Ընդ որում, այն վերջին տա-

րիներին ունի դանդաղ, սակայն կայուն աճի միտում (տես գծապատկեր 1) :

Ընդ որում, սպառողական վարկերի աճի տեմպերը հատկապես արագացել են 2018-2020 թվականներին (տես գծապատկեր 2) :

2021 թվականին սպառողական վարկերը նվազել են շուրջ 11%-ով, որոնց աճի տեմպը դանդաղ է վերականգնվում հիմնականում հաճախորդների վարկունակության վատթարացման, բանկերի կողմից որոշ սպառողական վարկատեսակների պայմանների խստացման պատճառով:


Սպառողական վարկերի վարկավորման պայմանների դյուրացմանը զուգահեռ ընդլայնվել է վարկային պրոդուկտների տեսականին, որոնք նպաստել են սպառողական վարկավորման աշխուժացմանը տարեվերջին: Սպառողական վարկերի պահանջարկի վրա դրական ազդեցություն են ունեցել ընդհանուր տնտեսական ակտիվացումը և երկարաժամկետ օգտագործման ապրանքների պահանջարկի աճը, ընդ որում՝ վերջինս մասամբ կապվում է նոր բնակարանների ձեռքբերումների աճի հետ: Թեև 2021թ. Սպառողական վարկերի ծավալի նվազմանը, այդուհանդերձ, դրանց աճի դինամիկան վերջին տարիներին ակնհայտ է: Մասնավորապես, 2020 թվականին սպառողական վարկերը նվազել են 1 տոկոսով, նախորդ տարվա 30 տոկոսի աճի պարագայում [6]:

ՀՀ-ում սպառողական վարկերը հիմնականում տրամադրում են բանկերը, իսկ վարկային կազմակերպությունների ու գրավատների մասնաբաժինը բավականաչափ համեստ է:

Աղյուսակ 1. Վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի տրամադրման պայմանները

Անվանումը	Վարկի տոկոսադրույքը	Տրամադրվող գումարի չափը	Ժամկետայնությունը
Արֆին	74 - 141%	100,000-200,000	1-12 ամիս
Բլեսս	32.8- 36.1%	150,000 – 300,000	18-24 ամիս
Կամուրջ	25.47 – 76.46%	Մինչև 2,500,000	1-36 ամիս
Կրեդիտ Կոնցեպտ	25.75 – 37.32%	150,000 – 5,000,000	-
ՄԵՖ Ինտերնեյշնլ	34 - 40%	10,000 – 3,000,000	Մինչև 60 ամիս
Նոր Հորիզոն	31.47 – 51.5%	50,000 – 1,000,000	6 - 24 ամիս
Նորման Կրեդիտ	16.3 – 43.44%	100,000 10,000,000	- 6-36 ամիս
Պրեմիում Կրեդիտ	47.12 – 57.23%	5000 – 750,000	1-36 ամիս
Սմայթ Կրեդիտ	44.92 – 50.07%	100,000 – 1,000,000	6 - 24 ամիս
Ֆասթ Կրեդիտ	23.12 – 42.49%	5000 – 500,000,000	24 ամիս
ԱԵՍ Կրեդիտ	26.2 – 33.1%	100,000 – 1,000,000	Մինչև 24 ամիս

Ընդ որում, վարկային կազմակերպությունների կողմից սպառողական վարկերի տրամադրման պայմանները բավականաչափ խիստ են: Դա հատկապես վերաբերում է վարկի տոկոսադրույքային և ժամկետայնությանը (տես աղյուսակ 1):



Գծապատկեր 3. Տնային տնտեսությունների պարզավորությունների կառուցվածքը [6]

Կատարված վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ-ում սպառողական վարկերի ծավալները զգալի տեղ են զբաղեցնում ընդհանուր վարկավորման կառուցվածքում և շարունակական աճի միտում ունեն: Անշուշտ, բնակչության սոցիալական վատ վիճակի և աղքատության բարձր մակարդակի պայմաններում դա կարող է հանգեցնել որոշակի ռիսկերի առաջացման, որոնք կարող են լուրջ մարտահրավեր կամ սպառնալիք հանդիսանալ տնտեսության համար:

Հաշվի առնելով վարկերի նվազագույն չափը և դրանց տրամադրման ժամկետները, ակնհայտ է դառնում, որ ՀՀ-ում հաճախորդների զգալի մասի համար նման պայմաններով տրամադրված վարկերի մարումը բավականաչափ ծանր բեռ է (տես աղյուսակ 1): Հատկապես կարճաժամկետ սպառողական վարկերն օգտագործում են համեմատաբար ցածր կամ անկայուն եկամուտ և վարկային վատ պատմություն ունեցող ռիսկային հաճախորդները: Վարկային կազմակերպությունները բանկերի համեմատությամբ կարճաժամկետ սպառողական վարկեր տրամադրում են զգալիորեն բարձր միջին տարեկան արդյունավետ տոկոսադրույքով և, այդ տեսանկյունից, ձեռնտու չեն: Սակայն դրանց պոտենցիալ սպառողներ են հանդիսանում ռիսկային հաճախորդները: Այլ կերպ ասած, այս դեպքում ռիսկը փոխհատուցվում է բարձր տոկոսադրույքով: Սա է պատճառը, որ ռիսկային հաճախորդները հիմնականում օգտվում են վարկային կազմակերպությունների ծառայություններից: Այլ խոսքով, սպառողական վարկավորման ծավալների ավելացման նկատմամբ վարկատու կազմակերպությունների հակվածությունը կապված է տվյալ սեգմենտի բարձր շահութաբերության հետ:

ՀՀ ԿԲ գնահատականներով, վարկային բեռը չպետք է գերազանցի ամսական եկամուտների 40-60 տոկոսը, որի դեպքում միայն այն չի համարվի ռիսկային: Համաձայն Կենտրոնական բանկի կողմից սահմանված պահանջի, 300,000 դրամը չգերազանցող սպառողական վարկեր տրամադրելիս վարկատուները պետք է գնահատեն սպառողի պարտավորությունների ամսական գումարի և սպառողի ամսական եկամտի հարաբերությունը և վարկը տրամադրեն միայն այդ հարաբերության 50%-ը չգերազանցելու դեպքում [7]: Անշուշտ, դա դրական քայլ է տվյալ խնդրի լուծման ուղղությամբ, չնայած չի ապահովում ամբողջական և համապարփակ լուծում:

ՀՀ-ում սպառողական վարկերի մեծ ծավալը և դրա աճի միտումները բնակչության սոցիալական վիճակի և աղքատության բարձր մակարդակի պայմաններում կարող են հանգեցնել որոշակի ռիսկերի առաջացման՝ սպառողիք հանդիսանալով տնտեսության համար: Դրա կանխումը պահանջում է մակրոպրոդեցիալ քաղաքականության գործիքների և միջոցների արդյունավետ կիրառում, ինչը հնարավորություն կտա սահմանափակել ռիսկերի առաջացումը և բարձրացնել ֆինանսաբանկային կազմակերպությունների ֆինանսական կայունության մակարդակը:

Դիտարկված հիմնախնդրի հետազոտության արդյունքում անհրաժեշտ ենք համարում հետևյալ քայլերի իրականացումը.

Սպառողական վարկերի շուկայում կառավարելիության անհրաժեշտ մակարդակի ապահովումը ենթադրում է կարճաժամկետ և երկարաժամկետ նպատակների սահմանում և դրանց ուղղված քայլերի իրականացում: Կարճաժամկետ հատվածում հիմնական քայլեր պետք է հանդիսանան Կենտրոնական բանկի կողմից մակրոպրոդեցիալ կարգավորման գործիքների կիրառումը՝ ֆինանսաբանկային մարմինների նկատմամբ նորմատիվային պահանջների սահմանմամբ: Երկարաժամկետ հատվածում սպառողական վարկերի նկատմամբ բնակչության պահանջարկի, հետևաբար նաև դրանց ծավալների կրճատումը առավելապես պայմանավորված է բնակչության եկամուտների աճով, ինչը պետության տնտեսական ու սոցիալական քաղաքականության հիմնական թիրախներից մեկը պետք է հանդիսանա:

«Սպառողական կրեդիտավորման մասին» օրենքում պետք է ամրագրել, որ կրեդիտը մարելու նպատակով սպառողի կողմից վճարման ենթակա վճարումները, տոկոսները և այլ պարտադիր վճարների գումարի չափը, թիվը, հաճախականությունը կամ ժամկետները, ինչպես նաև այդ վճարումների ամբողջ (ընդհանուր) գումարի չափը նախապես և պայմանագրի կնքման ժամանակ կրեդիտավորողի կողմից պարտադիր կերպով գրավոր և բանավոր կերպով, մատչելիորեն ներկայացվում է սպառողին:

Սպառողական վարկավորման նպատակով ապրանքները ապառիկ կարգով ձեռք բերելու դեպքում միմյանց զուգահեռ ու նույն տառաչափով պետք է գնանշվեն ինչպես կանխիկ վաճառքի գինը, այնպես էլ ապառիկ

ձեռքբերման գինը՝ ներառյալ սպառողական վարկի տրամադրման ժամանակահատվածում կատարման ենթակա մարումները և բոլոր տեսակի, այդ թվում նաև սպասարկման վճարները:

Գրականություն

1. Responsible Lending. Overview of Regulatory Tools. THE WORLD BANK. www.worldbank.org
2. European Commission (2010), Over-indebtedness: New evidence from the EU-SILC special module, Research note 4)2010.
3. Schicks Jessica, Over-Indebtedness In Microfinance – An Empirical Analysis of Related Factors on the Borrower Level, 2012, Centre for European Research in Microfinance (CERMi).
4. «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենք
5. Ֆինանսական կայունության հաշվետվություն 2021
6. Ֆինանսական կայունության հաշվետվություն 2020
7. «Երեք հարյուր հազար դրամը չգերազանցող սպառողական կրեդիտների տրամադրման ընթացքում սպառողների վարկունակության գնահատման կանոնների վերաբերյալ» կարգ

В. Бостанджян, Г. Киракосян - ПРОБЛЕМЫ ДЕЯТЕЛЬНОСТИ РЫНКА ПОТРЕБИТЕЛЬСКИХ КРЕДИТОВ РА. Статья посвящена исследованию рынка потребительских кредитов РА. Проанализированы объем и структура потребительских кредитов, проблемы кредитования в этом направлении и пути их решения. Обсуждены основные подходы к осуществлению ответственного кредитования и представлены конкретные предложения в этом направлении.

V. Bostanjyan, G. Kirakosyan - PROBLEMS OF THE RA CONSUMER CREDIT MARKET ACTIVITY. The article is devoted to the research of the consumer loans market of the Republic of Armenia. The volume and structure of consumer loans, the problems of lending in this direction and ways to solve them were analyzed. The main approaches to the implementation of responsible lending were discussed and specific proposals in this direction were presented.

Keywords: banking system, lending, financial and credit organizations, credit facilities, creditworthiness, financial stability

DOI: 10.61484/29538181-ss.8.23-14

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Լուսյա Մկրտչյան

ԵՀՀ, Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ
Ընդունված է տպագրության, 03.07.2023

Ամփոփագիր. ցանկացած երկրում համակարգային ճգնաժամին դիմակայելու համար պետության կողմից պետք է ձևավորվի զարգացման որոշակի մոդել: Կառավարման մարմինները մոդելին պետք է հաղորդեն կոնկրետություն՝ խնդիրների, նպատակների տեսքով, որոնք ամրագրված կլինեն օրենքներով և ընդունված որոշումներով:

Հիմնաբառեր. պետական կառավարում, ճգնաժամային դիսկեր, համակարգային ճգնաժամ, ռազմավարական նպատակ, տնտեսական ծրագիր:

Հայաստանի Հանրապետությունը կոմունիստական տոտալ-պլանային տնտեսությունից ձերբազատվել է և շարժվում է դեպի շուկայական տնտեսության: Այդ շարժման մեջ պետական կառավարումը ձեռք է բերում հատուկ նշանակություն: Համակարգային ճգնաժամից ազատվելու համար պետական ապարատը պետք է ձևավորի զարգացման որոշակի մոդել: Կառավարման մարմիններն այդ մոդելին պետք է հաղորդեն կոնկրետություն՝ տեխնիկա-տնտեսական հաշվարկների, խնդիրների, նպատակների տեսքով, որոնք ամրագրված կլինեն տարբեր օրենքներով, ինչպես նաև ընդունված որոշումների իրականացման համակարգով:

Առանձին հեղինակներ տարբեր կերպ են դասակարգում շուկայական տնտեսության մոդելը: Այսպես, Է. Պ. Դունաևը առանձնացնում է շուկայական տնտեսության 3 հիմնական մոդել՝

1. լիբերալ,
2. սոցիալական կողմնորոշում ունեցող շուկայական տնտեսության,
3. շուկայական տնտեսության սոցիալ-դեմոկրատական:

Դրա հետ մեկտեղ, նա պետության դերի նշանակությունը ուղղակիորեն կապում է համապատասխան մոդելի հետ: Ըստ նրա, «պետության տնտեսական դերը էականորեն տարբեր է տարբեր շուկայական տնտեսության մոդելներում», ուստի, որոշ դեպքերում, պետական կարգավորման և տնտեսական քաղաքականության տարբերությունները կարող են չհամընկնել[1]:

Տնտեսական առումով ազատությունը ենթադրում է երկու կարևոր բաղկացուցիչ՝ օրենքով սահմանված մասնավոր սեփականության իրավունք և որոշումների կայացման ինքնուրույնություն: VIII-IX դդ. Պետության տնտեսական դերը կայանում էր հիմնականում այդ առաջնային իրավունքների

պաշտպանության մեջ:

XIX դարի երկրորդ կեսին ազգային տնտեսությունը հասավ աննախադեպ մասշտաբների: Դարավերջում տեղի ունեցան գիտատեխնիկական խոշոր զարգացումներ, ի հայտ եկան մի շարք նոր ոլորտներ, խորացավ աշխատանքի հասարակական բաժանումը: Այս բոլոր հանգամանքները առաջացրին մակրոմակարդակում հավասարակշռվածության պահպանման, ինչպես նաև հակապարբերաշրջանային կարգավորման անհրաժեշտություն: Շուկա սկսեցին ներթափանցել մոնոպոլիստական համակարգերը: Այս պայմաններում մրցակցության ապահովման նպատակով ԱՄՆ-ում 1890թ-ին ընդունվեցին հակամոնոպոլիստական օրենքներ [2]:

XX դարը նշանավորվեց տնտեսության մեջ պետության դերի առկայության համատարած ամրապնդմամբ [3]: Ի հայտ եկան նոր տեսություններ, օրինակ՝

- ճգնաժամի գլխավոր պատճառ համարվում է արտադրության և սպառման միջև հավասարակշռության խախտումը, խնայողությունների և ներդրումների միջև ծավալների խախտումը և այլն:
- ճգնաժամը պայմանավորված է այն իրավիճակով, որ արտադրության արագ աճը առաջացնում է սպառողական ապրանքների գների իջեցում, որն էլ իր հերթին հանգեցնում է արտադրության միջոցների կրճատմանը:
- գերմանացի տնտեսագետ Ալբերտ Գանը պնդում է, որ ճգնաժամերի պատճառը պայմանավորված է բանկերի սխալ քաղաքականությամբ:
- Հանսենը ճգնաժամերի պատճառները հիմնականում կապում է բանկային կրեդիտների սահմանափակման հետ:
- Զ.Մ. Քեյնսը ճգնաժամերի պատճառը տեսնում է մարդանց խնայողությունների հակվածության մեջ: Այդպիսի հակվածությունն իր հերթին հանգեցնում է պահանջարկի սահմանափակում: Արդյունքում եկամտի նորման լինում է ցածր, որը թուլացնում է արտադրության մեջ կապիտալը ներդնելու ձեռներեցների խթանը:
- ըստ մարքսիստական տեսության՝ ճգնաժամի հնարավորությունը դառնում է ավելի կոնկրետ, քանի որ որոշիչ նշանակություն է ձեռք բերում փողի գործառույթը որպես վճարման միջոց, այլ ոչ թե որպես փոխանակման միջոց:
- բազմաթիվ տնտեսագետներ գտնում են, որ Ռուսաստանը հայտնվել էր համակարգային ճգնաժամում, և դրա համար կային օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներ: Օբյեկտիվ պատճառ էր պլանային տնտեսությունից անցումը շուկայականին, իսկ սուբյեկտիվը՝ անցումային շրջանի սխալ տնտեսական քաղաքականությունը:

XXI դարին բնորոշ է համակարգային ճգնաժամը, որը ոչ թե արտադրության և սպառման միջև ժամանակավոր անհամամասնությունն է, ոչ թե արտադրական կարողությունների ու շուկայի տարողականության միջև խո-

շորամասշտաբ անհամամասնությունը, այլ առաջին հերթին տնտեսական զարգացման գաղափարախոսության փոփոխությունը: Համակարգային ճգնաժամը փոխել է արտադրության, խնայողության և սպառման միջև փոխհարաբերությունները: Խոշոր սոցիալական-տնտեսական ցնցումների գլխավոր պատճառներից մեկն այն է, որ ժամանակին չի սահմանվել վերը նշված փոխհարաբերությունների օպտիմումը:

Որոշ տնտեսագետների կարծիքով ավելի ճիշտ կլինի համակարգային ճգնաժամը դասել «սպեցիֆիկ տնտեսական ճգնաժամերի» խմբին, այսինքն այն ճգնաժամերի, որոնք կապված են շուկայական տնտեսության պարբերաշրջանային զարգացման հետ անուղղակի կապով:

Հակաճգնաժամային կառավարումը մեծապես կախված է տնտեսության կառավարումով: Գործնականում կարող են գոյություն ունենալ սոցիալիստական և շուկայական տնտեսությունների տարբեր տեսակներ: Կարելի է ասել, որ զարգացած և զարգացող երկրների շուկայական տնտեսությունները տարբերվում են ոչ թե զարգացվածության աստիճանով, այլ նյութական բարիքների արտադրության և բաշխման միջոցների մոդելով: Զարգացած երկրների տնտեսությունը զարգանում է որպես երկարատև, փոխկապակցված գործընթաց, իսկ զարգացող երկրների տնտեսությունը առաջանում և զարգանում է որպես մոդել՝ օտարերկրյա կապիտալի, տեխնոլոգիայի և գաղափարախոսության ներդրման արդյունք:

Պետության տնտեսական քաղաքականության նպատակները կարող են հիմնվել ոչ միայն տնտեսական արդյունավետության չափանիշների վրա, այլև կարող են սերտորեն կապված լինել կրոնի, գաղափարախոսությունների, ազգային հարաբերությունների և այլ հարցերի հետ: Տարբեր երկրներ կարող են ունենալ տարբեր տնտեսական նպատակներ: Օրինակ, տնտեսության արագ աճը առաջնահերթ է համարվում զարգացող երկրների համար: Արդյունաբերական երկրներում առաջին պլան են մղվում շրջակա միջավայրի պահպանության և չվերականգնվող ռեսուրսների սպառման կրճատման խնդիրները: Որպես նպատակ կարող է հանդես գալ նաև գործազրկության կրճատումը: Խնդիրների հստակեցումն ու դրանց իրականացումը պահանջում է ճշգրիտ տնտեսական հաշվարկներ, որը պետք է հաշվի առնի երկրի իրական տնտեսության հնարավորությունները: Ազգային նպատակները, որոնք պետք է արտացոլվեն պետության ռազմավորական որոշումներում, մի կողմից պայմանավորված են տարբեր խավերի և խմբերի, մյուս կողմից՝ պետության արտաքին քաղաքականության շահերով: Նպատակադրվածությունը պետական կառավարման համակարգում կարևոր է համարվում դրված նպատակների իրականացման տեսանկյունից: «Շահ» հասկացությունը ներառում է բնակչության առկա պահանջմունքների համակարգը: Նպատակի իրականացման անհրաժեշտ բաղադրամասերն են ռեսուրսները: Տնտեսական անկայունության, քաղաքական անորոշության և ընդհանուր սոցիալ-հոգեբանական լար-

վածության պայմաններում մեծանում է տնտեսական ծրագրի անհրաժեշտությունը, որը հիմնված կլինի այնպիսի գաղափարի վրա, որը կմիավորի մարդու և պետության շահերը: Մարդկային պատմության փորձը ցույց է տվել, որ երկրում ճգնաժամը հաղթահարելու համար անհրաժեշտ է կիրառել այնպիսի միջոցներ, որոնք ընդունելի են հասարակության կողմից և միավորում են նրան: Նպատակադրումը պետական կառավարման գործընթացում դասվում է կառավարչական տեսության և պրակտիկայի ամենաարդիական և կարևոր հիմնախնդիրների շարքին [4]: Հենց հասարակության ներքին վիճակը և նրան հուզող խնդիրներն են հանդիսանում պետական կառավարման նպատակների ձևավորման իրական և արդիական աղբյուրներ:

Համակարգային ճգնաժամերը կառավարելու համար անհրաժեշտ է առանձնացնել գլխավոր ռազմավարական նպատակը, այնուհետև իրականացնել այն՝ հստակ քաղաքականությամբ, միաժամանակ հետևելով, որ դրանք միմյանց հետ լինեն փոխկապակցված, աջակցեն ու փոխլրացնեն իրար: Անհրաժեշտ է նպատակների հիմնավորված սուբորդինացում, այնպես, որ դրանք «աշխատեն» միմյանց համար, որպեսզի մի նպատակի իրականացումը դառնա մյուսի իրականացման աղբյուր: Մյուս կողմից, պետական կառավարման նպատակների հիմնավորվածությունը որոշվում է համապատասխան ռեսուրսներով և ապահովվածությամբ կամ իրավունքով, երբ նպատակներն ամրապնդվում են օրենսդրորեն և կյանքի են կոչվում՝ հիմնվելով օրենքի ուժի վրա:

Նպատակների նկատմամբ հիմնական պահանջներն են՝ բնակչության վստահությունը, նպատակների իրականացման արդյունքների համապատասխանությունը նրանց պահանջմունքներին և շահերին:

Գրականություն

1. Մկրտչյան Լ., Տնտեսության հակաճգնաժամային կարգավորման հիմնական ուղղությունները, Սոցիալ տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում, ՀՊՏՀ –ի գիտաժողովի նյութեր, 2007
2. Кэмпбелл Р. Макконнелл, Стенли Л. Брю, Экономикс, Москва 1997, стр.224
3. Սամյուելսոն Փոլ Ա., Նորդհաուս Ուիլյամ Դ., Տնտեսագիտություն I, «Ապոլոն», Երևան 1995, էջ 68-82
4. Սովարյան Յու., Մենեջմենթ, Երևան, 2016, էջ 61-64,

Люся Мкртчян - ОСНОВЫ АНТИКРИЗИСНОГО УПРАВЛЕНИЯ ЭКОНОМИКОЙ. Чтобы избавиться от системного кризиса в любой стране, государство должно сформировать определенную модель развития. Руководящие органы должны конкретизировать эту модель в виде задач, целей, которые будут закреплены законами и принятыми решениями.

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՄ, հատոր 8, 2023

Ключевые слова. государственное управление, кризисные риски, системный кризис, стратегическая цель, экономический план.

Lusya Mkrtchyan - THE FUNDAMENTALS OF ANTI-CRISIS MANAGEMENT OF THE ECONOMY. In order to get rid of the systemic crisis in any country, the state must form a certain model of development. Governing bodies should give concreteness to that model in the form of problems, goals, which will be fixed by laws and adopted decisions.

Key words. Public administration, crisis risks, systemic crisis, strategic goal, economic plan.

ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ - ՈւՄ

Արմինե Մաճկալյան

ԵՀՀ, Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ
Ընդունված է պայագրության, 03.07.2023

Ամփոփագիր. Ցանկացած երկրի տնտեսական կայունության գնահատման առաջնային կարևորագույն ցուցանիշներից է երկրի գործազրկության մակարդակը: Տնտեսական ճգնաժամը առաջացնում է ոչ լրիվ զբաղվածություն: Գործազրկությունը սոցիալ տնտեսական երևույթ է, երբ տնտեսապես ակտիվ բնակչության մի մասը չի կարող օգտագործել իր աշխատուժը: Ուսումնասիրելով վիճակագրական տվյալները, տրված են առաջարկներ՝ գործազրկության մակարդակը նվազեցնելու համար:

Հիմնաբաներ. գործազրկություն, տնտեսապես ակտիվ բնակչություն, ֆրիկցիոն, աշխատուժ

Տնտեսապես ակտիվ բնակչությունը (աշխատուժը) երկսեռ բնակչության այն մասն է, որն ապահովվում է ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ աշխատուժի առաջարկը:

Բնակչության տնտեսական ակտիվության գործակիցը $K_{տ.ա.կ}$ որոշելու համար տնտեսական ակտիվ բնակչության թիվը պետք է բաժանել բնակչության ընդհանուր թվի վրա հետևյալ բանաձևով [1]

$$K_{տ.ա.կ} = \frac{S_{տ.ա.կ}}{S}$$

Տնտեսական ակտիվ բնակչությունը բաժանվում է երկու կատեգորիայի՝ զբաղվածների և գործազուրկների: Զբաղվածների կատեգորիային է վերաբերվում 16 և բարձր տարիք ունեցող երկսեռ բնակչությունը, ինչպես նաև աշխատունակ ցածր տարիքի բնակչությունը, որոնք ուսումնասիրվող ժամանակաշրջանում

- Կատարում են վարձով աշխատանք, որի դիմաց ստանում են դրամով կամ բնեղեն ձևով վարձատրություն, ինչպես նաև այլ աշխատանք, որը եկամուտ է բերում
- Ժամանակավորապես աշխատանքից բացակայողները հիվանդության կամ արտադրական վնասվածքի, հանգստյան օրերի, հերթական արձակուրդի, այլ տեսակի արձակուրդների, ադմինիստրացիայի նախաձեռնությամբ արձակուրդի, գործուղումների և այլ պատճառներով,
- Ընտանեկան կազմակերպությունում առանց աշխատավարձի վճարման կատարված աշխատանքները:

Զբաղվածության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$K_{qp} = \frac{S_{qp}}{S_{տ.ա.կ}}$$

Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը կարելի է ուսումնասիրել ըստ սեռի և տարիքի:

Գործազուրկների դասին են պատկանում 16 և բարձր տարիք ունեցող այն անձինք, ովքեր ուսումնասիրվող ժամանակաշրջանում

ա) չունեն աշխատանք (եկամտաբեր զբաղմունք) կամ զբաղմունք, որը եկամուտ է բերել

բ) ակտիվորեն փնտրել են աշխատանք (այսինքն դիմել են պետական կամ առևտրային զբաղվածության ծառայություններին)

գ) պատրաստ են եղել անմիջապես աշխատանքի անցնելու

դ) գործազուրկների կազմում ընդգրկում են նաև այն անձանց, ովքեր սովորում են զբաղվածության ծառայության ուղեգրով: Որպես գործազուրկներ են դիտվում սովորողներն ու ուսանողները, հաշմանդամներն ու կենսաթոշակառուները այն դեպքում, եթե նրանք ակտիվորեն զբաղվել են աշխատանք փնտրելով և պատրաստ են եղել աշխատանքի անցնելու,

ե) պետական զբաղվածության ծառայություններում գրանցված գործազուրկների թվին են դասվում աշխատանք չունեցող, աշխատանք փնտրող և սահմանված կարգով գործազուրկի կարգավիճակ ստացած անձինք:

Գործազրկության գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով

$$K_{գործ} = \frac{S_{գործ}}{S_{տ.ա.կ}}$$


Ունենալով տնտեսական ակտիվ բնակչության թիվը, ներառյալ զբաղվածներ և գործազուրկներ, կարող ենք որոշել, թե տնտեսությունում ամեն հազար զբաղվածների մեջ քանի գործազուրկ կա [2]

Տնտեսական ակտիվ բնակչություն	1240.1 (հազար մարդ)
Զբաղվածներ	1106,4
Գործազուրկներ	133.7

ԱՀՑ-ակնառության հարաբերական ցուցանիշ

$$ԱՀՑ = \frac{133,7}{1106,4} \cdot 1000 = 121$$

Նշանակում է յուրաքանչյուր 1000 մարդուն ընկնում է 121 գործազուրկ:



Ֆրիկցիոն – այն մարդիկ են, ովքեր ժամանակավորապես չեն աշխատում, փնտրում են աշխատանք և գտնելուն պես անցնում են աշխատանքի: Օրինակ բուհ ավարտած ուսանողները, կամ մարդիկ, ովքեր լքել են աշխատատեղը՝ նոր և ավելի լավ աշխատանքի անցնելու համար: Այս պայմաններով պայմանավորված գործազուրկները անընդհատ փոխարինում են միմյանց, ուստի այս ձևը մշտապես առկա է:


Կառուցվածքային – նրանք են, ովքեր կորցրել են իրենց հնացած աշխատատեղը և ստիպված են փոխել մասնագիտությունը: Օրինակ՝ մեքենագրուհիները: Սա պայմանավորված է տեխնոլոգիայի փոփոխություններով: Հմտությունները այլևս չեն համապատասխանում աշխատաշուկայի պահանջներին:

Ցիկլային գործազրկություն – առաջանում է տնտեսությունում տեղի ունեցող տնտեսական անկման արդյունքում, երբ արտադրությունները կրճատվում են, և մարդիկ կորցնում են իրենց աշխատանքը: Այն բնութագրվում է ամբողջական ծախսերի անբավարարությամբ և ապրանքների ու ծառայությունների նկատմամբ ամբողջական պահանջարկը նվազում է, գործազրկությունը՝ աճում:

Գործազրկության մակարդակը որոշելու համար 16 տարեկանից բարձր ամբողջ բնակչությունը բաժանվում է 3 խմբի [3-5]

1. Զբաղվածներ
2. Գործազուրկներ
3. Աշխատուժի կազմից դուրս մնացածներ (ուսանողներ, թոշակառուներ, հաշմանդամներ, տնային տնտեսուհիներ):

2021 -2023 թթ. պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը տես սպորտն ներկայացված աղյուսակում [6-7]



Կատարած ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել՝

- Գործազրկության կրճատման քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի հատկապես երիտասարդների խնդիրների լուծմանը: Սա կարևոր է մանավանդ ցածր ծնելիության և արտագաղթի պայմաններում:
- Երիտասարդ և միջին տարիքի բարձր որակավորում ունեցող գործազուրկների համար անհրաժեշտ է ըստ Երևան քաղաքի համայնքների զբաղվածության ծառայությունների և համայնքապետարանների, ինչպես նաև մարզերում՝ մշակել և իրականացնել զբաղվածության ակտիվ ծրագրեր, ուղղված թափուր և բարձր որակավորում պահանջող աշխատատեղերի մասին:
- Կանխարգելել երիտասարդ «ուղեղների արտահոսքը», մասնավորապես՝ բարձր վարձատրվող բարձրորակ երիտասարդ մասնագետների համար, նրանց տրամադրելով հիփոթեքային վարկավորման որոշակի արտոնություններ:
- Հաշվի առնելով, որ Երևանում գործազուրկների զգալի մասը առողջապահության, կրթության, պետական կառավարման և շինարարության ոլորտների բարձր որակավորման մասնագետներ են, իսկ ՀՀ մարզերում բարձր է հատկապես բարձրորակ մանկավարժների և բժիշկների պահանջարկը, մշակել և կիրառել զբաղվածության արդյունավետ և խթանիչ ծրագրեր՝ ուղղված առկա մասնագետների մարզերում վերաբաշխմանը և աշխատանքի տեղավորմանը:

Գործազրկությունը երբ հասնում է պրոբլեմային մակարդակի, այսինքն գերազանցում է բնական մակարդակը իր հետ բերում է մեծ տնտեսական և սոցիալական վնասներ: Առաջին հերթին գործազրկության գլխավոր գինը չթողարկվող արտադրանքն է, այսինքն չարտադրված ՀԱԱ-ի որոշակի ծավալը:

Մակրոտնտեսագիտության հայտնի հետազոտող Արթուր Օուքենը այդ կապը արտահայտել է մաթեմատիկորեն: Ըստ նրա օրենքի եթե գործազրկության մակարդակը գերազանցում է բնական մակարդակը 1% -ի չափով, ապա ՀԱԱ-ն նվազում է 2,5% -ով, ապա նշանակում է որ եթե գործազրկության մակարդակը չբարձրանա անհրաժեշտ է ՀԱԱ-ի տարեկան աճ: [8]

Գրականություն

1. Հովհաննիսյան Հ.Կ. Ֆահրադյան Մ.Վ. Սոցիալ տնտեսական վիճակագրություն)ուսումնական ձեռնարկ-եր. ԵրՊՏԻ., Տնտեսագետ,, , 2000թ.-455 էջ
2. Ա. Պետրոսյան. Վիճակագրության տեսություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան 2005
3. Հակոբյան Կ.Հ. Վիճակագրության տեսություն: Ուսումնական ձեռնարկ, - Եր. Եվրասիա, 2004թ. – 232 էջ:
4. Մ. Ֆահրադյան, Կ.Գալստյան, Ժողովրդագրական խնդիրների ժողովածու, Երևան, 1998
5. Հ.Հովհաննիսյան.Ֆինանսների վիճակագրության խնդիրների ժողովածու, Երևան, 1994
6. ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն
7. <https://www.armstat.am> (ՀՀ վիճակագրական կոմիտե
8. <https://hy.wikipedia.org/wiki/գործազրկություն>

Армине Мачкалян - СТАТИСТИКА БЕЗРАБОТИЦЫ. Одним из важнейших показателей для оценки экономической стабильности любой страны является уровень безработицы в стране. Экономический кризис вызывает неполную занятость. Безработица – социально-экономическое явление, при котором часть экономически активного населения не может использовать свою рабочую силу. На основе изучения статистических данных даются предложения по снижению уровня безработицы.

Ключевые слова: безработица, экономически активное население, рабочая сила

Armine Machkalyan - STATISTICS OF UNEMPLOYMENT. One of the most important indicators for assessing the economic stability of any country is the level of unemployment in the country. The economic crisis causes underemployment. Unemployment is a socio-economic phenomenon in which part of the economically active population cannot use their labor force. By studying the statistical data, suggestions are given to reduce the unemployment rate.

Keywords: unemployment, economically active population, friction, labor force

ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ АГРОТУРИЗМА В РА

Карине Манукян, Гаяне Геворкян

ЕУА, Институт экономики, управления и информатики

Принята к печати 03.07.2023

Резюме. *Армения имеет наилучшие природно-климатические, историко-культурные, гастрономические и гостеприимные возможности. В последние годы в Армении расширяется въездной и внутренний туризм, что обуславливает развитие агротуризма. Агротуризм способствует развитию экономики РА и сельского сообщества.*

Ключевые слова: *агротуризм, сельская община, гостевой дом, традиционная еда, гостеприимство.*

В последние годы в Республике Армения формируется новый и перспективный «сельский туризм», большое количество туристов прибывает в армянские села. Есть мнение, что этому способствуют богатое историко-культурное наследие и традиции Армении, а также то, что наши историко-культурные памятники в основном расположены в марзах и сельских населенных пунктах. Иностраный турист стал интересоваться армянским селом, бытом и бытом армянского селянина. Тенденция развития мирового туризма такова, что помимо познавательных целей и других привлекательных мест, туриста больше интересуют общение с местным населением, знакомство с местными традициями, непосредственное участие в деревенских мероприятиях, и Армения в этом плане достаточно привлекательна.

Спрос на туризм напрямую определяется предпочтениями, интересами и мировоззрением людей, он может меняться во времени и развиваться в разных направлениях. В Армении, особенно в последние годы, в связи с известными межгосударственными конфликтами, увеличивается количество визитов в практических и профессиональных целях, в том числе в сельскую местность. Этот вид туризма считается самым дорогим и прибыльным в мире, но в то же время требует определенной инфраструктуры, отличной от познавательного туризма.

Общеизвестно, что кризисы создают не только трудности, но и возможности. Ограничения, созданные covid-ем, стали основой для развития внутреннего туризма в РА. Особое значение имел агротуризм. Основой агротуризма являются путешествия. Лучший отдых – это смена обстановки, благодаря которой можно отвлечься от повседневных забот и проблем. В зависимости от цели поездки разнообразны формы организации отдыха, разнообразие

ожиданий, впечатлений и достопримечательностей.

Количество туристов, приехавших в Армению в 2022 году, составило около 1,67 млн человек, а в 2021 году - 870 тысяч, рост составил 92%. Годовой прирост внутреннего туризма составил 20% - 1 696 052 человека в 2022 году и 1 430 503 в 2021 году [1].

В результате деятельности, проведенной Комитетом по туризму Минэконом РА в направлении брендинга туристической стратегии Армении, был разработан новый единый туристический бренд со слоганом «Армения, скрытая тропа», в результате из которых Армения является привлекательным и интересным туристическим направлением [2]. Запланировано четыре туристических направления: культурное, самобытное, приключенческое и гастрономическое, которые являются наиболее актуальными на текущем этапе развития, все эти приоритетные направления связаны с агротуризмом, и все регионы Армении имеют максимальные возможности для развития сельского туризма.

Агротуризм - вид деятельности, имеющий большое значение в жизни людей, это мощное экономическое средство развлечения и обслуживания деловых людей, способствующее интернационализации страны на основе исторических, культурных и местных особенностей, узнаваемости. Сфера агротуризма, помимо организации отдыха, имеет ряд преимуществ. Влияние отрасли велико в восстановлении национальных традиций, она способствует сохранению и эффективному использованию природных ресурсов во многих аспектах.

Армения имеет огромное историческое и культурное наследие, дошедшее до нас из глубины веков. Более 4000 лет богатой истории, уникальная культура: архитектура, литература, пение, танцы, прикладное искусство, памятники истории и культуры. На территории Армении насчитывается более 24000 памятников истории и культуры, которые являются ценными, типичными и редкими историей армянского народа, его материальная и духовная культура являются памятниками и носителями цивилизаций своих эпох (урартской, эллинской, христианской, мусульманской, советской и др.), и это разнообразие делает их очень привлекательными.

Армения выделяется своей уникальной и прекрасной природой и природными памятниками. В этой уникальной горной стране разные климатические зоны сменяют друг друга. В Армении очень ярко выражены все четыре времени года. На территории Армении семь климатических зон. Армения также характеризуется своим ландшафтным и биологическим разнообразием, богатством живых и неживых памятников природы, природных достопримечательностей, а также бодрящими и целебными природно-климатическими условиями лесов. В настоящее время в Армении действуют 3 государственных заповедника (Хосрови, Шикахоги, Эребуни), 25 государственных заповедников и 2 национальных парка - Севанский и Дилижанский.

Большинство самых известных и часто посещаемых памятников по всей РА достаточно хорошо сохранились или должным образом отреставрированы. В список мировых культурных сокровищ (ЮНЕСКО) входят монастырь Ахпат 12-го века, монастырь Санаин 10-го века, Эчмиадзинский собор 4-го века, церковь Святой Рипсиме 618-го века, церковь Святой Гаяне 630-го века, собор Звартноц 5-го века, Гегардаванк 4-го века, долина реки Азат.

Религия очень важна для самоопределения армянского народа. Армения – первая христианская страна в мире и родина Апостольской церкви. Церкви и религиозные памятники Армении многочисленны и составляют более 15% исторических и культурных памятников Армении. Благодаря своим природным и человеческим ресурсам, а также уникальным традициям, Армения имеет значительный потенциал, чтобы предложить уникальный продукт приключенческого туризма. Армения может предложить возможности приключенческого туризма, включая альпинизм, верховую езду, геологические исследования.

Армения обладает значительными ресурсами, чтобы предложить уникальный результат зимнего туризма своими климатическими условиями, наличием подходящих мест для зимнего туризма, таких как Цахкадзор, Джермук, Арагац, Агверан.

В настоящее время в Армении есть два центра зимнего туризма, Цахкадзор и Джермук, которые оснащены канатными дорогами, соответствующими международным стандартам. В условиях превращения горы Арагац в центр зимнего туризма, соответствующего международным стандартам, и инвестиций, направленных на развитие человеческих ресурсов в этой области Армения может стать альтернативным направлением зимнего туризма глобального значения по сравнению с Альпами. Также Дилижан, Севан и Анкаван имеют все необходимые предпосылки для развития зимнего туризма.

Кулинарные традиции Армении восходят к древним временам. Исследования, проведенные среди туристов, приехавших в Армению, показывают, что в основном они довольны армянской кухней и ценами, больше всего им нравятся традиционные армянские блюда: толма, шашлык, хариса, армянская гата, вино, коньяк, лаваш, который был признан армянским. брендом ЮНЕСКО в 2014 году. Туристы особенно ценят традиции армянского гостеприимства. Гастротуризм в Армении имеет серьезные предпосылки для развития. В каждом регионе Армении есть свои традиционные блюда, самые известные из которых недоступны в армянских ресторанах. Включение в меню очень важно для сохранения традиций национальной кухни, а также предоставления туристам широкого ассортимента интересных и вкусных блюд. Кроме того, их можно использовать для создания уникального для региона гастрономического бренда.

В основе агротуризма лежат путешествия. Лучший отдых – это смена обстановки, благодаря которой можно отвлечься от повседневных забот и проблем.

В зависимости от цели поездки разнообразны формы организации отдыха, разнообразие ожиданий, впечатлений и достопримечательностей.

В РА большое значение имеет наличие гостевых домов для организации отдыха туристов, особенно важна организация гостевых домов в сельской местности. После сотрудничества с французским регионом Рона-Альпы Армянский комитет по туризму создал сеть гостевых домов в Армении, способствуя развитию общин в Армении, продвигая сельский туризм, и употребление чистой сельской пищи не является проблемой в Армении.

Студенты и преподаватели Института Экономики, Менеджмента и Информатики Ереванского Университета «АЙБУСАК» с целью изучения «Возможностей развития агротуризма в РА» по собственной инициативе отправились в село Меградзор, где располагаются уже хорошо известные в республике «Этно Гастро Хаус» и «Гостевой дом Манана». «Этно Gastro House» прославился прежде всего благодаря своему уникальному творческому владельцу. В доме, построенном собственной семьей, мастер организовал выставку своих индивидуальных работ, там же проводит мастер-классы, изготавливает различные художественные и бытовые изделия из натурального виноградного дерева, которыми пользуются сами туристы. Гостевой дом также может организовать развлечения для своих гостей. Туристов особенно привлекает картофель, приготовленный на гриле в традиционной деревенской печи, со свежим домашним маслом и лавашом тонри.

В «Manana Guest House» гостеприимная хозяйка приготовила традиционную армянскую гатху «Миджинк», которая была не только вкусной, но и напомнила гостям об этой древней армянской традиции, почти забытой горожанами. «Гостевой дом Манана» предлагает не только ночлег, но и имеет специальный зал, оснащенный современным оборудованием, что дает возможность проводить лекции, дискуссии, а также организовывать мастер-классы по ковроткачеству и ковроделу.

Таблица 1. Возможности организаций на рынке

Ethno Gastro House	Manana Guest House
$S+O=0.51+0.42=0.93$	$S+O=0.48+0.50=0.98$
$W+T=0.40+0.32=0.72$	$W+T=0.46+0.46=0.92$
$S+O) W+T=1.29$	$S+O) W+T=1.06$

Анализ предприятий «Этно Гастро Хаус» и «Гостевой дом Манана» сел Меградзор и Маралик с помощью SWOT-анализа, широко используемого в международной практике. Целью анализа было выявление внешних и внутренних факторов, которые могут способствовать развитию организаций, а также выделить совокупность факторов, которые могут нанести ущерб бизнесу.

Для обеих организаций были выделены десять признаков, характеризующих сильные (S- strength) и слабые (W- weaknesses) стороны внутренней среды и возможности (O—opportunities) и угрозы (T- threats) внешней среды. В результате балльной оценки (1-5 баллов) извлекались частные показатели каждого фактора, и их сумма. Коэффициент корреляции совокупных показателей выражает возможности организации на рынке. Анализ показал, что сильные стороны и возможности обеих гостиниц едва перевешивают слабые стороны и угрозы, поэтому необходимо использовать сильные стороны и возможности, разрабатывать агрессивные стратегические ходы и преодолевать слабые стороны и угрозы. Также была представлена SWOT-матрица.

Среди внешних возможностей организации «Этно Гастро Хаус» возможность проведения мастер-классов и доступность культурных туров, а среди сильных сторон внутренняя среда, красивая природа и свежий воздух, а также наличие экологически чистых и разнообразного питания, дают возможность развивать агротуризм. Серьезные угрозы - низкий уровень доходов эмиграция населения, отсутствие приключенческой составляющей в организации.

Среди возможностей внешней среды для организации «Гостевого дома Манана» особенно участие женщин в бизнесе гостевого дома и возможности обучения, а среди сильных сторон внутренней среды красивая природа, чистый воздух и особенно разнообразная и экологически чистая еда предоставляют большие возможности для развития бизнеса. Недостаточно развитая туристическая инфраструктура, недоброжелательное отношение жителей села, отсутствие инвестиций, отсутствие агротуров представляют опасность.

Фонд Регионального Развития РА стремится максимально поддержать, особенно вновь созданный гостиничный бизнес, и реализовать ряд новых проектов. В ближайшие годы фонд будет предоставлять средства гостиничной сети, а с того момента, когда отели сами смогут финансировать себя, организовывать собственные программы и выигрывать гранты, фонд выпустит их как устоявшиеся предприятия [3].

Агротуризм способствует созданию социальной жизнестойкости сельских населенных пунктов и экономически неблагополучных регионов, развитию подструктур сообществ: дорог, рекреационных комплексов, здравоохранения, транспорта. В результате всего этого повышается уровень жизни людей в сельской местности, улучшается быт.

Этот вид туризма дает туристам возможность насладиться экологически чистой пищей, познакомиться с сельской жизнью, переработкой сельскохозяйственной продукции и активным отдыхом, туристы могут участвовать в производстве молочных продуктов, хлеба, вина в сельских условиях, наслаждаться отдыхом на чистом воздухе. условиях и все это по относительно

доступным ценам. За счет всего этого агротуризм пользуется симпатиями туристов, что непосредственно способствует развитию сельского хозяйства, расширению рынка сбыта сельскохозяйственной продукции, что улучшает жизнь сельских жителей и снижает уровень безработицы.

Можно сделать вывод, что агротуризм –тройная польза для экономики Армении.

1. Активизация туризма обеспечивает рост ВВП, повышение уровня занятости, создание новых рабочих мест, дополнительный доход сельскому населению, популяризацию национально-культурных традиций, использование малозатратных ресурсов, развитие деловых и культурных связей, улучшение демографических показателей.
2. Агротуризм является источником дополнительного дохода для села и крестьян, активизирует население, создает возможность для создания новых рабочих мест и улучшения инфраструктуры. Благодаря агротуризму повышается самооценка сельского населения, агротуризм способствует распространению новых знаний, забытых обычаев, новых навыков.
3. Агротуризм – это возможность для туристов активно отдыхать, наслаждаться свежей, непорочной пищей в сельской местности, иметь тесный контакт с природой. Туристов, особенно иностранных, очень привлекает участие в жизни сельского населения, формирование навыков создания новых продуктов, изучение местной культуры и истории.

Լւմերաթւրա

1. 2022 года отчет о деятельности, Комитета по туризму. <https://www.primeminister.am/hy/press-release/item>
2. Стратегия развития туризма Армении на 2020-2030 гг., mineconomy.am
3. Сельский туризм, «Вместе за развитие сельского туризма в Армении», <https://miassine.org/hy>

Karine Manukyan, Gayane Gevorgyan - POSSIBILITIES OF AGRO-TOURISM DEVELOPMENT IN RA. Armenia has the best natural-climatic, historical-cultural, gastronomic, and hospitality opportunities. In recent years, inbound and domestic tourism has been expanding in Armenia, which conditions the development of agriturism. Agriturism contributes to the development of the RA economy and rural communities:

Key words: *agritourism, rural community, guesthouse, traditional food, hospitality.*

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, հատոր 8, 2023

Կարինե Մանուկյան, Գայանե Գևորգյան - ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ: Հայաստանը ունի բնակլիմայական, պատմա-մշակութային, գաստրոնոմական, հյուրընկալության լավագույն հնարավորություններ: Վերջին տարիներին Հայաստանում ընդլայնվում է ներգնա և ներքին զբոսաշրջությունը, ինչը պայմանավորում է ագրոտուրիզմի զարգացում: Ագրոտուրիզմը նպաստում է ՀՀ տնտեսության և գյուղական համայնքների զարգացմանը:

Հիմնաբառեր. ագրոտուրիզմ, գյուղական համայնք, հյուրապրուն, ավանդական ուրեսսեր, հյուրընկալություն:

ՀՀ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կարեն Գվիդոնյան, Գայանե Գևորգյան

ԵՀՀ, Տնտեսագիտության, կառավարման և ինֆորմատիկայի ինստիտուտ
Ընդունված է պապարության, 03.07.2023

Ամփոփագիր. ՀՀ-ում պահանջված ներդրումներ ներգրավելու առանցքային խնդիրը կայանում է նրանում, որ երկրում մինչ օրս չեն ձևավորվել փարբեր ներդրումային հոսքերի համար համապատասխան արդյունավետ ուղիներ: Իշխանությունները հիմնախնդրի լուծման առումով ջանքեր են գործադրում, բազմազան միջոցառումներ են ձեռնարկում, սակայն բազմաթիվ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, ներդրումները ոչ մի կերպ չեն հոսում տնտեսության իրական հատված: Այդ խնդիրները լուծելու համար կարևորվում է ՀՀ ներդրումային քաղաքականության առաջնահերթությունների բացահայտումը:

Հիմնաբառեր. Ներդրում, ներդրումային քաղաքականություն, ներդրումային ֆոնդ, ՕՈՒՆ, ներդրումային նախագիծ:

ՀՀ-ում կարևորվում է տնտեսության զարգացման համար պահանջվող ներդրումների ներգրավման հիմնախնդրի լուծումը: Դրանց լուծմանն անդրադառնում են կառավարությունը, փորձագետները, գիտական հանրությունը:

Ներդրումային քաղաքականության նպատակների իրականացումն ենթադրում է ոլորտի հիմնարար խնդիրների լուծում, առանց որի հնարավոր չէ իրականացնել արդյունավետ ներդրումային քաղաքականություն, ապահովել ներդրումների ծավալների աճը և երկրի տնտեսական կայուն զարգացումը:

Ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ է ունենալ ներդրումները օժանդակող և խթանող, ինչպես նաև ներդրումների և ներդրողների պաշտպանության հարցերով զբաղվող լավ ձևավորված և ամբողջ ծավալով գործող ենթակառույցներ:

Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվել է «Ներդրումային խորհրդ», որի կազմում ընդգրկված են ներդրումային քաղաքականության, ներդրումների խթանման և դյուրացման ոլորտներում իրավասու մարմինների ղեկավարները, որոնք պարբերաբար կքննարկեն ներդրումներին վերաբերող միջգերատեսչական լուծում պահանջող իրավիճակային և համակարգային հարցեր և, որպես խորհրդակցական մարմին, լուծումներ կառաջարկեն Հայաստանի Հանրապետության վարչապետին [1]. ՀՀ-ում պետական կառույցների դերի և լիազորությունների հստակ սահմանման համար ներդրումների խթանման և դյուրացման համակարգը անցնում է կենտրոնացված մոդելի, որտեղ՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը պատասխանատու կլինի ընդհանուր ներդրումային քաղաքականության մշակման և մշտադիտարկման համար.
2. «Էնթերփրայզ Արմենիա» պատասխանատու կլինի ներդրումների խթանման և դյուրացման համար.
3. պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պատասխանատու կլինեն ներդրումների խթանման աշխատանքներում «Էնթերփրայզ Արմենիա»-ին» աջակցելու համար.

«Էնթերփրայզ Արմենիա»-ի ծառայությունները բազմակողմանի են, հուսալի և անվճար, գործունեությունը հիմնված է «մեկ պատուհան» սկզբունքի վրա և ներառում է աջակցություն ներդրումային ծրագրի իրականացման ողջ գործընթացում: Գործելով որպես կապող օղակ ՀՀ կառավարության և գործարար համայնքի միջև «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը տրամադրում է առաջնահերթ օժանդակություն ներդրումային ծրագրի իրականացման բոլոր փուլերում առաջացած խնդիրների լուծման ուղղությամբ՝ ապահովելով ներդրողի գոհունակությունը և ներդրումային ծրագրի իրականացման սահուն ընթացքը [2]: Ներդրողների համար կարևոր նշանակություն ունի կենտրոնի կողմից տրամադրվող հետններդրումային սպասարկման և ներդրումային ծրագրերի ուղեկցման ծառայությունը, որի գործառույթների շրջանակում կենտրոնի աշխատակիցները, կապ հաստատելով Հայաստանում օտարերկրյա կապիտալով գործող ընկերությունների հետ, բացահատում են առկա համակարգային խնդիրները, դրանց հիման վրա համապատասխան առաջարկներ են ներկայացնում պետական ընթացակարգերի պարզեցման և գործարար միջավայրի բարելավման համար, որն էլ նպաստում է այդ ընկերությունների գործունեության ընդլայնմանը Հայաստանում, բարձրացնում է ներդրողների գոհունակությունը,ինչը լավագույն գովազդն է դեպի Հայաստան նոր ներդրումների ներգրավման համար: 2020թ-ից գործող «Էնթերփրայզ Արմենիա» հիմնադրամը իր գործունեության կարճ ժամանակահատվածում հասցրել է ներգրավել 120 օտարերկրյա շահառուների՝ մեծ մասը հեռահաղորդակցման ոլորտում, որոնց նվազագույն ներդրումների չափը կես մլրդ դրամ է: Կան ներդրումներ նաև արդյունաբերության ոլորտում:

ՀՀ կառավարության որոշմամբ ստեղծվել է «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերությունը: Հիմնադրամի նպատակն օտարերկրյա ներդրումների իրականացմանն աջակցելն է: Այս կառույցը զբաղվում է, 10 միլիոն դոլարը գերազանցող ներդրումների աջակցմամբ [3]: Այժմ էներգետիկայի ոլորտում ընթացքի մեջ է «Այգ-1» 200 ՄՎտ հզորությամբ արևային ֆոտովոլտային կայանի հիմնման ծրագիրը՝ «Մասդար» ընկերության հետ համագործակցությամբ, այն գնահատվում է 174 մլն դոլար: «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերությունը «Էյր Արաբիա» ավիաընկերության հետ կնքվել

է ազգային բյուջետային ավիափոխադրող հիմնելու գործարքը: Ծրագրվում է, որ առաջիկա 5 տարիների ընթացքում ավիաընկերությունը Երևանի «Զվարթնոց» օդանավակայանում կբազավորի 15 օդանավ և այլն:

ՀՀ-ում Համաշխարհային Բանկի «Ձեռնարկությունների Ինկուբատոր» ծրագրի շրջանակում 2002թ-ին՝ հիմնադրվել է «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամը (ԶԻՀ): Հիմնադրամը ծառայում է որպես հաղորդակցման հանգույց ոլորտում գործող բոլոր կառույցների՝ պետական և մասնավոր հաստատությունների, միջազգային կազմակերպությունների և կառավարության գործակալությունների, խոշոր վերազգային կազմակերպությունների և փոքր սկսնակ ընկերությունների համար, համախմբելով և համատեղելով նրանց բոլորի ջանքերը մեկ գլխավոր նպատակի՝ Տեղեկատվական Տեխնոլոգիաների և Բարձր Տեխնոլոգիաների գերազանցության հասնելու համար: 2013թ-ին ստեղծվել է Հայաստանի առաջին վենչուրային ընկերությունը՝ «Գրանատուս Վենչուրս»-ը: Հիմնադրամի գործունեության գլխավոր ուղղությունն ներդրումներն են տեխնոլոգիական և ինովացիոն ընկերություններում, որոնք արդյունավետ գործում են առաջատար՝ ՏՀՏ (Ծրագրային ապահովում, ինտերնետ, թվային մեդիա, մոբայլ տեխնոլոգիաներ), ճարտարագիտության (սարքավորումներ, ծրագրային ապահովում և էլեկտրոնիկա), մաքուր տեխնոլոգիաների և այլ ոլորտներում: Հիմնադրամը կատարում է ներդրումներ այն նորաստեղծ ընկերություններում, որոնք իրենց հիմնական գործունեությունն իրականացնում են Հայաստանում [4]:

ՀՀ ներդրումային քաղաքականության առաջնահերթություն է հիմնական կապիտալի համախառն կուտակումը: Հաշվի առնելով այդ հանգամանքը, որ ՀՀ-ն 2012թ-ից սկսած անցել է Ազգային հաշիվների 2008թ.-ի մեթոդաբանությանը, ինչի արդյունքում նախորդ ժամանակաշրջանի տվյալները համադրելի չեն 2012 թվականից առաջ հրապարակված տվյալների հետ: Դիտարկվել է 2012-2022 թվականների ժամանակահատվածը: Նշված ժամանակահատվածում ՀՀ ՀԿՀԿ-ն (հիմնական կապիտալի համախառն կուտակումը) 2012-2016 թ.թ. կրճատվել է շուրջ 17%-ով, 2012թ.-ի 1007մլրդ դրամի դիմաց 2016 թ կազմել է 880 մլրդ դրամ, այնուհետև անընդմեջ ավելանալով 2021թ.-ին կազմել է 1275 մլրդ դրամ, իսկ 2022թ-ին 1688 մլրդ դրամ: 2017-2022թթ առանձին ներդրումային նախագծերով պայմանավորված, հնարավոր է դարձել ապահովել ՀԿՀԿ շոշափելի աճ [5]: Հատկապես դրան նպաստել է 2014 թ. ընդունված «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության ՀՀ օրենքով սահմանված վճարված եկամտային հարկի գումարներից բնակարան ձեռք բերելու կամ անհատական բնակելի տուն կառուցելու նպատակով վարձու աշխատողի, անհատ ձեռնարկատիրոջ և նոտարի կողմից ստացված հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարվող տոկոսների գումարների վերադարձի հնարավորությունը: Անշարժ գույքի ուղղությամբ ներդրումները միայն 2022թ-ին կազմել են շուրջ 30մլրդ դրամ:

Հայաստանի անկախացման տարիներից ի վեր օտարերկրյա ներդրումների 50%-ից ավելին բաժին է ընկնում էներգետիկ և հանքարդյունաբերության ոլորտներին:

ՀՀ-ում 2021 թվականին հանքարդյունաբերության ոլորտում արձանագրվել է 53% հավելած նախորդ տարվա նկատմամբ, ինչը պայմանավորված է ներդրողների կողմից ոլորտի խոշոր ձեռնարկություններից մեկի բաժնետոմսերի 60%-ի ձեռքբերմամբ (ՀՀ կառավարությունը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի համասեփականատուներ է դարձել): 2022թ-ին մետաղական հանքի արդյունահանման մեջ ներդրվել է 46 մլրդ դրամ: 2021 թվականին Հայաստանի Հանրապետությունում կատարված ՕՌԻՆ-ի գրեթե 63%-ը էլեկտրաէներգիայի և գազի մատակարարման ոլորտներում է: Նման իրավիճակը պայմանավորված է երկու հանգամանքով՝

1. ոլորտում խոշոր ձեռնարկությունների ճնշող մեծամասնությունն օտարերկրյա մասնակցությամբ կազմակերպություններ են (հիմնականում ռուսական), որոնք իրականացնում են մեծածավալ ներդրումային նախագծեր, այդ թվում՝ չբաշխված (վերաներդրված) շահույթի հաշվին,
2. նշված ոլորտներում վերջին տարիներին մեկնարկել են մի շարք խոշոր ներդրումային նախագծեր (կանաչ ծրագիրը), որոնց ֆինանսավորման մի մասն ՕՌԻՆ-երի տեսքով է: 2022թ-ին էլեկտրոէներգիայի գազի, գոլորշու մատակարարման ոլորտում կատարվել է 52 մլրդ դրամ ներդրում:

Հայաստանի Հանրապետության ներդրումների կատարողականը միշտ զգալիորեն ցածր է եղել ՕՌԻՆ-ների մասով: 2015-2020 թվականներին արձանագրված ՕՌԻՆ զուտ հոսք)ՀՆԱ միջին ցուցանիշով Հայաստանը այլ երկրների շարքում 1.7%-ով վերջինն է եղել, մինչդեռ դեպի ծով ելք չունեցող համեմատելի երկրներից Ղրղզստանը, Հյուսիսային Մակեդոնիան և Մոլդովան արձանագրել են համապատասխանաբար 4.3%, 3.5% և 2.3% արդյունք: 2022թ-ին Հայաստանը ներդրումներ է ներգրավել ավելի քան 25 երկրից: Ներդրումներ կատարած երկրների շարքում I հորիզոնականում Ռուսաստանի Դաշնությունն է՝ 109,2մլրդ դրամ. II հորիզոնականում Արգենտինան է՝ 15,3 մլրդ դրամ. և III հորիզոնականում Կիպրոսն է՝ 10մլրդ դրամ ներդրումներով: Տարածաշրջանային կոնյուկտուրայի փոփոխությունների արդյունքում ՀՀ Վիճակագրական Կոմիտեի տվյալներով 2022թ-ին ՕՌԻՆ-ի մեծ ներհոսք կա, և կարելի է գերազանցել նշված երկրներին և նույնիսկ դեպի ծով ելք ունեցող երկիր Վրաստանին:

ՀՀ –ում 1տրլն 688 մլրդ դրամ ներդրումների ծավալը իրոք լավ ցուցանիշ է, սակայն 2022թ Հայաստանի տնտեսական աճի 12,6% -ի դեպքում ներդրումների կշիռը ՀՆԱ-ում կազմում է 19,4 %,իսկ ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագրի համապատասխան ՀԿՀԿ (հիմնական կապիտալի համախառն կուտակում))ՀՆԱ հարաբերակցությունը պետք է լինի 25%: Սա նշանակում է, որ պետական ենթակառուցվածքների բարելավման ուղղությամբ

տնտեսության ներդրումներ կլանելու հնարավորությունները սահմանափակ են: Առաջարկվում է Հայաստանյան ընտրություններին քայլեր ձեռնարկել միջազգային բորսայում:

Տարածաշրջանի կոնյուկտուրայի փոփոխություններով պայմանավորված փողի հսկայական ներհոսք է եղել ՀՀ, բայց այն ներդրում չի դարձել: Սա մեր տնտեսության անկարողության մասին է խոսում: Կառավարությունը նախատեսում է ՕՈՒՆ զուտ ներհոսք) ՀՆԱ հարաբերակցությունը հասցնել 6%-ի, դրա համար 5 տարվա ընթացքում ներդրողներին տրամադրվելու է 130 միլիարդ ՀՀԴ աջակցություն, որից 50 միլիարդ ՀՀԴ-ը կուղղվի տնտեսական ենթակառուցվածքների առավելագույն հասանելիության ապահովմանը, իսկ 80 միլիարդ ՀՀԴ-ն՝ արտահանելի արտադրանք ստեղծելու ներուժ ունեցող մշակող արդյունաբերության ձեռնարկությունների զարգացմանն ուղղված միջոցառումների ֆինանսավորմանը [6]:

Ներդրումային քաղաքականության առաջնահերթություններից է ֆինանսական համակարգի կատարելագործումը, արժեթղթերի շուկայի զարգացումը, ՀՀ տնտեսվարողների միջազգային բորսաներում քայլեր ձեռնարկելը:

ՀՀ Բանկային համակարգի ներդրումային ակտիվություն հնարավորությունները սահմանափակված են օրենսդրությամբ: ՀՀ կենտրոնական բանկը համաձայն իր իսկ օրենքի ուղղակի պատասխանատվություն չի կրում երկրում տնտեսական զարգացման վեկտորը ուղորդելու համար, նրա հիմնական գործառույթը երկրում գների կայունության ապահովումն է: Վերջին տարիներին բանկերը երկարաժամկետ (ավելի քան մեկ տարի ժամկետով) վարկեր են տրամադրում իրական հատվածին (ինչպես նաև բնակչությանը տրամադրում են հիփոթեքային վարկեր): Բանկերի մոտ դրա համար ռեսուրս են հանդիսանում հիմնականում իրենց սեփական միջոցներն ու միջազգային ֆինանսական կազմակերպություններից ստացված փոխառու միջոցները: Վերջիններս, որպես կանոն, նման ռեսուրսներ տրամադրելիս խստորեն կարգավորում են բանկի կողմից դրանց վարկավորման ուղղություններն ու տեխնոլոգիական ռեժիմները: Միջազգային ֆինանսական ինստիտուտները, օրինակ՝ ՎՋԵԲ-ը և ՄՖԿ-ն, ինչպես նաև խոշոր օտարերկրյա բանկերը մասնակցում են ՀՀ բանկերի կապիտալում, քանի որ եկամտաբերության բարձր մակարդակ ապահովելու նպատակով և ռիսկերից խուսափելու առումով չեն ցանկանում ուղղակի ներդրումներ կատարել տնտեսության բարձր ռիսկային իրական հատվածում: Հարկ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ՀՀ բանկերի ընդհանուր կապիտալում գերակշռում է օտարերկրյա կապիտալի մասնաբաժինը (60 տոկոսից ավելի): Այս ոլորտում ՀՀ ներդրումային քաղաքականության առաջնահերթություններն են՝

1. ՀՀ Բանկային համակարգում, բացի առևտրային բանկերից նաև ներդրումային բանկերի ձևավորումը, որոնք հիմնականում կիրակա-նացնեն արժեթղթերի տեղաբաշխում և երկարաժամկետ վարկավորում:

2. ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտով սահմանված չափանիշներին համապատասխան բազմատեսակ Ներդրումային ֆոնդերի ձևավորումը:

Եզրակացություն.

ՀՀ-ում պահանջված ներդրումներ ներգրավելու առանցքային խնդիրը կայանում է նրանում, որ երկրում մինչ օրս չեն ձևավորվել տարբեր ներդրումային հոսքերի համար համապատասխան արդյունավետ խողովակներ: Մինչդեռ այդ խողովակները իրենց տնտեսական նշանակությամբ և բովանդակությամբ կոչված են կլանել ներդրումների հոսքը և միաժամանակ համապատասխան բաշխիչ խողովակներով ապահովել դրանց արդյունավետ տեղաբաշխումը ՀՀ տնտեսության առավել մրցունակ ոլորտներում: Այդպիսի գործիքներ են ներդրումային ֆոնդերը:

Գրականություն

1. Ծրագիր Հայաստանի Հանրապետության Ներդրումային Քաղաքականության Ռազմավարության Գործողությունների ,ՀՀ կառավարության որոշում,2022
2. <https://enterprisearmenia.am/hy/pages-posts/our-mission>
3. <https://www.anif.am>
4. www.granatusventures.am
5. ՀՀ ԿԲ վիճակագրական տեղեկագրեր, 2012-2022 թթ.,
6. ՀՀ կառավարության 2021-2026 թվականների ծրագիր

Гвидонян К., Геворгян Г. - ПРИОРИТЕТЫ ИНВЕСТИЦИОННОЙ ПОЛИТИКИ РА. Ключевая проблема привлечения необходимых инвестиций в РА заключается в том, что в стране еще не созданы подходящие эффективные каналы для различных инвестиционных потоков. Власти прилагают усилия для решения проблемы, принимают различные меры, но в силу многих объективных и субъективных причин инвестиции в реальный сектор экономики не поступают. Для решения этих проблем важно определить приоритеты инвестиционной политики РА.

Gvidonyan Karen, Gevorgyan G. - RA INVESTMENT POLICY PRIORITIES. The key problem of attracting required investments in RA lies in the fact that the country has not yet developed suitable effective channels for various investment flows. The authorities are making efforts to solve the problem, taking various measures, but due to many objective and subjective reasons, investments are not flowing into the real sector of the economy. To solve these problems, it is important to identify the priorities of RA investment policy.

Key words: investment policy, investment fund, investment project

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.61484/29538181-ss.8.23-37

ԽԱՂԸ ՈՐՊԵՍ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Ամալյա Սահակյան

«Ռոսլին» արվեստի և հումանիտար գիտությունների ակադեմիա
Ընդունված է պապարության, 20.06.2023

Ամփոփագիր. Խաղի էության և նշանակության մասին գոյություն ունեն տարբեր տեսություններ: Խաղը երեխային հնարավորություն է ընձեռում ստեղծագործելու, երևակայելու, սովորելու, համագործակցելու և, իհարկե, զարգանալու: Տարրական դպրոցում հնարավոր է շատ ուսումնա-դաստիարակչական խնդիրներ լուծել խաղի միջոցով: Խաղը բացահայտում է երեխայի անհատական ընդունակությունները, կարողությունները, նպաստում է երեխայի անձի զարգացմանը:

Հիմնաբառեր. խաղ, ստեղծագործական կարողություններ, ուսուցում, ակտիվություն, դաստիարակություն, զարգացում, երևակայություն:

Խաղը նախադպրոցական երեխայի հիմնական գործունեության ձևերից է: Այժմ դպրոց հաճախում են 5,6-6 տարեկան երեխաները: Այդ շրջանը կրտսեր դպրոցականի համար հոգեկան նորագոյացությունների շրջան է. խաղային գործունեությանը զայիս է փոխարինելու ուսումնական գործունեությունը: Սկզբնական շրջանում բավական բարդ է երեխայի համար կտրվել խաղերից, հարմարվել դպրոցի կարգ ու կանոնին, ուսուցչի պահանջներին, միջանձնային հարաբերություններին, ուսուցման գործընթացին:

Այս խնդիրը լուծելու համար առաջարկում ենք կրտսեր դպրոցականի ուսուցման գործընթացում առավել շատ կիրառել խաղային տեխնոլոգիան, որն ավելի արդյունավետ և հետաքրքիր կդարձնի ուսուցման գործընթացը: Խաղը երեխային հնարավորություն է ընձեռում ստեղծագործելու, երևակայելու, սովորելու, համագործակցելու և, իհարկե, զարգանալու: Տարրական դպրոցում հնարավոր է շատ ուսումնա-դաստիարակչական խնդիրներ լուծել խաղի միջոցով:

Խաղի էության և նշանակության մասին գոյություն ունեն տարբեր տեսություններ: Խաղի հիմնահարցը դիտարկվել է շատ մանկավարժների, հոգեբանների աշխատություններում (Լ.Ս. Վիգոտսկի, Ա.Ն. Լեոնտև, Դ.Բ.

Էլկոնինին, Ա.Վ. Զապորոժեց, Ս.Լ. Ռուբինշտեյն և այլք):

Իր ուսումնասիրություններում Լ.Ս Վիգոտսկին գրում է. «Խաղի էությունն այն է, որ այն հենց ցանկությունների իրականացումն է, բայց ոչ անհատական ցանկությունների այլ ընդհանրացված ազդեցությունների» [5, էջ 64]: Նախադպրոցական տարիքում երեխաները ունեն տարբեր կարիքներ և պահանջմունքներ, և խաղը երեխայի կյանքում կարևոր նշանակություն ունի նրա ներդաշնակ զարգացման համար:

Ինչպես նշում է Դ.Բ. Էլկոնինը. «Խաղը գիտական հետազոտությունների առարկա դառնալուց շատ առաջ լայնորեն կիրառվում էր որպես երեխաների դաստիարակության կարևորագույն միջոց» [6, էջ 317]:

Խաղի ուսուցանող, դաստիարակող, զարգացնող նշանակության մասին խոսել են նաև հայ մեծ մտավորականները, գրողները, մանկավարժները, հոգեբանները:

Հայ նոր մանկավարժության հիմնադիր, լուսավորիչ-մանկավարժ Խ. Աբովյանը, իր «Պարապ վախտի խաղալիք» աշխատության մեջ ընդգծում է հետաքրքիր զրույցների, պատմությունների արժեքը երեխաներին դաստիարակելու, զարգացնելու, ուրախություն պատճառելու գործում: «Պարապ վախտի խաղալիք» խորագիրը տալով ժողովածուին՝ Խ.Աբովյանը ցանկացել է, որ մարդը պարապ ժամանակ զբաղվի ընթերցանությամբ և ինչպես ինքն է նշում՝ «գրածս բանս ամեն մարդ հասկանա էնդուր համար աշխարհաբար գրեցի» [1, էջ 8]: Խ. Աբովյանը շատ լավ տիրապետում էր գրաբարին, սակայն այդ ժամանակաշրջանում ոչ բոլորին էր հասու գրաբարը՝ այն անմատչելի էր, անհասկանալի, անգործածելի մեծամասնության համար:

«Պատմություն Տիգրանի մասին կամ բարոյական խրատներ հայ մանուկների համար» մանկավարժական վեպը, «Նախաշավիղ»-ը, տարբեր հոդվածները, գրական ստեղծագործությունները հիմք հանդիսացան հայ նոր մանկավարժության գիտական հիմքերի համար: Խ.Աբովյանը մշակեց դասավանդման նոր, առաջադեմ համակարգ: Նա իր աշխատություններում բացահայտում էր երեխաների դաստիարակություն, կրթության, զարգացման իր տեսլականը: Խ. Աբովյանի փոքրիկ հերոսներ՝ Ստեփանի, Եղիսաբեթի, Վարդանի հետաքրքրասիրությունը, տրամաբանությունը, մտածելու ընդունակությունը ձևավորվել են մեծերի պատմությունների, զրույցների, տարբեր խաղերի ներգործության շնորհիվ: Նրա մեծ ցանկությունն էր հայկական գավառական դպրոցը հասցնել եվրոպական մակարդակի միևնույն ժամանակ պահպանելով ազգայինը, հայկականը: Խ.Աբովյանը հատկապես բարձր է գնահատում մանկական խաղերի դերն ու նշանակությունը երեխաների կյանքում: Գնահատել և հարգել երեխային, խաղի միջոցով դաստիարակել հայրենասիրություն, ճշմարտասիրություն, ազնվություն, համեստություն, աշխատասիրություն: Մեծ լուսավորիչը իր առաջ քաշած առաջադեմ գաղափարները հաջողությամբ կիրառեց իր ղեկավարած դպրոցներում:

Հայ մանկավարժական մտքի ամենախոշոր ներկայացուցիչներից Ղ. Աղայանը ողջ կյանքը նվիրել է մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը: Նա իր աշխատություններում շատ կարևորում էր աշխատանքային դաստիարակությունը: Ղ.Աղայանը իր աշխատություններում լրջորեն անդրադարձել է երեխայի խաղի կարևորության հիմնահարցին: Նա իր դասագրքերում մեծ տեղ էր հատկացնում մանկական բանաստեղծություններին, պատմվածքներին, առակներին և հեքիաթներին: Նա գտնում էր, որ երեխաների զարգացման ամենալավ միջոցներից է՝ խաղը. խաղերն ուրախություն, բավականություն են պատճառում երեխաներին:

Ղ. Աղայանը գտնում է, որ երեխաներին հրապուրում է շրջապատողների գործունեությունը, և նրանք ցանկանում են իրենց խաղերում վերարտադրել այն: Սկզբնական շրջանում դրանք պարզ խաղային գործողություններ են: Աստիճանաբար խաղերը դառնում են նպատակաուղղված և կազմակերպված: Ըստ նրա՝ «Դաստիարակության միակ նպատակը պիտի լինի զարգացնել մարդու այդ երեք կողմն ի միասին, որպեսզի նա լինի ուժեղ, խելոք և առաքինի» [2, էջ 15]:

Ամենայն Հայոց բանաստեղծ Հ.Թումանյանը երեխաների համար ստեղծեց հայրենագիտական խաղեր: Հ. Թումանյանը գտնում էր, որ երեխաների համար խաղը անհրաժեշտություն է, մանկության ուղեկից: Հ. Թումանյանը անհրաժեշտ է համարում սնել երեխայի միտքը, հաղորդել նրան շրջապատող աշխարհի առարկաների, երևույթների մասին բազմապիսի գիտելիքներ: Նա գտնում է, որ մանկական խաղերը պետք է ուրախացնեն, զվարճացնեն, հաճելի լինեն երեխային և անպայման հարստացնեն նրա միտքը, «բան սովորեցնեն»: Հ. Թումանյանի ստեղծել է ավելի քան 10 խաղ: Դրանք են՝ Առաջին խաղ», «Աստղերի խաղ», «Գույների խաղ», «Թանկագին խաղեր», «Հանելուկներ», «Հայկական առածներ», «Տառերի խաղ», «Սրամիտ հովիվը», «Հայոց գետերը», «Դուռը»: Այդ խաղերը կրում էին ինչպես շարժողական, այնպես էլ դիդակտիկ՝ ուսուցողական բնույթ, որոնք Ամենայն Հայոց բանաստեղծը 1915 թ. այդ ծանր օրերին կազմում և հրատարակում է թե՛ երեխաների, թե՛ պատանիների և թե՛ մեծերի համար: Ինչպես նշում է նա իր նամակներից մեկում. «Էս խառը ժամանակը ես էլ, ի միջի այլոց, զբաղված եմ և հայրենագիտական, և ուրիշ տեսակի խաղալիքներով-ասում եմ գուցե դրանով էլ մեր մանուկներին մի բանով օգնած լինենք-հայանալու և մարդանալու»: [3, էջ 401]: Նա մշտապես ցանկանում էր, որ երեխաների համար լույս տեսած գրքերը, խաղերը լինեն վառ գույներով, սակայն ժամանակները ծանր էին: Ամենայն հայոց բանաստեղծի ստեղծած խաղերը մինչ օրս շատ արդիական են: 2008 թ. Վերահրատարակվել է Մեծն բանաստեղծի 5 խաղ «Հայոց գետերը», «Հայկական առածանին», «Թանկագին խաղեր», «Հայկական հանելուկներ», «Տառերի խաղ»: Այս խաղերը խաղալով երեխաները հեշտությամբ գիտելիք են ձեռք բերում, ծանոթանում հայոց գետերին, առածներին, հայեցի դաստիարակվում:

Ի դեպ, տեղին է հիշել նաև մեծ երգիծաբան ու մանկավարժ Հ.Պարոնյանի «Թատրոն բարեկամ մանկանց» հանդեսը 1876, որի բնագրերին կից դրված էին թեմատիկ նկարներ, որոնցից յուրաքանչյուրը իր եզակիությամբ և բարձր արվեստով կարող է զարդարել ցանկացած ցուցահանդես: Դրանք այնքան խոսուն են, որ երեխաներին հնարավորությունն էին տալիս ստեղծագործելու, նոր պատմություն հորինելու, բեմականացնելու: «Թատրոն բարեկամ մանկանց» մանկական առաջին հանդեսը, լույս է տեսել Պոլսում 1876-1878 թթ. Հ.Պարոնյանի խմբագրությամբ [4, էջ 708]: Պատահական չէ, որ Հ.Պարոնյանի մանկական հանդեսի նկարազարդումները կատարել է ժամանակի հանճարեղ ճարտարապետ նկարիչներից մեկը՝ Ն.Պալյանը:

Խաղը բացահայտում է երեխայի անհատական ընդունակությունները, կարողությունները, նպաստում է երեխայի անձի զարգացմանը: Ինչպես գիտենք, կրտսեր դպրոցական տարիքը ունի բացառիկ նշանակություն երեխաների ֆիզիկական, հոգեկան զարգացման համար և այդ տարիքում խաղի կարևոր նշանակությունն այն է, որ երեխան կանգնում է ուրիշ մարդու դիրքերի վրա՝ կարծեք թե նայելով աշխարհին մեծահասակի տեսանկյունից, որի դերը նա կատարում է: Այստեղ երեխան հուզական ճանապարհով կանխագուշակում է ապագա, լուրջ, հասարակական արժեք և գնահատում ունեցող գործունեության ուրախությունը: Խաղը կարող է ծառայել կրտսեր դպրոցականի անձի զարգացմանը միայն այն դեպքում, երբ նա ներգրավվում է կազմակերպվող և կառավարվող մանկավարժական գործընթացի մեջ: Տարրական դպրոցում դասվարը ընտրում է այն բովանդակությունը, որը պետք է յուրացվի երեխայի կողմից խաղում, նախագծում է խաղի ընթացքը՝ չխախտելով միևնույն ժամանակ նրա յուրահատկությունն ու ինքնագործ բնույթը: Այդ յուրահատկություններից են բովանդակության կրթադաստիարակչական արժեքը, արտացոլվող պատկերացումների ճշմարիտ լինելը, խաղային գործողությունների տրամաբանությունը, կազմակերպվածությունն ու ստեղծագործական բնույթը, կրտսեր դպրոցականի ակտիվությունը, խաղի ընթացքում կանոններով ղեկավարվելը, առանձին երեխաների և բոլոր խաղացողների հետաքրքրությունները հաշվի առնելը, բարեկամական հարաբերությունների և ուրախ տրամադրության ստեղծումը: Խաղը ներգործում է երեխաների գիտակցության, զգացմունքների, վարքի, կամքի, իմացական գործընթացների՝ ընկալման, ըմբռնման, հիշողության, ուշադրության, երևակայության, խոսքի, մտքի, ինչպես նաև ստեղծագործական կարողությունների զարգացման վրա: Առանձնակի մեծ է խաղի դերը երեխայի մտավոր զարգացման գործում: Հաճախ իր բառերով վերարտադրելով հեքիաթների, պատմվածքների առանձին հատվածները, միջադեպերը, երեխան սկսում է մտածել տեսածի, լսածի մասին և շատ երևույթների իմաստը, նշանակությունը ավելի պարզ է դառնում նրան: Խաղի ընթացքում երեխան ձգտում է շտկել, խորացնել իր գիտելիքները:

Այդպիսով, ամրապնդվում են ոչ միայն կրտսեր դպրոցականների գի-

տեղիքներն ու պատկերացումները, այլև լինելով իմացական գործունեության յուրահատուկ ձև, օժանդակում նոր գիտելիքների յուրացմանը:

Խաղի ընթացքում երեխան յուրացնում է հասարակական վարքի նորմերը, սիրո զգացմունք է առաջանում հայրենիքի, ժողովրդի հանդեպ: Խաղը կրտսեր դպրոցականի անձի զարգացման ձևերից է, այստեղ ձևավորվում է ոչ միայն ազգային գիտակցությունը, այլև հասարակական վարքը, նրա վերաբերմունքը ընկերոջ նկատմամբ, նրա մեջ ամրապնդվում են մի շարք կարևոր հատկություններ, զսպվածություն, ազնվություն, համարձակություն, ձեռներեցություն: Երեխան խաղի ընթացքում իր գործողություններն ու ցանկությունները ենթարկում է ընդհանուր գործողություններին, սահմանված կանոններին, պատասխանատվություն է զգում խմբի առջև հանձնարարված գործի համար: Այստեղ էլ ձևավորվում են ընկերասիրությունը, հարգանքը, համագործակցելու, լսելու, վիճելի հարցերը արդարամտորեն լուծելու կարողությունները: Խաղի մեջ դրսևորվում է ոչ միայն երեխայի անհատական անհատական առանձնահատկությունները, այլև փոխհարաբերությունները և արժեքային վերաբերմունքը շրջապատի, մեծերի և իրենց ընկերների հանդեպ:

Շատ խաղեր պահանջում են ակտիվ շարժումներ՝ դրանով նպաստելով երեխայի ֆիզիկական զարգացմանը: Հետաքրքիր խաղերը ստեղծում են առույգ, ուրախ տրամադրություն, երեխաների կյանքը դարձնում բովանդակալից:

Այսպիսով, կրտսեր դպրոցականի համար խաղը նրա բազմակողմանի զարգացման միջոցն է, որտեղ ձևավորվում են երեխաների անձնավորության բոլոր կողմերը, ազգային գիտակցությունը. նրանց հոգեկանում տեղի են ունենում զգալի փոփոխություններ, երեխայի անձի զարգացումը գնում է դեպի ավելի բարձր մակարդակի: Սրանով է բացատրվում խաղի զարգացնող անսահման հնարավորությունները:

Պետք է նշել նաև, որ խաղը սերտորեն միահյուսված է աշխատանքի և ուսուցման հետ: Այսպես, օրինակ՝ տեխնոլոգիայի պարապմունքների ժամանակ երեխաները պատրաստում են տիկնիկներ, որոնք մեծ սիրով օգտագործում են իրենց բեմականացումներում:

Ինչպես նշում են մասնագետները, խաղերը իրենց բովանդակությամբ լինում են տարբեր՝ որոշ խաղեր երեխային կտրում են իրականությունից, որոշ խաղեր օգնում են ճանաչել իրականությունը և հարմարվել դրան: Խաղը հնարավորություն է տալիս երեխային ծանոթանալու տարբեր երևույթների հետ, ակտիվորեն վերարտադրել կամ ձևափոխել իր ուզածի նման, հարստացնել իր տպավորությունները, երևակայությունը, դրսևորել ստեղծագործական ներուժը, ստանձնել տարբեր սոցիալական դերեր:

Ինչպես նշեցինք խաղը երեխայի կյանքում կարևոր նշանակություն ունի, այն ակտիվ գործունեության տեսակ է, որը երբեմն շրջապատող աշխարհի, մեծերի գործողությունների և փոխհարաբերությունների ընդօրինակումն է: Մանկավարժության մեջ խաղերը բաժանվում են հետևյալ տեսակների՝ դիդակտիկ, ճա-

նաչողական, զարգացնող, դերային, սյուժետա-դերային, թատերականացված, կառուցողական, շարժողական, ազգային և այլն: Օրինակ սյուժետային խաղերի համար հաճախ փոքրածավալ թեմաներ են ընտրվում գեղարվեստական գրքերից, ժողովրդական հեքիաթներից, սիրված մուլտֆիլմերից: Խաղն սկսվում է դերերի բաշխումով, երեխաները իրենք են ընտրում իրենց նախընտրած կերպարը: Խաղը նպաստում է երեխաների գիտելիքների, մտածողության և երևակայության, ստեղծագործականության զարգացմանը:

Թատերականացված խաղերում երեխաները սովորաբար փորձում են իրենք ընտրեն իրենց դերերը: Բեմականացված խաղերում կրտսեր դպրոցականները թատերականացված ձևով վերարտադրում են գրական ստեղծագործությունների բովանդակությունը՝ ստեղծելով իրենց համար հարազատ կերպարներ: Երեխաների մոտ մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև տիկնիկային ներկայացումները, հատկապես իրենց պատրաստած տիկնիկներով: Այս տեսակի խաղերը հիմնականում խմբային են, այսինքն՝ երեխան փոխհարաբերությունների մեջ է մտնում ընկերների հետ: Խաղ-բեմականացումները նույնպես լայնորեն օգտագործվում են որպես երեխաների սոցիալականացման, ազգային գիտակցությունը ձևավորման միջոց: Արտահայտչական միջոցները, որոնցից օգտվում է երեխան՝ ձայնի ինտոնացիան, դիմախաղերը, շարժումները, կեցվածքը, քայլվածքը, նպաստում են կոնկրետ կերպարի վերստեղծմանը:

Այս խաղ-բեմականացումների հիմքում մեծ մասամբ ընկած են հեքիաթները, որոնց հերոսները շարժուն են, դինամիկ, սիրելի են երեխաներին: Ներկայացման մեջ երեխան անհանգստանում, ուրախանում, փոփոխում է ստեղծագործությունը իր նախընտրած տարբերակով, տխրում է, գեղարվեստական գրականության հրաշալի աշխարհն է բացվում նրանց առաջ:

Կարելի է ասել, որ վեց տարեկան հասակում, երբ նախադպրոցականները մանկապարտեզից մտնում են դպրոց, նրանք ունենում են կարողությունների զգալի պաշար, որը ձեռք են բերել այդ խաղերի ընթացքում: Նրանք արդեն ունեն հմտություններ և փորձ, որոնք անհրաժեշտ են կոլեկտիվ խաղեր անցկացնելու համար:

Երեխաների կրթադաստիարակչական միջոցներից են դիդակտիկ խաղերը, որոնց նպատակն է նոր գիտելիքներ հաղորդել առարկաների, նրանց դասակարգման, նշանակության, հատկությունների, աշխատանքի տեսակների, բնության երևույթների և այլնի մասին: Հաճախ դիդակտիկ խաղերը կրում են ճանաչողական, մարզական-խաղ վարժությունների և խաղ-մրցույթների բնույթ: Խաղի ընթացքում զարգանում է երեխայի բանականությունն ու հուզական ներաշխարհը, արժեքային կողմնորոշումները, նա կարողանում է ճանաչել և որոշել իր տեղը, ձեռք է բերում համատեղ աշխատանքի փորձ, տարբեր նյութերով ու գործիքներով աշխատելու հմտություն, ինքնատիրապետում:

Մեծ է դիդակտիկ խաղերի նշանակությունը կրտսեր դպրոցականի ան-

ծի զարգացման գործում, լինելով ուսուցանող՝ խաղերը, նպաստում են երեխաների ստեղծագործական կարողությունների (երգելու, նկարելու, ծեփելու), տրամաբանության, խոսքի, շարժումների զարգացմանը, ինչպես նաև երեխաների ինքնուրույնության, մտածողության տարբեր տեսակների, ստեղծագործական կարողությունների, հիշողության, երևակայության, ուշադրության, հետաքրքրությունների զարգացմանը: Անգնահատելի է դիդակտիկ խաղերի դերը կրտսեր դպրոցականի բարոյական դաստիարակության գործում: Դրանք զարգացնում են բարոյական այնպիսի որակներ, ինչպիսիք են՝ հայրենասիրությունը, ընկերասիրությունը, կարգապահությունը, փոխօգնությունը, ինքնահսկումը, արդարամտությունը, պահանջկոտությունը և այլն:

Տարբեր տարիքի երեխաների համար ստեղծված են հատուկ դիդակտիկ խաղեր՝ զույգ նկարներով քարտեր, լոտոներ, դոմինո (թվանշաններով), զանազան խաղալիքներ, սեղանի և խոսքային խաղեր, համակարգչային խաղեր:

Մեծ է կառուցողական խաղերի դերը երեխաների մտավոր զարգացման գործում: Կառուցելու ընթացքում երեխաները դիտում և սովորում են համեմատել, տարբերել, հիշել և օգտվել կառուցելու եղանակներից, հետևել գործողությունների հերթականությանը, յուրացնում են մի շարք բառեր՝ աջ-ձախ, բարձր-ցածր, վերև-ներքև և այլն: Երեխաները ձգտում են կառուցել իրենց մտացած կառույցը, զարդարել, գեղեցկացնել շինությունը, դարձնել այն հարմար, օգտակար: Այս խաղերում բազմաթիվ շարժումներ են կատարում, զարգանում է նրանց ձեռքի մանր մկանները, աչքաչափը, շարժումների կոորդինացիան: Այսպիսով, կառուցողական խաղերը դառնում են երեխայի ստեղծագործական կարողությունների զարգացման, կարևոր միջոցներից մեկը:

Հատկապես կրտսեր դպրոցական տարիքի երեխաները սիրում են ժողովրդական բանահյուսությունից վերցված, շուտասելուկները, հանելուկները, վանկախաղերը և այլն:

Զվարճալի խաղերի հիմքը կազմում են կատակը, հումորը, անսպասելի, ծիծաղելի բառերը: Այս խաղերի հիմնական նպատակը երեխաների ուրախացնելն ու զվարճացնելն է: Այս խաղերի բնորոշ առանձնահատկությունն այն է, որ երեխաները իրենք են հնարում, խաղը և խաղային գործունեությունը կրում է ընդգծված, ինքնագործ, ստեղծագործական բնույթ: Խաղը, ինչպես գիտենք, կյանքի արտացոլումն է: Այստեղ իշխում է «ես կլինեմ» կարծեք թե պայմանական միջավայրը, որը ստեղծվում է երեխաների երևակայությամբ:

Կան նաև կանոններով շարժողական խաղեր, որոնք նպաստում են երեխաների մտքի ճկունությանը, ճարպկությանը, համարձակությանը:

Խաղի մեջ ընդօրինակելով մեծերի գործունեությունը, կիսելով նրանց հետ իր համար հասկանալի ուրախություններն ու տխրությունները, երեխան շրջապատող կյանքի մասնակիցն է դառնում:

Ղ. Աղայանը, ինչպես նաև Խ.Աբովյանը, Հ.Թումանյանը խաղն ու երգը համարում էին երեխայի հիմնական պահանջը: Խաղի միջոցով հայեցի դաս-

տիարակելու, մտածելու, ծանոթացնելու հայրենի բնությանը:

Մանկական խաղը իր ծագումով և բովանդակությամբ ազգային ժողովրդական բնույթ ունի և փոխացվում է սերնդեսերունդ: Դրանում ձևավորվում է երեխայի ազգային գիտակցությունը, դրսևորվում է աշխարհը ճանաչելու, նրա վրա ներգործելու երեխայի պահանջը, զարգանում են նրա կամային, ֆիզիկական որակները:

Մարդը, որ տարիքում էլ լինի, սիրում է խաղալ մշտապես զգում խելացի, ուրախ, գրավիչ խաղի պահանջը: Ուսումնասիրության, փորձի, սխալվելու միջոցով երեխան իր համար բացահայտում է աշխարհը, միջավայրը:

Գրականություն

1. Աբովյան Խ. Պարապ վախտի խաղալիք, Հայպետհրատ 1955, 171 էջ
2. Աղայան Ղ. Երկերի ժողովածու հատոր չորրորդ, Հայպետհրատ, Երևան 1969, էջ 684
3. Թումանյան Հ. Երկերի ժողովածու, Հրատ. Հայաստան, Երևան 1969, հատոր 4, էջ 490
4. Պարոնյան Հ. Երկերի ժողովածու տասը հատորով, հատոր տասներորդ, հայկական ՍՍՀ ԳԱ Հրատարակչություն Երևան 1979, էջ 710
5. Выготский Л. С. Игра и ее роль в психическом развитии ребенка)) Вопросы психологии № 6. -1966.
6. Эльконин Д.Б. Психология игры. -2-е изд.-М.: Гуманит.изд. центр ВЛАДОС, 1999. -360с.

Амалия Саакян - ИГРА КАК ЭФФЕКТИВНОЕ СРЕДСТВО РАЗВИТИЯ ТВОРЧЕСКИХ СПОСОБНОСТЕЙ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ. Существуют различные теории о значении игры. Игра дает ребенку возможность творить, фантазировать, учиться, сотрудничать, и конечно же развиваться. В начальной школе можно решить многие воспитательные вопросы через игру. Игра раскрывает индивидуальные умения и способности ребенка, способствует развитию личности.

Amalya Sahakyan - EFFECTIVE MEANS OF DEVELOPING THE CREATIVE SKILLS OF JUNIOR SCHOOLCHILDREN. There are various theories about the nature and meaning of the game. The game gives the child an opportunity to create, imagine, learn, cooperate and, of course, to develop. In elementary school, it is possible to solve many educational and nurture problems through the game. The game reveals the child's individual skills and abilities, contributes to the development of the child's personality.

Keywords: *game, creativity, activity, upbringing, development, imagination.*

ՇԵՂՎԱԾ ՎԱՐՔՈՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Քրիստինե Պետրոսյան

Երևանի Հայքուսակ համալսարանի «Ռոսլին» ակադեմիա, դասախոս
Ընդունված է տպագրության, 20.06.2023

Ամփոփագիր. Շեղվող կոչվում է այն վարքաձևը, որը չի համապատասխանում սոցիալական սպասումներին, շեղված է տվյալ սոցիալական, հասարակական խմբերի, տվյալ հասարակության և մշակույթի կողմից ընդունված սոցիալական նորմերից: Անհատական սոցիալ-մանկավարժական չափանիշն արտացոլում է յուրաքանչյուր անձի արժեքը: Տվյալ չափանիշին համապատասխան՝ մարդուն ներկայացվող ժամանակակից պահանջները չեն սահմանափակվում հասարակական նորմերը, հրահանգները կատարելով, այլ ենթադրում են նաև ինքնաճանաչողություն և ինքնակատարելագործում: Քննարկված են շեղվող վարքի հիմնական տիպերը և տրված են համապատասխան առաջարկներ:

Հիմնաբառեր. սոցիալ-մանկավարժական, հասարակական նորմ, դեյլիվենտ, հանցավոր վարք, ինքնաճանաչողություն, ինքնակատարելագործում:

Ներածություն.

Շեղվող վարքի առաջատար չափանիշների Ե.Վ. Զմանովսկայայի դասակարգումը հիմնված է խախտվող նորմի և վարքի հետևանքների առանձնացման վրա: Այս տեսանկյունից շեղվող վարքի տարատեսակներն են հակասոցիալական, ասոցիալ կամ անբարո և աուտոդեստրուկտիվ (ինքնակործանիչ) վարքը [1,2]:

Հակասոցիալական վարքը այն վարքագծային դրսևորումներն են, որոնք հակասում են գործող իրավական նորմերին և ներառում է բոլոր այն գործողություններն ու արարքները, որոնք արգելված են գործող օրենսդրությամբ:

Ասոցիալ կամ անբարո է այն վարքը, որը շեղված է բարոյական նորմերի կատարումից և վտանգում է հասարակական հարաբերությունների ներդաշնակ ընթացքը:

Ինքնակործանիչ (աուտոդեստրուկտիվ) վարքը դրսևորվում է հոգեբանական նորմերից շեղումներում և վտանգում է անձի զարգացմանն ու ամբողջականությանը: Նրա հիմնական ձևերն են սուիցիդալ վարքը, կախվածությունները, ֆանատիկ վարքը (օրինակ՝ ներգրավվածությունը ապակառուցողական-կրոնական աղանդավորական շարժումներում), վիկտիմ վարքագիծը և այլն:

Շեղվող վարքի հիմնական տիպերն են՝ [3,4]:

- Թափառաշրջիկությունը.

Սրանց ներկայացուցիչները չսոցիալականացված մարդիկ են, ովքեր մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով չեն կարողացել գտնել իրենց տեղը հասարակության մեջ և արդյունքում հայտնվել են հասարակությունից դուրս:

- Հարբեցողությունը.

Ինչպես մեծամասնությունը վկայում է՝ խուլիգանության 90%, բռնաբարությունների 90% և մնացած հանցագործությունների 40%-ը կապված են հարբեցողության հետ: Սպանությունների, գողությունների, խմբակային հարձակումների և հասցված ծանր մարմնական վնասների 70%-ը կատարվում են ոչ սթափ վիճակում գտնվող անձանց կողմից: Ամուսնալուծությունների 50%-ը ևս կապված է հարբեցողության հետ:

- Թմրամոլությունը.

Թմրանյութերն իջեցնում են նյարդային և ֆիզիկական ակտիվության մակարդակը, առաջացնելով հետևյալ էֆեկտները՝

- ✓ Անալգետիկա (ցավի թեթևացում)
- ✓ Հանգստացում (հուզմունքից ազատում, մկանային ռեակցիա)
- ✓ Հիպնոզ (թմրեցման իրավիճակ և քնահարություն)
- ✓ Էյֆորիա (վայելք և բավարարվածություն)

Թմրանյութի օգտագործման ժամանակ մարդը կախվածություն է ձեռք բերում թմրանյութի նկատմամբ: Ավելի ու ավելի մեծացնելով ընդունման չափը, հաճախ մահանում են գերազանցելով թույլատրելի չափը:

- Սեքսուալ շեղումներ, մարմնավաճառություն.

Սեռական շեղումները համընդհանուր ընդունված սեռական դերային վարքի նորմերից ոչ պաթոլոգիական շեղումներ են: Երիտասարդ տարիքում սեքսուալ դեվիացիաները կարող են ծագել հիմնականում երկու պատճառներով՝

1. տվյալ տարիքին բնորոշ հիպեր սեռականության և չձևավորված բարոյական արժեքներով,
2. սոցիալական միջավայրում դերային կողմնորոշվածության բացակայություն (ծնողական տուն, նշանակալի անձինք և այլք), և ինչպես փաստում են հոգեբանական տրավմաները հանգեցնում են անհատի հոգեբանական կերտվածքի դեֆորմացիային:

- Դելիկվենտ և հանցավոր վարքի տիպեր.

Դելիկվենտ է կոչվում այն վարքաձևը, որը քրեական օրենսգրքի տեսանկյունից ուղղակիորեն դատապարտելի իրավախախտում չէ (ծեծկոտուքներ, աննշան գողություններ, գործից ուշացում և այլն):

Մեթոդ

Հետազոտության օբյեկտը շեղվող վարքով երեխաների հետ սոցիալական մանկավարժի աշխատանքի առանձնահատկություններն են:

Հետազոտության առարկան շեղվող վարքով երեխաների հետ սոցիա-

լական մանկավարժի աշխատանքի կազմակերպման գործընթացն է:

Հետազոտության նպատակը շեղվող վարքի ձևավորման վերաբերյալ տարբեր տեսությունների, երեխայի շեղվող վարքի նախադրյալների, պատճառների և դրանց ձևավորմանը նպաստող գործոնների և այդ խմբի հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքի առանձնահատկությունների ուսումնասիրումն է:

Վերոնշյալ նպատակը ենթադրում է հետևյալ խնդիրները.

1. Ուսումնասիրել շեղվող վարքի վերաբերյալ համապատասխան գրականություն:
2. Բացահայտել մանկական ակոհոլիզմի, թմրամոլության, մարմնավաճառության հիմնական պատճառները, դրանց ձևավորմանը նպաստող գործոնները, հետևանքները:
3. Պարզել սոցիալ-մանկավարժական գործունեության, դրա բովանդակության՝ նպատակի, մեթոդների, տեխնոլոգիաների առանձնահատկությունները շեղվող վարք դրսևորող երեխաների հետ:
4. Վերոնշյալ մարդկանց ինտեգրել հասարակություն՝ ապահովելով նրանց առողջ սոցիալականացումը:
5. Իրականացնել հետազոտություն շեղվող վարքով դպրոցականների հետ՝ պարզելու, թե որքանով են հակված շեղվող վարքի զբաղեցրած դերը և այլն:

Հետազոտությունը իրականացնելիս կիրառվել են անկետավորման, դիտման, առկա գրականության և փաստացի պետական կառույցների կողմից տրվա ինֆորմացիայի վերլուծություն:

Արդյունքներ

Համաձայն ոստիկանության քրեական հետախուզության վարչության անչափահասների ընդունման և տեղաբաշխման բաժնի տվյալների ՀՀ-ում հաշվառված թափառաշրջիկ երեխաների թիվը 2018 թվականի տվյալների 4մուրացիկ և թափառաշրջիկ անչափահաս: Մեր հանրապետությունում հետազոտությունները վկայում են, որ թափառաշրջիկների հիմնական մասը վաղ տարիքում ընդգրկված չեն եղել ընտանիքի հուզական կառուցվածքի մեջ, ինչի արդյունքում էլ նրանք օտարվել են ծնողներից և ընտանիքից նույնպես:

Սոցիալ-մանկավարժության տեսանկյունից հարբեցողությունը վտանգավոր ազդեցություն է ունենում ընտանիքում բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորվելու վրա, երեխայի առողջ զարգացման, ինչպես նաև լիարժեք անձնավորություն զարգանալու համար:

Ոստիկանության ներկայացրած վիճակագրական տվյալներով՝ 2020 թվականին Հայաստանում հայտնաբերվել է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հետ կապված հանցագործությունների 1226 դեպք՝ նախորդ տարվա 1088-ի փոխարեն:

2023 թվականի սոցիոլոգիական հետազոտությունները Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերել են 143 դեպք: Տեղեզրամ ալիքով մասնագետները բարձրաձայնում են, որ աճել է թմրանյութեր օգտագործող անչափահասների ու կանանց թիվը: Հաշիշ կամ այլ արտադրական կանեփ օգտագործողների քանակը պրակտիկորեն հավասար է երիտասարդ մարդկանց ընդհանուր քանակին: Թմրանյութն ակտիվորեն օգտագործողների 4/5 մասը դրանք սկսել է օգտագործել 15-17 տարեկանից:

1990 թ. կատարված ուսումնասիրություններն ու հետազոտությունները ցույց են տալիս, որ.

- Հարավային Աֆրիկայում մարմնավաճառության նպատակով օգտագործվել է 18 տարեկանից ցածր 28-30 հազար երեխա, որոնց կեսը 10-14 տարեկան է,
- Հնդկաստանի 6 ամենամեծ քաղաքներում սեռական շահագործումների են ենթարկվել 18 տարեկանից ցածր 21-30 հազար երեխա,
- Դոմինիկյան Հանրապետությունում մանկահասակ մարմնավաճառների թիվը 30 հազար է,
- ԱՄՆ-ում անչափահաս մարմնավաճառների թիվը հասնում է 300 հազարի:

Մարմնավաճառությամբ զբաղվող կանայք ՀՀ-ում առավելապես աչքի են ընկնում 18-30 տարիքային խմբի ներկայացուցիչները: Իրավապահ մարմինների ներկայացուցիչները փաստում են, որ անչափահաս մարմնավաճառները կազմում են մարմնավաճառների ընդհանուր թվի 10-15%-ը:

Քննարկում

Շեղված վարքի սոցիալ-մանկավարժական կանխարգելումը ենթադրում է իրավական, հասարակական, տնտեսական, բժշկա-սանիտարական, մանկավարժական, սոցիալ-հոգեբանական ընդհանուր և հատուկ միջոցառումների համակարգ:

Կանխարգելիչ միջոցառումների իրականացման արդյունավետության պայմանները նրանց համալիր բնույթն են, հաջորդականությունը, տարբերակվածությունը և ժամանակին լինելը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը առաջարկում է տարբերել առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելումները:

Առաջնային կանխարգելումն ուղղված է այն անբարենպաստ գործոնների հեռացմանը, որոնք առաջ են բերում որոշակի անցանկալի երևույթներ, ինչպես նաև այդ գործոնների նկատմամբ անձի կայունության, դիմադրողականության բարձրացմանը:

Երկրորդային կանխարգելման նպատակը դիսկի խմբերի հետ աշխատանքում հոգեենյարդային և վարքագծային խաթարումների բացահայտումն ու հաղթահարումն է:

Երրորդային կանխարգելումը կարող է ուղղված լինել կայուն վարքագծային շեղումների նախազգուշացմանը:

Սոցիալ-մանկավարժական կանխարգելիչ միջոցառումները կարող են ընդգրկվել բոլոր երեք մակարդակների միջոցառումների համալիրում: Այն առավել արդյունավետ է այն պայմանների և պատճառների վրա կենտրոնացման ժամանակ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են շեղվողվարքի կազմավորման գործընթացի վրա, հատկապես դժվարությունների, խնդիրների առաջացման առավել վաղ փուլում:

Եզրակացություն

Սոցիալ-մանկավարժական և հոգեբանական միջամտության առաջատար մեթոդներն են՝

- թրենինգները
- սոցիալ-մանկավարժական և հոգեբանական խորհրդատվությունը:

Սոցիալ-մանկավարժական հոգեբանական միջամտության տարատեսակներից է նաև ճգնաժամային նախազգուշացումն ու կանխարգելում, որը հատկապես նպատակահարմար է կիրառել արտակարգ իրավիճակների սթրեսային ներգործության հետևանքով զարգացող վարքագծային խաթարումների հաղթահարման միջոցառումների ժամանակ:

Ելնելով թեմայի բնույթից՝ շեղվող վարքի պատճառականության շղթայում մեզ առաջին հերթին հետաքրքրում էին այն պայմանները, որոնք ներգործելով անձի վրա՝ խաթարել են նրա հոգեբանական կայունությունը՝ վերափոխելով նրա վարքի դրդապատճառային ոլորտում առկա արժեքային կողմնորոշումների, համոզմունքների համակարգը:

Հղումներ

1. Андреева Г.М. Социальная психология. Учебник для высших учебных заведений. - М.: Аспект Пресс, 2011. - с. 378.
2. Диагностика и коррекция социальной дезадаптации подростков: Пособие для психологов, педагогов, психосоциальных и социальных работников (Под ред. С.А. Беличевой. - М., 2010. - с. 287.
3. Плоткин М.М. Социально-педагогическая помощь детям из неблагополучных семей () Педагогика. - 2007. - №1. - С.47-51.
4. Трус И. Школьники с девиантным поведением: особенности воспитания Воспитание школьника. - 2007. №7. - С.44-46.

Кристине Петросян - СОЦИАЛЬНО-ПЕДАГОГИЧЕСКАЯ РАБОТА С ДЕТЬМИ С ДЕВИАНТНЫМ ПОВЕДЕНИЕМ. Поведение, не соответствующее социальным ожиданиям, называется девиантным. Девиантное поведение можно определить как поведение, отклоняющееся от социальных норм,

принятых данной социальной группой, данной социальной группой, данным обществом и культурой. Индивидуальный социально-педагогический стандарт отражает ценность каждого человека. В соответствии с этим стандартом современные требования к человеку не ограничиваются выполнением социальных норм и предписаний, но предполагают также самопознание и самосовершенствование. К основным типам девиантного поведения относятся: бродяжничество, алкоголизм, наркомания, сексуальные отклонения, проституция, виды делинквентного и преступного поведения.

Ключевые слова: *социальная норма, делинквент, криминальное поведение, самосознание, самосовершенствование.*

Kristine Petrosyan - SOCIAL-PEDAGOGICAL ACTIVITIES WITH CHILDREN WITH DEVIANT BEHAVIOR. Behavior that does not meet social expectations is called deviant. Deviant behavior can be defined as behavior that deviates from the social norms accepted by a given social group, a given social group, a given society and culture. The individual socio-pedagogical standard reflects the value of each person. In accordance with this standard, the modern requirements for a person are not limited to fulfilling social norms and instructions, but also imply self-knowledge and self-improvement. The main types of deviant behavior are: vagrancy, alcoholism, drug addiction, sexual deviations, prostitution, types of delinquent and criminal behavior.

Keywords: *socio-pedagogical, social norm, delinquent, criminal behavior, self-awareness, self-improvement.*

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆԻ ԵՐԳԻԾԱՆՔՈՒՄ

Նաիրա Բալայան

Երևանի «Հայբուսակ» համալսարան
Ընդունված է տպագրության, 10.07.2023

Ամփոփագիր. Քննարկված է ֆրանսահայ երգիծաբան Նշան Պեշիկթաշյանի երգիծավեպերը, որոնցում կենտրոնացած էր պեղ և գրավում հայ հեղափոխական այն գործիչը, ում համար անձնական շահը վեր է ազգային դավանանքից, ում հեղափոխական գաղափարները իրականում սին ու շինծու բարոյական արժեքներ են: Հոդվածում ցույց է տրվում, որ այս վեպերի հղացքում ազգապահպանության, հայ ժողովրդի կենսագոյության հրամայականներն են, և Պեշիկթաշյանի՝ հեղափոխության մակարայնություններին, ազգային կեղծ արժեքամակարգ ունեցող գործիչներին երգիծելու բոլոր հայեցակետերը բխում են երգիծաբանի ազգաշահ կենսափոխակերպության այս գլխավոր խնդիրներից և ուղղված են սույն հակահերոսի կազմաքանդմանը: Հոդվածում քննվում են Պեշիկթաշյանի քաղաքական-հասարակական երգիծանքի էական հատկանիշները և ռճական այն հնարքները, որոնց միջոցով հեղինակը հասել է գեղարվեստական խոր ու արդիական ընդհանրացումների և բացառիկ գեղագիտական արժեքայնության, ինչի շնորհիվ, ըստ հոդվածագրի դիտարկման, Նշան Պեշիկթաշյանը իրավամբ դասվում է հայ հայտնի երգիծաբանների՝ Հ. Պարոնյանի, Ե. Օտյանի, Լեո Կամսարի շարքին:

“The church itself had come to the poor girl in her narrow room, or the room had gone to the church. She sat on the pew with the rest of the pastor’s household, and when they had finished the hymn and looked up, they nodded and said, “It was right of you to come, Karen”. “It was mercy” she said” (1,194) . Given this context, the ending can be considered as a happy one because Karen’s heart broke full of “sunshine, peace, and joy” expressing her choice to reconnect with God and spiritual values.

The study of Andersen’s tales’ origins highlights the viewpoint that they are deeply personal and autobiographical. “The Red Shoes” protagonist was named after his own half-sister, Karen Marie Andersen. Besides his father was a shoemaker and once had to make red shoes for the daughter of a rich man. “The Little Match Girl” tale was inspired by the childhood experience of Andersen’s mother. As a child she was often sent out into the street to beg (4,7).

The main conclusion that can be drawn is that in controversy between the selected fairy tales, verity that either protagonist was the victim of the society is differentiated. An innocent child froze to death and no one noticed or land a helping hand. Unlike her Karen was given a chance to have a better life. But the society found fault with her behavior. The very society that neglected the dying girl on New Year’s Day.

Linguists and historians think the original inclusion of these themes was a reflection of the medieval society in which these folk tales originated, which was much more ruthless. It is believed that moral value is installed by fairy tales to affect the children’s characteristic. The aim of moral value is constructed from the society. The children must honor and obey: and that they should be sensible and ally and not impetuous, clumsy, temperamental, jealous or selfish.(2)

References

1. Andersen H. C. (2016), The Complete Fairy Tales and Stories.
2. Matthew Orville Grenby 2008 (Edinburgh University Press), Children’s Literature
3. Aiste Vitkune (2022), (Un)Happy Endings of Andersen’s Tales: Semiotic Approach
4. Հայնց Յանիշ 2021, Հանս Քրիստիան Անդերսեն, նրա կյանքի ճամփորդությունը
5. https://www.academia.edu/3590036/Moral_Instructive_in_Hans_Christian_Andersen_s_The_Red_Shoes
6. <https://interestingliterature.com/2022/03/andersen-red-shoes-summary-analysis/>
7. Andersen H. C. The Fairy Tale of My Life: An Autobiography (2000) Cooper Square Publishers

Лилит Оганян - СВОЕОБРАЗНОЕ ВОСПРИЯТИЕ МОРАЛИ В СКАЗКАХ АНДЕРСЕНА: НЕСЧАСТНЫЕ НАВЕКИ. Статья посвящена исследованию феномена несчастливого конца в известных сказках Андерсена. Две известные сказки Андерсена были проанализированы в этой статье с точки зрения моральных норм, раскрывающих двусмысленность несчастливых концов в сказках и их нравственных предостережений через народные рассказы.

Ключевые слова: сказка, моральная ценность, рассказ, детская литература, средневековое общество, бедная девочка

Լիլիթ Օհանյան - ԲԱՐՈՅԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԲԱՅԱՌԻԿ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԱՆԴԵՐՍԵՆԻ ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒՄ: ԹՇՎԱՌ ՀԱՎԻՏՅԱՆ: Հոդվածն անդրադառնում է Անդերսենի տխուր վերջաբանով հեքիաթների ուսումնասիրությանը: Այս աշխատանքում ներկայացված են հայտնի հեքիաթագրի երկու սիրված ստեղծագործություն, որոնք ուսումնասիրվել են բարոյախրատական մետեցման տեսանկյունից՝ ժողովրդական պատմվածքների միջոցով բացահայտելով հեքիաթների տխուր ավարտի երկիմաստությունը և նրանց բարոյախրատական նախազգուշացումները:

Հիմնաբառեր- հեքիաթ, բարոյական արժեք, պատմվածք, մանկական գրականություն, միջնադարյան հասարակություն, չքավոր աղջիկ

ESTUARY ENGLISH AND ITS LINGUISTIC FEATURES AS AN ACCENT

Yeran Khachatryan

Yerevan Haybusak University

Received 12.05.2023, accepted, 10.07.2023

Abstract: *English language learners often get in contact with different pronunciations and accents as nearly everyone in Great Britain speaks with an accent and only about 3-5 % uses the RP in their everyday language. Among them Estuary English has a special role in the U.K. Some people think it is “tomorrow’s RP”. It first really appeared in 1980s, but now it is established in the South of England as a new accent.*

Key words: *Estuary English, RP, Cockney English, l-vocalization, glottaling, happy-tensing, yod-coalescence, accent, h dropping, th fronting.*

Though in 1995 the UK Minister of Education, Gillian Shephard, launched into a denunciation of Estuary English, condemning it as slovenly, mumbling, bastardized Cockney and claimed that teachers have to do their best to eradicate it, presently not only are the prominent politicians, sportsmen, media personalities claimed as typical speakers of it, but even people as eminent as Queen Elizabeth’s youngest son, Prince Edward. In 1993 the London *Sunday Times* reported that Estuary English was ‘sweeping southern Britain’.

Linguists see ‘RP’ as the standard accent and this accent is taught to foreign language learners but very few people in Great Britain really speak RP. These facts are important to know EFL-teachers to pay much attention on accents as well.

The term ‘Estuary English’ was coined in 1984 by David Rosewarne, an EFL teacher. He characterized it as ‘a variety of modified regional speech [...] a mixture of non-regional and local south-eastern English pronunciation and intonation. If one imagines a continuum with RP and London speech at either end, “Estuary English” speakers are to be found grouped in the middle ground.’

The accent which is named after the ‘banks of the Thames and its estuary’, is to be heard in the House of Commons, the City, the Civil Service, local government, the media, advertising, and the medical and teaching professions in the south-east.

Being a young accent Estuary English spread rather quickly to the north and to the west and its development continues to increase.

Thus, Estuary English is a new name but it is not a new phenomenon. It is the continuation of a trend that has been going on for five hundred years or more – the tendency of London speech features spreading out of London. Nevertheless some linguists foresee that Estuary English is unlikely ever become anything more

than a regional accent and that the sociolinguistic conditions are not such that it could turn over into the new RP. Anyway, if not the whole accent is taken over as the standard, maybe some of the most remarkable features might become the norm.

There really are no hard and strict rules of speaking Estuary English, because it's individual how one wants to speak it. Sometimes they drop the it "t"-s and sometimes they don't. The same refers to the pronunciation of sound [h].

In general Estuary English shares a lot of features with the Cockney accent (the dialect of the English language traditionally spoken by working-class Londoners), for example l-vocalization, glottaling, happy-tensing, yod-coalescence etc. But on the other hand, things like h-dropping, which means omitting the h sound before vowels, or th-fronting, which means replacing the dental fricatives ([t, d]) with labiodental fricatives ([f, v]) are absent in Estuary English.

Happy-tensing describes the change of the (i) sound at the end of words like *happy* or *coffee*. The sound in Estuary English changes from the normally used [i] as in *bit* to the longer and lower [i:] as in *beat*. That affects the final vowels of words such as *happy*, *city*, *hurry*, *taxi*, *movie*, *Charlie*, *coffee*, *money*, *Chelsea*. It may also apply in inflected forms of such words containing an additional final consonant sound, such as *cities*, *Charlie's* and *hurried*. It can also affect words such as *me*, *he* and *she* when used as clitics, as in *show me*, *would he*?

The process of losing the 'y' is termed yod-dropping.

Yod-coalescence is a process that fuses the clusters (dj, tj, sj, zj) into the sibilants [dʒ, tʃ, ʃ, ʒ] respectively (for the meanings of those symbols, see English phonology). The first two are examples of affrication.

This is a phenomenon which concerns the semi-vowel y and its development.

The Yod-coalescence and Yod-dropping, have been very influential on RP in recent decades. Yod-coalescence means that a [tʃ] sound is used where a [tj] sound would be the norm. This occurs in words like *tune*, *Tuesday* or *tulip*. The same happens with the voiced (d) sound in advance of a (j)- sound: the [dj] sound at the beginning of such words as *dune* or *duke* turns into a [dʒ]- sound. The consequences of this process are that the words *dune* *june* and *due* *Jew* become homophonous. This change is very strongly used in Cockney as well.

Thus, [tj] > [tʃ], e. g. *got you* - ɡɒtʃə

[dj] > [dʒ], e.g. *would you* - wʊdʒə

[sj] > [ʃ], e.g. *this year* - ðɪʃɪə

[zj] > [ʒ], e.g. *casual* - kæʒʊəl > kæʒʊəl

Yod-coalescence is an assimilation and every assimilation is a simplification of articulation.

Another London feature is the Yod-dropping. This can also be seen in EE after alveolars, especially after an (l), for example in words like *absolute*, *lieu* and

illuminate which were once pronounced with a (j)- sound before the (u). But this has changed and now the socially accepted pronunciation is just the (u)- sound.

Estuary English created some diphthongs where RP uses simply vowels. The RP (i:) becomes a diphthong in EE, the (əi) to be exact; for example *sea* will be pronounced (səi) in EE. The same change happens with (u:) which becomes (əu:). This sound occurs in 'blue'.

There is also a change in the other direction. In words like *either* and *neither* the RP diphthong (ai) in EE is pronounced simply as (i:). This is when I caught myself in the act, because I used to pronounce it exactly this way (i:De), thinking it was the norm.

Moreover, EE uses (ai) instead of the RP (ei) diphthong. That makes the word 'say', being pronounced as (sai) homophonous to *sigh* in EE. The pronunciation of 'say' in cockney (sVi) though is slightly different.

L-vocalization

L-vocalization, in linguistics, is a process by which a lateral approximant sound such as [l], or, perhaps more often, velarized [ɫ], is replaced by a vowel or a semivowel. This is typical to cockney English. People pronounce [l] without bothering to let the tongue touch the palate. As a result [l] turns into something like [u] or [o] or even [w]. Its a simplification of articulation.

Another phonetic pronunciation is the change of the dark [ɫ] that sounds like [w]. So the alveolar consonant (l) changes into semi-vowel (w). For example, the word "football" sounds like 'foo'baw'.

The l-vocalization is a subtle change, because it can lead to misunderstandings. David Rosewarne gave a funny example l-vocalization consequence. He wrote: "In Estuary English *awful* and *all full* could be confusable in rapid speech, as in the possible utterance: 'I'm afraid our single rooms are awfuw'" (Rosewarne 1994b: 5).

Glottaling) the glottal stop

Glottaling is perhaps the most known change in the English language in recent years. Wells describes it as "catch in the throat" instead of a t-sound. Altendorf gives a more precise definition: "The glottal stop is a voiceless plosive produced by an obstruction of the air-stream formed at the vocal folds." (Altendorf, 2003: 63).

The real sound isn't heard and the listener only perceives "the abrupt cessation or the abrupt onset of the following sound." It must be noted that this change doesn't mean just leaving out the t-sound. Wells' example of this phonetic alternation is the word *plate*, which due to the glottal stop becomes [plei] and this is certainly different to play [plei]. Other examples are the words *catwalk* [kæ'wɔk] and *bottle* [bɔ'l]

Why are these phonetic changes so popular? The most probable answer to this question is that people want to sound different from the accepted phonetic rules.

“When we speak, we must constantly make choices of many different kinds: what we want to say, how we want to say it, and the specific sentence types, words, and sounds that best unite the what with the how” (Wardhaugh, 1992: 258). So Estuary speakers make their own choices with respect to their communication patterns.

What refers to the vocabulary and grammar David Rosewarne mentions some small differences concerning special vocabulary items. He writes that *Cheers* is preferred to *thank you* and the word basically is used more often during the course of speaking. Instead of ‘here you are’ they say ‘there you go’, Shortened words are widely used: enough- nuff, brother- bro)bra, elision of the words want to and going to-wanna, gonna is common. Other examples of Estuary vocabulary are: ski -wench, bellend- someone annoying, skank-prostitute etc. It must be mentioned that the usage of this kind of lexical expressions are not enough to decide that the speaker speaks Estuary English. Every speaker is free to choose certain words in certain context, it is pronunciation and the rise fall intonation that differentiate the Estuary speaker.

As for grammar it can be mentioned the usage of *was* for plural subjects. E.g. We was walking down the street. Ain’t is used as negative am)is)have. E.g. I ain’t well. There can be multiple negation in the sentence. E.g. Tom hasn’t got no money. There can be adjective form with adverbial function. E.g. She sang real nice. Most frequent use of tags, especially “inni”. E.g. Nice day, inni? David Crystal writes about the ‘confrontational’ question tag, as in *I said I was going, didn’t I?*

Estuary English gains increasing social acceptability. It has become an intermediate accent spoken by speakers belonging to middle classes and is gradually replacing RP in an increasing number of functions. Though most of the speakers in the areas surrounding London have glottalling scores intermediate between RP and Cockney, yet they are far from being speakers of one uniform variety that we could call Estuary English.

References

1. Joanna Przedlacka, 2002. Estuary English? A sociophonetic study of teenage speech in the Home Counties. Peter Lang, 2002
2. Ulrike Altendorf, 2003. Estuary English. Levelling at the Interface of RP and South-Eastern British English. Germany, 2003
3. Steve Crancher, 2002. Dijja wanna say sumfing?. Ian Henry Pubs. 2002
4. Paul Coggle, Do you speak Estuary? The new Standard English – How to spot it and speak it. London: Bloomsbury. 1993
5. Rosewarne D (1984) ‘Estuary English’. Times Educational Supplement, 19 October 1984
6. Rosewarne D (1994) ‘Estuary English: tomorrow’s RP’ English Today 37.10.1

(January 1994), 3-8

7. Wells J C. 'Transcribing Estuary English: a discussion document' Unpublished paper, 1994
8. Wardhaugh, Ronald, Introduction to Sociolinguistics. 2nd ed. Oxford: Blackwell, 1992

Երան Խաչատրյան - “ESTUARY ENGLISH” ԵՎ ՆՐԱ ԼԵԶՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՎՅԵՆՏ: «Estuary English» տերմինը ստեղծվել է Դեյվիդ Ռոզուորնի կողմից 1984 թվականին և առաջին անգամ նկարագրվել է Times թերթի ուսումնական հավելվածի հայտնի հոդվածում: Ըստ հեղինակի այն հնչյունաբանական և սոցիալական միջանկյալ խոսվածք է Քոքնիի (բնիկ լոնդոնցիների խոսվածքի) և RP-ի (Ընդունված արտասանություն) միջև, հիմնված Լոնդոնի հարավ-արևելյան առողանության վրա: Այն, ինչ նա համարում է «Estuary English» -ի նորությունն ու ամենաուշագրավ բնորոշ գիծը, նրա սոցիալական ընդունելիության աճն է: Ռոզուորնը նույնիսկ «Estuary English»-ը բնութագրում է որպես «Նոր RP»:

Еран Хачатрян - ЭСТЮАРИЙСКИЙ АНГЛИЙСКИЙ И ЕГО ЯЗЫКОВЫЕ ОСОБЕННОСТИ КАК АКЦЕНТ. Термин «Estuary English» был придуман Дэвидом Розуорном в 1984 году и впервые был описан в известной статье в Образовательном приложении «Таймс». По мнению автора, это фонологический и социальный промежуточный акцент между Кокни (речь коренных лондонцев) и RP (Received Pronunciation), основанный на акценте юго-восточного Лондона. В чем он видит новизну и наиболее заметную характеристику эстуарного английского, так это в его растущей социальной приемлемости. Розуорн даже описывает «Estuary English» как «Новый RP».

Ключевые слова: эстуарный английский, RP, кокни-английский, вокализация, глотание, счастливое напряжение, акцент, опускание h.

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԳԱՐՎԵՍՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

^{1,2}Անուշ Եղիազարյան, ²Անահիտ Ստեփանյան

¹Խ.Աբովյանի անվ. ՀՊՄՀ, ²ԵՀՀ Ռոսլին Ակադեմիա, Դիզայնի բաժին
Ընդունված է տպագրության 10.07.2023

Ամփոփագիր. Հայկական գորգն ազգային մշակույթի անբաժանելի մասն է, և ազգային ինքնության ցուցիչներից է: Հայաստանում գորգագործության զարգացումն առաջին հերթին պայմանավորված էր Հայկական լեռնաշխարհում թելի հումքի՝ բրդի, այծի մազի, ինչպես նաև բույսերից, հանքաքարերից, միջատներից ստացվող ներկանյութերի առաքությամբ: Գորգագործությունը Հայաստանում զարգացել է երկու ուղղությամբ՝ արհեստանոցներում, ուր աշխատել են մասնագետ վարպետներ, և ժողովրդական լայն խավերի շրջաններում, տներում, տնայնագործ կանանց ու տղամարդկանց ձեռքով: Պատմական վաղ ժամանակաշրջանում առարկաների դեկորատիվ հարդարանքն առաջին հերթին ուներ ապոփրոպեիկ (հմայական) նշանակություն, հետո միայն՝ գեղագիտական: Հայկական գորգի գեղարվեստական տարրերի նաև նրա ծիսապաշտամունքային գործառույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գորգը դասվել է սրբազան առարկաների շարքին:

Հիմնաբառեր. Հայկական գորգ, ազգային մշակույթ, գեղարվեստական զարդաներ, ոստայնանկություն, խորհրդանշական պատկերներ, ապոփրոպեիզմ:

Հնագույն ժամանակներից Հայաստանի տարածքում կիրառվել են գեղարվեստական գործվածքների ստեղծման հյուսածո, ասեղնագործ և դաջման եղանակները: Ասորեստանյան սեպագիր բնագրերում՝ որպես ռազմավար, նշվում են ուրարտական վուշե և բրդյա թանկարժեք գործվածքներ: Մշակույթով հարուստ շատ ժողովուրդների նման հայերն էլ, օգտվելով երկրի բարիքներից, արտադրել են գործվածքներ, և դրանք զարդարել տարբեր եղանակներով: Գործվածք անելը, այն զարդարելու ձևերը կազմում են կիրառական արվեստի ճյուղերը: Հայաստանի բնական հարստությունը, թելերի, ներկերի առկայությունը նպաստել են ոստայնանկության, ներկարարության, գունազարդ գործվածքների արտադրությանը:

Սկսած հին դարերից՝ արտադրվել են բազմազան հարթ, միագույն և զարդափյուն գունավոր գործվածքներ: Միջնադարը հայտնի է եղել զարգացած ոստայնանկությամբ՝ ոստայնանկ ջուլիակներով, կտավագործներով, ասվագործներով, մետաքսագործ-կերպասագործներով, դիպակագործներով և այլն: Բացի տեղական արտադրանքից՝ գործվածքներ են ներմուծվել նաև ուրիշ երկրներից: «Հին Հայաստանի քաղաքների ու քաղաքային կյանքի զարգացման մասին» աշխատության մեջ Ս. Երեմյանը գրում է, որ հելլենիստական շրջանում Հայաստանում բարձր վարպետության էր հասել ոստայնանկությունը: Այդպիսի կենտրոն էր Արտաշատը, ուր կային ներկատներ: Այդտեղ

գործվածքները ներկվում էին «հայկական ներկով»՝ որդան կարմիրով: Խոսվում է շքեղ գործվածքի-բեհեզի, ծիրանի դիպակի և այլ տեսակի հյուսվածքների մասին: Գործվածքները զարդարվում էին ասեղնագործություններով, բանված ոսկով, արծաթով, մարգարտով ու մետաքսով: Թագավորական և իշխանական տներում կային դերձակ, տարազագործ, հանդերձարար և այլ վարպետներ: Նշվում են մի քանի մասնագիտություններ, որոնց թվում էին մետաքսագործներ-մետաքսաթել գործվածք պատրաստողներ, խույրարարներ, այսինքն՝ խույր, գլխի հարդարանք բանողներ: Խույրերը պատրաստվում էին ոսկեթել բեհեզից, ասեղնագործվում՝ ոսկեթելով: Թագավորական պալատների արհեստանոցներում պատրաստում էին թագավորական տան անդամների ու պալատականների հագուստներ, որոնք, ըստ մատենագրական տվյալների, շատ շքեղ ու թանկարժեք են եղել: Հովհաննես Դրասխանակերտցու հաղորդումները ապացուցում են, որ հայ կանայք հազար տարի առաջ տիրապետել են կերպասագործության, նկարագարդ ոստայնանկության, ասեղնագործության, գորգագործության և արվեստի այլ ճյուղերի: Հայ կանանց ձեռքի արվեստի մասին ավելի վաղ է հիշվում: Այդ մասին է վկայում, օրինակ, Վ դ. պատմիչ Եղիշեն: Մ. Գոշը իր «Դատաստանագրքում» նկարագրում է հոգևորական և թագավորական ինը դասի պաշտոնյաների հագուստներ, նշելով նրանց տեսակները, ձևը և այն գործվածքները, որոնցից պարտադիր կերպով պետք է պատրաստվեին այդ հագուստները, նրանց զարդարանքները: Բացի տարազի ձևերից՝ նա հաղորդում է գործվածքների անուններ՝ «դիպակ ոսկեթելով կազմած», «դիպակի արծաթաթել», «դիպակ ճամկավոր», «ապրեշումե դիպակ», «կտավ», «ուռեվառ կապա», «այծենի գրատք կարմիր», «բամբակե գրատք կազմավ ճամկոք», «ոսկեզարդ ամպիովանի, պճղնավոր սպիտակ հանդերձ», «գրատք կտավիք և թեզնբերանն դիպակավ» (թեզանիք):

Հին ավանդույթներ ունեցող հայկական գորգարվեստը, արժանանալով մասնագետների բարձր գնահատանքի, միշտ եղել է արվեստագետների ուշադրության կենտրոնում: Այսօր հայկական գորգերի լավագույն նմուշների զգալի հատվածը գտնվում է աշխարհի նշանավոր թանգարաններում և մասնավոր հավաքածուներում: Հայկական գորգարվեստի հնագույն ակունքներն ու պատմությունը, գեղարվեստական ու մշակութային ինքնակա արժեքը անտեսելով՝ փորձեր են արվել և այժմ էլ արվում են հայկական գորգերի ստեղծումը տվյալ արվեստի հետ որևէ առնչություն չունեցող էթնիկ խմբերին վերագրել: Թերևս սա է պատճառը, որ հայկական գորգերը մի շարք երկրներում ցուցադրվում են օտար մշակույթների, դիցուք՝ «Իսլամական արվեստի» սրահներում, «Ուլադ», «Չելաբերդ», «Մուղան», «Բախմանլի» և այլ անվանումներով, որոնք, ըստ էության, կապ չունեն ոչ այդ գորգերի ծագման, ոչ էլ դրանց մշակութային պատկանելության հետ:

Հայկական գորգն ազգային մշակույթի անբաժանելի մասն է, և ազգային ինքնության ցուցիչներից է: Այս առումով հիշատակության է արժանի գեր-

մանացի արվեստագետ Ֆոլքմար Գանցհորնի բնորոշումն առ այն, որ հին ավանդույթներ ունեցող հայկական գորգարվեստն ամբողջությամբ առնչվում է արևելաքրիստոնեական մշակույթի հետ և այդ մշակույթի կարևոր մասն է: Հայաստանում գորգագործության զարգացումն առաջին հերթին պայմանավորված էր Հայկական լեռնաշխարհում թելի հումքի՝ բրդի, այծի մազի, ինչպես նաև բույսերից, հանքաքարերից, միջատներից ստացվող ներկանյութերի առատությամբ: Հնագիտական տվյալների համաձայն՝ Ք. ա. III-II հազարամյակներում բուրդը և մետաղը Հայաստանից ամենից շատ արտահանվող ու փոխանակվող ապրանքն էր: Երկրորդը՝ մեր նախնիների նստակյաց կենսակերպն ու երկրագործական-անասնապահանան տնտեսությունը գլխավոր պայմաններն էին արհեստների հիմնական ճյուղերի՝ ոստայնանկության, խեցեգործության, մետաղամշակության, փայտամշակության զարգացման համար: Զուգահեռագործության զարգացումը սերտորեն կապված էր փայտամշակության, մետաղամշակության հետ, քանի որ արհեստագործության այս ճյուղերն էին ապահովում ջուլհակգորգագործներին արտադրական միջոցներով ու գործիքներով: Ք.ա. III - հազարամյակների հուշարձանների (Կարճաղբյուր, Արթիկ, Հառիճ, Դիլիջան, Լոռի բերդ, Վերին Նավեր, Կարմիր բլուր և այլն) պեղումներից հայտնաբերված բրդյա թելերը, գործվածքի մնացորդները, ոստայնանկի գործիքները (ասեղներ, իլիկների գլուխներ, հյուսվածքի շարքերն ամրացնող բրոնզե և ոսկրե «կոփիչ»-ներ, դանակներ, հենքաթելերը ձգող ծանրաքարեր, հաստոցների մնացորդներ) վկայում են անխափ և խավով գործվածքների տեղական արտադրության մասին: Ոստայնանկության զարգացման որոշակի փուլում գործվածքը կամ անկվածքը ձեռք է բերում նոր՝ գունազարդ տեսք: Արթիկի դամբարանադաշտից գտնված Ք.ա. II հազարամյակի գործվածքի վրա՝ կան կարմիր, դեղին, սև զարդաձևեր, որոնք հազարամյակներ անց նույնությամբ կրկնվում են հայկական գորգերի, օրինակ՝ XIXդ. Արաբկիրի գորգի վրա: Գորգերի և անկվածի քառանկյուն, եռանկյուն զարդաձևերի, բեկված գծերի, խաչերի, կեռխաչերի, կետազարդ քարանկյունիների, շեղանկյունիների՝ պատկերները բազմիցս հանդիպում են Հայաստանի հնագույն շրջանի (Հառիճ, Հրազդան, Նոր Բայազետ, Կարմիր բլուր և այլն) և միջնադարյան (Դվին, Անի և այլն) խեցեղենի վրա:)¹⁾

Գորգագործությունը Հայաստանում զարգացել է երկու ուղղությամբ՝ արհեստանոցներում, ուր աշխատել են մասնագետ վարպետներ, և ժողովրդական լայն խավերի շրջաններում, տներում, տնայնագործ կանանց ու տղամարդկանց ձեռքով: Հայկական գորգը, և արհեստավորականը, և ժողովրդականը, պահպանել է ինքնուրույն ազգային ոճն ու գորգագործության ավանդները: Արհեստանոցներում պատրաստված գորգերն ունեն հարուստ բարդ զարդանկարների հորինվածք: Կուռ կառուցումներով, զարդանկարների յուրահատուկ ոճավորումներով առաջնակարգ տեղ է գրավում վիշապագորգը: Ժողովրդական գորգերը բազմատեսակ հորինվածքներ ունեն,

որոնց մեջ ավելի շատ են մեդալիոնները (գաթա, կրկենի, բաղարջ), երկրաչափական և երկրաչափականացված, բուսական, կենդանական, թռչնաշին, կոսմոգոնիական մոտիվները: Թե գորգի կենտրոնական մակերեսին, թե շրջանակի մեջ պահպանվել են կենաց ծառը, ծաղիկը, արևը, օձ վիշապը՝ տարբեր պատկերավորումներով: Արհեստանոցային և գեղջկական երկու հոսանքի գորգերի զարդանկարները նմանություններ ու կապեր ունեն հայկական կիրառական արվեստի, մանրանկարչության, ճարտարապետական, քարե քանդակների ու միմյանց հետ:

Պատմական վաղ ժամանակաշրջանում առարկաների դեկորատիվ հարդարանքն առաջին հերթին ուներ ապոտրոպեիկ (հմայական) նշանակություն, հետո միայն՝ գեղագիտական: Մարդուն շրջապատող արտաքին աշխարհն ընկալվում էր որպես «վտանգավոր» միջավայր, որտեղից գալիս էին նաև բարիքները: Վտանգներից խուսափելու, սեփական տարածքն ու անձը պաշտպանելու նպատակով մարդը մոգական գործողությունների միջոցով դիմում էր գերբնական ուժերին՝ կենցաղային առարկաների վրա տեղադրելով պահպանական, հմայական գաղափարանշաններ: Բնության տարրերի, երևույթների, առարկաների վերաբերյալ ունեցած պատկերացումներն արտահայտվում են խորհրդանշանների միջոցով: Այս առումով, խորհրդանշական պատկերները կամ զարդաձևերը տեղեկատվության հնագույն աղբյուրներ են: Մեր նախնիների աշխարհընկալման ու աշխարհայացքի ակունքները վկայվում են դեռևս երկրագործական մշակույթի հնագույն փուլում՝ Ք. ա. V-III հազարամյակներում: Այդ շրջանում ձևավորված խորհրդանշանների համակարգը բնութագրվում է որպես ագրարային: Այդ շարքին կարելի է դասել բնության երևույթները խորհրդանշող, կենդանակերպ ու թռչնակերպ (խոյ, ցուլ-եգ, այծ, օձ, մեղու, շուն, արծիվ, սերմնագռավ), մարդակերպ պատկերները (դաշտի, արտի աստվածուհու կերպավորում), բուսական զարդամոտիվները (սերմ, ծիլ, բողբոջ, ծաղիկ, պտուղ, հասկ և այլն): Որոշ զարդաձևերի ժողովրդական անվանումները՝ եզան հետք, գութան, հաց (փեթակ), հացահան, եղան, խնձոր, նուռ, գաթա, կրկենի, ինքնին մատնացույց են անում երկրագործական պաշտամունքների հետ ունեցած կապը: Հողի մշակման գաղափարն արտահայտող զարդաձևերից են կետանախշերով կամ զուգահեռ գծերով քառանկյունին, շրջագոտու ներսում տեսադրված հավասար կողմերով բեկված գիծն ու արորի (ավելի ուշ՝ գութանի) խոփի շղթայանև կրկնվող պատկերը: Գորգերի (կարպետների) հորինվածքում տարբեր երևույթներ կերպավորող էակների, հերոսների, առարկաների խորհրդանշական պատկերները հատկանշական և բնութագրական են հայկական գորգարվեստի համար: Դրանք հաճախ ունեն ավելի լայն նշանակություն, քան ագրարային խորհրդանշան հասկացությունը: Մարդու սոցիալական դերի փոփոխման հետ մեկտեղ՝ փոխվում են նաև նրա աշխարհընկալման ձևերը: Իրականության մեջ գոյություն ունեցող յուրաքանչյուր առարկա կամ երևույթ, ձևաբանական

փոփոխություններից հետո, դառնում է առասպելական: Իսկ հորինվածքի ներսում տեղադրված պատկերները մարմնավորում են իմաստաբանական կշիռ ունեցող տարբեր գաղափարներ: Առանձին պատկերներին փոխարինելու են գալիս սյուժետային տեսարանները: Հիշենք Ք.ա. III-II հազարամյակների կավե ու արծաթե անոթների, բրոնզե գոտիների դինամիկ պատկերները: Վիշապամարտության մոտիվը, որ լայն տարածում ունի հայկական ժողովրդական հեքիաթներում, ավանդազրույցներում, վեպերում, դեկորատիվ, կիրառական արվեստում հայկական գորգարվեստում ձեռք բերեց առանձնահատուկ նշանակություն՝ սկիզբ դնելով հայկական հայտնի վիշապագորգերի և օձապատկերներով կարպետների արտադրությանը:

Հայկական գորգի գեղարվեստական տարրերի նաև նրա ծիսապաշտամունքային գործառույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գորգը դասվել է սրբազան առարկաների շարքին: Ըստ ժողովրդական պատկերացումների՝ գորգը մարմնավորում է տիեզերքը: Հայկական ժողովրդական հանելուկներում գորգը (կարպետը) երկնքի կերպավորումն է: Հայկական գորգի հորինվածքը, աշխարհի առասպելական մոդելի նման, ունի կանոնավոր, եռամաս կառուցվածք և բաղկացած է՝

1. կենտրոնից (մեդալիոն, ուղղահայաց կենտրոնագծով տեղադրված մեդալիոններ կամ կենտրոնի գաղափարը կրող զարդապատկերներ, ընդսմին գորգադաշտի կրկնվող դրվագներում ընդգծված է յուրաքանչյուր դրվագի կենտրոնը),
2. կենտրոնի շրջակա հատվածից՝ տիեզերական առարկաների պատկերներով (լուսատուների, կենդանիների, մարդկանց պատկերներ),
3. գորգադաշտը եզրափակող շրջագոտուց, որը համեմատելի է տիեզերքը սահմանագծող և պաշտպանող գոտու հետ: (1)

Հայկական գորգերի հորինվածքում իրենց ուրույն տեղն են գտել բնության տարերքներն ու տարրերը: Հողի, ջրի, կրակի, արևի, աստղի, բույսերի, կենդանիների, թռչունների, մարդու խորհրդանշական պատկերները տեղադրվում են տիեզերական տարածքի գաղափարն արտահայտող գորգադաշտի տարբեր հատվածներում: Հայկական գորգերին բնորոշ է աջ-ձախ, վերև-ներքև կողմերի համաչափությունը: Հորինվածքի (աշխարհի) կողմերը սահմանագծվում են կենտրոնի շնորհիվ: Նախնադարյան մշակույթի հիմքում ընկած դիման առկա է գորգերի գեղարվեստական տարրերի հերթագայման մեջ: Գորգադաշտի զարդամոտիվների և շրջագոտու զարդապատկերների դիմանկ կանխությունը փորձ է՝ վերարտադրելու բնության ցիկլային ընթացքը, միաժամանակ նաև՝ դեպի չորս կողմերն ուղղված եռահարկ աշխարհը, որն ըստ ժողովրդական հավատալիքների և աշխարհընկալման, մշտապես նորոգվում է: Այս առումով լուսատուների, բնության տարրի և տարերքների խորհրդանշաններով գորգի ստեղծումը հավասարազոր էր աշխարհի նորոգման և վերարտադրության գործընթացին:

Գորգի տորքը, դազգահը, ոստայնը լինում են ուղղահայաց և հորիզոնական: Արևելյան Հայտատանում գորգը գործվել է ավելի շատ ուղղահայաց ոստայնի-տորքի վրա, իսկ Արևմտյան Հայաստանում՝ հորիզոնական: Մասնագետ փորձված վարպետի ձեռքով հենվել են թելերը, առջև ուղղահայաց ոստայնի վրա շարել են կողք-կողքի, այն հաշվով, որ գորգը որոշ չափով գործելուց հետո հնարավոր լինի պտտել և հենքի չգործված թելերը առաջ բերել՝ գորգը շարունակելու համար: Հենքի թելերի արանքով դրված է ասպը, որի աստամների-թելերի արանքով անցնում է գորգի հենքի ամեն մի թելը: Հորիզոնական տորքը կապվում է հորի վրա: Գործողը նստում է տորքի առաջ, ոտքերը կախում հորի մեջ, ուր տեղավորված էին հենքի հետ կապված տախտակներ: Սեղմելով մեկ աջ, մեկ ձախ ոտքը, գործողը հենքի թելերի մեջ անցք է բացում, գործող թելն անցկացնում և գործում: Շարքերը նստեցնում էր փայտյա թրով: Հորիզոնական տորք լինում էր և առանց հորի:

Ամենահին գործվածքը արվել է մի քանի փայտերի, եղանների օգնությամբ, որոնք ցից խրվել են հողի մեջ և նրանց արանքում ձգվել են հենքի թելերը ուղած երկարությամբ և 35-45 սմ լայնությամբ: Չնայած այդ նախնական պարզ ձևին, հայ կանայք մինչև XX դ. սկիզբ նույն եղանակով արտադրում էին գեղեցիկ գործվածքներ:

Խավավոր գորգի հանգույցները կապվում են երկու տեսակ՝ հենքի երկու թելի վրա և մեկ ու կես թելի վրա ձախ և աջ: Հենքի և միջնաթելի համար գործ է ածվում լավ ոլորված (երկու-երեք թելից) թել, իսկ հանգույցի համար փափուկ թելը կազմված է մեկ կամ երկու միացված թելերից: Գործող թելով արվում են հանգույցներ՝ հենքի երկու թելի վրա, կողք՝ կողքի, հորիզոնական շարքերով: Հանգույցը կապվում է ,թելի երկու ծայրը դուրս է բերվում գորգի երեսը, քաշվում, ամրացվում և դանակով կտրվում թելի ծայրը, և հետո նոր հանգույց կապվում: Հանգույցները կապվում են ամուր, սեղմ: Երբ գորգի ողջ լայնությամբ ավարտվում են շարքի բոլոր հանգույցները, արված տարբեր գույների ըստ զարդանկարների, հետո հանգույցի կապերի վրայով, հենքի թելերի միջով անցնում է երկու, երեք տակ լավ ոլորված միջնաթելը՝ աջից ձախ և ձախից աջ և կտուտվում: Կտուտիչը-թելատուն (հավա) մետաղյա եռատամ կամ բազմատամ գործիք է: Վաղ անցյալում եղջերվի թաթը գործ են ածել որպես կտուտիչ՝ սրելով կճղակները: Կտուտիչով խփում են բոլոր հանգույցներին և լավ նստեցնում դրանք ու միջնաթելը, որը գործվածքի մեջ չի երևում: Այնուհետև, ճկույթ մատի հաստությամբ ոլորված բրդյա թելերից պարան էին անցկացնում հենքի թելերի միջով, և այս անգամ խփում-նստեցնում փայտյա մեծ ծանր գործիքով, որ բեջ էր կոչվում: XIX դ. վերջերից բեջ չեն բանեցրել: Բեջով խփելուց հետո հանվել է բրդյա պարանը, ձեռքով քաշվել հանգույցի ծայրերը, վարժ գորգագործը մկրատով խուզել է ամեն ավարտած շարքի թելերի ծայրերը, առաջ է եկել խավը: Նույն ձևով գործվել են գորգի հաջորդ շարքերը: Հանգույց-հանգույցի կողքին, շարք-շարքի հետևից

գործվածք է գորգագործությունը՝ չափազանց բարդ, դժվարին և աշխատատար գործ: Հենց աշխատատար լինելու պատճառով էլ գորգը միշտ թանկ է գնահատվել:

Գորգի որակը պայմանավորված է թելերի տեսակից, մանվածքից, ներկերից և այլն: Գորգի մակերեսի խավը ըստ ցանկության՝ կարող է լինել երկար կամ կարճ, որը կախված է խուզելու եղանակից: Բոլոր դեպքերում՝ հանգույցի խուզած ծայրերը գորգին տալիս են թավիշի փափկություն և գեղեցկություն: Միևնույն ժամանակ, հանգույցներն ապահովում են գորգի թանձր ամրությունը: Գորգի թելերը՝ հենքի, միջնաթելի, խավի (հանգույցի), սովորաբար արվում են բրդյա թելերից: Միջնաթելը պետք է լինի ամուր, լավ ոլորված՝ երբևէ՝ երեք թելից, որոնցից մեկը հաճախ այծի մազից: Օգտագործվել է ոչխարի, ուղտի բուղը, այծի աղվամազ - փափուկ բուրդը: Գորգի խավի համար բանեցվել են ապրեշումի թելեր: Նման դեպքում գորգը լինում է շատ նուրբ, մոտ թավիշին: Գորգի համար բանեցվել են նաև արծաթյա և ոսկյա թելեր: Պետք է նկատել, որ բամբակյա թելերը որոշ չորություն են տալիս գորգերին: Երբ հենքի թելերը բրդից են՝ գորգն ավելի էլաստիկ, ճկուն է լինում, ավելի փափուկ, ավելի լավ է պաշտպանում խոնավությունից: Հայաստանի լեռնային շրջաններում մանած թելին յուղ էին քսում, որ գորգը խոնավություն չքաշի: Որքան բարակ ու նուրբ են թելերը, այնքան գորգի մեջ շատ հանգույցներ են արվում: Բամբակյա հենքի դեպքում հանգույց-ները ավելի մեծ թիվ են կազմում: Բրդյա և մետաքսյա սպիտակ թելերը ժամանակի ընթացքում մի քիչ դեղնում փղոսկրի գույն են ստանում: Եթե ցանկանում են, որ գորգի մեջ որոշ նախշեր պահպանեն սպիտակ գույն, այդ նախշերը գործում են բամբակյա թելով:(3)

Մարդու պատկերացումներում առանձնակի տեղ էր զբաղեցնում ստորին կամ անդրաշխարհի մասին պատկերացումը: Ժողովրդական հեքիաթներում, ավանդազրույցներում անդրաշխարհն ընկալվում էր մութ, վտանգավոր, որտեղից, սակայն, բաշխվում էին երկրի բարիքները: Ստորերկրյա աստվածությունների համար էին թափում զոհաբերվող կենդանու արյունը: Յլի, եզի, կովի կամ այծի ու խոյի զոհաբերությունները կատարվում էին առատ բերք ստանալու ակնկալիքով: Մեզանում երկար պահպանված ծեսերից է անձրևաբեր ծեսը: Այն կատարում էին հողը մշակելու ժամանակ. աղբյուրի մոտ, կարպետի կամ գորգի վրա դնում էին զոհաբերվող այծի միս, դրամ, ցորեն և նվիրաբերում անդրաշխարհում գտնվող նախնիներին: Հայոց մեջ հատկապես ուժեղ է նախնիների պաշտամունքը:

Դեռևս XXդ. սկզբին Հայաստանի որոշ պատմա-ազգագրական շրջաններում հանգուցյալին հուղարկավորում էին՝ կարպետի կամ գորգի մեջ փաթատված: Այս սովորույթը հնագույն ծեսի վերապրուկ է, երբ բրդյա գորգը դրվում էր դամբարանի մեջ: Հայաստանում տարբեր դամբարանադաշտերի պեղումների ժամանակ գտնվել են բրդյա անխավ ու խավով գործվածքներ:

Այթալի Պազիրիկի հովտի N-5 դամբարանադաշտից հայտնաբերված խավով գորգը, թաղիքը, ձիու ծածկոցի վերածված բրդյա պատկերազարդ նուրբ գործվածքն ու անկվածի այլ նմուշները վկայում են թաղման ժամանակ գորգերի և կտորների լայն օգտագործման մասին: Սկյութական դամբարաններից հայտնաբերված խավով և անխավ գործվածքների վերաբերյալ մասնագետների ուսումնասիրությունները հաստատում են դրանց՝ պատմական Հայաստանի տարածքում պատրաստված լինելու փաստը: Ուշագրավ է, որ Պազիրիկի N 5 դամբարանից հայտնաբերված խավով գորգի գույների մեջ գերակշռող կարմիրը հայկական որդան կարմիրն է: Կապույտը ստացվել է վայդա բույսից, որի տարածման նշված վայրերից միայն Փոքր Ասիան և Կովկասն են մոտ գորգի ստեղծման տեղանքին, որն էլ համընկնում է պատմական Հայաստանի շրջաններից Վասպուրականի տարածքի հետ:

Փայտամշակության, հյուսնության, մետաղամշակության զարգացման պայմաններում Հայաստանը Հին աշխարհի և միջնադարյան Արևելքի մանածագործության և գորգագործության կարևոր կենտրոն էր: Անխավ ու խավով կտորների ու գորգերի խիտ բանվածքի ու գեղարվեստական բարձր ճաշակի շնորհիվ հայկական գործվածքները, ըստ գրավոր աղբյուրների՝ VIII դ. մինչև XVIII դ., մեծ պահանջարկ էին վայելում միջազգային շուկայում: Պատմական տարբեր ժամանակներում Հայաստանից դեպի հարակից և հեռավոր երկրներ արտահանվել են ներկահումք ու ներկեր, բուրդ ու բրդյա գործվածքներ, ինչպես նաև հայկական արտադրության մետաքայա կտորներ ու գորգեր: Հայաստանը եղել մանածագործության և գորգագործության կարևոր կենտրոն, որտեղ արտադրել են թավշածև գործվածք (մահֆուր), բրդյա գորգեր (բուսուֆ), այծի նուրբ մազից գործվածք (միրիզգա), գորգ-բարձեր (վասաիդ), նստելու բարձեր (մակաիդ), թամբի գորգեր (անմաթ), տաբատի գոտիներ (տիրաք), հաստ գործվածքեղեն (բուսուտ), երկար գորգեր (անխախ), վարագույրներ (սուսուտ), բարձի երեսներ (վասայիդ), հենաբարձեր (մակաիդ), գոտիներ (տիրքա) և այլն, որոնք ներկել են որդան կարմիրով (կիրմիզ) և միջազգային շուկայում հայտնի էին հայկական արտադրանք (ասնաֆ ալ-արմանի) անվանումով: Հայկական գորգերի և գորգագործության վերաբերյալ ամբողջական պատկերացում տալիս են միջնադարյան Դվինի, Անիի պեղումներից հայտնաբերված նյութերը, արձնագրությունները, գրավոր աղբյուրները, որտեղ խոսվում է X-XIII դդ. Հայաստանի մեծ քաղաքներում արհեստավորների, այդ թվում՝ ջուլիակների (գորգագործների) թաղամասերի և կազմավորված համքարությունների մասին: «Վանի թագավորության և հարակից երկրների» քարտեզի վրա նշված են Վանա լճից մինչև Ուրմիա լիճն ընկած անասնապահական այն շրջանները, որտեղ այդ ժամանակահատվածում բուծում էին ոչխար, այծ և ուղտ: Այս կենդանիներից ստացված բուրդը մշակվում և օգտագործվում էր գործվածքներ պատրաստելու նպատակով: Թեյշեբահինի ամրոցի պեղումներից հայտնաբերվել են

կոպտաբուրդ և նուրբ բրդյա գործվածքների հատվածներ: Գործվածքներից մեկը հանգույցներով է և խավով: Զարգացած մանածագործության և դրա հետ սերտորեն կապված գորգագործության մասին կարևոր տեղեկություն են հաղորդում բրոնզե գոտիների պատկերները: Վանի թագավորության բրոնզե գոտիներից մեկի վրա կան գորգ կամ կարպետ պատրաստելու տեսարաններ: Պագիրիկի N 5 դամբարանում հայտնաբերված խավով, հանգույցներով գորգը, մասնագետների կարծիքով, գործվել է ուղղահայաց տորքի վրա: Այդ տորքերը դեռևս Ք.ա. IX-VIII դդ. գործածվում էին Վանի թագավորության ջուլիականների կողմից:

Հայտնի է, որ փոքրասիական հնագույն մշակույթում բուրդ գգելը, թել մանելը և ոստայնանկությամբ զբաղվելը գերագույն աստվածուհիների արտոնությունն էր, դիցուք՝ խեթական ճակատագրի աստվածուհու: Թելը և նրանից պատրաստված հյուսքը կապ ունեին ճակատագրի հետ: Հետևաբար, համարվում էր, որ ճակատագիրը (մարդու, արքայի, ժողովրդի, երկրի) տնօրինում էր գերագույն ուժը: Թելից պատրաստված թանկարժեք գործվածքները նվիրաբերվում էին տաճարում գերագույն աստվածներին: Թեյշեբաինի ամրոցում հայտնաբերված խավով և անխավ բրդյա գործվածքների, տորքերի մնացորդները, իլիկների ոսկրե և քարե գլուխները, հենքաթելերը ձգող ծանրաքարերը հաստատում են այստեղ պալատական կամ տաճարային արհեստանոցի գոյության փաստը:

Գորգը՝ ջերմամեկուսիչ, ձայնամեկուսիչ և այլ գործածական ձևերից բացի, ունեցել է նաև գեղագիտական նշանակություն: Հայաստանում տարբեր կառույցների՝ եկեղեցիների, բնակելի տների ներքին հարդարանքի գլխավոր տարրերից է եղել և մնում է գորգը:

Գրականություն

1. Ավանեսյան Լ.Ս., Հայկական գորգերի զարդաների ծագումնաբանությունն ու իմաստաբանությունը, Հայաստանի պատմության թանգարան, Ե., 2020
2. Գանցհորն Ֆ., Քրիստոնեա-արևելյան գորգը, Հայաստանի պատմության թանգարան, 2013
3. Եղիազարյան Ա.Կ., Գեղարվեստական գործվածքների արվեստը, Ե., 2010

Yeghiazaryan A., K., Stepanyan A.A. - THE ORIGINS OF THE DEVELOPMENT OF NATIONAL CARPET ART. The Armenian carpet is an integral part of the national culture and one of the indicators of national identity. The development of carpet weaving in Armenia, first of all, was due to the abundance of raw threads in the Armenian Highlands - wool, goat hair, as well as dyes obtained from plants, ores, insects. Carpet making in Armenia developed in two directions: in workshops where specialist artisans worked, and in the areas of the broad popular strata, in houses, in the homes of women and men engaged in household chores. The study

of the artistic elements of the Armenian carpet and its ritual and cult functions shows that the carpet belonged to sacred objects.

Keywords: *Armenian carpet, national culture, artistic ornaments, web design, symbolic images, apotropeism.*

Егизарян А.К., Степанян А.А. - ИСТОКИ РАЗВИТИЯ НАЦИОНАЛЬНОГО КОВРОВОГО ИСКУССТВА. Армянский ковер-неотъемлемая часть национальной культуры и один из показателей национальной идентичности. Развитие ковроткачества в Армении, в первую очередь, было обусловлено обилием на Армянском нагорье сырья нитей-шерсти, козьего волоса, а также красителей, полученных из растений, руд, насекомых. Ковроделие в Армении развивалось в двух направлениях: в мастерских, где работали специалисты-мастера, и в районах широких народных слоев, в домах, в домах женщин и мужчин, занимающихся домашними делами. Изучение художественных элементов армянского ковра и его ритуально-культовых функций показывает, что ковер относился к священным предметам.

Ключевые слова: *армянский ковер, художественный орнамент, веб-дизайн, символические изображения, апотропизм.*

ԻՐԱՎՈՒՆՔ

DOI: 10.61484/29538181-ss.8.23-88

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ, ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ և ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

^{1,2} Գառնիկ Սաֆարյան, ¹ Լիանա Մալխասյան,

¹ Երևանի Հայրուսակ Համալսարան

² ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտ
Վերանայված է 25.05.2023, ընդունված է պալատական 03.06.2023

Ամփոփում՝ Համակողմանի քննարկման են ենթարկված ազատության, բարոյականության և իրավունքի փոխհարաբերակցության հիմնախնդիրները՝ Պլատոնի, Թոմաս Հոբսի և Իմանուիլ Կանտի փիլիսոփայական համակարգերի և քրիստոնեական վարդապետության տեսանկյունից:

Հիմնաբառեր՝ իրավունք, բարոյականություն, ազատություն, ձևական (իրավաբանական) հավասարություն, պետություն, օրենքներ, քրիստոնեական վարդապետություն, փիլիսոփայություն, բնական իրավունք, բանականություն, հարկադրանք:

1. Ազատության մասին փիլիսոփայական և աստվածաբանական մոտեցումները

Ազատության, բարոյականության և իրավունքի փոխհարաբերության հարցը վերաբերում է էթիկայի և իրավունքի փիլիսոփայությանը: Պլատոնի էթիկայի համակարգը, որը սահմանում է Հոբսի և Կանտի էթիկական համակարգերի հիմնական գծերը, կարևոր են բոլոր ժամանակների համար: Այս համակարգում ներկայացված են ազատության երկու լիովին տարբեր հասկացություններ, մի կողմից՝ Թոմաս Հոբսի՝ (1588-1679թթ.), մյուս կողմից՝ Իմանուիլ Կանտի (1724-1804թթ.): Այս խնդրի լուծման փորձը ձեռնարկվում է սույն հոդվածում, ազատության քրիստոնեական աստվածաբանության և եվրոպական ազատականության ուսմունքի հաշվառմամբ, որի միջոցով դրվում է խնդիր՝ ցույց տալ ազատության, բարոյականության և իրավունքի նշանակությունը ներկա ժամանակաշրջանի մարտահրավերի համատեքստում:

Պլատոնի ժամանակներից ի վեր փիլիսոփայական շահերի կենտրոնում գտնվում է մարդու գործունեության հարցը, որում կարևոր տեղ է տրվում իրավունքին [1]: Պլատոնը իր համակարգի հիմնական մասը զարգացնում է «Պետություն» աշխատությունում: Մարդուն հարադրում է հակադրությունների առկայությունը՝ զգացում և բանականություն: Բանականությունը կողմնորոշ-

վում է լավի գաղափարով: Այն այս գաղափարում ընդունում է ուժը, որպեսզի հանգստացման իմաստով կապված լինի առկա աշխարհի հետ, ազդի զգացմունքների վրա: Սոցիալական գոյը այս զգացման միջոցով պաշտպանված է էքզեսներից: Դրա հետ մեկտեղ Պլատոնը գտնում էր, որ մարդիկ պետք է ընկերասեր և կարեկցող լինեն, ինչը ըստ էության հիմնված է, յուրաքանչյուր մարդու բանականության վրա: Դրա հետ մեկտեղ «Պետություն» աշխատությունում նա բանականության պահպանման պատասխանատվությունը փոխանցում է հատուկ խավին՝ իմաստուններին, ովքեր պետք է կառավարեն մարդկանց: «Արդարը բարի և իմաստուն մարդն է, իսկ անարդարը՝ տգետ ու հոռի», - նշում է Պլատոնը [2]:

Պլատոնը ժամանակի ընթացքում հանգել է այն մտքին, որ յուրաքանչյուր մարդ հակված է կոռուպցիոն ռիսկերի: Ըստ Պլատոնի, պետությունը, որում գերիշխում են փիլիսոփաները, իրենից ներկայացնում է իդեալական պետություն, սակայն այսպիսի պետությունը չի կարող երկար գոյատևել: Իսկ այն պետություններում, որտեղ օրենքները գերիշխում են փիլիսոփայական գաղափարներին և ազդում են քաղաքացիների համոզմունքների վրա, անհրաժեշտության դեպքում նրանց իրականացման համար սովորաբար կիրառվում է հարկադրանք և այս պետությունները ենթակա են մոտալուտ կործանման:

Եթե դիտարկենք Պլատոնի «Պետություն» և «Օրենքներ» աշխատանքների փոխկապակցվածությունը, ապա պարզ է դառնում, որ փիլիսոփան պատկերացրել է որոշակի վարքագծային համակարգ, որը բնորոշվում է երեք յուրահատուկ մակարդակների առկայությամբ: Առաջին մակարդակը զգացմունքների ցուցանիշն է: Այն կապված է էքզեսների հետ: Պլատոնը խոսում է մարդու՝ ավելի շատ նյութական միջոցներ ունենալու մշտական ձգտման մասին (կոռուպցիոն ռիսկեր): Մարդկային զգացմունքները երբեմն նմանվում են «շատակեր կենդանու»: Այս զգացմունքներին երկրորդ մակարդակում հակադրվում է բանականությունը, որը բնութագրվում է նրանով, որ հասկանում է և ներկա և հանդերձյալ աշխարհը: Բանականությունն ուղղված է զգացմունքների զսպմանը կամ սահմանափակմանը: Այստեղ կարևոր են չափավորությունը և բանականությունը: Այս որակները հանդես են գալիս որպես հիմնարար Պլատոնի էթիկայի ողջ համակարգի համար: Երրորդ մակարդակում արդեն հայտնվում է իրավունքը: Բովանդակային առումով այն կոդմնորոշված է դեպի բանականություն և դրանով դեպի երկրորդ շերտ: Իրավունքը հավասարակշռում է բանականության թերությունները որոշակի հարկադրանքով, որը բնական է մարդկային վարքագծի կանոնակարգման համար:

Նման մտահանգումները հետապնդվում են Թոմաս Հոբսի ու Իմանուիլ Կանտի փիլիսոփայական ուսմունքներում: Հոբսի մոտ բնական միջավայրում ապրող մարդը տարբերվում է իշխանության անսահման ձգտմամբ [3]: Բնական բանականությունը մարդուն առաջարկում է սահմանափակել իշխա-

նության սեփական ձգտումը: Այն Հոբսի մոտ դրսևորվում է որպես Աստծո կողմից մարդուն նվեր: Այն իր գործնական արտահայտումն է գտնում Քրիստոսի քարոզի ոսկե կանոնում, որը Հոբսի համար բնական օրենք է. «Մի՛ արեք ուրիշի հանդեպ այն, ինչը չէիք ցանկանա, որ ձեր հանդեպ կատարեն»: Հոբսը ադ բնական բանականության այս բնագավառը անվանում է բարոյականության փիլիսոփայություն: Քանի որ ոչ ոք չի կարող համոզված լինել, որ բոլորը կհետևեն ոսկե կանոնին, անհրաժեշտ է պետության մասնակցությունը, որի վրա դրվում է ոսկե կանոնին հետևելու հանդեպ հարկադրանքի գործառույթը: Հոբսը պետական իշխանությունը և հարկադրանքը անվանում է «Լեվիա-Ֆան», որպեսզի բնութագրի հարկադրանքի բարոյականության իրացման համար պահանջվող մասշտաբը: Բարոյական օրենքները, որոնք նման կերպ պահպանվում են հարկադրանքով, քաղաքացիական օրենքներ են:

Ինչպես պայմանագրային տեսության մյուս ներկայացուցիչները, Հոբսը ևս ենթադրում է, որ բոլոր մարդիկ սկզբնապես ստեղծվել են բնության կողմից ֆիզիկական ու մտավոր հավասար ընդունակություններով (բնական հավասարություն), բոլորի համար միանման «ամեն ինչի իրավունքով» (բնական ազատություն): Դրա հետ կապված՝ կարող են սահմանվել ոչ միայն ուղղություններ, որոնցով Հոբսը բացահայտում է նմանությունը անտիկ փիլիսոփայությանը, հատկապես Պլատոնի փիլիսոփայությանը, այլ նաև նրանք, ովքեր հայտնաբերում են տարբերություններ: Հոբսը դիտարկում է մարդու իշխանության ծարավը բնական վիճակում որպես մարդու՝ ինքնապահպանման և մահի հանդեպ վախի հետևանք: Յուրաքանչյուր մարդ միշտ ձգտում է ավելիին: Առաջին մակարդակի մարդկային չափումը ժամանակակից պայմաններում դրսևորվում է ավելի պարզորոշ կերպով, քան օրինակ հնագույն փիլիսոփայության մեջ: Բարոյականության կապը ոչ երկրային բացարձակության հետ ավելի ազատ է, քան հնագույն փիլիսոփայության մեջ կամ անգամ քրիստոնեական աստվածաբանությունում:

Նման մակարդակներ կարելի է հայտնաբերել նաև Կանտի գործնական փիլիսոփայության համակարգում [4]: Առաջին երկու մակարդակները ներկայացված են ոչ բանական մարդու և բանական մարդու միջոցով, որոնց Կանտը հակադրում է իրար: Նրանք ենթարկվում են տարբեր օրենքների: Կենսաբանական մարդու համար գործում է պատճառականության սկզբունքը: Նրա գործողությունները բխում են կենսաբանական ցանկություններից, ինչի համար էլ նա ազատ չէ: Բանական մարդը կարող է դարձնել մտածողությունը իր վարքագծի հիմնական զսպանակ: Բանականի էությունը հանդես է գալիս համաընդհանուր օրենքի տեսքով: Մարդու ազատությունը կայանում է նրանում, որ նա կարող է հետևել այդ ընդհանուր օրենքին:

Կանտի բարոյական և իրավական ուսմունքի հիմնարար սկզբունքն է՝ յուրաքանչյուր անձ օժտված է կատարյալ արժանապատվությամբ, բացարձակ արժեքով, և չի կարող դառնալ նույնիսկ ամենավեհ նպատակների, ընդհանուր

բարօրության իրականացման միջոց: Մարդը բարոյական գիտակցության սուբյեկտ է և այդպիսին՝ նա իր արարքում պետք է առաջնորդվի ապրիորի՝ համապարտադիր բարոյական օրենքի հրահանգներով: Ընդ որում, մարդը պետք է «սովորի, թե ինչ է պետք մարդ լինելու համար»:

Համընդհանուր կապը իր արտացոլումը գտնում է կատեգորիկ իմպերատիվում, որի, մերձավորությունը դեպի ոսկե կանոնը հաճախ մատնանշում էին Կանտի համախոհները: Ինչ վերաբերում է երրորդ մակարդակին, ապա Կանտը այստեղ նույնպես տեսնում է իրավունքի դրսևորում արտաքին հարկադրանքում: Կանտի մոտ եղել են դժվարություններ դիրքորոշումը մշակելիս, որը նախատեսում է բանականության տեղը իրավունքում, քանի որ առաջին հերթին նա դարձնում էր բանականությունը գործուն ներքին կողմի միջոցով, այսինքն ինքնահարկադրանքի շնորհիվ, երկրորդ, նրա կողմից կառուցված բացարձակ բանական աշխարհում հաշվի չեն առնվել բանականության որոշակի ոչ ռացիոնալ կողմերը:

Ներկայումս լայնորեն տարածված է այն տեսակետը, որ ազատության ժամանակակից հասկացությունը սկզբնավորվել է Լուսավորության դարաշրջանում: Վերջինիս ուշադիր դիտարկումից պարզ է դառնում, որ այդ ժամանակ ձևավորվել են ազատության երկու հակադիր հասկացություններ: Այն, ինչը մեկում ներկայանում է որպես ազատություն, մյուսում կարող է ներկայանալ որպես անազատություն: Նման իրավիճակ առաջացել է իրավունքի փոխհոսքի և իրավագետների միջև՝ բանավեճերի հետևանքով, որոնք մինչ այժմ չեն կորցրել իրենց արդիականությունը:

Հորսը կարող է ներկայացվել որպես ազատություն կատեգորիայի առաջին հետազոտող, ով որոշակի չափով ձևակերպել է քաղաքական ազատությունը, քանի որ այդ կատեգորիան հիմնարար է սահմանադրական քաղաքականության համար՝ սահմանված ֆրանսիական հեղափոխության ժամանակներից ի վեր: Բնական ազատությունը, ինչպես սահմանում է Հորսը, կայանում է իշխանության անհազ ձգտման մեջ: Մարդու ազատությունը դիմադրության ազատությունն է, որը կարող է անձը հակադրել իշխանության ցանկացած ձգտման: Այն դրականորեն է ծառայում մարդու ինքնապահպանմանը: Տվյալ ազատությունը նպատակ ունի մարդուն ազատել մահվան վախից:

Սահմանափակումները, որոնք դրվում են մարդկային փոխհարաբերությունների վրա, բարոյական պարտականությունների և քաղաքացիական-իրավական օրենքների կողմից հասցնում են անսահմանափակ բնական ազատությունը; այսպես կոչված քաղաքացիական ազատության, որն իր բնույթով մնում է բնական ազատություն: Քաղաքացիական ազատությունը բնական ազատության այն չափն է, որը կարող է տրամադրվել յուրաքանչյուր անհատի մարդկանց համատեղ գոյակցության հաշվառմամբ:

Այլ է Կանտի հիմնադրույթը: Նրա համար ազատությունը կայանում է

բանական ձգտումների ազատության մեջ, որը կարող է նշանակվել որպես համընդհանուր օրենքի իրացման ազատություն: Մենք ազատ ենք, եթե կատարում ենք մեր պարտականությունները և չենք խախտում ուրիշների ազատությունը:

Հակառակը, անազատ է գործում ոչ բանական մարդը, ով կարող է ապրել միայն իր կենսաբանական ձգտումներով: Մենք բնութագրում ենք այն որպես ազատության հասկացություն: Բարոյական ազատության այս հասկացությունը մնում է Կանտի փիլիսոփայության կենտրոնում, որը նա շարադրել է 1793թ. իր աշխատանքներից մեկում և այն նվիրված է կրոնական մոտեցումների քննարկմանը: 1797թ. «Բարքերի մետաֆիզիկան» աշխատանքում նա փորձեց տվյալ հասկացության հետ համեմատել «արտաքին ազատություն» հասկացությունը, որը շատ նման է Հոբսի «բնական ազատության հասկացությանը»:

Երբ հղում են կատարում Կանտին, ապա առաջին հերթին իրավունքի ուսմունքում կիրառում են «կամային» ազատությունը այլոց հարկադրական կամայականությունից, այսինքն Կանտի մոտ ազատության հասկացություններից երկրորդը, որը չնայած և պակաս կարևոր է նրա փիլիսոփայության կառուցման մեջ, բայց ավելի նման է ազատության Հոբսի հասկացությանը:

Լուսավորության շրջանում դրված էր հիմնարար հարց, արդյոք մենք ազատ են մեր կրքերի, թե բանականության շնորհիվ, որը կրքերը զսպում է որոշակի շրջանակներում: Տվյալ հարցի պարզաբանումը հնարավոր չէ առանց Լուսավորության դարաշրջանում ազատության մասին երկու հասկացությունների զարգացման պատմության տեսության: Ինչպես Հոբսը, այնպես էլ Կանտը դիմում են ազատության մասին քրիստոնեական ուսմունքին, չնայած նրանք այսպիսի կապը հիշատակում են միայն անուղղակիորեն:

Քրիստոնեական աստվածաբանություն ընդունում է ազատության երկու հասկացությունները՝ ի տարբերություն Հոբսի և Կանտի գաղափարախոսությունների: Փորձենք տալ ազատության մասին քրիստոնեական ուսմունքի համառոտ նկարագրությունը: Նշված ուսմունքը մշակվել է նախ և առաջ Երանելի Օգոստինոսի կողմից իր «Աստծո քաղաք» աշխատությունում և «Ներում և ազատ կամք» գրվածքում: Նոր ժամանակների սկզբում Մարտին Լյութերը հիմնվում էր Օգոստինոսի վրա, իսկ Էրազմ Ռոտերդամսկին հանդես էր գալիս Լյութերի դեմ և զբաղեցնում էր դիրքորոշում, որը մոտ է Պելագիոսին:

Համաձայն Երանելի Օգոստինոսի ուսմունքի՝ սկզբում Ադամը դրախտում հաճույք էր ստանում հարատև կյանքի ազատությունից: Ահա նա ստացավ լավի և վատի միջև ընտրության ազատություն, որից նա օգտվեց մեղսագործության մեջ դեպի վատը, որն իր ազդեցությունը ունեցավ ողջ մարդկության համար: Նման ընտրության հետևանքը եղավ անմահության կորուստը: Այն առաջացավ որպես մեղքի համար վարձատրություն: Մարդկությունը ընկավ մեղքի ենթակայության տակ, որտեղից նա իրեն չի կարող դուրս բերել սեփական ուժերով: Այս անազատությունից մարդկությունը կարող է դուրս գալ միայն

Աստծո հանդեպ սիրո միջոցով, որը վերադարձնում է անազատ մարդուն մեղսագործության ընթացքում կորցրած հավերժ կյանքի ազատությունը: Նրանում ահեղ դատաստանից հետո նորից կհայտնվի դրախտային վիճակը, ուր կկանգնի ընտրության ազատության խնդիրը լավի և վատի միջև [5]:

Օգոստինոսի և Պելագիոսի միջև բանավեճը, իսկ այդմ Լյութերի և Էրազ Ռոտերդամսկու բանավեճը ընթանում էր հետևյալ հարցի շուրջ: Արդյոք կարող է մարդը, ով մեղսագործության մեջ է, ազատության նշված վիճակը ձեռք բերի Աստծո ներողամտության (ողորմածության) միջոցով, թե նա կարող է դրանում ներդնել իր սեփական գործողությունները: Արդյոք Ադամի մեղսագործությունը վերացրեց սկզբնապես մարդուն տրված լավի ու վատի միջև ընտրության ազատությունը ամբողջությամբ թե մասնակիորեն:

Տվալ դեպքում չկա հնարավորություն մանրամասն դիտարկել այսեղ հատուկ տեսական հարցը: Վճռական է այն, որ ազատության մասին քրիստոնեական ուսմունքում իրար կողքի առկա են ազատության երկու կատեգորիաներ: Մարդուն տրված է լավի և վատի միջև ընտրության հնարավորություն: Նրանց առջև նաև դրված է խնդիր կիրառել այն ազատության իմաստով, որն ուղղորդում է դեպի հարատև կյանք: Այն հանգամանքը, որ մարդը ազատորեն ընտրում է վատը, չի հակասում նրա՝ լավի ընտրության միջոցով վատից ազատվելու խնդրին: Լավի և վատի միջև ընտրության քրիստոնեական ազատության մեջ նորից տեսնում ենք Հոբսի բնական, դեռևս անսահմանափակ ազատությունը, մշտական կյանքի ազատության մեջ, որը միաժամանակ հանդիսանում է մեղքին ենթակայությունից դեպի ազատություն, ճանաչվում է Կանտի բարոյական ազատությունը: Ազատության երկու հասկացություններն էլ հակադրվում են իրար և միասնականության մեջ դիտարկվում են միայն քրիստոնեական ուսմունքում:

Միաժամանակ պարզաբանվել է ուղղությունը, որին հետևելով մենք հույս ունենք գտնել լուծում: Արդյոք մենք միաժամանակ ազատ չենք երկուսի միջոցով էլ: Դա կնշանակեր, որ մենք ազատ ենք մի վիճակում, որում մենք կարող ենք իրականացնել մեր կենսական շահերն՝ աշխարհում բոլորի հետ ներդաշնակության մեջ գտնվելով: Հնարավոր է, որ Լուսավորության ազատության երկու հասկացությունների կոմբինացիայում ներառված լինի ազատության և երրորդ հասկացությունը: Այդ դեպքում Պլատոնի էթիկայի համակարգի իրացման իմաստով ազատությունը կկայանար կյանքում, բանականությունում, չափավորությունում: Այն փաստը, որ մենք, դիտարկելով ազատություն հասկացության ձևավորման պատմությունը, չենք դիմում Պլատոնի փիլիսոփայությանը, ունի իր հիմնավորումը: Պլատոնը ներակայացրել է այսօրվա համար արդիական էթիկայի համակարգ, սակայն ազատությանը պարզորոշ եզրագծեր այս համակարգում տվել է միայն քրիստոնեական աստվածաբանությունը: Բայց այն ոչ վերջին հերթին կապված է այն նշանակության հետ, որը քրիստոնեությունը տալիս է մարդու մեջ վատի

կատեգորիային: Դրանում կարելի է տեսնել հնագույն հունական փիլիսոփայության որոշակի զարգացումը Նոր ժամանակների հայեցակարգերում:

Մեր դատողությունների արդյունքները ազատության ժամանակակից փիլիսոփայական-իրավական և իրավաբանական հասկացության համար պարզ են: Բավական է դրանց նկատմամբ որոշակի անդրադարձը: Այստեղ կարելի է նշել ազատության կամ իրավունքի, այսպես կոչված, սահմանափակ մոդելի կողմնակիցների և ազատության, այսպես կոչված, ինստիտուցիոնալ մոտեցման կողմնակիցների միջև հակասությունը: Ազատության սահմանափակ մոդելը սահմանել է իրավաբանական դոգմատիկան հատկապես 19-րդ դարում հանրային իրավունքում: Ազատության ինստիտուցիոնալ հասկացումը շեշտադրում էր այս սահմանափակ մոդելի թերությունները, սակայն չէր կարող փոխարինել ազատության մեկ այլ մոդելով [6]: Ուշադրությունից այստեղ հեռու է մնացել բանական ազատության բարոյական սահմանափակման հեռանկարը, ինչպես նաև Կանտի կողմից բացահայտված բանական ազատության այս բարոյական սահմանափակումը՝ որպես ազատության դիտարկման հնարավորություն: Տվյալ մոդելում բացակայում է պատկերացման համար հիմքը, որ իրավունքը հանդիսանում է ոչ միայն դրսից բնական իրավունքի սահմանափակում, այլ նաև ապահովում է բարոյական ազատության հավասարակշիռ վիճակը: Ազատության սահմանափակիչ մոդելը թույլ է տալիս լրացնել իրեն նման կերպ: Այս լրացման մեջ արտահայտում են գտնում նաև ինստիտուցիոնալ հասկացման էական մտային մոտիվները և արտահայտում: Այդպիսին են ներսից ազատության ձևակերպման թեզիսը և ազատության միասնական հասկացման մեջ ազատական և սոցիալական կողմերի հավասարության մասին թեզիսը:

Այս երկու իրավաբանական տեսությունների հակասությունը սերում է, մեր կարիծիքով, Հեգելի և Կանտի հայեցակարգերի ոչ համարժեք ընկալումից: Ազատության ինստիտուցիոնալ հասկացության կապը Հեգելի փիլիսոփայության հետ հանգեցրեց նրան, որ Հեգելն ընկալեց Կանտի քննադատությունը: Կանտի մոտ բարոյական ազատության հասկացությունը հնարավոր է, որ տարբերվում է ֆորմալությամբ, բայց այն կամաժին չէ: Հեգելի կողմից առաջ է քաշվել այն քննադատական մոտեցումը, որ Կանտի բարոյական ազատության հասկացությունը չի հասնում որևէ վերջնակետի, ուստի այն չի կարող ընդունվել: Ազատության երկու ժամանակակից իրավաբանական տեսությունների հակասությունը կարող է այդպիսով լուծվել, եթե ելնենք Հոբսի և Կանտի ազատության երկու մոտեցումների փոխհարաբերությունների ընկալումից:

Հոբսի և Կանտի հայեցակարգային մոտեցումները ազատության, բարոյականության և իրավունքի մասին իրենց հետագա զարգացումը ստացան նոր և նորագույն ժամանակների իրավաքաղաքական ուսմունքներում:

2. Բարոյականության մասին հիմնախնդրի շուրջ

Էթիկայի ավանդույթներում բարոյականությունը բնութագրվում է յուրահատուկ երկակի հարաբերության միջոցով: Մի կողմից, այն դիտարկվում է տրանսցենդենտալության պրիզմայով, մյուս կողմից առօրյայում՝ բարոյականությունը ընկալվում է որպես մարդկային կրքերի սահմանափակման գործիք համընդհանուր շրջանակներում: Հին կտակարանը և քրիստոնեությունը այս երկակի հարաբերությանը՝ սիրո երկակի պատվիրանին տվել են ակնառու արտահայտություն, սիրիր Աստծուն ի սրտե և սիրիր քո մերձավորին ինչպես քեզ:

Բարոյականության անհրաժեշտությունը տրանսցենդենտալության մեջ զգացվում էր արևմտաեվրոպական փիլիսոփայության և էթիկայի պատմության բոլոր ժամանակներում: Չնայած այն որոշակի փիլիսոփայական և աստվածաբանական ուսմունքներում տարբեր կերպ է արտահայտվել, սակայն նմանությունը ընդհանուր միտումը ճանաչելի է: Պլատոնի մոտ այն, ինչը դրսևորվում է որպես լավի հանդեպ սեր, քրիստոնեության մեջ այն արտահայտվում է որպես Աստծո հանդեպ սեր: Ճիշտ չի լինի Հոբսին որպես աթեիստի դիտարկումը: Սակայն եթե նա՝ «Լեվիաֆանի» առաջին նախադասությունում նշանակում է բնությունը որպես որոշակի արվեստ, որի միջոցով Աստված ստեղծել է աշխարհը և կառավարում է այն, ապա նա դրանով հեռանում է Աստծո մասին աստվածաբանների տեսակետից: Կանտի մոտ բարոյականության փիլիսոփայության բացարձակ կետը գործնական բանականության համընդհանուր օրենքն է կամ էլ ըստ Կանտի օրինականության ձևը:

Այժմ մեր ուշադրությունը ուղղենք բացարձակ բարոյականության ամրապնդման հարցից բարոյականության՝ մարդկանց միջև փոխհարաբերությունների վրա: Այստեղ միշտ գերակայել է հայացքների համաձայնեցվածությունը: Կրքերի զսպումը բանականության միջոցով տեղի է ունենում Պլատոնի մոտ մարդկանց միջև ընկերության ու հավասարության ձեռք բերման նպատակով: Մերձավորի հանդեպ սիրո քրիստոնեական պատվիրանը Հոբսի մոտ դրսևորվում է որպես ոսկե կանոն: Կանտը փորձում է մարդաբանության հանդեպ կատեգորիկ իմպերատիվը կիրառել բարոյական արժեքների և մարդկային առանձնահատկությունների մասին ուսմունքում: Համաձայն դրա յուրաքանչյուր առանձին մարդու համար կարևոր է սեփական կատարելագործմանը օժանդակության և ուրիշի երջանկության զարգացման պատվիրանը: Բարոյականության հիմնական պատվիրանը, որը վերաբերում է մարդկանց իրական փոխահարաբերություններին, կարող է վերատադրվել մեկ նախադասությամբ. «հարգիր ուրիշին»: Դրանով մենք վերաձևակերպել ենք մերձավորի հանդեպ սիրո քրիստոնեական պատվիրանը հարգանքի պատվիրանի Լուսավորության ազդեցության ներքո: Այն բարոյականության համակարգում ստանում է ուրիշին հարգելու դիրքորոշման միջոցով:

Ուրիշին հարգելու պատվիրանում կարող են առանձնացվել երկու մասեր,

որը ոչ միշտ է դրսևորվում իր պարզորոշությամբ: Անհրաժեշտ է հարգել ցանկացած մարդու, ով ունի որոշակի կենսական բարիքներ: Կարևորագույն կենսական բարիքների ցանկում առանձնացված են ծնողները, կյանքը, ամուսնությունը, սեփականությունը և սոցիալական հեղինակությունը և հենց այդպիսի հաջորդականությամբ: Սրանք բարիքներ են, որոնց իրավունքը տրամադրում է իր պաշտպանությունը և որոնց տալիս է իրավական բարիքների ձև: Մերձավորին հարգելու պատվիրանը նշանակում է մարդկանց հանդեպ բարեկամական վերաբերմունքի պատվիրան: Մենք այստեղ ունենք բարոյականության ոլորտ, որը ծածկում է իրավունքի բնագավառը: Այդպիսին էր Կանտի դիրքորոշումը իրավական ուսմունքի և մարդու բարոյապես արժեքավոր որակների մասին ուսմունքի տարանջատմամբ հանդերձ:

Մարդու կողմից այլ մարդու հանդեպ հարգանքի աղբյուրների մասին հարցին պատասխանը բովանդակվում է նաև բացարձակ բնույթի հանդեպ հաստատագրման մեջ, ուր ավանդույթը ամրապնդել է տվյալ հիմնարար բարոյական պատվիրանը: Այս բացարձակության էությունը կայանում է նրանում, որ այն չի պահանջում հետագա հիմնավորում: Բայց այստեղ պետք է լուսավորել տվյալ հարցի մի ոլորտ: Ըստ մեզ՝ մարդու կողմից այլ մարդու հանդեպ հարգանքի պատվիրանը ենթադրում է այլ մարդու հետ համակցություն, որն իրական է դարձնում այդ պատվիրանը: Սա կարող է լինել խմբերի կամ ժողովուրդների հանրույթ, ովքեր պայքարել են իրար դեմ, իսկ այժմ փորձում են խաղաղություն կնքել: Հանրույթի հետ կապը հանդես է գալիս որպես պատմական գործընթացի արդյունք, որը կապում է մարդկանց իրադարձությունների միասնական հոսանքում: Խոսքը գնում է ոչ թե պարտականության մասին, որը ծնում է կապ, այլ կապի մասին, որը հնարավոր է դարձնում պարտականությունը: Սրանում կարող է կայանալ սիրո քրիստոնեական պատվիրանի խորը իմաստը: Համաձայն քրիստոնեական պատկերացումների՝ սիրել մենք կարող ենք միայն այն ժամանակ, երբ մեզ սիրված կզգանք:

Նշանակությունը, որը մենք տալիս ենք հանրույթին որպես ուրիշին հարգելու պատվիրանի իրացման նախադրյալ, այժմ մեծ կշիռ ունի աշխարհի ժողովուրդների հարաբերություններում: Պարզ է նաև այն, որ հանրույթի բացակայության դեպքում բարոյական հարաբերությունները ընկալվում են որպես նվազ սերտ:

3. Իրավունքի մասին հարցի շուրջ

Մեզ մնում է դիտարկել նախկինում հիշատակված մակարդակներից երրորդը՝ իրավունքը: Մեր փոխկապացվածության մեջ սա բարոյականության ու իրավունքի հարաբերության մասին հարցն է: Մենք ներառվում ենք վեճերի ոլորտ, որոնք արդեն վաղուց տարվում են բնական իրավունքի ներկայացուցիչների միջև մի կողմից և իրավական պոզիտիվիզմի ներկայացուցիչների մոտ՝ մյուս

կողմից: Բանավեճերից տարբերակվում են ոչ այդքան օգտակար «կամ-կամ» բանաձևով: Իրավաբանը տիրապետում է մտային գործիքավորմանը, որը թույլ է տալիս հասկանալ տարբեր գործոնների համագործակցությունը, որոնք տանում են դեպի խնդրի լուծում: Պայմանագրի պարզ կնքումը ենթադրում է ոչ միայն նվազագույնը երկու կողմերի համաձայնեցված գործողություն, այլ նաև վերջինիս մոտ այնպիսի լիազորության առկայություն, որը ստացվել է օրենքի միջոցով: Հայեցողությունը, լինի այն դատական, պաշտոնական, մասնագիտական, կարող է ներկայացվել որպես ազատ և պայմանավորված միաժամանակ:

Բարոյականության և իրավունքի համագործակցությունը պոզիտիվ իրավունքում երբեք կասկածի տակ չի դրվել: Քանի որ ցանկացած մարդու կենսական բարիքներում տեսնում ենք նրա բնական ազատության արտահայտությունը, վերջինս պաշտպանվում է ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային իրավունքի կողմից: Իրավական բարիքների կատալոգը մասնավոր իրավունքում, այդ թվում քաղաքացիական իրավունքում, իր հիմքում դժվար թե տարբերվի բարիքների կատալոգից, որոնք պաշտպանվում են սահմանադրության և օրենսդրության կողմից, անգամ եթե պաշտպանության ուղղությունը այլ է: Իր վերջնական արտահայտումը իրավական և բարոյական բարիքների պաշտպանությունը գտնվում է պոզիտիվ իրավունքի համապարտադիր իրավանորմերում:

Ամփոփելով նշենք, որ ազատությունը, բարոյականության և իրավունքը սոցիալական գոյի հավերժ ուղեկիցներն են, որոնք անքակտելի կերպով կապված ու պայմանավորված են միմյանց հետ. այսպես՝ ազատությունը առանց իրավունքի հնարավոր չէ, այն հանդես է գալիս իրավունքի սահմաններում, իրավունքն առանց ազատության արժեհամակարգի կվերածվի մերկ հարկադրանքի, բացի դրանից՝ իրավունքի բովանդակության արժեքներից է դրա բարոյական լինելը, Կանտի խոսքերով ասած՝ իրավունքն իր էությանմբ պետք է համապատասխանի «բարոյական իմպերատիվին»:

Գրականության ցանկ

1. Պլատոն: Չորս հատորով: Հատոր IV: Պետություն: Երևան, 2017:
2. Нерсисянц В.С. Политические учения Древней Греции. «Наука» М., 1979, с. 143.
3. Нерсисянц В.С. История политических и правовых учений. Норма., М., 2005, С.270-271.
4. Պլատոն, նշվ. աշխ., Հատոր IV, էջ 42:
5. Միրումյան Կ., Քաղաքական ուսմունքների պատմություն: Երևան, 2006, էջ 402:
6. История политических и правовых учений. Средние века и возрождение. Отв. ред. В.С.Нерсисянц. М., «Наука» 1986 с. 14-15.

Сафарян Г., Малхасян Л. - О СООТНОШЕНИИ СВОБОДЫ, МОРАЛИ И ПРАВА. Всесторонне рассмотрели проблемы, связанные с соотношением свободы, морали и права с позиций христианского учения, философских систем Платона, Томаса Гоббса и Иммануила Канта.

Safaryan G., Malkhasyan L. - ON THE RELATIONSHIP BETWEEN FREEDOM, MORALITY AND LAW. The authors have comprehensively discussed the problems related to the relationship between freedom, morality and law from the perspective of Christian doctrine of the philosophical systems of Plato, Thomas Hobbes and Immanuel Kant.

Keywords: *law, morality, freedom, formal equality, state, laws, Christian doctrine.*

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԷՈՒԹՅԱՆ և ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՄԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

^{1,2}Գառնիկ Սաֆարյան, ¹Լևոն Հարությունյան

¹Երևանի Հայրուսակ Համալսարան

²ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտ
Ընդունված է տպագրության 03.06.2023

Ամփոփագիր. Սույն հոդվածում հեղինակները հանգամանորեն վերլուծության են ենթարկում իրավունքի էության և իրավահասկացման տիպաբանության հիմնախնդիրները, ինչպես նաև քննարկում են դրանց գիտական հետազոտության մեթոդաբանական մոտեցումները՝ ժամանակակից իրավագիտության և գիտական ճանաչողության տեսանկյունից:

Հիմնաբառեր. իրավունք, իրավահասկացություն, գիտական հայեցակարգ, մեթոդաբանական հիմունքներ, դիալեկտիկական և հատուկ մեթոդներ, իրավագոյակցություն, իրավակիրառում, իրավական մեկնություններ:

Իրավունքի էության և հասկացման հիմնախնդիրը դասվում է հավերժականների թվին: Իրավունքի, որպես սոցիալական իրականության երևույթի օբյեկտիվությունը միաժամանակ ենթադրում է սուբյեկտիվ հայացք նրա կերպարի, նկարագրի վերաբերյալ [1]: Համապատասխանաբար, իրավունքի ընկալման առումով կարելի է առանձնացնել երկու հիմնական մոտեցում: Պայմանականության որոշակի չափով այդ մոտեցումները կարելի է անվանել գործիքային և մշակութաբանական:

Գործիքային մոտեցման համատեքստում իրավունքը ի սկզբանե ընկալվել է որպես միջոց, որի օգնությամբ սահմանվել են վարքի համանշանակալից և համապարտադիր կանոններ, լուծվել են վեճեր և կոնֆլիկտներ, որոշվել և իրականացվել են իրավունքով ամրագրված կանոնների խախտման համար պատասխանատվության միջոցներ:

Որպես հասարակական հարաբերությունների կարգավորման ու պաշտպանության գործիք, իրավունքը ծագել է սոցիալական զարգացման ամենավաղ փուլերում և զարգացել հասարակության հետ միասին: Դրա հետ մեկտեղ իրավագոյացման և իրավակիրառման գործընթացները երկար ժամանակ կրել են տարերային բնույթ, ինչը պայմանավորված էր սոցիալական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններով: Այս օրինաչափությունների հիմքում դրված են պատճառա-հետևանքային կապերը և համակարգերի ձևավորման ընդհանուր սկզբունքները: Ցանկացած համակարգ, այդ թվում նաև սոցիալական համակարգը, զարգանում է առնվազն երեք պահերով: Ինքնապահպանման, ինքնաքայքայման և ինքնազարգացման ազդեցության ներքո:

Նշված միտումների հզորացումը կամ թուլացումը հանդես է գալիս մի կողմից՝ որպես նախորդող դեպքերի հետևանք, իսկ մյուս կողմից՝ հաջորդող փոփոխությունների պատճառ:

Իրավունքի առաքելությունը սոցիալական գոյում պայմանավորված է հասարակական հարաբերությունների կանոնակարգվածության և պաշտպանվածության ձգտումով: Համապատասխանաբար, իրավունքը, որպես սոցիալական ներազդման գործիք ի սկզբանե ուղղված է կատարելու հիմնականում երկու գործառույթ՝ կարգավորիչ և պահպանիչ: Իրավունքի էության և հասկացման վերաբերյալ գործիքային մոտեցումը ենթադրում է նրա գնահատում կիրառական նշանակելիության տեսակետից, ընդ որում իրավունքը անբակտելիորեն կապված է կազուսի՝ իրավական գործիքների միջոցով լուծվող կենսական կոնկրետ իրավիճակի հետ: Հնագույն շրջանում իրավական կարգավորման հիմնական նորմատիվ միջոց էր արգելքը, իսկ իրավական կարգավորումը հանգում էր արդարադատության, այսինքն, կանոնի խախտման մեղավորության պարզմանը և պատժի սահմանմանը: Սոցիալական հարաբերությունների աստիճանաբար բարդացումը պայմանավորեց իրավական կարգավորման նորմատիվ հիմքերի և գործընթացների բարդացմանը, ինչը, իր հերթին, կանխորոշեց իրավական փորձի ընդհանրացման անհրաժեշտությունը:

Իրավունքի, որպես կոնկրետ կազուսի լուծման գործիքի ընկալման հետ մեկտեղ ձևավորվում է նաև պատկերացում իրավունքի՝ որպես յուրատեսակ, կյանքի կոնկրետ իրավիճակների հետ անմիջական կապ չունեցող արստրակցիայի մասին: Նման հասկացման համատեքստում իրավունքը սկսում է ընկալվել որպես մշակույթի երևույթ, որպես արժեքային սահմանումների համակարգ:

Իրավունքի ընկալման վերաբերյալ մշակութաբանական մոտեցումը չի բացառում նրա էության գործիքային բաղադրիչը, ներկայումս իրավունքը շարունակվում է դիտարկվել որպես սոցիալական կարգավորման և պաշտպանման միջոց: Դրա հետ մեկտեղ իրավունքի ընկալումը որպես ազգային (իսկ հետագայում նաև միջազգային) մշակույթի երևույթի հանգում է «իրավունք» և «օրենք» հասկացությունների տարբերակմանը [2], իսկ դա, իր հերթին, կանխորոշում է անվերջ բանավեճ առ այն, թե ինչ է իրավունքը և ինչպես է այն հարաբերվում կարգավորիչ-պաշտպանիչ այլ համակարգերի (օրենսդրության, կրոնի, բարոյականության, սովորույթների) հետ [3]:

Իրավահասկացման ինչպես ավանդական այնպես էլ ինտեգրատիվ մոտեցումների էական և բովանդակային առումների մանրազնին վերլուծություն են իրականացրել հեղինակները սույն հետազոտության մեջ, որում փորձ է արված դիտարկել իրավունքը որպես երկմիասնական ֆենոմեն, որը տարբեր ձևով է դրսևորվում և ընկալվում օբյեկտիվ և սուբյեկտիվ իրականության պայմաններում: Իրավունքը հեղինակները դիտարկում են «ազատություն» և

«անհրաժեշտություն», «օբյեկտիվ» և «սուբյեկտիվ», «գոյ» և «պարտ», «ձև» և «բովանդակություն» զույգ կատեգորիաների համադրման միջոցով:

Իրավունքի էության և իրավահասկացման ուղղություններից մեկն է իրավական երևույթների հասկացման վերաբերյալ գիտական մոտեցումների հետազոտումը: Դա թույլ է տալիս բացահայտել իրավական երևույթին բնորոշ գծերը, ավելի լավ տեսնել նրա տարբեր դրսևորումները, այսինքն վերլուծել տարբեր հայեցակարգերի շրջանակներում ստացված գիտելիքները և դրանց գիտական մշակման եղանակով ստանալ իրավունքի մասին որակապես նոր գիտելիքներ: Որպես գիտա- ճանաչողական օբյեկտներ հանդես եկող իրավահասկացման հայեցակարգերը հետազոտվում են որոշակի մեթոդների, եղանակների, հնարքների օգնությամբ: Իրավաճանաչման գործընթացում «մեթոդաբանական նշանակություն ունի այն ամենը, ինչը հնարավորություն է տալիս իրագործել մեր ճանաչողական հետաքրքրասիրությունը, ինչպես նաև այն, ինչը ունակ է կազմակերպել հետազոտման գործընթացը ըստ ընտրված առարկայի և սրբագրել այն ամեն անգամ, երբ ծագի նման անհրաժեշտություն»[4]: Դրա հետ մեկտեղ «տարբերությունը մի կողմից մեթոդի, իսկ մյուս կողմից եղանակի, հնարքի, հաշվարկի, ձևի միջև կայանում է նրանում, որ մեթոդը իրենից ներկայացնում է ավելի բարդ գոյացություն, քան եղանակը և ճանաչողական այլ գործողությունները: Եղանակի տակ միշտ ենթադրվում է գործողության միայն մեկ եղանակ, օրինակ, տրամաբանական վերլուծությունը՝ դա առարկան մտովի մասնատման հնարք է: Իսկ մեթոդը որոշակի ձևով կանոնակարգված ճանաչողական գործողությունների ամբողջականություն է [5]»:

Ըստ փիլիսոփայական կատգորիաների, ինչպիսին է ընդհանուրի, մասնավորի և առանձնահատուկի, գիտական ճանաչման մեթոդները բաժանվում են.

- դիալեկտիկական մեթոդի, որը բնութագրվում է համընդհանրությամբ,
- գիտական ճանաչման ընդհանուր մեթոդների,
- հետազոտման մասնավոր-գիտական մեթոդների [6]:

Այս բաժանումը կիրառելի է նաև իրավական երևույթների, այդ թվում նաև «իրավահասկացում» ֆենոմենի հետազոտման մեթոդների վերաբերյալ:

Ճանաչման համընդհանուր դիալեկտիկական մեթոդի հիմքը, առաջին հերթին, կազմում են դիալեկտիկայի՝ բնության, հասարակության և մտածողության առավել ընդհանուր օրենքների մասին գիտության սկզբունքները [7]: Ժամանակակից իրավաբանական գիտության մեջ գոյություն ունի տվյալ մեթոդի իդեալիստական և մատերիալիստական ընկալման մոտեցումներ: Դիալեկտիկայի մեթոդի բովանդակությունը կազմում են դիալեկտիկայի հիմնական օրենքներն ու կատեգորիաները: Օգտագործելով դրանք պետաիրավական երևույթների վերլուծման ժամանակ, կարելի է ներթափանցել պետության և իրավունքի էության մեջ, պարզել դրանց բնույթը, պետության, իրավաստեղծման և իրավակիրառման գործունեության մեխանիզմն ու առանձնահատկությունները: Դիալեկտիկայի մեթոդի կիրառումը

իրավունքի հասկացության գիտական մոտեցումների հետազոտման ընթացքում ենթադրում է դիմել այնպիսի սկզբունքների կիրառմանը, ինչպիսիք են գիտական հայեցակարգերի ներքին հակասականությունը և ամբողջականությունը, գիտական մտքի զարգացման կրկնողականությունն ու առաջընթացը, գիտական տեսությունների ժառանգականությունը և այլն [8]:

Ընդհանուր մեթոդները կարելի է օգտագործել ոչ միայն իրավական տեսություններ, ուսմունքներ, հայեցակարգեր, այլև այլ երևույթների ուսումնասիրման համար, ընդ որում ոչ միայն և ոչ անպայման իրավական գիտության օբյեկտ հանդիսացող երևույթների: «Ընդհանուր մեթոդների կիրառման բնագավառը անհամեմատ ավելի լայն է, քան մասնավոր մեթոդների, սակայն համընդհանրայնությամբ դրանք օժտված չեն, քանի որ կիրառվում են գիտական ճանաչման ոչ բոլոր օբյեկտների հանդեպ» [9]: Դրանք են, օրինակ, համեմատման, վերլուծման, սինթեզի, վերացարկման, համակարգային, կառուցվածքային և ֆունկցիոնալ մոտեցման, նվազ ընդհանուր հասկացության բերումը առավել ընդհանուր հասկացության և այլ մեթոդներն են [10]:

Իրավական երևույթի հասկացման վերաբերյալ մոտեցումների հետազոտման մասնավոր-գիտական մեթոդները բնութագրվում են առավելագույն մասնագիտացմամբ, դրանց կիրառման ավելի կոնկրետացված բնագավառներով: Այդ իսկ պատճառով իրավաբանական գրականության մեջ մասնավոր մեթոդների առումով հասկանում են, ըստ էության, նույն ընդհանուր մեթոդները, որոնք կիրառվում են կոնկրետ երևույթի ճանաչման ընթացքում: Այսպես, օրինակ, Մ.Ն. Մարչենկոն իրավական երևույթների ճանաչման մասնավոր մեթոդների թվին է դասում համեմատական-իրավական մեթոդը, իրավական որոշումների մշակման մեթոդը, իրավունքի նորմերի մեկնաբանումը [11]: Դժվար չէ նկատել, որ նշված մեթոդները ոչ այլ ինչ են, քան ճանաչման ընդհանուր մեթոդների (համեմատական, որոշումների մշակման, մեկնման) տարածում (էքստրապոլացիա) կոնկրետ ոլորտի վրա՝ հետազոտելու համար երևույթների այն շրջանակը, որը ընդունված է անվանել իրավական: Այսպիսով, որպես իրավունքի հասկացման վերաբերյալ մոտեցումների հետազոտման հատուկ մեթոդներ կարող են դիտարկվել, օրինակ, գիտական այն տեսությունների, հայեցակարգերի համեմատումը, որոնց շրջանակներում ձևավորվում է իրավունքի որոշակի հասկացությունը, ինչպես և տեսական հայեցակարգերի մոդելավորումը, իրավունքի հասկացման վերաբերյալ մոտեցումների վերլուծությունը, գիտական իրավական հայեցակարգերի սինթեզը, «իրավահասկացում» երևույթի հետազոտման կառուցվածքային-ֆունկցիոնալ մեթոդը և այլն [12]:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ իրավագիտության մեջ լայնորեն օգտագործվում է տիպաբանման ընդհանուր-գիտական մեթոդը [13], այսինքն, գիտական ճանաչման այն մեթոդը, որի հիմքում ընկած է օբյեկտների համակարգի մասնատումը և դրանց խմբավորումը ընդհանրացված մոդելի կամ

տիպի օգնությամբ [14]: Տվյալ մեթոդը հիմնականն է իրավահասկացման հիմնահարցի հետազոտման ընթացքում և կիրառվում է իրավունքի մասին կոնկրետ պատկերացումների և հասկացությունների էական հատկանիշների համեմատական վերլուծության, ընդհանրացված իդեալացված իրավական մոդելների միջև կապերի բացահայտման համար, ինչը, վերջի հաշվով, կանխորոշում է նոր գիտելիքների ձեռքբերումը ինչպես բուն իրավահասկացման, այնպես էլ ընդհանրապես իրավունքի մասին:

Ելնելով տիպաբանության մեթոդաբանական ընդհանուր հասկացությունից, իրավահասկացման տիպաբանությունը կարելի է բնորոշել որպես գիտա-իրավաբանական ճանաչման մեթոդ, որի հիմքում ընկած է իրավահասկացման, որպես միասնական համակարգային երևույթի, մասնատումը առանձին տարրերի և դրանց խմբավորումը ըստ տիպերի: Սակայն հետազոտելով իրավահասկացման տիպաբանությունը, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ տիպաբանությունը ոչ միայն մեթոդաբանական մոտեցում է ճանաչման հանդեպ, այլև այն, ինչը ստացվել է դրա կիրառման հետևանքով՝ տիպաբանական նկարագրման ու համեմատման արդյունքը [15]: Դրան համապատասխան, սույն հոդվածում տիպաբանությունը հասկացվելու է լայն իմաստով, տերմինաբանական իր երկու իմաստներով, այսինքն, և որպես «իրավահասկացում» երևույթի ճանաչման վերաբերյալ մեթոդաբանական մոտեցում, և որպես այդ մեթոդի կիրառման արդյունք:

Իրավահասկացման տիպաբանության մեր ձևավորված հասկացությունից երևում է, որ իր զույգ առումներում դիտարկվող երևույթի հիմքում ընկած է խմբավորումը ըստ տիպերի: Այսպիսով, իրավահասկացման տիպի հասկացությունը ելային է և դրա մեկնաբանությունից է կախված, ըստ էության, նաև իրավահասկացման տիպաբանական մեկնումն ընդհանրապես: Դրա հետ մեկտեղ իրավաբանական գրականության մեջ իրավահասկացման տիպին բնորոշումներ տալու փորձեր բավականին հազվադեպ են: Առավել հաճախ հեղինակները դիմում են տվյալ կատեգորիային որպես ինքնին հասկանալի, բոլորին հայտնի և հավելյալ բացատրություններ չպահանջող ինչ-որ բանի: Նույնիսկ ուսումնական գրականության մեջ, որը պետք է աջակցի ուսանողների մոտ հասկացողական ապարատի ձևավորմանը, այդ հսկ պատճառով պահանջելով հավելյալ բացատրություններ օգտագործվող եզրույթների վերաբերյալ, իրավահասկացման հիմնահարցի դիտարկումը սկսվում է, որպես կանոն, միանգամից հիմնական տիպերից, իսկ լավագույն դեպքում՝ տիպաբանության չափանիշներից [16]:

Ինչ է իրավահասկացման տիպը:

Մեր կարծիքով առավել մոտ իմաստով «տիպ» բառը բացատրվում է որպես օրինակ, նմուշ կամ տարբերակ, ձև, որին համապատասխանում է առարկաների, երևույթների որոշակի հայտնի խումբ: Գիտության բնագավառների առնչությամբ տիպի հասկացությունը կոնկրետացվում է, սակայն

առանց էական տարբերությունների: Այսպես, օրինակ, խորհրդային հայտնի գիտնական-տրամաբան Ն. Ի. Կոնդակովը բնորոշում է տիպը որպես «նմուշ, որը արտահայտում է առարկաների, երևույթների ընդհանուր, էական գծերը», որպես «ձև, տեսակ, մոդել, որին համապատասխանում է օբյեկտների որոշակի դաս» [17]:

Ելնելով վերոշարադրյալից, կարելի է ձևակերպել իրավահասկացման տիպի իրավահասկացման տիպը՝ իրավական երևույթի ընդհանրացված հայեցակարգային մոդելն է, որն արտացոլում է իրավական կոնկրետ պատկերացումների և հասկացությունների որոշակի բազմության ընդհանուր էական հատկանիշները, իսկ այդ պատկերացումներն ու հասկացություններն, իրենց հերթին, համապատասխանում են այդ հայեցակարգային մոդելին որպես նմուշ: Մեր կարծիքով, միանգամայն ընդունելի կարող է համարվել Ա. Վ. Պոլյակովի առաջարկած բնորոշումը, համաձայն որի իրավահասկացման տիպը՝ «իրավունքի որոշակի պատկերն է, որը բնութագրվում է իրավունքի առավել ընդհանուր տեսական հատկանիշների և դրա հանդեպ պրակտիկ (արժեքային) վերաբերմունքի առավել ընդհանուր վերաբերմունքի ամբողջականությամբ» [18]:

Պատկանելիությունը իրավահասկացման այս կամ այն տիպին որոշիչ նշանակություն ունի իրավունքի մասին ցանկացած տեսության համար: «Հենց իրավահասկացման տիպն է բնորոշում իրավաբանական ճանաչման պարադիգմը (իմաստային մոդելը, սկզբունքը և նմուշը), իրավունքի մասին համապատասխան ուսմունքի գիտա-իրավական բովանդակությունը, առարկան և մեթոդը» [19]: Դրա հետ մեկտեղ իրավահասկացման տիպը պայմանավորվում է սուբյեկտի ընդհանուր աշխարհաընկալմամբ: Եվ այդ իմաստով «իրավահասկացման տիպը» իրենից ներկայացնում է իրավունքի իմաստային մոդել, որը բնորոշվում է նրա աղբյուրներով [20]:

Վերադառնալով տիպի հասկացությունից բուն տիպաբանության հարցին, հարկ է նշել, որ տիպաբանությունը իրենից ներկայացնում է դասակարգման տարատեսակ [21]: Դրա հետ մեկտեղ պետք է հաշվի առնել, որ ըստ հիմքերի էական աստիճանի առանձնացնում են դասակարգման երկու տեսակ, արհեստական ու բնական: Արհեստական է համարվում այն դասակարգումը, որտեղ որպես տարաբաժանման չափանիշեր են հանդես գալիս ոչ էական հատկանիշները (օրինակ, այբուբենային-առարկայական տեղեկատվություն): Բնական է հանդիսանում այն դասակարգումը, որում որպես հիմք են վերցնում էական հատկանիշները, ինչը թույլ է տալիս դիտարկել դասակարգումը որպես դասակարգվող օբյեկտների մասին գիտելիքների աղբյուր: Իրական աշխարհի օբյեկտները գիտականորեն կարելի դասակարգել միայն այն պայմանով, եթե դրա հիմքում ընկած են ոչ թե պատահական, արտաքին, այլ ներքին որոշիչ հատկանիշները, բացահայտված ուսումնասիրվող գործընթացի և դրան հարակից երևույթների համակողմանի, պատմական առումը հաշվի

առնող վերլուծության արդյունքում: Այդ իսկ պատճառով իրավահասկացման տիպաբանությունը ոչ թե իրավական ընկալումների, հասկացությունների, պատկերացումների ցանկացած դասակարգում է, այլ գիտական դասակարգում, իրականացված հենց ըստ էական հատկանիշների:

Ինչպես արդեն նշել ենք վերը, իրավահասկացման տիպաբանությունը՝ գիտական դասակարգում է, այսինքն, ըստ էական հատկանիշների իրականացված դասակարգում, ընդ որում ըստ կառուցվածքի առանձնացնում են տիպաբանության երկու հիմնական տեսակ՝ էմպիրիկ և տեսական [22]: Իրավահասկացման տիպաբանության առումով տիպաբանության այս երկու տեսակները կարող են բնութագրվել հետևյալ կերպ.

Իրավահասկացման էմպիրիկ տիպաբանությունը կառուցվում է իրավահասկացման տարբեր սուբյեկտների իրավական ընկալումների, պատկերացումների, հասկացությունների մասին փորձնական տվյալների քանակական մշակման և ընդհանրացման, իրավական տարբեր պատկերների միջև նմանության ու տարբերության հաստատուն հատկանիշների ամրագրման, տիպաբանական նկարագրման ու համեմատման արդյունքների համակարգման ու համապատասխան գիտական մեկնաբանման հիման վրա:

Որպես էմպիրիկ տիպաբանության օրինակ կարելի է բերել Գ.Գ. Բերնացկու առաջարկած տիպաբանությունը: Հեղինակն առաջարկում է փիլիսոփա-իրավական ուղղությունների հետևյալ տիպերը.

- 1) աստվածաբանական, որի կողմնակիցները իրավունքի էությունը կապում են Աստծո կամքի հետ,
- 2) բնապաշտական, որի հետևորդները իրավունքի էությունը տեսնում են բնական, բանականության, իշխող տիեզերքի մեջ,
- 3) օբյեկտիվ-իդեալիստական, որի կողմնակիցները իրավունքի էությունը դուրս են բերում օբյեկտիվ ոգուց՝ գերզգայական գերագույն հոգևոր սկզբից,
- 4) սուբյեկտիվ-իդեալիստական, որն իրավունքի էությունը որոնում է մարդու բանականության, գիտակցության, հոգեբանության մեջ,
- 5) միստիկական, որի կողմնակիցները բացատրում են իրավունքի էությունը առեղծվածային, գերզգայական հոգևոր ինչ-ինչ ուժերի մեջ,
- 6) տնտեսական, որի շրջանակներում իրավունքի էությունը բացատրվում է տնտեսական հարաբերություններով,
- 7) քաղաքագիտական, որը կապում է իրավունքի էությունը քաղաքական հարաբերությունների, քաղաքական գործունեության հետ,
- 8) սոցիալական (նեղ իմաստով), որի ջատագովները մեկնում են իրավունքը, հենվելով սոցիալական հարաբերությունների վրա,
- 9) ձևական-դոգմատիկ, որն իրավունքի էությունը հանգեցնում է գործող օրենսդրությանը [23]:

Ձգտելով ընդգրկել փիլիսոփա-իրավական տիպերի ողջ բազմազանու-

թյունը, առանձնացված բնորոշ գծերի հիման վրա նշված հեղինակը ցույց չի տալիս դրանց միջև եղած փոխկապակցությունները: Տիպերից յուրաքանչյուրը առանձնացված է զուտ էմպիրիկ կերպով և հանդես է գալիս կարծես թե ինքնին, առանց այլ տիպերի հետ կապերի, միասնական՝ համակարգից դուրս: Նման տեսակի տիպաբանության էական թերությունն է սահմանված օրինաչափության բացակայությունը՝ օրինաչափության, որը կարող էր էվրիստիկ բնույթ տալ իրավահասկացման տիպաբանության տիպերին: Թերևս ինքը Գ.Գ. Բերնացկին նշում է, որ տվյալ տիպաբանությունը տառապում է մի շարք թերություններով: Այն, ըստ երևույթին, երբեք չի կարող ամբողջական լինել: Բավականաչափ ուշադիր հետազոտության դեպքում այս կամ այն մտածողների գործերում միշտ կարելի է գտնել գոյի որևէ ոլորտ, որին հանգեցվում է իրավունքը և որը չի մտել ելային տիպաբանության մեջ: Մեկ այլ թերություն կարելի է համարել այն, որ, ասենք, իրավական տարբեր պատմության մեջ այնքան հայտնի բնական իրավունքի տարբեր հայեցակարգերը պետք է, ըստ նոր տիպաբանության, վերաբերվեն տարբեր տիպերին՝ մեկ բնապաշտական, մեկ օբյեկտիվ-իդեալիստական, մեկ սուբյեկտիվ-իդեալիստական [24]:

Նշելով էմպիրիկ տիպաբանության թերությունները, հարկ է համաձայնել նաև, որ տիպաբանական համակարգեր կառուցելիս այն անհրաժեշտ քայլ (փուլ) է օբյեկտիվ օրինաչափությունների բացահայտման ճանապարհին: Այս կապակցությամբ անհրաժեշտ է համաձայնվել Գ.Գ. Բերնացկու այն դիտողության հետ, որ «տվյալ դասակարգումը օգտակար է նրանով, որ թույլ է տալիս առնվազն նախանշել գոյի այն ոլորտները, որոնց սկզբունքորեն կարող է հանգեցվել իրավունքը» [25]: Իսկ դա, մեր կարծիքով, կարևորագույն պայմանն է փոխկապակցությունների բացահայտման և դրանց համապատասխան տեսական տիպաբանության կառուցման համար:

Իրավահասկացման տեսական տիպաբանությունը ենթադրում է իդեալական մոդելի կառուցում, որը հանդես կգա որպես առանձին կոնկրետ իրավական երևույթների հետազոտման արդյունքների ընդհանրացված ամբողջականություն: Տեսական տիպաբանության սկզբունքն է իրավահասկացման համակարգային ընկալումը, ինչը ենթադրում է առանձին տիպերի միջև գոյություն ունեցող համակարգաստեղծ կապերի, օրինաչափությունների առանձնացում: Կարծում ենք, որ հենց այդպիսի տիպաբանությունն է առավել արդյունավետ տեսական իմաստով, ծառայելով որպես օբյեկտի բացատրման և դրա տեսության կառուցման գլխավոր միջոցներից մեկը [26]:

Որպես օրինակ կարելի է բերել նորմագոյացման տիպաբանությունը ըստ օբյեկտի: Դրա իմաստը կայանում է նրանում, որ վերլուծված նյութի դիտարկման ու ամփոփման հիման վրա առանձնացվում են սուբյեկտներ, որոնք իրավական տարբեր տեսությունների շրջանակներում դիտարկվում են որպես իրավաստեղծության աղբյուրներ: Դրա հիման վրա առանձնացվում են իրավահասկացման հիմնական տիպերը, օրինակ, աստվածաբանականը,

բնական-իրավականը, պատմականը (ազգային-պահպանողականը և այլն): «Այնտեղ, որտեղ ամենագոր նորմաստեղծողը Աստված է, մենք գործ ունենք (աստվածաբանական (տեոլոգիական՝ լատինական theos-աստված բառից) իրավահասկացման հետ: Մարդու բնությունից (էությունից), նրա բանականությունից և խղճից է ածանցվում բնական իրավունքը: Ազգային-պահպանողական իրավահասկացման աղբյուր է ազգի մենթալիտետը, նրա ինքնությունը, որն աղբյուրի պես սնում է ժողովրդի սովորությանին իրավունքը և նրա էթնո-ազգային իրավական ավանդույթը: Իրավունքի ֆորմացիոն հասկացումը կապում է այն հասարակության պատմության որոշակի փուլին՝ ստրկատիրական ավատատիրական, բուրժուական, սոցիալիստական և այլն: Այն հիմնված է հասարակական կարգի հանդեպ իրավունքի ծառայողական դերի վերլուծության, առաջնային արժեքների նրա կախվածության, պատմական տվյալ դարաշրջանի համար իրավական կարգավորման համակարգաստեղծ հիմնավորումների վրա... Պոզիտիվ-իրավական տեսակետից իրավունքի աղբյուր է պետական իշխանությունը» [27]:

Տեսական տիպաբանության օրինակ կարող է ծառայել «արտահայտման ձև-հասարակական գիտակցություն-իրավական հասարակական հարաբերություններ» չափանիշի վրա հենվող տիպաբանությունը: Այս չափանիշը, որը առաջարկվել է դեռ անցյալ դարում (Ն.Ն. Ալեքսեն) [28], իսկ գուցե և ավելի վաղ, սակայն առավել լայն տարածում է գտել մեր օրերում: Դրան համապատասխան տարբերակում են իրավահասկացման երեք հիմնական տիպ. նորմատիվային, բնական-իրավական (բարոյական) և սոցիոլոգիական [29]:

Հատկանշական է, որ նշված դասակարգման կողմնակիցները ամենատարբեր կարծիքներ ունեն իրավահասկացման նշված տիպերի սոցիալական նշանակության վերաբերյալ:

Առավել հաճախ համաձայնվում են, որ իրավահասկացման յուրաքանչյուր տիպը (նորմատիվային, բնական-իրավական և սոցիոլոգիականը) «ունեն իրենց հիմքերը» և հանդիսանում են իրավական երևույթի այս կամ այն կողմի արտացոլումը: Այս կապակցությամբ հատկանշական է Օ.Է. Լեստի տեսակետը: Նա նշում է, որ «հայեցակարգերից յուրաքանչյուրը արտահայտում է իրավունքի իրական կողմը և ծառայում է նրա իրականացմանը: Այսպես, իրավունքի բարոյական ընկալումը կարևոր է ինչպես իրավական դաստիարակության, այնպես էլ գործող իրավունքի զարգացման համար: Առանց իրավունքի նորմատիվային հասկացման գործնականում անհասանելի են իրավական հարաբերությունների կայունությունն ու որոշակիությունը, ինչպես նաև օրինականությունը պետական մարմինների և պաշտոնատար անձանց գործունեության մեջ: Վերջապես, միայն սոցիալական հասկացման միջոցով է իրավունքը ձեռք բերում կոնկրետություն և գործնական իրագործում, առանց դրա այն մնում է դեկլարացիա, տեքստերի կամ բարոյական մաղթանքների համակարգ» [30]:

Որպես տնտեսական տիպաբանության օրինակ կարելի է նշել նաև Յու. Ա. Բասկինի առաջարկած տիպաբանությունը: Գիտնականը առանձնացնում է իրավահասկացման հետևյալ հիմնական տիպերը. 1) մետաֆիզիկական որը տեսնում է իրավունքի հիմքն ու նրա ծագման պատճառները սոցիալական գործոններից դուրս (և վեր), 2) մարդաբանական, որն իրավունքի հիմք է ճանաչում մարդու (անհատի) բնությունը, 3) սոցիոլոգիականը, որի կողմնակիցները համարում են, որ իրավունքը հասարակական կապերի և հարաբերությունների արդյունք է [31]: Այստեղ հեղինակը ոչ միայն ընդգծում է իրավական տարբեր պատկերների հաստատուն հատկանիշները, դրանց միջև եղած նմանություններն ու տարբերությունները, ոչ միայն թվարկում է որոշակի հատկություններով օժտված բազմապիսի տիպեր, այլև սահմանում դասակարգիչ որոշակի չափանիշ, մեր կարծիքով, որպես հիմք ընդունելով «բնություն-մարդ-հասարակություն» համակարգաստեղծ փոխկապակցությունը:

Տեսական տիպաբանություն է առաջարկում նաև ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանցը: Իր կողմից զարգացվող ազատական-իրավաբանական տեսության մեջ նա առանձնացնում է իրավահասկացության երկու հիմնական տիպ. իրավաբանական և լեգիստական: Գիտնականի կարծիքով, «իրավական մտքի և իրավաբանության պատմությունն ու տեսությունը ներթափանցված են իրավահասկացման երկու հակադարձ տիպերի պայքարով: Իրավունքի հասկացման և իրավունքի հասկացության մեկնման երկու տիպերը կարելի անվանել որպես իրավաբանական («իրավունք» բառից) և լեգիստական (լատինական *Lex*՝ օրենք բառից)» [32]: Այս տիպաբանության հիմքում դրված է «իրավունքի և օրենքի նույնացման կամ տարբերակման պահը» [33]:

Իրավաբանական իրավահասկացման համար իրավունքը ոչ միայն կամայական և սուբյեկտիվ հրահանգ է, այլ օբյեկտիվ և ինքնուրույն, սեփական (օրենսդրի կամքից անկախ) բնույթ, էություն, յուրահատկություն, մի խոսքով, իր սկզբունքը ունեցող, որոշակի բան: Իրավունքի այդ սկզբունքն է ձևական հավասարության սկզբունքը, որն «արտահայտում է իրավունքի էությունն ու առանձնահատկությունը, կազմում իրավունքի տարբերակությունը սոցիալական այլ կարգավորիչներից, նորմերից և երևույթներից» [34]: Իրավաբանական իրավահասկացման շրջանակներում Վ.Ս. Ներսեսյանցը առանձնացնում է ազատական-իրավաբանական տիպը, համաձայն որի իրավունքը «մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ ձևն է» [35]:

Ինչպես և Վ. Ներսեսյանցը, իրավահասկացման երկու հիմնական ձև է նշում նաև Վ.Ջետովերինը: Սակայն, օգտագործելով տիպաբանության նոր չափանիշը՝ «իրավունքի և օրենքի տարբերակման կամ նույնացման» սզկբունքը, գիտնականը տիպաբանությանը տալիս է տերմինաբանական նոր ձևավորում, առանձնացնելով պոզիտիվիստական և ոչ պոզիտիվիստական տիպերը: Ըստ գիտնականի կարծիքի, իրավահասկացման պոզիտիվիստական

տիպը հանգում է իրավունքի և օրենքի նույնացմանը (լայն իմաստով): Իրավունքի տակ պոզիտիվիստները հասկանում են «ցանկացած օրենքներ, վարչական ակտեր, դատական որոշումներ և ընդհանրապես պետական իշխանության բոլոր հրամաններ՝ անկախ դրանց բովանդակությունից» [36]:

Իրավահասկացման այս տիպի ներսում տարբերակվում են իրավունքի երկու տեսակի հասկացում, լեգիստական և սոցիոլոգիական [37]:

Իրավահասկացման ոչ պոզիտիվիստական տիպը ներառում է քաղաքական-իրավական մտքի տարբեր ուղղություններ, որոնցում «անց է կացվում իրավունքի և օրենքի տարբերակում, բացատրվում է իրավունքի գերակայությունը օրենքի հանդեպ»: Ոչ պոզիտիվիստական տեսակետից «իրավունքը իրավացի է ոչ այն պատճառով, որ այն գրված է օրենքում և գոյություն ունի պաշտոնական ձևով, այլ բովանդակությամբ: Օրենքները պետք է լինեն իրավական, պետք է պարունակեն իրավական նորմեր, սակայն իրականում օրենքները իրենց բովանդակությամբ կարող են լինել ոչ իրավական, կամայական» [38]: Իրավահասկացման այս տիպին է դասում Վ. Ա. Չետվերնինը իրավունքի էթիկական և իրավաբանական հասկացումը [39]: Մինչդեռ ժամանակ գիտնականը իրեն համարում է ազատական-իրավաբանական տիպի իրավահասկացման կողմնակից, իսկ այդ տիպը, ինչպես կարելի է հասկանալ հեղինակի դատողություններից, վերաբերում է ոչ պոզիտիվիստական տիպի տարատեսակ, որի շրջանակներում էլ տրվում է «իրավունքի բուն իրավաբանական հասկացությունը, այսինքն, այն հասկացություն, որը համապատասխանում է «իրավունք» տերմինին և բառին» [40]:

Կարծում ենք, որ Վ. Ա. Ներսեսյանցի և Վ. Ա. Չետվերնինի կողմից առաջարկված՝ իրավունքի և օրենքի հարաբերակցության չափանիշը արժանի է համակ ուշադրության, քանի որ, անշուշտ, բացահայտում է որոշակի հաստատուն կապը, օրինաչափությունը, որոնք թույլ են տալիս առանձնացնել իրավահասկացման համապատասխան տիպերը: Դրա հետ մեկտեղ որոշակի կասկածներ է հարուցում դրա աստիճանավարժման ճշտությունը: Այսպես, օրինակ, դժվար է համաձայնվել Վ. Ա. Չետվերնինի այն կարծիքի հետ, որ իրավունքի սոցիալական հասկացումը հանգում է միայն վերջինիս մեկնման որպես սոսկ «ցանկացած դատական որոշումների», առավել ևս «պետական իշխանության հրամանների՝ անկախ դրանց բովանդակությունից: Սոցիոլոգիական իրավահասկացման տեսակետից իրավունքը, առաջին հերթին, «կենդանի» հասարակական հարաբերություններն են, որոնք միայն ձևակերպվում են դատական որոշումներով: Իրավունքը բխում է բուն կյանքից, այլ ոչ պետական իշխանությունից:

Ոչ այնքան հիմնավոր ենք կարծում մենք նաև ազատական-իրավաբանական հայեցակարգի կողմնակիցների կողմից պաշտպանվող այն դրույթը, համաձայն որի իրավունքի իրավաբանական հասկացությունը հնարավոր է ձևակերպել միայն ոչ պոզիտիվիստական իրավահասկացման շրջանակներում,

իսկ մյուս բոլոր հասկացությունները (լեգիստական, սոցիոլոգիական, էթիկական) իրավաբանական չեն հանդիսանում այս բառի բուն իմաստով: Մեր կարծիքով, ազատական իրավաբանական հայեցակարգի կողմնակիցները չափից ավելի են նեղացնում «իրավաբանական» հասկացության սահմանները, գործածելով այն միայն ազատության գաղափարի վերաբերյալ: Ժամանակակից իրավական գիտության մեջ «իրավաբանական» հասկացությունը ընկալվում է այլ կերպ, քան անտիկ աղբյուրներում: Այդ իսկ պատճառով չարժե դիմել յս լատինական բառի արխայիկ մեկնություններին, առավել ևս բացարձակացնել դրա անտիկ ժամանակների իմաստը ժամանակակից գիտական հայեցակարգեր կառուցելիս [41]: Հակառակ դեպքում, հետևելով նման տրամաբանությանը, անհրաժեշտ կլինի վերանայել ժամանակակից իրավական գիտության հասկացության ողջ ապարատը՝ համապատասխանեցնելու համար այն պատմականորեն ավելի վաղ և, հետևաբար, տերմինների ավելի ճշտիվ մեկնություններին [42]:

Իրավաբանական գրականության մեջ տարածված է, այսպես կոչված, դուլիստական դասակարգում, որի շրջանակներում առանձնացվում են իրավունքի հասկացության վերաբերյալ երկու մոտեցում՝ լայն և նեղ [43]: Այս դասակարգման հիմքում ընկած է նորմատիվայնության չափանիշը: Եթե իրավունքը մեկնաբանվում է որպես պետության կողմից ապահովվող նորմերի համակարգ, ապա դա իրավահասկացման, այսպես կոչված «նեղ» կամ նորմատիվային իրավահասկացումն է: Իսկ եթե նորմատիվայնության հատկանիշի հետ իրավունքի հասկացության մեջ մտնում են նաև իրավահարաբերությունները, իրավագիտակցությունը, ապա նման իրավահասկացումը տվյալ դասակարգման շրջանակներում համարվում է «լայն»:

Իր առանձնահատկության պատճառով (որպես չափանիշ նորմատիվայնության հատկանիշի ընդունումը) տվյալ տիպաբանությունը կիրառվում է գլխավորապես և, առաջին հերթին, իրավունքի նորմատիվ հասկացման շրջանակներում:

Ինչպես նշում է «իրավունքի ժամանակակից նորմատիվային հասկացման» ջատագով Մ. Բայտինը, տվյալ հարցի վերաբերյալ «տարբեր գիտնականների առավել ուշադրության արժանի հայացքների վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանք չեն հերքում եզրակացությունն առ այն, որ...-հայրենական իրավագիտության զարգացման ընթացքում ձևավորվեցին իրավահասկացման երկու ուղղություն՝ նորմատիվային և լայն» [44]: Ընդ որում, լայն մոտեցմանը, «ի տարբերություն նորմատիվայինի, հատուկ է իրավունքի տակ հասկանալ ոչ միայն նրա նորմերը, այլ և իրավական երևույթները՝ ընդհուպ մինչև իրավունքի նույնացումը հասարակության համակարգի հետ, մինչև իրավունքի պոկումը պետությունից, բնական իրավունքի հակադրումը պոզիտիվայինի, այսինքն, պետության մեջ պաշտոնապես գործող իրավունքին, իրավունքի և օրենքի «իրավական» և «ոչ իրավական» (հակաիրավական) օրենքի տարբերակում

և այլն» [45]:

Նորմատիվային իրավահասկացման դիրքերից Մ. Ի. Բայտինը քննադատորեն է գնահատում Վ. Ս. Ներսեսյանցին առաջներում առաջարկված տիպաբանությունը, որի շրջանակներում առանձնացվում է երեք հիմնական մոտեցում, նորմատիվային, լայն, և մոտեցում, «որի ներկայացուցիչները հիմնավորում են այնպիսի հասկացում (և հասկացություն), որը ելնում է իրավունքի և օրենքի տարբերակման հայեցակարգից» [46]: Մ. Ի. Բայտինը մասնավորապես նշում է, «չկան որևէ համոզիչ հիմքեր նորմատիվային և լայն մոտեցման հետ մեկտեղ առանձնացնելու որպես ինքնուրույն նաև երրորդ մոտեցումը, քանի որ Վ. Ս. Ներսեսյանցի կողմից դրա հետևորդների թվին դասվող իրավունքի և օրենքի տարբերակման կողմնակիցները օգտագործում են տվյալ հայեցակարգը որպես իրավունքի լայն հասկացման այս կամ այն տարբերակի հիմնական ապացույցներից մեկը» [47]: Համաձայն Մ.Ի. Բայտինի, դա ամբողջովին վերաբերում է նաև հենց Վ.Ս. Ներսեսյանցի հայեցակարգին [48]:

Հարկ է նշել, որ որպես ունիվերսալ դասակարգիչ չափանիշ վերցված իրավունքի նորմատիվայնության հատկանիշը, որը թույլ է տալիս բնորոշել այս կամ այն իրավահասկացման «լայնությունը», այնքան էլ ակներև չէ, որքան թվում է նորմատիվային մոտեցման կողմնակիցներին [49]: Որպես ելակետ Մ.Ի. Բայտինը առաջարկում է ընդունել իր իսկ կողմից որպես հիմնական պարտադրվող նորմատիվայնության հատկանիշը: Սակայն եթե այդ հատկանիշը իսկապես այդքան հաճախ առաջ է քաշվում որպես հիմնական ժամանակակից իրավական գիտության մեջ, դա ամենևին չի նշանակում, որ այն ունիվերսալ է որպես իրավահասկացման տիպերի դասակարգման չափանիշ և ընդունելի է իրավունքի ընդհանուր տեսության համար:

Հայտնի է, որ իրավական ոչ բոլոր ուսմունքներն են մեկնում իրավունքը որպես նորմերի համակարգ: Այսպես, ծայրահեղ ռեալիստները իրավական նորմը հայտարարում են առասպել, պատրանք, ֆիկցիա [50]: «Նեղ» իրավահասկացումը կլինի այն, որի շրջանակներում իրավունքը մեկնաբանվում է որպես դատական որոշում կոնկրետ գործով, կամ էլ նույնիսկ որպես բուն սոցիալական հարաբերություն (Գ.Ֆրենկ): Իսկ «կենդանի իրավունքի» հասկացությանը նորմատիվայնության պես հատկանիշի ավելացումը իրենից, ըստ էության, կնշանակի այդ հասկացության «լայնացում»:

Իրավագիտական գրականության մեջ առաջարկվում է իրավահասկացման տիպաբանական դասակարգում ըստ «տեսություն-պրակտիկա» չափանիշի: Այսպես, Ա. Վ. Պոլյակովը առանձնացնում է «իրավահասկացման տիպերի դասակարգման երկու հիմք», որոնց համապատասխան առանձնացվում են պրակտիկ և տեսական տիպերը: «Իրավահասկացման պրակտիկ (գործնական) տիպը,- գրում է հեղինակը, արտացոլվում է հասարակական իրավական գիտակցության մեջ որպես առավել ընդհանուր հատկանիշներ, որոնք

բնութագրում են հասարակության վերաբերմունքը իրավունքի հանդեպ, նրա հատուկ «իրավատեսողությունը» և «իրավագագողությունը»: ամեն քաղաքակրթություն ունի իավահասկացման իր սեփական տիպը: Կարելի է առանձնացնել նաև ավելի ընդհանուր խմբեր, օրինակ, Արևելքի և Արևմուտքի իրավահասկացումը»: Ի տարբերություն պրակտիկ իրավահասկացման երկրորդ՝ տեսական տիպը «ձևակերպված է հայեցակարգորեն, իսկ արժեքային պահերը նրանում գաղափարայնացված են և հաճախ քողարկված: Տեսական իր զարգացման ընթացքում արևմտյան իրավական միտքը ձևակերպել է իրավունքի հասկացման վերաբերյալ երեք հիմնական տեսական մոտեցում (իրավահասկացման երեք տեսակներ), բնական-իրավական, էթատիկ (ազատական) և սոցիոլոգիական» [51]:

Հիմնարար և գիտական-ճանաչողական առումով բավականաչափ հետաքրքիր է Ի. Լ. Չեստնովի կողմից առաջարկված իրավահասկացման տիպերի դասակարգումը: Ելնելով «գիտականության չափանիշը ձևավորող ռացիոնալության երեք տիպերից»[52], գիտնականը առանձնացնում է դասակարգման երեք չափանիշ, փիլիսոփայական, սոցիոլոգիական, պատմա-մշակութային:

Փիլիսոփայական չափանիշը ենթադրում է իրավահասկացման տարաբաժանումը տիպերի ըստ որոշակի փիլիսոփայական հայեցակարգին նրանց պատկանելիության սկզբունքի: Փիլիսոփայական չափանիշի շրջանակներում Լ.Ի. Չեստնովը որպես դասակարգիչ հիմքեր է դիտարկում փիլիսոփայական զույգ կատեգորիաներ. «նյութական» և «իդեալական» (համապատասխանաբար առանձնացնելով իրավահասկացման մատերիալիստական և իդեալիստական տիպերը), ինչպես նաև «բնական» և «արհեստական կատեգորիաները: Ընդ որում, համաձայն գիտնականի, բնականության չափանիշին համապատասխանում են իրավունքի պատմական դպրոցը, Մ.Մ. Կովալևսկու իրավունքի գենետիկական սոցիոլոգիայի, հեգելյան իրավունքի փիլիսոփայությունը, աուտենտիկ մարքսիզմը: Արհեստականության չափանիշին են համապատասխանում XIX և XX դարերի իրավաբանական պոզիտիվիզմը, ԱՄՆ-ի ժամանակակից գործիքայնությունը (ինստրումենտալիզմ), ինչպես նաև իրավունքի սոցիոլոգիայի որոշ տարբերակները [53]: Լ. Ի. Չեստնովի առաջարկված տիպաբանության համաձայն, **սոցիոլոգիական չափանիշը** կապված է «գիտության սոցիոլոգիայի հետ, որը հիմնական ուշադրությունը դարձնում է ոչ թե կոգնիտիվ (մեթոդաբանական կամ իմացաբանական) ինստիտուտացմանը, այլ նրա «արտաքին»՝ սոցիալական գործոններին»: Այն չափանիշին համապատասխան առանձնացնում են իրավահասկացման այնպիսի տիպեր, ինչպիսիք են իրավաբանական պոզիտիվիզմը (դոգմատիզմը), բնական իրավունքի արդի տեսությունները, իրավունքի սոցիոլոգիական ուսմունքները [54]:

Պատմա-մշակութային չափանիշը Լ.Ի. Չեստնովը կապում է տարբեր դարաշրջանների և տարբեր ժողովուրդների իրավահասկացման տար-

բերությունների հետ (փաստորեն ըստ կրոնական սկզբունքի): Այս տարաբաժանման շրջանակներում առանձնացվում են իրավահասկացման հետևյալ տիպերը, մերձավոր-արևելյան քաղաքակրթության իրավահասկացումը (պայմանավորված իսլամական ավանդույթի ազդեցությամբ), հնդկական-բուդդայական քաղաքակրթության իրավահասկացություն, չինական-կոնֆուցիական քաղաքակրթության իրավահասկացում, ճապոնական քաղաքակրթության իրավահասկացում, արևմտյան (քրիստոնեական) քաղաքակրթության իրավահասկացում, ռուսաստանյան (սլավոնական) իրավահասկացում [55]:

Առաջարկելով դասակարգել իրավահասկացման տիպերը ըստ փիլիսոփայական, սոցիոլոգիական և պատմա-մշակութային չափանիշների, Լ.Ի. Չեստոնովը նշում է, որ «իրավահասկացման տիպերի համարժեք նկարագրման համար դասակարգման այս երեք չափանիշները պետք է ցույց տրվեն որպես մեկը մյուսին փոխլրացնող, քանի որ դրանցից ոչ մեկը չի տալիս իրավահասկացման ամբողջական պատկերը: Այսպես, փիլիսոփայական չափանիշը տառապում է մտահայեցողությամբ, սոցիալականը՝ ընդհակառակը, պակասում է հայեցողականնությունը իրերի դրության փաստական բացատրման առումով, իսկ պատմա-մշակութային չափանիշները թեև, կարծես, զերծ է այս թերություններից, սակայն սահմանափակված է կոնկրետ քաղաքակրթության նեղ սահմաններով: Եվ միայն երեքը միասին կարող են այս կամ այն չափով ճիշտ արտացոլել իրավահասկացումը» [56]:

Ամփոփելով վերը շարադրվածը, կարելի է արձանագրել, որ ժամանակակից իրավաբանական գիտության մեջ նկատելի է իրավահասկացման տեսական տիպաբանությունների կառուցման ընդհանուր միտում: Դրա հետ մեկտեղ տարբեր մոտեցումների հեղինակները աշխատում են ոչ միայն բացահայտել իրավահասկացման տարբեր տիպերը դրանց բազմազանության մեջ, այլև կառուցել դրանց համակարգը՝ համապատասխան իրենց հայեցակարգերին բնորոշ կամ, առնվազն, նրանց մոտ դասակարգման չափանիշների: Այդ չափանիշների բացահայտումը, մեր կարծիքով, անհրաժեշտաբար բերում է իրավունքի մոնոպատկերից դեպի բազմապիսության ընկալման, դեպի գիտակցման այն բանի, որ իրավունքը սոցիալական բարդ երևույթ է, որը կարող է դրսևորվել տարբեր կերպ: Այսպիսով, գիտական տարբեր հայեցակարգերի կողմնակիցները տարբեր ճանապարհներով գալիս են այն ընդհանուր գաղափարին, որ անհրաժեշտ է ինտեգրալ, միասնական որոշակի իրավահասկացում: Այստեղ, սակայն, ծագում է հարցերի մի ամբողջ համալիր, կապված հենց ինտեգրման սկզբունքների վերաբերյալ տարբեր մոտեցումների հետ, միասնական համակարգի մասին խոսելու հնարավորություն տվող օրինաչափությունների, փոխկապակցությունների ոչ միանման ընկալման հետ: Իրավահասկացման հիմնահարցը աստիճանաբար տեղափոխվում է այդ նոր հարթություն, որտեղ հիմնական է դառնում փիլիսոփայական հենքի մասին հարցը՝ հենքի, որը թույլ կտա դիտարկել իրավունքը ինչպես իր

տարբեր դրսևորումներում, այնպես էլ իր միասնության մեջ:

Գրականության ցանկ

1. **Սաֆարյան Գ.Հ.** Իրավահասկացման հիմնական տիպերը: Երևան - 2016:
2. **Нерсисянц В.С.** Право и закон.М., 1983.
3. Ստեփանյան Հ.Մ. Նոր իրավաըմբռնման անհրաժեշտությունը: Եվրոպրինտ, Երևան-2011:
4. **Малахов В. П.** Правосознание: природа, содержание, логика. Монография. М., 2001. С. 36.
5. Диалектика и частные науки (Под ред. Н. М. Дмитриенко, В. Ф. Сержантова, Г. А. Подкорытова, В. А. Смирнова, Б. В. Ахлибининского. Ленинград - Брянск, 1972. С. 285.
6. **Андреев И. Д.** О методах научного познания. М., 1964; Материалистическая диалектика и методы (естественных наук. М., 1968 и др.
7. Философский словарь (Под ред, И. Т. Фролова. М., 1980. С. 93.
8. **Бабаев В. К.** Понятие права () Теория государства и права. Учебник (Под ред. В. К. Бабаева. М., 1999. С. 19.
9. Диалектика и частные науки (Под ред. Н. М. Дмитриенко, В. Ф. Сержантова, Г. А. Подкорытова, В. А. Смирнова, Б. В. Ахлибининского, Ленинград - Брянск, 1972. С. 285.
10. **Марченко М. Н.** Проблемы теории государства и права. Учебник. М., 2001. С. 26
11. Նույն տեղում:
12. Ժամանակակից սոցիոլոգիայում կարծիք է հայտնվում, որ իրավական իրողությունը անհրաժեշտ է ուսումնասիրել այնպիսի մեթոդներով, որոնք սկզբունքորեն տարբերվում են բնագիտության մեջ իշխող մեթոդներից: Այսպես, օրինակ, Լ. Ի. Չեստնովը, դիմելով սոցիոլոգիայի տերմինաբանությանը, անվանում է դրանք իրավաբանական հետազոտման «որակական մեթոդներ»: Այդ մեթոդների թվին առաջարկվում է դասել, օրինակ, գենետիկական ու կառուցվածքային դեկոնստրուկցիայի, միացված դիտարկման մեթոդը, առանձնակի դեպքի (օբյեկտի) մենագրական մեթոդը՝ դրա փոխկապակցությունների առավելագույն քանակի նկարագրմամբ, կենսագրական մեթոդը, իմաստաբանական վերլուծության մեթոդը և այլն: (**Честное И. Л.** Дачественные методы юридического исследования () Ленинградский юридический журнал. 2004. № 1. С. 20.):
13. Այստեղ և հետագայում մենք ելնում ենք «տիպաբանություն» և «տիպաբանում» տերմինների ոչ միանման մեկնումից: Տիպաբանման տակ անհրաժեշտ է հասկանալ այս կամ այն երևույթների ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցումը: Տիպաբանման տակ, իր հերթին, հարկ է հասկանալ տիպաբանության շրջանակներում օգտագործվող բուն տերմինը:

14. Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685.
15. Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685.
16. **օրինակ, Четвернин В. А.** Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997. С. 11; **Бернацкий Г. Г.** Евгений Николаевич Трубецкой: естественное право и религия. СПб., 1999. С. 39-51; **Нерсисянц В. С.** Философия права: Учебник для вузов. М., 2001. С. 32-35 и др.
17. **Кондаков Н. И.** Логический словарь-справочник. М., 1975. С. 595.
18. **Поляков А. В.** Общая теория права. Курс лекций. СПб., 2001, С. 37.
19. **Нерсисянц В. С.** Философия права Гегеля. М., 1998. С. 132.
20. **Баранов П. П. Шпак В. Ю.,** Несмеянов Е. Е., Лукьянов А. К, Контарев А. А. *Философия права: Учебное пособие. Ростов-на-Дону, 2002. С. 32.*
21. Դասակարգման տակ ժամանակակից գիտության մեջ հասկանում են գիտության որևէ բնագավառում (մեր դեպքում՝ իրավագիտության մեջ) համաենթակա հասկացությունների (օբյեկտների դասի) համակարգ: Դասակարգումը, որպես կանոն, օգտագործվում է համապատասխան հասկացությունների կամ օբյեկտների դասերի միջև կապերի բացահայտման, դրանց բազմազանության մեջ կողմնորոշվելու համար, ինչպես նաև թույլ է տալիս գտնել օբյեկտի տեղը համակարգի մեջ (Философский энциклопедический словарь. М., 1983. С. 257): Իրավահասկացման տիպերի դասակարգումը, իր հերթին, ֆիքսում է դրանց միջև առկա կապերը տիպաբանական համակարգում կոնկրետ տիպի տեղը, որը ցուցում է նրա առանձնահատկություններն ու բնորոշ գծերը:
22. Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685.
23. **Бернацкий Г. Г.** Евгений Нцколевич Трубецкой: естественное право и религия. СПб., 1999. С. 48-50.
24. Նույն տեղում, էջ 50:
25. Նույն տեղում:
26. Философский энциклопедический словарь. М., 1983. С. 685
27. **Баранов П. П.,** Шпак В. Ю., Несмеянов Е. Е., Лукьянов А. И., Контарев А. *Философия права: Учебное пособие. Ростов-на-Дону, 2002. С. 32.*
28. Ն.Ն. Ալեքսեևը առանձնացնում է նաև իրավահասկացման ավանդական տիպերը՝ իրավաբանական դոգմատիկական, իրավաբանական սոցիոլոգիզմը և բնական իրավունքի տեսությունը: (**Алексеев Н. Н.** Основы философии права. СПб, 1999. С. 20-45):
29. օրինակ, **Лившиц Р.З.** Государство и право в современном обществе: необходимость новых подходов (Советское государство и право. 1990. № 10. С. 18-19; **Лейст О. Э.** Три концепции права)) Государство и право. 1991. № 12. С. 3-11; **Честное Л. И.** Типы правопонимания (Проблемы теории права и государства (Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 65-72; **Поляков А. В.**

- Общая теория права. Курс лекций. СПб., 2001. С. 37; **Назаренко Г. В.** Теория права и государства. М., 2001. С. 11-12 и др.
30. **Лейст О.Э.** Три концепции права (Государство и право. № 1991. № 12. С. 7.
 31. **Баскин Ю. Я.** Очерки философии права. Сыктывкар, 1996. С. 4.
 32. **Нерсисянц В. С.** Философия права Гегеля. М., 1998. С. 133; **Нерсисянц В. С.** Философия права: Учебник для вузов. М., 2001. С. 32; Различие и соответствие права и закона как междисциплинарная проблема (Вопросы философии права. М., 1973; Из истории правовых учений: два типа правопонимания (Политические и правовые учения: проблемы исследования и преподавания. М., 1978; Право и закон. М., 1983.
 33. **Нерсисянц В. С.** Философия права. Учебник для вузов. М., 2001. С. 32.
 34. Նույն տեղում, էջ 34:
 35. Նույն տեղում:
 36. **Четверная В. А.** Понятия права и государства. Введение в курс теории права и государства. М., 1997. С. 11.
 37. Նույն տեղում, էջ 37:
 38. Նույն տեղում, էջ 12:
 39. Նույն տեղում, էջ 37:
 40. Նույն տեղում, էջ 20:
 41. **Нерсисянц В. С.** Философия права Гегеля. М., 1998. С. 169-170.
 42. Հարկ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը հենց ազատական-իրավաբանական հայեցակարգի շրջանակներում կառուցված իրավահասկացման տիպաբանության մասին է, այլ ոչ ընդհանուր հայեցակարգի հենքի մասին, որի հետ հեղինակը սկզբունքային պահերի մեծ մասի հետ համաձայն է:
 43. О понимании советского права. «Круглый стол» (Советское государство и право. 1979. № 7. С. 56-74; 1979. № 8. С. 48-77.
 44. **Байтин М. И.** Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001. С.54.
 45. Նույն տեղում, էջ 5:
 46. **Нерсисянц В.С.** 1) Право: многообразие определений и единство понятия (Советское государство и право. 1983. № 10. С. 27; 2) Право и закон. М., 1983. С. 351.
 47. **Байтин М. И.** Сущность права (Современное нормативное правопонимание на грани двух веков). Саратов, 2001. С. 44.
 48. Բանավեճի մեջ մտնելով Վ. Ս. Ներսեսյանցի հետ և քննադատորեն գնահատելով նրա հայացքները, հատկապես կապված իրավահասկացման տիպաբանության հիմնահարցին, Մ. Ի. Բայտինը նկատում է, որ «թեև, նա (Վ. Ներսեսյանցը) չի համարում իրեն իրավունքի լայն հասկացման ներկայացուցիչ և նույնիսկ ճանաչում է «իրավունքի բնորոշման մեջ նորմի հետ մեկտեղ նաև դրա ածանցյալները», օրինակ, իրավահարաբերության, իրա-

վագիտության, սուբյեկտիվ իրավունքի թվարկման ակներև տրամաբանական անհեթեթությունը: Սակայն երբ նա, հակառակ հենց նոր մեջքերված միանգամայն ճիշտ, մեր կարծիքով, պնդմանը, գալիս է այն եզրակացության, որ «իրավական ձևերը, իրավական հարաբերությունները և այլն, հանդիսանում են իրավունքի միասնական հասկացության բաղադրիչ մասերը», նա ակնհայտորեն հանդես է գալիս իրավունքի լայն հասկացման դիրքերից: Դրա հետ մեկտեղ ուշադրություն է դարձնում տվյալ հարցի վերաբերյալ Վ. Ներսեսյանցի հատուկ դիրքորոշումը: Արժանին հատուցելով իրավունքի լայն հասկացման կողմնակիցների ջանքերին, նա միաժամանակ կարծում է, որ «իրավունքի և օրենքի հարաբերակցության տեսակետից բանավեճը այսօր տարածված իրավունքի հասկացության դեմ կրում է ոչ սկզբունքային բնույթ», քանի որ «և սրանք, և նրանք իրենց տեսական կոնստրուկցիաներում մնում են, ըստ էության, օրենսդրության սահմաններում»: Նա առաջարկում է արմատապես վերանայել իրավունքի նորմի և ընդհանրապես իրավունքի մասին այդ, իր խոսքերով ասած, «տարածված» պատկերացումները: Սակայն այն, ինչը Վ. Ս. Ներսեսյանցը համարում է իրավունքի նորմ և մտցնում է իրավունքի հասկացության մեջ, իրական կյանքում ուզում է նա թե ոչ, չեն կարող ոչ այլ ինչ, քան սովորույթներ, ավանդույթներ, սկզբունքներ, մարդկանց վարքի բարոյական կորպորատիվ, կրոնական և այլ կանոններ: Իսկ դա ոչ այլ ինչ է, քան իրավունքի լայն (չափազանց լայն) հասկացման տարբերակ, երբ դրա մեջ առաջարկվում է մտցնել ըստ էության ոչ իրավական երևույթներ և, ի տարբերություն լայն իրավահասկացման այլ կողմնակիցների, դա կոչ է արմատապես վերանայել իրավական գիտության մեջ ձևավորված պատկերացումը իրավական նորմի մասին» (*Байтин М. И. Сущность права. Саратов, 2001. С. 45-46*):

49. Այստեղ անհրաժեշտ է նշել, որ տվյալ դեպքում խոսքը գնում է ոչ թե նորմատիվայնության, որպես այդպիսին, ճշտիվության, այլ որպես իրավահասկացման տիպերի դասակարգման չափանիշ օգտագործելու բուն հնարավորության մասին: Դրա հետ մեկտեղ, մեր կարծիքով, նորմատիվայնությունը, անշուշտ, պետք է դիտվի որպես իրավունքի հատկանիշներից մեկը:
50. Մանրամասն՝ **Зорькин В. Д.** Социологическая юриспруденция (История политических и правовых учений (Под ред. В. С. Нерсисянца. М., 1983. С. 613-614.
51. **Поляков А. В.** Общая теория права. Курс лекций. СПб., 2001. С. 37.
52. Լ.Ի.Չեսնովի՝ ռացիոնալության պատմական երեք տիպերի գաղափարը, անշուշտ արժանի է հատուկ ուշադրության, քանի որ իրավահասկացման հիմնահարցի առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Հեղինակն իր հայեցակարգը հիմնավորում է հետևյալ կերպ, պատմականորեն կարելի է առանձնացնել գիտականության չափանիշը ձևավորող երեք տիպ: Նոր ժամանակի դարաշրջանում դա դասական ռացիոնալությունն է, հիմնված

բանականության վրա: XIX դարում դրան փոխարինելու եկավ պոզիտիվիստական ռացիոնալությունը, որը հենվում է, փորձի արդյունքում ստացված գիտելիքի և տրամաբանության վրա: XX դարի կեսից ձևավորվում է ռացիոնալության երրորդ տիպը՝ սոցիոմշակութայինը: Գիտականության առաջին երկու չափանիշները համապատասխանում էին իրավունքի փիլիսոփայությանը (նոր ժամանակի դարաշրջանում ներկայացված բնական իրավունքի տեսությամբ) և իրավաբանական պոզիտիվիզմին: Սակայն այսօր նրանք արդեն սպառել են իրենց գիտական ներուժը: Դրանց փոխարինելու եկավ իրավունքի զանազան տեսությունների բավականին խայտաբղետ մի փունջ, որոնք այս կամ այն չափով համապատասխանում էին ժամանակի առավել տարածված գտած փիլիսոփայական հոսանքներին, վերլուծական իրավաբանություն, իրավունքի ֆենոմենոլոգիա և հերմենևտիկա, իրավական էկզիստենցիալիզմ, իրավունքի մարդաբանություն և այլն: Դրանցից յուրաքանչյուրը առաջ է քաշում գիտահետազոտական ծրագրի իր չափանիշները: Հետևաբար, իրավական տեսությունները պետք է համապատասխանեն աշխարհահայեցողական ելային սկզբունքներին, ինչպես նաև մեթոդաբանական բնույթի ավելի կոնկրետ նորմատիվների (այսպես, իրավունքի ֆենոմենոլոգիայի և հերմենևտիկայի համար դա հրաժարումն է «բնական դրույթից», այսինքն, օբյեկտի հետ մենախոսությունից և դրա փոխարինումը հասկացում երկխոսությամբ): Սակայն գոյություն ունեն նաև որոշակի ընդհանուր սկզբունքներ, որոնք ճանաչվում են գիտական ողջ հանրության կողմից: Դրանք բավականին ընդհանուր սկզբունքներ են. շարադրանքի պարզություն, պրակտիկայում գիտելիքների կիրառման (իրական կամ պոտենցիալ) հնարավորություն, համապատասխանություն առողջ դատողության ինքնին հասկանալի (ժամանակակից մարդկանց մեծամասնության համար) պահանջներին, գիտական արդյունքների ստուգման հնարավորություն»: Այնուհետև Լ. Ի. Չեստնովը նշում է, որ «աշխարհահայեցողական (փիլիսոփայական) սկզբունքները բնորոշում են հետազոտման առարկան և ճանաչման մեթոդները, իրավունքի տեսության կառուցվածքը, պրակտիկայի հետ դրա փոխգործակցությունը, իրավունքի տեսության տեղը այլ գիտությունների համակարգում, ինչպես նաև գիտելիքների ֆիքսման և փոխանցման այս կամ այն եղանակները: Այս պարամետրերը կարելի է համարել իրավունքի տեսության գիտականության չափանիշներ» (*Честнов Л.И. Теория права и государства как наука* () Проблемы теории права и государства (Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 13):

53. **Честное Л. И.** Теория права и государства как наука () Проблемы теории права и государства (Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 63-64, Քիչ առաջ ընկնելով նշենք, որ Լ. Ի. Չեստնովը միանգամայն ճիշտ է նշել իրավահասկացման տիպաբանության, մեր կարծիքով, ամենահիմնական ու կարևորագույն չափանիշը: «Բնականի» և «արհեստականի» հիմնախնդրի լուծումը իրավունքի մեջ վերջնական հաշվով բերում է ոչ միայն իրավահաս-

կացման գլխալ երկու ուղղությունների վաղնջական հակամարտության էության, այլև բուն իրավունքի էության հասկացումի:

54. Նույն տեղում, էջ 65-72:

55. Նույն տեղում, էջ 65-72:

56. **Честнов Л. И.** Теория права и государства как наука () Проблемы теории права и государства (Под ред. В. П. Сальникова. СПб., 1999. С. 58.

Сафарян Г., Арутюнян Л. О ПРОБЛЕМЕ ПРИРОДЫ ПРАВА И ТИПОЛОГИИ ПРАВООПНИМАНИЯ. В данной статье авторы всесторонне анализируют проблемы природы права и типологии правопонимания, а также обсуждают методологические подходы своего научного исследования с точки зрения современной юриспруденции и научного знания.

***Ключевые слова:** право, юриспруденция, научная концепция, методологические основы, диалектические и специальные методы, существование права, толкования.*

Safaryan G., Harutyunyan L. ON THE PROBLEM OF THE NATURE OF LAW AND THE TYPOLOGY OF LEGAL UNDERSTANDING. In this article, the authors thoroughly analyze the problems of the nature of law and the typology of legal understanding, as well as discuss the methodological approaches of their scientific research from the point of view of modern jurisprudence and scientific knowledge.

***Keywords:** scientific concept, methodological foundations, legal interpretations.*

ԺԱՌԱՆԳՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Ռաֆիկ Սիրունյան

Երևանի «Հայրուսակ» համալսարան
Ընդունված է պաշարության 03.06.2023

Ամփոփագիր. Անկախ քաղաքացու գույքային դրությունից, յուրաքանչյուրը մտա-
ծում է իր գույքի հետագա ճակատագրի մասին: Այդ է պատճառով, որ ժառանգման 2
հիմքերից՝ ըստ օրենքի և ըստ կտակի, օրենսդիրը քաղաքացուն առաջին հերթի հնա-
րավորություն է տալիս իր հայեցողությամբ որոշել իրեն պատկանող գույքի հետագա
ճակատագիրը: Իսկ դա հնարավոր է միայն կտակ կազմելու միջոցով: Քննարկված են
ժառանգման այդ ձևերը, պարզաբանում մտցնելով որոշ հաճախ նկատվող թյուրմեթո-
ված հարցերում:

Հիմնաբաներ. Ժառանգ, ժառանգատու, ժառանգումն ըստ կտակի և ըստ օրենքի,
իրավական նորմ, հասարակական-տնտեսական ֆորմացիա, սեփականության իրավունք:

Մարդկային հասարակության հազարամյա պատմության ընթացքում
ժառանգման հարաբերությունները միշտ էլ համարվել են հասարակական
հարաբերությունների կարևորագույն բնագավառներից մեկը և սոցիալական
արժեքների համակարգում գրավել է կայուն ու մնայուն տեղ: Ամեն մի նախորդ
սերունդ իր հետնորդ սերնդին ժառանգել է սոցիալական այդ արժեքները, իր
ձեռքբերումներն ու նվաճումները և դրանով իսկ պայմանավորել է հասա-
րակության գոյությունն ու հարատևությունը:

Ժառանգման հարաբերությունների ծագումն ու զարգացումը կապված է
հասարակության կազմակերպված տնտեսական գործունեության և հատկա-
պես սեփականության ծագման և զարգացման հետ:

Հասարակական-տնտեսական տարբեր ֆորմացիաներում տարբեր են եղել
ժառանգման հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը, ժա-
ռանգման սկզբունքները և հետևաբար հասարակական ընդգրկման շրջա-
նակները: Բայց ամեն մի հասարակարգում այդ հարաբերությունները հան-
դիսացել են իրենց ժամանակի արտադրական հարաբերությունների հա-
մարժեք արդյունքն ու արտահայտությունը:

Ծագելով դեռևս խոր հնադարում ժառանգման հարաբերությունները,
որպես սոցիալական ինստիտուտ, նախապես կարգավորվում էին սովորու-
թյալին իրավունքի նորմերով, իսկ երբ առաջացան մասնավոր սեփակա-
նությունը, դասակարգերն ու պետությունը, ժառանգման հարաբերությունները
սկսեցին կարգավորվել իրավական նորմերով, պետության օրենքներով:

Հետևաբար, որպես իրավական ինստիտուտ, ժառանգումն առաջացել է տոհմատիրական կարգերի քայքայման, առանձին ընտանիքների երևան գալու և մասնավոր սեփականության հիման վրա, այսինքն այն ժամանակ, երբ հասարակության նյութական հիմքի վրա ծագեց և առարկայացավ անհատական սեփականության գաղափարը: Սրանք կարևոր նախադրյալներ էին այն պարզ պատճառով, որ առանց սեփականության և առանց վերջինիս փոխանցման իրավունքի ժառանգման հարաբերությունները պարզապես առաջանալ չէին կարող: Սեփականությունն էլ, բնականաբար միշտ միևնույնը չէր մնում և հասկարակության զարգացմանը զուգընթաց ինքն էլ տարափոխվում էր, ինքն էլ ձեռք էր բերում նոր որակ և բովանդակություն: Ընդ որում փոփոխվում էին ոչ միայն սեփականության ձևերն ու տեսակները, այլև սեփականության տարբեր ձևերի և օբյեկտների ժառանգման հիմքերը, կարգն ու պայմանները, ինչպես նաև ժառանգորդների կազմը: Այս զարգացումներին համապատասխան փոփոխություններն էին կատարվում նաև հասարակական ընդհանուր մտածողության մեջ, որի արդյունքում հայտնվում էին առանձին կարծիքներ ու տեսակետներ խնդրո առարկայի մասին

Այդ է պատճառը, որ տարբեր ժամանակներում ժառանգման հարցերն ու հարաբերությունները գտնվել են աշխարհի տարբեր ազգերի ու ժողովուրդների, մտածողների, փիլիսոփաների և իրավագետների ուշադրության կենտրոնում, որոնք մեկնաբանելով միևնույն հասարակական երևույթը, հաճախ հայտնել են իրարամերժ կարծիքներ: Ի թիվս այլ ընդհանուր հանգամանքների նրանց բուրրին էլ հետաքրքրել է այն հարցը, թե ինչ է իրենից ներկայացնում ժառանգման իրավունքը, որն է նրա էությունն ու նշանակությունը, բնությունից է այն տրված մարդուն, թե շնորհիվ է նրանց պետությունը, ազատ է մարդն արդյոք այդ իրավունքի իրականացման մեջ և եթե այո, ապա ում կարելի է ժառանգել և ինչ կարգով պետք է ժառանգել և այլն: Հասկանալի է, որ այդ մտածողներից յուրաքանչյուրը լինելով հիմնադիր կամ հետևորդ որևէ գաղափարի կամ ուսմունքի, ժառանգման իրավունքը բացատրել են՝ ելնելով իրենց ուսմունքի դրույթներից, սեփական մտահայեցողության և անձնական պատկերացումների հիման վրա: Այդ խնդրին իրենց աշխատություններում անդրադարձել են հին ու նոր աշխարհի մտածողներ՝ իդեալիստ ու մատերիալիստ փիլիսոփաներ, նատուրալիստ, պոզիտիվիստ և նորմատիվիստ իրավագետներ, ուտոպիստ սոցիալիստներ և անարխիստներ ու համոզված մարքսիստներ: Օրենքների տեսքով այն իր արտահայտությունն է գտնել հայ իրականության մեջ՝ հանձինս Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» աշխարհիկ օրենքների բաժնի, որտեղ նախատեսվել ու կարգավորվել են ժառանգման հարցեր և հարաբերություններ:

Ժառանգումը հանդիսանում է հնագույն իրավական հայտնի ինստիտուտներից մեկը, որի մասին հիշատակում կարելի է գտնել ամենաառաջին գրավոր աղբյուրներում: Շումերների կավե սալիկներում, եգիպտական հիերոգլիֆներում և այլն [1]:

Աթենքում կտակով ժառանգման մասին առաջին անգամ հիշատակվում է Սոլոնի օրենսդրությունում (6-րդ դար մ.թ.ա.), ժառանգատուի իրավունքները այստեղ փոքր ինչ սահմանափակված են: Հայրը, որ ունի արական սեռի, որդեգրված երեխաներ, ինչպես նաև կանայք չէին կարող ժառանգել [2]:

Ըստ Մխիթար Գոշի «Դատաստանագրքի», հոր մահից հետո նրա գույքը ժառանգում էին որդիներն ու չամուսնացած դուստրերը: Ամուսնացած աղջիկների նկատմամբ նա սահմանափակում էր դնում: Յուրաքանչյուր ամուսնացած աղջիկ ստանում էր եղբոր հասանելիք բաժնի կեսը:

Մ. Գոշի Դատաստանագրքում ժառանգության բաժանումը տեղի է ունեցել սո-վորության ձևով: Օրինակ՝ մահացածի ավագ որդին, իբրև ընտանեկան պաշտամունքի անդրանիկ ներկայացուցիչ, պապական օջախի հարատևության պատասխանատու ժառանգ, պետք է առավելություն ունենա բաժանվելիք ինչքի մեջ: Իսկ կրտսեր որդին պարտադիր ստանում էր հորական տունը:

Այսպիսով հայ սովորության իրավունքի մեջ ժառանգումը հիմնականում իրականացվում էր առանց կտակի: Հայ իրականության մեջ մեռնողը իր կամքն արտահայտում էր բերանացի, վկաների և ծխատեր քահանայի ներկայությամբ:

Հետագայում սովորության ձևով աստիճանաբար ստանում էին օրենքի տեսք: Պատմական իրադարձությունների բերումով արևելյան Հայաստանը միացավ Ցարական Ռուսաստանին, և պատմական Հայաստանի այդ հատվածում գործում էր Ցարական Ռուսաստանի Քաղաքացիական օրենքները:

Միանգամայն այլ ձևով է ժառանգման իրավունքը զարգացել խորհրդային շրջանում: Խորհրդային իշխանության առաջին դեկրետը ժառանգման իրավունքի բնագավառում եղել է 27 ապրիլի 1918թ. դեկրետը «Ժառանգման վերացման մասին»: Ժառանգման իրավունքը վերականգնվել է միայն 1922թ. (հոդ.418 ՔՕ 1922թ.) կապված առաջին խորհրդային քաղաքացիական օրենսգրքի ընդունման հետ, որն արմատապես տարբերվում էր ժառանգման վերաբերյալ նախահեղափոխական օրենսդրությունից: Սահմանած էր ժառանգների երկու հերթ: Կտակի բացակայության դեպքում ըստ օրենքի ժառանգման էին կոչվում միայն ամենամոտիկ հարազատները: Առաջին հերթի ժառանգներ էին երեխաները, ամուսին և մահացածի ծնողները: Երկրորդ հերթում՝ մահացածի եղբայներն ու քույրերը, նրա պապն ու տատը: Այդ նորմերը սահմանել էին ի նկատի ունենալով կոմունիզմի մոտակա հաղթանակը ու մասնավոր սեփականության, համապատասխանաբար ժառանգման բուրժուական ինստիտուտի մահը:

Ժառանգման իրավունքի նկատմամբ հասարակական և պետական վերաբերմունքի սկիզբը պետք է համարել ստրկատիրության ժամանակաշրջանը: Այս դարաշրջանի մտածողների կարծիքով և Հին Հռոմի իրավունքով ժառանգը համարվում էր մահացածի կամքի շարունակողը, իսկ ժառանգումը՝ սուբյեկտիվ

կամքի անմահությունը: Երևույթը մեկնաբանվում էր բանական մտածողության տեսակետից և իրական՝ անհրաժեշտության տեսակետից: Հուստինյանոսի օրենսգիրքը ճանաչում էր ժառանգատուի կյանքի բացարձակ ազատությունը, արական և իգական ժառանգորդների հարաբերական հավասարությունը և սահմանում էր ժառանգման երկու համակարգ՝ ըստ կտակի և ըստ օրենքի, արգելելով միայն միաժամանակ ժառանգումն ըստ կտակի և ըստ օրենքի միևնույն անձին: Սակայն ստրկատիրության ժամանակաշրջանի ժառանգման իրավունքը ընդհանուր առմամբ աչքի չէր ընկնում իր առաջադիմությամբ և հարաբերությունների իրավահավասար կարգավորմամբ, որի գրավոր վկայությունները ավելի կամ պակաս աստիճանով արտահայտվում են Հին աշխարհի ստրկատիրական պետությունների Եգիպտոսի, Բաբելոնի, Հնդկաստանի և այլ երկրների իրավունքի աղբյուրներում[3]:

Ժառանգման իրավունքի արմատները գալիս են Հին Հռոմից: Հին Հռոմի իրավունքով ժառագ համարվում էր մահացածի կամքի շարունակողը, իսկ ժառանգումը սուբյեկտիվ կամքի անմահությունը: Մեր համար սովորական տեսքով ժառանգման իրավունքի հիմնական ինստիտուտները ծագել են Հին Հռոմում: Արդյունքում դրանք ընդունվեցին նոր ժողովուրդների քաղաքացիական իրավունքով և մինչ այժմ կազմում են օտարերկրյա պետությունների ժառանգման իրավունքի հիմքը: Հռոմեական սկզբունքը պահպանվել է գրեթե բոլոր քաղաքակիրթ երկրների ժառանգման իրավունքի համակարգերում: Օրինակ, համաձայն ֆրանսիական օրենսդրության ըստ օրենքի ժառանգների հերթ են ընկնում ընդհուպ մինչև վեցերորդ կարգի ազգակցականության բարեկամները, իսկ Գերմանիայում հերթերի քանակը, որ կոչված են ժառանգության, ընդհանրապես անսահմանափակ է: Նախահեղափոխական ռուսական իրավունքում գոյություն ուներ ըստ օրենքի և ըստ կտակի ժառանգների կանոնը. «Ժառանգման իրավունքը տարածվում է ազգի բոլոր անդամների վրա, սկսած միարյունակցական կապից, մինչև ոչ միայն տղամարդու, այլ նաև կնոջ սերնդի ընդհանրապես ընդհատումը»: Այս կանոնը նշանակում էր, որ ազգականները համաձայն ռուսական օրենսդրության ժառանգման էին կանչվում առանց ազգակցականության աստիճանի սահմանափակման [4]:

Բուրժուական հարաբերությունների բուռն վերելքի և սոցիալական բևեռացման ժամանակաշրջանում պատմական մտածողության մեջ առաջին անգամ ուսումնասիրման առարկա դարձավ ժառանգման սոցիալական էության հարցը: Այդ քննարկումները սկսեցին ուտոպիստ սոցիալիստները և ավարտեցին մարքսիստները: Ուտոպիստները գտնում էին, որ սոցիալիստական և արդար հասարակություն կառուցելու համար անհրաժեշտ է վերացնել ժառանգման իրավունքը, և նրանում էին տեսնում դասակարգերի տնտեսական անհավասարության, շահագործողական հասարակության գոյության ու ամեն մի չարիքի պատճառը: Մարքսիստները ուղղելով ուտոպիստների սխալները, հիմնավորում էին, որ ժառանգման մասին օրենքները և քա-

ղաքացիական իրավունքն ամբողջությամբ ոչ թե դասակարգային անհավասարության պատճառ է, այլ հետևանք, հետևաբար պետք է վերացնել ոչ թե ժառանգման իրավունքը, այլ մասնավոր սեփականությունը՝ արգելելով դրա ժառանգումը, որովհետև այն ձեռք է բերվել ուրիշի աշխատանքը շահագործելու և յուրացնելու միջոցով: Իսկ այն սեփականությունը, որը ձեռք է բերվել սեփական աշխատանքով և անձնական սպառողական կարիքների բավարարման նպատակով, պետք է ժառանգվեր առանց սահմանափակման և ազատորեն՝ ինչպես կտակով, այնպես էլ օրենքով[5]:

Համառոտակի այսպիսի զարգացում է ապրել ժառանգման իրավունքը իր սկզբնավորումից մինչև մեր օրերը, որը որպես քաղաքացիա-իրավական ինստիտուտ, անխզելիորեն կապված է քաղաքացիների սեփականության հետ:

Խորհրդային իշխանության տարիներին Հայաստանում ճանաչվում էր սոցիալիստական սեփականությունը իր դրսևորման ձևերով և քաղաքացիների անձնական սեփականությունը: Միաժամանակ օրենքով պահպանվում էր քաղաքացիների անձնական սեփականության իրավունքը և անձնական սեփականության ժառանգման իրավունքը: Ինչպես մեր պետության նախորդ սահմանադրությունները, այնպես էլ այժմ գործող սահմանադրությունը ամրագրում է սեփականության և ժառանգման իրավունքները (ՀՀ Սահմանադրության 60 հոդ.), իսկ քաղաքացիական օրենսդրությունը մանրամասնորեն կարգավորում է ժառանգման հետ կապված բազմաթիվ և բազմաբնույթ հարաբերություններն ու հարցերը:

ԽՍՀՄ կազմալուծումից և Հայաստանի վերածննդից հետո երկրում նորից սկսվեց ժառանգման իրավունքի առարկայի կատարելագործման գործընթացը: Ժառանգման իրավունքը հանդիսանում է հնագույն իրավունքային ինստիտուտներց մեկը:

Ժառանգական իրավունքի հայտնվելը իրավաբանների և հասարակության առջև դրել է բազմաթիվ հարցեր. ինչ անել գույքի հետ մարդու մահից հետո, ում այն պետք է պատկանի և ինչպես կարգավորել ամուսնալնտանեկան հարաբերությունների զարգացման հետ կապված հարցերը:

Չնայած այն բանի, որ ժառանգման ինստիտուտը ունի ընդհանուր արմատներ և կառուցվում է ընդհանուր սկզբունքների վրա, տարբեր պետությունների օրենսդրություններ ունեն զգալի տարբերություններ՝ ժառանգման իրավունքի իրավական կարգավորման հարցում:

Միանգամայն բնական է, որ մահանալու դեպքում քաղաքացիները սեփական գույքի ճակատագրի նկատմամբ չեն կարող և չպետք է անտարբեր լինեն: Մինչև վերջերս օրենսդրությունը, որ կարգավորում էր ժառանգման իրավահարաբերությունները, այսինքն ժառանգատուի մահվան դեպքում ուրիշ անձանց (ժառանգորդներին) քաղաքացու (ժառանգատուի) գույքի անցման հիմքերը, կարգը և պայմանները (Քաղաքացիական օրենսգիրքը 1964թ), հաշվարկված էր դրա ընդունման պահի դրությամբ առկա տնտեսական

պայմանների համար, որոնք բնութագրվում էին սոցիալիստական սեփականության, և առաջին հերթին՝ պետականության գերակշռող դերով, քաղաքացիների անձնական սեփականության սահմանափակմամբ՝ ըստ նրա կազմի, ծավալի, ձեռք բերման աղբյուրների: Տնտեսական պայմանների փոփոխումը, քաղաքացիների մասնավոր սեփականության հաստատումը և նրա բազմակողմանի պաշտպանումը պետության կողմից, բերել են նոր օրենսդրության ընդունմանը (ՀՀ ՔՕ 10 օգոստոսի 1998թ.): Բացի այդ, կտակների նկատմամբ, որոնք կազմված են եղել մինչ այդ, կիրառվում էին ՀԽՍՀ 1964թ. ՔՕ-ի սկզբունքները:

Իրավական հիմքերի վերլուծություն անցկացնելով, հարկ է նշել, որ ժառանգման իրավունքի հարցերը կարգավորվում են շատ նորմատիվ իրավական ակտերով: Հայաստանի Հանրապետությունում ժառանգման իրավունքը քաղաքացիների սոցիալտեսական իրավունքներից է և ամրագրված է ՀՀ Սահմանադրության «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և պարտականությունները» գլխում, որի 60-րդ հոդվածը սահմանում էր, որ «յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք»: Նշված նորմից նույնպես բացահայտորեն երևում է քաղաքացիների ժառանգման իրավունքի և սեփականության իրավունքի անխզելի կապը, քանի որ ժառանգվել կարող են միայն քաղաքացիների սեփականությունը: 2015թ. Դեկտեմբերի 22-ին ուժի մեջ մտած Սահմանադրությունում հանրաքվեով փոփոխությունների արդյունքում ժառանգման իրավունքին վերաբերող Քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժինը ստացավ այլ ձևակերպում, որն իր մեջ ներառեց 68 հոդված:

Ելնելով անցած երեք տասնամյակներում երկրում քաղաքացիների անձնական սեփականության զարգացման ու ամրապնդման աստիճանից, զարգացել է նաև ժառանգման իրավունքը, որի արդյունքում ժառանգման գույքի առավելագույն հանրագումարի սահմանափակումից անցում կատարվեց դեպի ժառանգման գույքի անսահմանափակ արժեքների ժառանգումը, և ժառանգների սահմանափակ շրջանակից անցում՝ դեպի ժառանգների ընդարձակ շրջանակ:

Հայաստանի Հանրապետությունում ժառանգման իրավունքը իրավունքի ինքնուրույն ճյուղ չի համարվում: Միաժամանակ այն չի կարելի համարել զուտ քաղաքացիական իրավունքի ճյուղ, քանի որ ժառանգման իրավունքի հետ առնչվող որոշ հարաբերություններ, օրինակ՝ կտակ կազմելը և նոտարի կողմից հաստատելը, ժառանգատուին ժառանգման իրավունքի վկայագիր տալու հարաբերությունները համարվում են վարչական իրավահարաբերություններ և կարգավորվում են վարչական օրենսդրությամբ:

Ժառանգական հարաբերությունները օրենսդրականորեն կարգավորված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնի 1184-1252 հոդվածներում, որը կարելի է ընդունել որպես ժառանգման իրավահարաբերությունների կար-

գավորման հիմնական փաստաթուղթ:

Ժառանգման իրավունքի հարցերը ներկայում ձեռք են բերել շատ ավելի մեծ արդիականություն: Դա բացատրվում է նրանով, որ շուկայական հարաբերությունների ամրապնդման արդյունքում ունեցվածքի նկատմամբ քաղաքացիների մասնավոր սեփականության իրավունքների ամրապնդումը, որ կարող են անցնել ժառանգման իրավահաջորդության կարգով, զգալիորեն ընդլայնվել են:

Եթե նախկինում ժառանգությամբ անցնող ամենաարժեքավորը, օրինակ ամառանոցը, մեքենան կամ բանկային հաշիվներն էին, ապա այժմ ժառանգության օբյեկտ կարող են լինել բնակարանները, բնակելի շինությունները, հողակտորները, արժեքները և գույքի այլ ձևեր: Դրա հետ կապված ժառանգման իրավունքի նորմերը ձեռք են բերում առավելագույն կարևորություն: Ժառանգման վերաբերյալ նորմատիվային բազան բավականին ու ընդգրկուն է, բայց պահանջում է մանրամասն քննարկում և ուսումնասիրություն կապված նրա հետ, որ նրանում մտցվել են որոշակի էական փոփոխություններ: 1998թ. օգոստոսի 5-ին ընդունված ՀՀ ՔՕ-ի ժառանգման իրավունքի բաժինը փոխարինեց 1964թ. ընդունված ՀԽՍՀ ՔՕ-ի համապատասխան բաժինը, որի կանոններով երբևէ ապրել է Հայաստանը: Նոր ՔՕ-ով կտակը փաստորեն անվանվում է ժառանգման 1-ին հիմքը, իսկ 2-րդը՝ օրենքը: Դա պետք է խթանի կտակների կազմումը:

Կուտակած ունեցվածքը մտերիմներին փոխանցելու ցանկությունը յուրաքանչյուր մարդու բացարձակ բնական ցանկությունն է: Այստեղից էլ ժառանգման հարցերը դառնում են պրակտիկ: Կտակի կայացման միջոցով մարդը որոշում է այն անձանց շրջանակը, որոնց նա կցանկանար կտակել իր ունեցվածքը: Կտակի կազմումը դառնում է ավելի ազատ: ՀՀ ժառանգման իրավունքի գաղափարախոսությունը նրանում է, որպեսզի առանց արմատական փոփոխությունների ամ-րապնդվի մասնավոր սեփականության ինստիտուտի ազատությունը: Պետությունն այժմ դառնում է ժառանգության հավակնորդ՝ միայն ժառանգատուի կամքով, կամ էլ ժառանգություն անժառանգ ճանաչվելու դեպքում: Բացի այդ կտակի հաստատման ազատությունը արտակարգ կարևոր է շուկայական հարաբերությունների մասնակիցների համար, քանի որ դա խթանում է այդ հարաբերությունները:

Սեփականության հետ կապված հարաբերությունները այժմ առաջ են քաշվում առաջին պլան և մեծացել է սեփականության ունեցվածքի տնօրինման հնարավորության նշանակության ինչպես կյանքի ընթացքում, այնպես էլ մահվան դեպքում, որն էլ իր արտահայտությունն է գտել նախ և առաջ ՀՀ Սահմանադրությունում, որը երաշխավորում է մասնավոր սեփականության իրավունքի պահպանումը պետության կողմից և դրա ժառանգման իրավունքը:

ՀՀ նոր ՔՕ-ն դարձավ բեկումնային նորմատիվ ակտ որպես ժառանգման առաջնային տեսակի՝ կտակի կայացման գործում: Նոր ՔՕ-ն, կտակի մասով

բերեց շատ դրական փոփոխություններ.

Առաջին, անհրաժեշտ է նշել ըստ օրենքի ժառանգների շրջանակի ընդլայնումը, նորարարություն, որը թույլ է տալիս սահմանափակել այն բանի հնարավորությունը, որ ունեցվածքը վերջի վերջո կժառանգի պետությունը:

Երկրորդ, հստակեցվել են այն չափաբաժինները, որը ստանում են պարտադիր ժառանգները: Տվյալ պայմանները ևս վկայում են ժառանգատուի իրավունքների ընդլայնման մասին: Այս նորմը պաշտպանում է ժառանգատու սեփականատերին. դա նրա ունեցվածքն է և նա իրավունք ունի ուղղակիորեն տնօրինել այն իր մահվան դեպքում:

Երրորդ, ի տարբերություն նախկինում գործող օրենսդրության, ՀՀ ՔՕ 11-րդ բաժնում սահմանված է ժառանգատուի իրավունքը կտակային կարգադրություն դնել ոչ միայն ըստ կտակի այլ նաև ըստ օրենքի ժառանգի վրա) ՔՕ հոդ. 1214, կետ 2):

Չորրորդ, հանված է կտակարարի գործողությունների համար սահմանված պարզևստրաման ստացման վրա դրված արգելքը (ՔՕ հոդ. 1212, կետ 8):

Հինգերորդ, ավելացված է կտակի 2 նոր ձևեր. պարզ նամակի ձևով կտակ, որ իրականացվում է արտակարգ պայմաններում, և փակ կտակ:

Վեցերորդ, նոր քաղաքացիական օրենսդրությունը պարունակում է վկայի ներկայության անհրաժեշտության պահանջ՝ կապված կտակի իրականացման հետ:

Եվ այսպես, անհրաժեշտ է հաստատել <<մասնավոր>> կտակային ժառանգության կայացումը, երբ սեփականատերը ինքն է ձևակերպում իր ունեցվածքի ճակատագիրը: Եվ ընդհանրապես, ինչպես նշում են ուսումնասիրողների մեծամասնությունը, ժառանգման իրավունքը մոտենում է այն պահանջներին, որոնք դնում է շուկայական տնտեսությունը:

Եվս մեկ անգամ ընդգծենք, որ կտակը օրենքով նախատեսված ձևին համապատասխան քաղաքացու մահվան դեպքում անձնական կամքի արտահայտություն է, իրեն պատկանած ունեցվածքի վերաբերյալ ժառանգների նշանակմամբ: Իրավական բնույթով կտակը միակողմանի գործարք է և չի ենթադրում որևէ պատասխան կամ արտահայտություն (այլ անձի): Այն անմիջականորեն կապված է ժառանգատուի անձի հետ և չի կարող իրականացվել ներկայացուցչի միջոցով, որ գործում է վստահությամբ կամ օրենքի հիման վրա: Մի քանի անձանց անունից մեկ կտակ անել չի թույլատրվում: Կտակը կարող է պարունակել միայն մեկ անձի կարգադրություններ:

Անհրաժեշտ է անցկացնել խորհրդատվական-բացատրական աշխատանքներ բնակչության մեջ ժառանգման իրավունքի հարցերի շուրջ: Կարևոր է որպեսզի մարդիկ հասկանան, որ չի կարելի լուրջ իրավական հարցերը, որ բերում են կարևոր իրավական հետևանքներ, լուծել առանց ներառելու իրավական, իրավաբանական միջոցներ: Անհրաժեշտ է որպեսզի յուրաքանչյուր ոք իմանա, թե ինչ կպատահի իր կողմից կուտակված գույքի հետ՝

իր մահից հետո: Ամեն ինչ, ցավոք սրտի երբևէ բախվում է ժառանգման խնդիրների հետ, և յուրաքանչյուր մարդու անհրաժեշտ է իմանալ գոնե տվյալ ինստիտուտի կարևոր առանցքները: Ավելին, պետք է բացատրվի կտակի դերը ժամանակակից քաղաքացիական իրավունքում, ինչպես նաև նրա առավելությունը ունեցվածքի տնօրինման մեջ:

Շատ կարևոր է, որպեսզի հանրությունը տեղյակ լինի, թե որ երկրի օրենքով է կարգավորվում ժառանգությունը, ով կարող է ժառանգ հանդիսանալ, արդյոք ժառանգատուն իր գույքը կտակելու բացարձակ իրավունք ունի, թե ոչ, ինչում է կայանում նվեր տալու և կտակելու տարբերությունը:

Եթե մահացողի վերջին բնակության վայրը գտնվել է Հայաստանում, ապա ժառանգությունը կարգավորվում է Հայաստանի օրենսդրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ կտակարարը իր կտակում ընտրել է այլ երկրի օրենքը, որի քաղաքացին է հանդիսանում:

Անձի կողմից կտակ կազմելու, այն վերացնելու իրավունքը, ինչպես նաև կտակի և այն վերացնելու մասին ակտի ձևը որոշվում են այն պետության իրավունքով, որտեղ կտակարար կտականելու կամ այն վերացնելու մասին ակտը կազմելու պահին ունեցել է բնակության վայր:

Բոլոր դեպքերում, անշարժ գույքի ժառանգությունը որոշվում է այն պետության իրավունքով, որտեղ գտնվում է այդ գույքը:

Ստորև նշվածները կարող են ժառանգել թե կտակի և թե օրենքի հիման վրա՝

- ժառանգության բացման օրը կենդանի ֆիզիկական անձինք (այդ թվում քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք, օտարերկրյա քաղաքացիները, երկքաղաքացիները կամ բազմաքաղաքացիները),
- ժառանգատուի կենդանության օրոք սահմանավորված և ժառանգատուի մահից հետո կենդանի ծնված երեխաները:
- Իրավաբանական անձինք, համայնքները, Հայաստանի Հանրապետությունը, օտարերկրյա պետությունները և միջազգային կազմակերպությունները:

Մոտ ապագայում ժառանգման իրավունքի դերը էականորեն կբարձրանա, քանի որ շատ քաղաքացիների մոտ ի հայտ է եկել թանկարժեք սեփականություն: Դա նախ և առաջ բնակարաններն են, բնակելի շինությունները, հողակտորները, տարաբնույթ արժեթղթերը և այլն: Այս ամենը բերելու է ժառանգության հետ կապված գործարքների թվի զգալի մեծացմանը ինչպես նոտարների մոտ, այնպես էլ դատարաններում:

Վերջին ժամանակներս ավելի շատ ժառանգություններ են կազմվում համաձայն կտակի:

Քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորված է այն հարցը, թե արդյոք ժառանգատուն ունի իր գույքը կտակելու բացարձակ իրավունք:

Կտակի ազատությունը սահմանափակվում է միայն պարտադիր բաժնի

իրավունքով: Պետք է նշել, որ անկախ կտակի բովանդակությունից, ժառանգատուի մահվան պահի դրությամբ նրա դեռևս անչափահաս երեխաները (մինչև 18 տարեկան), 60 տարին լրացած կամ հաշմանդամ կամ անգործունակ ճանաչված ծնողները, ամուսինը և երեխաները պահպանում են այն գույքի կեսը ժառանգելու իրավունքը, որը նրանց կհասներ ըստ օրենքի (առանց կտակի) ժառանգության դեպքում:

Քաղաքացիական օրենսգրքի 1194 հոդվածի ուժով ժառանգության պարտադիր բաժնի իրավունքից օգտվում են հետևյալ անձինք.

1. ժառանգատուի անչափահաս երեխաները;
2. ժառանգատուի որդեգրած անչափահաս և անաշխատունակ երեխաները;
3. մահացածի անաշխատունակ ամուսինը;
4. մահացածի անաշխատունակ ծնողները, այդ թվում որդեգրողները և վերջապես,
5. ովքեր առնվազն 1 տարի՝ մինչև ժառանգատուի մահը գտնվել են նրա խնամքին:

Պետք է նկատի ունենալ, որ ժառանգության պարտադիր բաժնի իրավունքից օգտվող անձանց թվարկումը սպառիչ է: Բոլոր այլ ազգականներն ու ոչ ազգականները կարող են օգտվել ժառանգության պարտադիր բաժնի իրավունքից միայն վերոհիշյալ հոդվածի 5-րդ կետում նշված հիմքերով, այսինքն՝ եթե նրանք առնվազն 1 տարի մինչև ժառանգատուի մահանալը գտնվել են նրա խնամքին:

Կտակը պետք է կազմվի գրավոր, կարդացվի և ստորագրվի կտակարարի կողմից և վավերացվի նոտարական կարգով:

Եթե առողջության կամ գրագիտության հետ կապված պատճառներով կտակարարը ի վիճակի չէ ինքնուրույն կարդալ կամ ստորագրել կտակը, ապա նրա փոխարեն դա կարող է անել մեկ այլ անձ:

Օտարերկրյա պետություններում Հայաստանի քաղաքացիների կտակները վավերացնում են ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ծառայությունների կողմից:

Որոշ կազմակերպությունների ղեկավարներ և որոշ այլ անձինք նույնպես կարող են նոտարի փոխարեն կտակը վավերացնել (հիվանդանոցի գլխավոր բժիշկը, ծերանոցի տնօրենը, զորամասի հրամանատարը, քրեակատարողական հիմնարկի ղեկավարը իրավունք ունեն վավերացնել այդ հաստատություններում գտնվող անձանց կտակները):

Գործնականում, նվիրատվությունը հանգեցնում է սեփականության իրավունքի փոխանցման այն պահին, երբ կնքվում է նվիրատվության պայմանագիրը: Հայաստանի օրենսդրությունը նախատեսում է նվիրատվությունը վերացնելու խիստ սահմանափակ հիմքեր (երբ նվիրառուն ուտնձգություն է անում նվիրատուի, նրա ընտանիքի անդամների կամ մերձավոր

ազգականների կյանքի նկատմամբ, մարմնական վնասվածքներ է պատճառում նվիրատուին, կամ նվիրառուի վերաբերմունքը նվերստացած գույքի նկատմամբ, որը նվիրատուի համար ոչ նյութական արժեք է ներկայացնում, ստեղծում է դրա կորստի վտանգ):

Ի տարբերություն նվիրատվության, կտակի դեպքում կտակարարը իր կյանքի ընթացքում պահպանում է կտակված գույքի նկատմամբ սեփականության իրավունքը և կարող է ցանկացած պահի վերացնել կամ փոփոխել կտակը կամ պարզապես կազմել նոր կտակ:

Գրականության ցանկ

1. Ղարախանյան Գ. Հ., Ժառանգման իրավունք, ուսումնական ձեռնարկ, Եր., 2000
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երրորդ մաս, Տ.Կ. Բարսեղյանի և Գ. Հ. Ղարախանյանի խմբ. Եր., ԵՊՀ հրատ., 2009:
3. Ապիյան Ն. Ա., Սաֆարյան Գ. Հ. Հոմեական իրավունք, Ե., 2002
4. Новицкий. И. Б. Римское право - М., 1993 г
5. Власов Ю.Н., Калинин В.В. Наследственное право, Л. 2005

Сирунян Р. - НАСЛЕДСТВО КАК ВАЖНАЯ ХАРАКТЕРИСТИКА ОБЩЕСТВЕННЫХ ОТНОШЕНИЙ. Независимо от имущественного послужного списка гражданина, каждый думает о дальнейшей судьбе своего имущества. Именно по этому из 2-х оснований наследования по закону и по завещанию законодатель прежде всего предоставляет гражданину возможность решать дальнейшую судьбу принадлежащего ему имущества по своему усмотрению. А это возможно только при составлении завещания. Обсуждаются эти формы наследования, проясняются некоторые часто неправильно понимаемые вопросы.

Ключевые слова. Наследник, отказополучатель, наследование по завещанию и по закону, правовая норма, общественно-экономическая формация, право собственности.

Sirunyan R. - INHERITANCE AS AN IMPORTANT CHARACTERISTIC OF SOCIAL RELATIONS INHERITANCE AS AN IMPORTANT CHARACTERISTIC OF SOCIAL RELATIONS. Regardless of a citizen's property status, everyone thinks about the future fate of his or her property. That is the reason why, out of the 2 grounds of inheritance, according to the law and according to the will, the legislator gives the citizen the first opportunity to decide the future fate of the property owned by him at his own discretion. Moreover, this is possible only by making a will. The foundations of inheritance both originated from ancient times, evolved in parallel and were applied as needed. Those forms of inheritance are

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ, հատոր 8, 2023

discussed, clarifying some often-misunderstood issues.

Keywords: *Heir, legatee, inheritance according to the will and according to the law, legal norm, socio-economic formation, property right.*

ՎԻԵՏՆԱՄԱԿԱՆ ԵՎ ԱՖՂԱՆԱԿԱՆ ՍԻՆԴՐՈՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

Գուրգեն Մուրադյան

Երևանի Հայրուսակ համալսարան
Ընդունված է տպագրության 03.06.2023

Ամփոփագիր. քննարկվում է Սառը պատերազմի երկու լայնածավալ տաք կոնֆլիկտների հետևանքով զինծառայողների հետպորավմադրիկ խանգարումների պատճառները և դրանց հաղթահարման ուղիները: Կարևորվում է հասարակության և առաջին հերթին կառավարության վերաբերմունքը դեպի վետերանները: Շարժվելով դեպքերում հենց դրանից էլ կախված է վետերանների ազդեցիկ կամ հանգիստ վերաբերմունքը դեպի ընթացող քաղաքական և հասարակական գործընթացները: Միայն հոգեբանները կամ հոգեբույժները անկարող են որևէ բան փոխել առանց պետական աջակցության: Հետպորավմադրիկ սինդրոմի վերլուծությունը առաջնահերթ կարևորություն ունի Արցախյան պատերազմների վետերանների հետ տարվող աշխատանքների համար:

Հիմնաբառեր. Սառը պատերազմ, վիետնամական սինդրոմ, հետպորավմադրիկ խանգարում, պատերազմի վետերաններ, ռազմական հոգեբանություն

Սառը պատերազմի տաք դրսևորումների թվում առանձնանում է Վիետնամական պատերազմը: Այն իր խորը հետքն է թողել ինչպես ռազմարվեստի զարգացման տիրույթում, այնպես էլ ամերիկյան հասարակական կյանքում: Այս պատերազմը ընդունված է բաժանել երեք բաղադրիչների՝

1. Տեղեկատվական գործընթաց,
2. Ցամաքային պարտիզանական ռազմական գործողություններ,
3. Օդային ռազմական գործողություններ [1]:

Հատկանշական է նաև այն, որ այս պատերազմում վերջնական ելքը չորոշվեց մարտադաշտում, որտեղ ամերիկացիները հսայական գերակայություն ունեին, այլ տեղեկատվական գործընթացները և ՋԼՄ-ների և մշակութային գործիչների արձագանքը ստիպեցին ամերիկյան կառավարությանը գործերը դուրս հանել Վիետնամից: Աստիճանաբար ձևավորվեց «Վիետնամական սինդրոմ»-ը [2]:

«Վիետնամական սինդրոմ» եզրույթը ունի շուրջ կեսդարյա կիրառություն: Այն սկսվել է շրջանառվել Հնդկաստանյան պատերազմներում ԱՄՆ զորքերի կրած «պարտությունից» հետո: Ամերիկացի հոգեբանները քննելով «Վիետնամական սինդրոմ»-ը եկան այն եզրակացության, որ պատերազմական գործողությունների մասնակից անհատը մինչև իր կյանքի ավարտը իրեն զգում է մարտադաշտում և ապրում է պատերազմական կանոններով:

Ռազմադաշտը թելադրում է խաղի սեփական կանոնները. «Դու չսպանես,

կապանեն քեզ»: Սակայն առաջին մահացու կրակոցը կատարելով՝ բազմաթիվ ամերիկացի երիտասարդ զինվորականներ իրենց մարդասպան զգացին: Դրան էլ ավելացավ նաև հասարակական արձագանքը: Հասարակությունը նույնպես այդ ամենը արդարացի չէր համարում:

Արդարացի և ոչ արդարացի պատերազմների խնդիրը քննվել է բազում տեսաբանների կողմից՝ պատերազմներն ըստ նպատակի դասակարգելու փորձերի ժամանակ: Այս բնորոշումը կիրառել են հենց զինվորները, որոնք մասնակցում էին մարտական գործողություններին: Վիետնամը շատ հաճախ համեմատվում էր Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ, որը համարվում էր արդարացի պատերազմ [3]:

Այդ ամենը հանգեցնում էր ներանձնային կոնֆլիկտի. Մի կողմից մենք գործ ունեինք հրամանը անվերապահորեն կատարող զինծայայողի, մյուս կողմից՝ խղճի խայթ ունեցող մարդու հետ:

Խաղաղ ժամանակաշրջանում նման խառնվածքով մարդկանց խմբերը գործատուի համար անհարմար աշխատակիցներ են: Նրանք ունեն այն հատկանիշները, որոնք իրենց հնարավորություն են տվել ողջ մնալ պատերազմական դաշտում, սակայն քաղաքացիական կյանքում այլևս կիրառելի չեն:

Իհարկե պատերազմ տեսած անձանց ուղին միօրինակ չէ: Նրանցից յուրաքանչյուրը ունի պատմելու սեփական դրվագները: շատ հաճախ հենց հետպատերազմյան սինդրոմն էլ ցույց է տալիս հասարակական միջավայրում անձի կոնֆլիկտայնության պատճառները: Նրանք չեն համակերպվում խաղի նոր կանոններին, չեն գնում փոխզիջումների, կողմ են խաղաղ ժամանակների խնդիրները լուծել ռազմական ճանապարհով:

Այդ ամենի արդյունքում ձևավորվում է հետտրավմատիկ ստրեսային խանգարումը, որի մասին կխոսվի ստորև:

Հետտրավմատիկ ստրեսային խանգարումը սկզբնավորվում է հոգեկան վիճակի խաթարումների արդյունքում: Այն հիմնականում կապվում է մարտի դաշտում մարդու ֆիզիկական գոյությանն սպառնացող վտանգների արդյունքում բնորոշ վարքագծի շեղման հետ: Այն ունի լատենտային ժամանակաշրջան, դրսևորվում է 6 ամսից մինչև 10 տարի ընկած հատվածում [4]: Բնորոշ հատկություններից է նաև կրկնվող հոգեկան շեղումները:

Մարդու համար դժվար է սկզբանական շրջանում հարմարվել մարտադաշտին, որտեղ գործում է միանգամայն այլ արժեքային համակարգ: Նոր իրավիճակին հարմարվելը ստիպում է կոտրել նախկին ստերեոտիպերը և ձեռք բերել նոր հմտություններ, առանց որոնց ուղղակիորեն անհանար կլինի ողջ մնալ նոր միջավայրում: Միևնույն ժամանակ բավականին բարդ պրոցես է պատերազմ անցած զինծառայողների հոգեբանական վիճակի վերականգնումը, որն կարող է տևել մի քանի շաբաթից մինչև մի քանի տարիներ:

Մարդու հոգեկանի վրա ազդող պատերազմադաշտի գործոններն բա-

վականին լայն շրջանակ է ընդգրկում՝ հոգեկանի շեղման առավել ընդգծված և բացահայտ տեսակներից մինչև նվազ տեսանելի երևույթներ:

Զինվորների շրջանում հոգեկանի փոփոխման հիմնախնդիրները ուսումնասիրվել են դեռևս 20-րդ դարի սկզբից: Ռ. Դրեյլինգի կարծիքով սուր զգացողությունները և երկար ժամանակ վտանգի սպառնալիքի ներքո գտնվելը բավականին խորն են ազդում և բերում են հոգեկանի խանգարման այն աստիճանի, որ նրանց մի մասը զինվորներից վերածվում է հոգեբուժարանի հիվանդի [5]:

Առավել դժվար է բացահայտել հոգեական այն շեղումները, որոնք բացահայտվում են պատերազմական գործողությունների ավարտից հետո: Վերջին հաշվումներով Աֆղանական պատերազմի մասնակիցների 70%-ը ենթարկվել են նման շեղումների [6]:

Պատերազմական գործողություններին մասնակցությունը բերում է նաև որակական փոփոխություններ: Այդ մասին են վկայում նաև պատերազմների թոհուրոհով անցած մի շարք գրողներ՝ Լև Տոլստոյ, Էրիխ-Մարիա Ռեմարկ, Էռնստ Հեմինգուեյ, Անտուան դե Սենտ-Էքզյուպերի և այլք:

Պատերազմի թոհուրոհով անցնողների ուղին բարդ է և հակասական: Հենց այս մարդկանց համար դժվար է հարմարվել խաղի նոր կանոններին՝ ուժային մեթոդները փոխարինել բանակցային գործընթացով: Որպես կանոն պատերազմի վետերանները իրենց նախկին պահապաններին վերաբերում են իբրև իրենց հակառակորդի, իսկ իրենց առջև ծառացած խնդիրները փորձում են լուծել ռազմաճակատի մակսիմալիզմին հատուկ: Առաջին պլան է մղվում խաղաղ կյանքին ադապտացիան: Մարտի դաշտում ամեն բան հստակ է և ընդգծված: Թշնամին ակնհայտ է և միակ նպատակը նրան ոչնչացնելն է: Արագ արձագանքումն սեփական կյանքն փրկելու միակ հաջողված գրավականն է: Մինչդեռ քաղաքացիական կյանքում հակառակորդը ակնհայտ չէ, և որոշ կոնֆլիկտներ կարող են շատ երկար ձգձգվել: Բազմաթիվ վետերանների համար հեշտ չէ զսպվածություն ցուցաբերել և ամեն պատեհ կամ անպատեհ դրվագում ձեռքը զենք վերցնել ուղիղ և փոխաբերական իմաստով: Դա էլ նպաստում է այն բանին, որ վետերանների մեծ մասը այդպես էլ չի ինտեգրվում հասակաւոյանը և մինչև իր կյանքի վերջն մնում է իբրև զինվոր:

Հոգեբան Վ. Կանդրատևի կարծիքով մենք գործ ունենք կորսված սերնդի հետ, երբ խնդիրը ոչ այնքան հասարակական, այլ հոգեբանական և անգամ ֆիզիոլոգիական դաշտում է: Այս ամենը առավել ցայտուն դրսևորվում է մասշտաբային և երկարաձիգ պատերազմների պարագայում [7]:

Ցանկացած պատերազմից հետո առավել ընդգծված հոգեբանական դրամա են ապրում հաշմանդամության կարգ ունեցողները և այն անձինք, ովքեր մերձավորների են կորցրել պատերազմում կամ էլ զրկվել են տանիքից: Իրավիճակը դյուրին չէ նաև այն մարդկանց համար, ովքեր նախքան պատերազմը չունեին որևէ քաղաքացիական մասնագիտություն և այժմ փաստորեն

պետք չեն ոչ մեկին: Անցնելով կյանքի բավականին խստապահանջ դպրոց, ունենալով մի շարք պարզևներ՝ վետերանը պարտավոր է սովորել իրենից տարիքով ավելի երիտասարդ և որ ամենակարևորն է անփորձ անձանց հետ: Սա իհարկե հարված է նրանց ինքնասիրությանը՝ գումարած նաև այն, որ մինչդեռ զինվորը իր կյանքն է վտանգում առաջնագծում՝ նրա տեղը զբաղեցված է «թիկունքային առնետների» կողմից:

Ինչքան կայացած չես լինում քաղաքացիական կյանքում, այնքան առավել մեծ կարոտով ես հիշում բանակային տարիները՝ հոգեբանական վերելքի, եղբայրական միասնության, դժվարությունների միասնական հաղթահարման տարիները [8]:

Այդ իսկ պատճառով հատկապես երիտասարդ վետերանները նորից զինվորագրվում են զինված ստորաբաժանումներ և մեկնում են տաք կետեր պայքարելու, կամ էլ անդամագրվում են քրեական միավորումներին, որտեղ նրանց հմտությունները և փորձը օգտակար են ու անհրաժեշտ:

Միաժամանակ զորացրված վետերանների շրջանում քաղաքացիական կյանքում նույնպես գործում են փոխադարձ օգնության սինդրոմներ: Ամենկին էլ պարտադիր չէ, որ նրանք ծառայած լինեն միևնույն զորամասում: Լոկ բանակի մասին հիշողությունն է նրանց միավորողը: Դրա առավել հետաքրքրական տարբերակն է նաև տարբեր պատերազմների մասնակիցների միջև հարաբերությունները, երբ նրանցից շատերի միջև առկա է նաև հսկայական տարիքային անջրպետ: Նամանատիպ դեպքեր արձանագրվել Աֆղանական պատերազմի վետերանների շրջանում, երբ նրանք նախքան պատերազմը սովորական վերաբերմունք ունեին Հայրենական մեծ պատերազմի վետերանների հանդեպ, իսկ պատերազմից հետո պատկերն էականորեն այլ էր:

Տարբեր պատերազմներ տարբեր կերպ են անդրադառնում հասարակության ինքնագիտակցության վրա: Առաջին հերթին դա կապված է պատերազմի հանդեպ հասարակության առկա վերաբերմունքի հետ, որն էլ ուղղակիորեն ազդում է ռազմական գործողությունների մասնակից անձանց վրա:

Հատուկ իրավիճակներում ռազմաճակատի զինվորները կարող են լուրջ հասարակական փոփոխությունների շարժառիթ դառնալ (մասնավորապես 1904-1905թթ. ռուս-ճապոնական պատերազմ), երբ ցնցումների են ենթարկվում հասարակության գրեթե բոլոր խավերը:

Նամանատիպ դեպքեր 20-րդ հարյուրամյակում բազմաթիվ են: 1917 թ. Ռուսական կայսրության դեպքերը կրկնվեցին նաև Խորհրդային Միության կողմից Աֆղանստան մտնելուց հետո, ինչի արդյունքում ձևավորվեց «Աֆղանական սինդրոմ»-ը:

Այս երկու եզրույթների միջև բազմաթիվ համեմատականներ են անցկացվել: Նախ երկու պատերազմներն էլ վարվում էին գերտերությունների և երրորդ աշխարհի երկրների միջև: Երկու դեպքերում էլ մենք գործ ունեինք

գաղափարական հզոր նախապատրաստության և աշխարհաքաղաքական հետաքրքրությունների բախման հետ: Երկու երկրների տարածքները վերածվել էին ռազմական գործողությունների թատերաբեմի, որտեղ ցուցադրվում և փորձարկվում էին ժամանակի նորագույն ռազմական զինատեսակները: Երկու դպքերում էլ, հաղթելով մարտադաշտում և բոլոր խոշոր ռազմական գործողությունների ժամանակ, գերտերությունները պարտություն կրեցին տեղեկավատական գործընթացում: Մեծ դեր ծխադաց նաև հիշողության հիմնախնդիրը: Պատկերավոր հիշողությունը զգայական տեղեկատվության պահպանումն է, հիշողություն՝ պատկերացումների, կյանքի և բնության պատկերների, ինչպես նաև ձայների, հոտերի և համերի: Այն լինում է տեսողական, լսողական, շոշափելիքի, համային, հոտառության: Եթե տեսողական և լսողական հիշողությունները սովորաբար լավ զարգացած են և առաջատար դեր են խաղում բոլոր նորմալ մարդկանց կյանքում, ապա շոշափելիքի, համի և հոտառության հիշողությունները որոշ վերապահումներով կարելի է անվանել մասնագիտական հիշողության տեսակներ[9]:

Երկու պատերազմների նման անփառունակ ձգձգումը գերտերությունների ներքին կյանքում հանգեցրեց հասարակական ցնցումների: Վիետնամական պատերազմի նախօրյակին և սկզբում բազմաթիվ ամերիկացի երիտասարդներ ոգևորված էին կոմունիզմի դեմ պայքարով և պատերազմի պատճառը նրանք տեսնում էին Հարավարևելյան Ասիայում կոմունիստական գաղափարախոսության տարածման կանխարգելման մեջ:

ԱՄՆ-ում ձևավորվեց պատերազմի դադարեցման և Վիետնամից զորքերի դուրսբերման հզոր շարժում, որն էլ վարակեց ամերիկյան մշակույթի և ԶԼՄ-ների ներկայացուցիչներին: Հնեց այս ամենն էլ ստացավ «Վիետնամական սինդրոմ» անվանումը: Տարիների ընթացքում պատերազմավարելով, կրելով մարդկային և նյութական կորուստներ՝ ամերիկացիները այդպես էլ չկարողացան իրականացնել իրենց առջև դրված աշխարհաքաղաքական նպատակները և բախվեցին Դոմինոյի էֆեկտին: Բացի այդ հասարակության շրջանում տարածվեց այն գաղափիրը, որ ամեն ինչ չէ, որ կարելի է որոշել հաստ դրամապանակի և ռազմական ուժի հաշվին: Ի պատիվ ամերիկացիների պետք է նշել, որ նրանք կարողացան հաղթահարել թույլ տրված սխալները և հետգա պատերազմներում հասան փայլուն հաղթանակների (Այդ հաղթանակների լավագույն օրինակներն են 1991 թ. Ծոցի ապտերազմը և 2003 թ. Իրաքյան կամպանիան: Օրինաչափ է, որ 2003 թ. Ամերիկացիների 38 օրյա օդային հարվածների ընթացքում իրաքցիների կորուստները հետևյալ պատկերն ունեին - օդուժ՝ 10%, զրահատեխնիկա՝ 18%, հրետանի՝ 20%, իսկ հակաքարոզչության արդյունքում անձնակազմի բարոյահոգեբանական ոգին ընկավ 40-60%-ով: Իրաքյան զինծառայողների բարոյալքման նպատակով ամերիկացիները տարածեցին 30մլն թռուցիկ, իսկ ապատեղեկատվության համար գործի էր դրվել 2500-ից ավելի ռադիոհաղորդիչ: Սա ևս ապացուցում

է, որ մարտական հատկանիշներից առաջինը ոգին է) [10]: Այդպիսով, ԱՄՆ հասարակական-քաղաքական ապարատը կարողացավ դիմագրավել «անարդարացի» պատերազմի հետևանքներին:

Այլ իրավիճակ էր ԽՍՀՄ-ում կապված Աֆղանական պատերազմի հետ: Այսօր արդեն կասկածի տակ են դրվում նախկինում տրված հիմնավորումները՝ կապված ԽՍՀՄ-ի հարավային սահմանների անվտանգության և եղբայրական ժողովուրդներին օգնելու հետ: Առաջնային պլան է մղվում տվյալ տարածաշրջանում ամերիկացիների հատատման բացառման փաստը: Աֆղանական պատերազմի հետևանքով սպառազինությունների և ռազմա-արդյութերության աճ արձանագրվեց, ինչն էլ վերջին հաշվով հանգեցրեց ԽՍՀՄ տնտեսության խաթարմանը և գերտերության կործանմանը [11]:

Արդյուքում, ռուսները աշխարհաքաղաքական պլուրզ խնդիրներ ունեցան ինչպես Միջին Ասիայում, այնպես էլ Կովկասի մուսուլման բնակչության հետ: Այս պարագայում որոշ ընդհանրություններ կարող ենք տեսնել Վիետնամական պատերազմի հետ: Թեև ամերիկյան հասարակությունը բավականին լավ էր տեղեկացված պատերազմի ընթացքի և գործողությունների վերաբերյալ: Մինչդեռ մինչև 1984 թ. խորհրդային քարոզչամեքենան միայն դրական կողմերով էր ներկայացնում ռազմաճակատաի իրադարձությունները: Մինչև 1987 թ. ցինկե դագաղները պահվում էին կիսագաղտնի վիճակում, իսկ շիրմաքարերին արգելվում էր գրել, որ հանգուցյալը զոհվել է Աֆղանստանում: Հասարակությունը գնալով ավելի շատ տեղեկություններ էր ստանում ռազմաճակատից: Սակայն մինչև 1989 թ. գերակայում էր ինտերնացիոնալիստ-մարտիկների գաղափարը: Անգամ այդ տարիներին դեռևս փորձեր էին արվում պատերազմը ներկայացնել իբրև «արդարացի պատերազմ» [12]:

Հենց այս ժամանակ էլ պատերազմը սկսեց դիտվել իբրև քաղաքական սխալ, ինչպես նաև պահանջ ներկայացվեց զորքերի դուրսբերման, որն էլ իրագործվեց 1989 թ. Փետրվարին: Բժշկական եզրութաբանությամբ վետերանների շրջանում նման դրսևորումները բնորոշվում են իբրև հետտրավմատիկ ստրեսային սինդրոմ: պատահական չէ, որ երկու դեպքերում էլ շատ է խոսվում հոգեկան շեղումների կամ խանգարումների մասին, որոնց զոհը դարձան ամերիկացի և խորհրդային զինծառայողները: Կարևոր է նաև այն, որ խնդիրը, ոչ թե նյութական, այլ ավելի շատ հոգեբանական գործոնների հետ կապ ուներ (նրանց մեծ մասը կյանքն ավարտել է ինքնասպանությամբ [13]): Պաշտոնական տվյալներով Վիետնամական պատերազմի ռազմական գործողություններին զոհ գնացին շուրջ 60 հազար ամերիկացիներ, իսկ 1988 թ. տվյալներով ինքնասպանություն գործած վետերանների թիվը անցնում է 100 հազարից: Զարմանալի այն է, որ «Վիետնամական սինդրոմ»-ը միանգամից չի դրսևորվում: Այն իր գագաթնակետին է հասնում հիվանդության 8-րդ տարում:

Հիվանդության հիմնական ցուցիչներն են հոգեբանական ստրեսներին

դիմադրելու անկարողությունը, երբ նվազագույն կորուստներեն անգամ մարդուն դրդում են ինքնսպանության: Հիվանդների մեծ մասը բացասական է տրամադրված պետական ինստիտուտների նկատմամբ: Ամերիկացի հոգեբան Ջեք Սմիթի պնդմամբ, ով նույնպես մասնակցել էր Վիետնամական պատերազմին, «Վիետնամական սինդրոմ»-ը ամենևին էլ բնորոշ չէ Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցներին: Այն սրում են հիմնականում օտար ափերին վարվող պատերազմները: Օրինակ, երբ քո համերկրացիները վայելում են կյանքը, իսկ դու դեռևս չես գիտակցում քո իրական թշնամուն, գումարած պատերազմն ավարտում ես ոչ ցանկալի արդյունքով [14]:

Մի խոսքով «Վիետնամական սինդրոմ»-ը պարզ ցույց տվեց արդարացի և անարդար պատերազմների միջև առկա անջրպետը [15]: Ինչպես ցույց տվեցինք, Վիետնամական և Աֆղանական սինդրոմները ունեին ծագման համնման պատճառներ և ընթացք, սակայն հաղթահարման տարբեր ուղղություններ: Դրան էլ գումարվեցին նաև դարաբաղյան, չեչենական, մերձ-դնեստրյան, աբխազական, տաջիկական և այլ սինդրոմները: Չեչենական սինդրոմը ավելի ծանր հետևանքներ ունեցավ ռուսների համար: Մասնակիցների մեծ մասը իր կյանքը չէր տեսնում զինվորական ծառայությունից դուրս: Պատհական չէ, որ վետերանները ոչ միայն լրացնում են բանակի զինվորների շարքը, այլ նաև քրեական խմբավորումների:

Ռազմական ոլորտը, իր ինքնատիպ և յուրահատուկ գործառնությամբ, առանձնահատուկ բարձր պահանջներ է ներկայացնում զինծառայողներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռազմական գործունեությունն ընթանում է մշտապես ոչ միօրինակ՝ արտակարգ և ճգնաժամային իրավիճակներում, չափազանց կարևորվում է հոգեբանական գործոնների դերն ու նշանակությունը: Ռազմական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է, նախ և առաջ, տվյալ ոլորտին վերաբերող գիտելիքների մակարդակով, ընդունակությունների և հմտությունների առկայությամբ, ինչպես նաև մի շարք ֆիզիկական, հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական և սոցիալական գործոններով, որոնք կարող են ինչպես խթանել, այնպես էլ արգելակել զինվորական ծառայության գործընթացը, զինվորների մարտական հնարավորությունների և կարողությունների զարգացումը:

Յուրաքանչյուր պատերազմ, քաղաքական, տնտեսական, հասարակական հետևանքներից բացի, էական հոգեբանական ներգործություն է թողնում նրա մասնակիցների վրա: Իր մեջ կուտակած զգացմունքները՝ մարտնչող զինվորները զորացրվելուց հետո դուրս են մղում քաղաքացիական կյանքում, ինչն էլ հասարակության մեջ առաջ է բերում էական փոփոխություններ:

Վետերանները շատ հաճախ իրենց պատկերացնում են ռազմաճակատում և շարժվում են բանակի օրենքներով: Հետաքրքիր է այն, որ նրանց մեծ մասի մոտ հոգեական խանգարումները ի հայտ են գալիս զորացրումից շուրջ 8 տարի անց:

Իհարկե մեծ դերակատարում ունի նաև հասարակության և առաջին հերթին կառավարության վերաբերմունքը դեպի վետերանները: Շատ դեպքերում հենց դրանից էլ կախված է վետերանների ազդեցիկ կամ հանգիստ վերաբերմունքը դեպի ընթացող քաղաքական և հասարակական գործընթացները:

Միայն հոգեբանները կամ հոգեբույժները անկարող են որևէ բան փոխել առանց պետական աջակցության: Նման վերականգնողական կենտրոններ կան Արևմտյան երկրներում, իսկ օրինակ ՌԴ-ում դրանց թիվը միայն 6-ն է:

Գրականություն

1. Հովհաննիսյան Ա., Ռազմարվեստ, հ. 1, Օդային գերակայություն, Ե., 2016, էջ 67-68:
2. Ferguson L. E, Kicking the Vietnam Syndrome? Collective Memory of the Vietnam War in Fictional American Cinema Following the 1991 Gulf War, Submitted in Fulfilment of the Requirements for the Degree of PhD, University of Glasgow, 2011, p. 66-145.
3. Van Creveld M., The Transformation of War, New York, 1991, p. 101-135.
4. Ениколопов С. Н., Психотерапия при психотравматических стрессовых расстройствах () Российский психиатрический журнал. 1998, № 3, с. 50-56.
5. Тоболяк Г., «Афганская война», М., 2010, с. 105.
6. Мухин Ю., Афганский фронт СССР, М., 2009, с. 67.
7. Сенявская Е. С., Психология войны в XX веке: исторический опыт России. М., 1999, с. 75.
8. Кузнецов Д. В., Невоенные методы преодоления «Вьетнамского синдрома» в США в 1973)1974-2015 гг.) Американский ежегодник 2015, М., 2015, с. 168.
9. Ավանեսյան Հ., Հարությունյան Ն., Հովհաննիսյան Ա., Ստեփանյան Լ., Ասրիյան Է., Զինվորի հոգեկան հատկությունների գնահատման և զարգացման մեթոդներ, Գործնական հոգեբանություն, Ե., 2017, էջ 66-67:
10. Հովհաննիսյան Ա., Ռազմարվեստի զարգացումը 20-րդ դարում. Հեռանկարները, Ե., 2017, էջ 494-508:
11. Van Creveld M., Why Iraq Will End as Vietnam Did, 18 November 2004 () <https://archive.lewrockwell.com/orig5/crevald1.html> 20.05.2023
12. Мухин Ю., указ. соч., с. 89
13. СМИ: На одного убитого солдата США приходится 25 военных-самоубийц)) Деловая газета ВЗГЛЯД, 16 апреля 2012)) <https://vz.ru/news/2012/4/16/574692.html> 20.05.2023
14. MacPherson Myra, Long Time Passing, New Edition: Vietnam and the Haunted Generation, Indiana, 1984, p. 105.
15. Гинодман В., День рождения вьетнамского синдрома)) <http://web.archive.org/web/20070930205923/http://www.gzt.ru/world/2003/01/26/120044.html> 20.05.2023

Мурадян Г. - ОПЫТ СРАВНИТЕЛЬНОГО АНАЛИЗА ВЬЕТНАМСКИХ И АФГАНСКИХ СИНДРОМОВ. В статье обсуждаются причины посттравматических расстройств у военнослужащих в результате двух масштабных горячих конфликтов времен Холодной войны и пути их преодоления. Освещается отношение общества и в первую очередь государства к ветеранам. Анализ посттравматического синдрома имеет первостепенное значение для работы, проводимой с ветеранами Арцахских войн.

Muradyan G. - THE EXPERIENCE OF COMPARATIVE ANALYSIS OF VIETNAM AND AFGHAN SYNDROMES. The article discusses the causes of post-traumatic disorders in military personnel because of two large-scale hot conflicts during the Cold War and ways to overcome them. Only psychologists or psychiatrists are not able to change anything without state support. The analysis of the post-traumatic syndrome is of paramount importance for the work carried out with the veterans of the Artsakh wars.

Key words: *Cold War, Vietnam syndrome, post-traumatic stress disorder, war veterans, military psychology.*

ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՕՐՈՔ

Վահե Թորոսյան, Նարեկ Մարտիրոսյան

Երևանի Հայրուսակ համալսարան
Ընդունված է տպագրության 03.06.2023

Ամփոփագիր. Քննարկված է 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին Օսմանյան կայսրության քայքայումը տնտեսական և քաղաքական ճգնաժամի պատճառով: Թեև սուլթանին հաջողվել էր ցարքուցարք անել «նոր օսմաններին» այնուամենայնիվ, նրանց կազմակերպությունների անդամները շարունակում էին գոյատևել եվրոպական երկրներում: Ընդդիմադիր ուժերի ակտիվացման համար նոր ազդակ ծառայեց դեռևս 19-րդ դարավերջին ծագում առած և 1908թ. սրված մակեդոնական ճգնաժամը: Նոր ձևավորված ընդդիմադիր ուժերի համար առաջնահերթություն էր փրկել Օսմանյան կայսրությունը վերջնական փլուզումից: Որպես այդ նպատակի միջոց, ընդդիմադիր ուժերը հրապարակ էին համարում սուլթան Աբդուլ Համիդի վարչակարգի տապալումը: Հակասուլթանական շարժման գլուխ կանգնած էր «Իթթիհատ վե թերաքքը» («Միություն և առաջադիմություն») կոմիտեն, որի անդամներին անվանում էին երիտթուրքեր:

Հիմնաբառեր՝ Ընտրական օրենսդրություն, Օսմանյան կայսրություն, ցեղասպանություն, երիտթուրքեր, ընտրական իրավունք.

Երիտթուրքերը հայ ազգային կուսակցություններին՝ հայ հեղափոխական դաշնակցությանը, սոցիալ դեմոկրատական հնչակյան և վերակազմյալ հնչակյաններին առաջարկեցին միասնաբար պայքարել սուլթանական վարչակարգի դեմ: Հնչակյանները հրաժարվեցին երիտթուրքերի հետ համագործակցությունից, քանի որ իթթիհատը մերժում էր Օսմանյան կայսրությունից անջատվելուն ուղղված ազգային փոքրամասնությունների իրավունքները:

1907թ. Վանում և Էրզրումում տեղի են ունենում հակակառավարական ցույցեր և հանրահավաքներ, որոնք հիմնականում գլխավորում էր դաշնակցությունը: Ստեղծվում է հեղափոխական իրադրություն, որը վարակի պես տարածվում է ողջ Փոքր Ասիայում: Գարնանը դաշնակցությունն իր չորրորդ ընդհանուր ժողովում որոշում է կայացնում համերաշխ համագործակցություն սկսել թուրք ընդդիմադիր քաղաքական ուժերի հետ՝ միաժամանակ հայտարարելով, որ հայությունը Թուրքիայում չի ունեցել և չունի որևէ անջատողական ձգտում [1]: Դաշնակցության այս կոչն անպատասխան չմնաց:

Դաշնակցական գործիչները դիմեցին համագործակցության՝ պատճառաբանելով, որ իրենք նախընտրել են չմերժել թուրքերի մեկնած ձեռքը և առաջնային նպատակ են համարել Համիդյան վարչակարգի տապալումը:

Դաշնակցությունն իթթիհատի հետ ունեցած համագործակցության ողջ ընթացքում առանցքային է համարել նաև ապակենտրոնացման սկզբունքը, թեև իրականում դրա ջատագովը իշխան Սաբահէդինն էր, իսկ երիտթութրըրը, ընդհակառակը, ձգտում էին բացառել ցանկացած քայլ, որը Օսմանյան կայսրության որևէ հատվածի կանջատեր կայսրութունից: Բանակցութունների ընթացքում Ահմեդ Րիզա բեյը պահանջում է, որ ապագա վեհաժողովում ընդունվի սահմանադրության 113րդ հոդվածը, որն ամրապնդում էր սուլթանի վեհապետական իրավունքները: Այդ, պահանջը բացասական արձագանք ստանալով հայերի կողմից, դուրս է նետվում օրակարգից [3]: Իրենց դիրքորոշումը հայերը հիմնավորել էին սուլթանի կողմից պետության գորքը և բյուջեն իր հայեցողութամբ ապօրինի օգտագործելու փաստով: Այս հոդվածը դուրս էր մղվել նաև սահմանադրության «Հասարակական ազատութուններ» ենթագլխից: Հետագայում այս փոփոխութունը տեղ գտավ բոլոր քաղաքական կուսակցութունների նախընտրական ծրագրերում [4]:

Արդյունքում՝ 1907թ.-ի դեկտեմբերի 2729 (1908թ. հունվարի 810ը) Փարիզում կայացած վեհաժողովում Իթթիհատ վե թերաքքը կոմիտեի ներկայացուցիչները Հայ հեղափոխական դաշնակցութուն կուսակցութունը, Իշխան Սաբահէդինի գլխավորած «Ապակենտրոնացման ու սահմանադրության օսմանյան միութունը», արաբական, հրեական և մակեդոնական կոմիտեները համաձայնության եկան համիդյան վարչակարգը միասնաբար տապալելու և Թուրքիայում սահմանադրական կարգեր հաստատելու վերաբերյալ: Որոշվեց կայսրության տարածքում գործող հակասութանական կազմակերպութունների ներկայացուցիչներից կազմել մի մարմին «Մնայուն կոմիտե» անունով[5]: Այս մարմնի կազմը և գործունեութունը պետք է գաղտնի պահվեր: Կողմերը համաձայնության եկան երեք առանցքային պահանջների շուրջ՝

1. Աբդուլ Համիդի գահընկեցութունը,
2. Ներկա վարչակարգի արմատական փոփոխութունը,
3. Ներկայացուցչական վարչակարգի հաստատումը [6]:

Իրականում վեհաժողովում ընդունված հայտարարութունը ցույց էր տալիս, որ երիտթութրերի կուսակցութունն անդրդվելի կանգնած է այն տեղում, ուր 1876թ. հաստատվել էր նրա նախահայրը՝ Միդիատ փաշան: Նրանք ոչ մի առաջադիմութուն չէին արձանագրել: Փրկության միակ միջոց դիտվում էր սահմանադրականութունը [7]: Ուշադրութուն չէր դարձվում դրա բովանդակութանը: Ուստի ընդդիմադիր ուժերի համագործակցութունը, բացառութամբ ՀՅԴ-իթթիհատի, շատ կարճ տևեց, ընդամենը մի քանի ամիս: Իրականում թելադրողը երիտթութրական կուսակցութունն էր, որը ոչ մի հարցում առաջընթաց չուներ:

Աբդուլ Համիդի միահեծան կառավարմանը վերջ տալու համար մղվող պայքարը շուտով դրվեց գործնական հողի վրա: Դրա համար ազդակ հան-

դիսացավ Մակեդոնական հարցի սրումը: Ընդդիմադիր ուժերը համոզված էին որ, Մակեդոնիան կայսրությունից անջատվող հերթական երկիրն է, ուստի անգործության չէին կարող մատնվել: Երիտթուրքերը Մակեդոնիայում՝ զինվորականների շրջանում, ակտիվ քարոզչությամբ էին զբաղվում: Նրանք բացատրում էին թուրքական զինվորականությանը, որ անհրաժեշտ է վերականգնել 1876թ. Սահմանադրությունը՝ Օսմանյան կայսրության մասնատումը կանխելու համար: Երիտթուրքերի գաղափարները բավականին արագ և հաջողությամբ տարածվեցին զինվորականների մեջ: Արդյունքում՝ Մակեդոնիայի Մանասթեր քաղաքը դարձավ երիտթուրքերի կենտրոնը՝ Փարիզից հետո [8]:

1908թ. հուլիսին, Մակեդոնիայում տեղակայված օսմանյան զինվորական մասերը Նիսպի և Էնվեր բեյերի գլխավորությամբ ապստամբում են: Աբդուլ Համիդի ուղարկած պատժիչ ուժերը, որոնք գտնվում էին իթթիհատականների քարոզչության ազդեցության ներքո, անցնում են ապստամբների կողմը: Սուլթանն իր գահը փրկելու համար համաձայնում է երկրում սահմանադրական կարգեր հաստատելու ընդդիմության պահանջին: Այսպիսով՝ 1908թ. հուլիսի 24-ին, Թուրքիայում տեղի է ունենում պետական հեղաշրջում, որից հետո սուլթանի իշխանությունը կրում է ձևական բնույթ: Երկրում փաստացի իշխանությունը կենտրոնանում է երիտթուրք պարագլուխների ձեռքում: Օսմանյան կայսրությունը հռչակվում է սահմանադրական միապետություն:

Հեղաշրջումից հետո պանդխտությունից վերադարձան նաև Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցության հայտնի գործիչներ Մեծն Մուրադը (Համբարձում Բոյաջյան) և Ս.Սապահ-Գյուլյանը [9]: Հնչակյանները 1909թ. հուլիսի 12-ի իրենց VI համագումարում վերահաստատեցին կուսակցության ծրագիրը և Օսմանյան կայսրությունում տիրող կարգերի նկատմամբ վերաբերմունքը: Ս.Դ. Հնչակյան գործիչները քննադատում էին ՀՅԴ-ին իթթիհատի հետ համագործակցելու համար և համոզվածություն հայտնում, որ իթթիհատը, օգտագործելով վարչական լծակները և կիրառելով ընտրախախտումներ, մեծամասնություն է կազմելու խորհրդարանում և փաստացի իր ձեռքում է կենտրոնացնելու իշխանության բոլոր լծակները:

Սահմանադրական միապետություն հիմնելու կարևորագույն նախապայման երիտթուրքերը համարում էին Օսմանյան խորհրդարանի ձևավորումը: Խորհրդարանի վերաբացումի առանձնահատկությունը կայանում էր նրանում, որ իթթիհատը սկզբում չէր ցանկանում երկրի կառավարումն ուղղակիորեն իր ձեռքը վերցնել [10]: Երիտթուրքերը հեղաշրջումից առաջ և դրանից հետո՝ մի որոշ ժամանակ, առերես խոսում էին «ապակենտրոնացման» կարևորության մասին, մի կողմից ընդդիմադիր ուժերի հետ համագործակցությունը ապահովելու, իսկ մյուս կողմից ներքաղաքական և արտաքին քաղաքական սուր իրավիճակներում անմիջական պատասխանատվությունից խուսափելու համար: Այդ իսկ պատճառով նրանք փաստացի գործադիր իշխանությունը

տվեցին Մեհմեդ Քյամիլ փաշային, ով «ճգնաժամային կառավարիչի» մեծ համբավ ուներ [11]: Երիտթուրքերը նախընտրել էին խորհրդարանում մեծամասնություն կազմելու միջոցով կառավարության հակակշռողի դերը [12]: Այս գործընթացին նրանք ձեռնամուխ եղան 1908թ. հուլիսից նոյեմբեր ընկած ժամանակահատվածում:

Երկրում երեսփոխանական ընտրություններ անցկացնելու մասին սուլթանի հրամանը հրապարակվեց 1908թ. օգոստոսի 2ին, որին հաջորդեց մեծ վեզիր Սայիդ փաշայի շրջաբերական նամակը, որտեղ ներկայացված էին 1877թ. ընտրությունների մասին օրինագծի որոշ հոդվածների փոփոխման հիմնավորումները:

1908թ. սեպտեմբերին Իթթիհատի կենտրոնական կոմիտեն Սալոնիկում հրապարակեց նախընտրական իր ծրագիրը, ուր կարևորվում էր ընտրական նոր իրավունքի իրացումը, բնակչության կողմից սենատի 2)3րդի ընտրությունը, երեսփոխաններին օրենսդրական նախաձեռնություն տրամադրելը և ազգային փոքրամասնություններին պատգամավորական տեղեր հատկացնելը [13]:

Երիտթուրքերի նախընտրական ծրագիրը առաջին հայացքից ուներ դրական բնույթ, քանի որ թույլ էր տալիս ընտրական օրենսդրության արդիականացման օգտին կատարել անհրաժեշտ փոփոխություններ և սահմանափակում էր սուլթանի վեհապետական իրավունքները: Սակայն իրականում այն հիմնավորում էր Իթթիհատի իշխանությունը:

Ընտրական օրենսդրության հիմքում ընկած էր 1877թ. խորհրդարանի ստորին պալատի կողմից մշակված օրինագիծը, որը ժամանակին չէր հաստատվել սուլթանի կողմից: Թեև ընտրությունները վերահսկելու գործիքակազմ չկար, սակայն օրենսդրության մեջ կային կոնկրետ պահանջներ:

1877թ. ընտրական օրինագծի հիմքում ընկած էին ունեցվածքի, բնակության, տարիքային և կրթական արտոնակարգերը, ինչպես նաև թուրքերենի պարտադիր իմացությունը: Ընտրական այդ օրինագիծը ընտրելու իրավունք տալիս էր միայն այն անձանց, ովքեր պետությանը վճարում էին հինգ տեսակի այսպես կոչված «ուղղակի հարկերից» (տասանորդ, կալվածական, եկամտային, էսնաֆական, գինվորական,) մեկը, այսինքն՝ ճանաչում էին զույքի արտոնակարգը [14]: Ընտրությունների մեկնարկից առաջ մամուլում տեղեկություն է տարածվում, որ երիտթուրքերը կատարել են փոփոխություն ընտրական օրենքում, որի համաձայն ընտրական իրավունքից զրկվել են էսնաֆական հարկ վճարողները [15]: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրությունում արհեստավորների և առևտրականների մեծամասնությունը քրիստոնյաներն էին՝ հույներ, հայեր և այլն, կարելի է եզրակացնել, որ երիտթուրքերը նախքան ընտրությունները որքան հնարավոր էր կրճատեցին քրիստոնյա առաջին կարգի ընտրողների շրջանակը: Իսկ երկրորդ կարգի համար, նրանք հասան ընտրական շրջանակի մեծացմանը, ընդգրկելով անասնահարկ և տասանորդ հարկ վճարողներին նույնպես: Սահմանադրության 18-րդ հոդվածի համաձայն, ցանկացած

պաշտոնյա պետք է թուրքերեն իմանար [16]: Այս հոդվածը տարածվում էր նաև օսմանյան խորհրդարանի պատգամավորների վրա:

Ընտրություններին մասնակցելու իրավունք ունեին միայն արական սեռի ներկայացուցիչները, առանց ազգային և կրոնական խտրության: Յուրաքանչյուր 50.000 օսմանյան բնակչի բաժին էր հասնում 1 պատգամավոր: Սակայն 75 հազար բնակչի դեպքում թույլատրվում էր ունենալ երկրորդ պատգամավորը: Ընտրությունները երկաստիճան էին՝ «գաղտնի» և «հավասար» [17]: Գոյություն ունեին երկու կարգի ընտրողներ: Առաջին կարգի ընտրողները «գաղտնի» ընտրությունն էին կատարում: Նրանք ընտրում էին ոչ թե պատգամավորին, այլ երկրորդ կարգի ընտրողներին: Յուրաքանչյուր 250-750 բնակիչ ունեցող ընտրատարածքից կարող էր ընտրվել մեկ երկրորդ կարգի ընտրող [18]: Վերջիններս իրենց հերթին արդեն ընտրում էին պատգամավորին: Այն թեկնածուն, ով ձեռք կբերեր ավելի շատ երկրորդ կարգի ընտրողներ, հենց նա էլ կընտրվեր պատգամավոր: Կայսրության տարբեր շրջաններում ընտրություններն ավարտվում էին տարբեր ժամանակահատվածներում: Սովորաբար խորհրդարանի բացումից և մշտական հանձնաժողովների ձևավորումից հետո՝ մի շարք ընտրատարածքներում երկրորդ կարգի ընտրողները դեռևս պատգամավորի ընտրությունն իրականացրած չէին լինում: Այդպես եղավ բոլոր՝ թե՛ 1908թ. թե՛ 1912թ. և թե՛ 1914թ. ընտրություններում:

Պատգամավորական մանդատ չէին կարող ունենալ 30 տարին չլրացած անձինք: Ընտրական օրենսդրությունը հստակ ուշադրություն էր դարձնում պատգամավորի քաղաքացիական և բարոյական նկարագրին: Պատգամավոր չէին կարող լինել դատարանի վճռով արգելանքի տակ գտնվողները, սնանկացածները, քաղաքացիական իրավունքներից կամ օսմանահպատակությունից զրկվածները և հասարակության մեջ արատավոր վարքով հայտնիները: Պատգամավոր դառնալու իրավունքից զրկված էին նաև կանայք, բանվորները և գյուղացիները [19]: Բացի նախարարներից, պետական պաշտոնյաները ևս չէին կարող զբաղեցնել պատգամավորական աթոռներ: Պաշտոնատար անձը, պատգամավոր ընտրվելուց հետո, պետք է հրաժարվեր իր պաշտոնից:

Չնայած օրենսդրության սահմանած խիստ պահանջներին, թուրք և քուրդ աղաները ոչ միայն հայտնվեցին խորհրդարանում, այլև մեծամասնություն կազմեցին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ չկային ընտրությունները վերահսկելու մեխանիզմներ: Պատճառներից մեկն էլ այն էր, որ պահանջներից ամենադժվար հաղթահարվողը սոցիալական արտոնագրերն էին: Փաստորեն Օսմանյան կայսրությունում պատգամավոր դառնալու հնարավորություն ուներ հասարակության միայն մի փոքր խավը: Հաշվի առնելով Օսմանյան կայսրությունում մինչ այդ տիրող սոցիալական և ազգային անարդարությունները, կարելի էր կանխագուշակել, որ ընտրելու և ընտրվելու համար սահմանված այսպիսի նշաճողի դեպքում խորհրդարանում ճնշող

մեծամասնություն կազմելու էին էթնիկ թուրքերը և մյուս մահմեդականները, որոնց շարքերում գերակշռող պետք է լինեին բնակչությանը հարստահարող աղաներն ու փաշաները [20]:

Մյուս կողմից, ընտրությունները վերանայելու իրավունքը վերապահվում էր օրենսդիր գերագույն իշխանությանը՝ խորհրդարանին: Խորհրդարանը բացվելուց հետո անմիջապես զբաղվում էր իր անդամների տեղեկագրերի հաստատմամբ: Եթե որևէ պատգամավորի վերաբերյալ ընտրությունը կասկածի տակ դնող շատ բողոքներ կամ անհերքելի փաստեր էին ներկայացվում, ապա այդ մարդու տեղեկագիրը ուղարկվում էր իրավական հանձնաժողով, որտեղ կազմվում էր եզրակացություն և ուղարկվում խորհրդարան՝ այն հաստատելու կամ մերժելու: Մինչև հանձնաժողովի կողմից եզրակացություն կայացվելը և խորհրդարանի կողմից հաստատել կամ մերժելը՝ տվյալ պատգամավորի կարգավիճակը համարվում էր առկախված: Նա կարող էր ներկա գտնվել նիստերին, բայց զրկվում էր քվեարկելու իրավունքից: Այսպիսի կարգավիճակում հայտնվեցին իրենց բացասական վարքով աչքի ընկած և կեղծիքներով ընտրված Տիգրանակերտի պատգամավոր Բիրինջի զադե Ֆեզին և Շապին Գարահիսարի պատգամավոր Մուսթաֆան [21]:

Ընտրությունները տեղի ունեցան հայ քաղաքական կուսակցությունների համար անբարենպաստ ժամանակաշրջանում՝ 1908թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Երիտթուրքական հեղաշրջման նախօրյակին արմենականները (այն ինչ մնացել էր այդ կուսակցությունից) դեռևս չէին հասցրել համախմբվել, իսկ հնչակյանները, ընդհակառակը, պառակտվել էին [22]:

Իրավիճակը փորձեց շտկել Կ.Պոլսի հայոց պատրիարքարանը՝ գործի դնելով Ազգային ընդհանուր, քաղաքական և խառը ժողովները: Այս ժողովներում գերակշիռ դեր ուներ «Կեդրոն» խմբակցությունը, որում ընգրկվել էին Կ.Պոլսի ունևոր դասակարգը, մտավորականությունը, Սահմանադիր Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները [23]:

Ընտրություններից առաջ իթթիհատականները դիմում են պատրիարքարանին, առաջարկելով իրենց ներկայացնել հայ թեկնածուների ցուցակը, որպեսզի իրենց երկրորդ կարգի ընտրողներին ուղղորդեն թե հայ թեկնածուներից ում ընտրեն: Իրականում դրանով երիտթուրքերը ցանկանում էին տեղեկացված լինել և վերահսկել հայ թեկնածուների ընտրությունը: Այդպիսով երիտթուրքերը կկարողանային իրենց համար ցանկալի թեկնածուների ընտրությունը հաջողացնել:

Ընտրություններում հաջողություն ապահովելու համար երիտթուրքերը կայսրության տարբեր շրջաններ ուղարկեցին իրենց ներկայացուցիչներին, որոնց նպատակն էր տեղերում ստեղծել «Միություն և առաջադիմություն» կուսակցության մասնաճյուղեր ու ապահովել իրենց թեկնածուների հաղթանակը: Նրանք իրականացրին նաև նախընտրական խարդախություններ ու մեքենայություններ հայկական նահանգներից հայ պատվիրակների մուտքը

օսմանյան խորհրդարան արգելակելու համար: Մասնավորապես հայաբնակ գյուղերը խմբավորում էին այնպես, որ թուրքերը, չնայած այս կամ այն շրջանում փոքրամասնություն լինելուն, ընտրության ժամանակ ստանում էին առավելություն [24]:

Այս ամենի հետևանքով էլ, ընտրված հայ պատգամավորների քանակը մեծապես տարբերվում էր Օսմանյան կայսրությունում բնակվող հայության ընդհանուր քանակին համապատասխանող և բոլորի կողմից սպասված թվից: Հենց այս պատճառով է, որ հայերը ընտրությունների ընթացքում և դրանից հետո բազմաթիվ բողոքներ ներկայացրին:

Բավական հետաքրքիր երևույթ էին բնակչության, տեղական իշխանությունների և պատգամավորների մասնակցությամբ ժողովները: Դրանց նպատակը բնակչության կողմից իրենց պատգամավորին պատգամ տալն էր: Այսպիսի մի իրադարձություն տեղի ունեցավ նոյեմբերի 18ին և 19ին Էրզրումում, որտեղ խոսեց նաև հայ պատգամավորներից մեկը[25]: Վերջինս իր ելույթում ընդգծել է պարտադիր կրթության և գինվորական ծառայության, ինչպես նաև կառավարության՝ խորհրդարանի առաջ պատասխանատվության խնդիրը:

1908թ.-ի դեկտեմբերի 4ին (դեկտեմբերի 17) բացվեց Օսմանյան խորհրդարանը [26]: Օսմանյան խորհրդարանը երկպալատ էր: Այն բաղկացած էր երեսփոխանական ժողովից և սենատից (ծերակույտ): Սենատը ուներ 53 անդամ [27], որոնց 2)3-ը ընտրված էր, իսկ 1)3-ը՝ սուլթանի կողմից նշանակված: Ազգային պատկանելության առումով Սենատում տեղերը բաշխված էին հետևյալ կերպ՝ 41 թուրք, 4 հույն, 3 հայ, 2 հրեա, 1 բուլղարացի, 1 վալախ և 1 սերբ[28]: Հայ ծերակուտականներից էր Գաբրիել Նորատունկյանը [29]:

Երեսփոխանական ժողովի հայ պատգամավորները որևէ առնչություն չունեին սենատի՝ իրենց ազգակիցների հետ, բացի Գ. Նորատունկյանից: Նրանց միջև հարաբերություններն ի պաշտոնե կարգավորվում էր սահմանադրությամբ, իսկ արտախորհրդարանական շփումները հիմնականում պայմանավորված էին Արևմտյան Հայաստանում ընթացող իրադարձություններով, այդ թվում և ընտրությունների ժամանակ: Սենատում եռանդուն գործունեությամբ աչքի ընկնող Գ. Նորատունկյանն ընտրված էր:

Երեսփոխանական պալատը բաղկացած էր 275 պատգամավորներից, որոնցից 142-ը թուրքեր էին, 60-ը՝ արաբներ, 25-ը՝ ալբանացիներ, 23-ը՝ հույներ, 12-ը հայեր, 5-ը՝ հրեաներ, 4-ը՝ բուլղարներ, 3-ը՝ սերբեր և 1-ը՝ վալախ [30]: Կային նաև քուրդ պատգամավորներ, ինչպես օրինակ Իլիաս Սամին կամ Բիրինջի Զադե Ֆեզին, սակայն մինչ օրս հայտնի չէ թե քանի քուրդ պատգամավոր է եղել, քանի որ նրանք երիտթուրքերի կողմից դիտարկվում էին որպես թուրքեր և պատահական չէր, որ հետագայում դարձան նրանց հենարանը խորհրդարանում: Ի դեպ՝ խորհրդարանի արձանագրություններում և մյուս փաստաթղթերում նրանց ազգությունը նշվում է թուրք: Օսմանյան կայսրության 27 միլիոն բնակչությունից թուրքերը քրդերի հետ միասին

կազմում էին 8-10 միլիոն [31]: Հետևաբար նրանք խորհրդարանում կարող էին ունենալ 80-100 պատգամավոր: Հայտնի է, որ 1913թ. պատրիարքարանի ներկայացրած մարդահամարի արդյունքների համաձայն հայ բնակչության թիվը Արևմտյան Հայաստանում 1018.000 էր [32]: Այստեղ պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ պատրիարքարանի մարդահամարի արդյունքը ճշգրիտ չէր կարող լինել, մի կողմից հաշվի առնելով այն ժամանակվա մարդահամարի անցկացման գործիքակազմը, մյուս կողմից պետության կողմից հայերի թիվը դիտավորյալ քիչ ցույց տալու և այդպիսով մարդահամարի արդյունքները կեղծելու միտումը: Որպեսզի պարզորոշ երևա թուրքական իշխանությունների կեղծիքների ընդհանուր պատկերը, բավական է համեմատել երիտթուրքական իշխանությունների մարդահամարի արդյունքները հենց թուրքական իշխանությունների հետագա տարիներին իրականացրած մարդահամարի արդյունքների հետ: Եւ այսպես՝ ըստ 1906-1907թթ. մարդահամարի՝ Արևմտյան Հայաստանում ընդհանուր բնակչության թիվը հասնում էր 3.147.880-ի, որոնց թվում հայերը իբրև թե 561.774 էին [33]: Ըստ 1914թ. իրականացրած մարդահամարի՝ Արևմտյան Հայաստանում ընդհանուր բնակչության թիվը եղել է 3.880.343, որտեղ հայերի թիվը կազմել է 639.171 [34]: Հետագա տարիների թուրքական «ճշգրտված» տվյալներով՝ 1914թ. Արևմտյան Հայաստանում հայերի թիվը հասցվել է 912.601-ի, իսկ ամբողջ բնակչությունը՝ 4.973.429 [34]: Մեզ մոտ թուրքական «ճգրտված» արդյունքներից հավատ չի նեչչնչում հատկապես հայերի թիվը: Ըստ Ա.Համբարյանի՝ Օսմանյան կայսրությունում հայերի թիվը կազմել է 2.583.692, որից 1.400.000-ը ապրել է Արևմտյան Հայաստանի 6 նահանգներում [36]: Հաշվի առնելով Արևմտյան Հայաստանի բնակչության ընդհանուր թիվը և երիտթուրքների իրականացրած ընտրակեղծիքների արդյունքում խորհրդարանում հայտնված հայ պատգամավորների նվազ թիվը՝ ընդամենը 5 պատգամավոր, պետք է ենթադրել, որ Համբարյանի նշած թիվը ամենաողջամիտն է:

Օսմանյան խորհրդարանի հայ պատգամավորներն էին Կ.Պոլսից՝ Գրիգոր Զոհրապը և Պետրոս Հալաճյանը, Իզմիրից՝ Ստեփան Սպարթալյանը (Սպարթալի), Իզմիրից (Նիկոմեդիա)՝ Հակոբ Պապիկյանը և Հակոբ Բոյաջյանը, Գոզանից՝ Համբարձում Բոյաջյանը (Մուրատ), Էրզրումից՝ Գարեգին Փաստորմաջյանը (Արմեն Գարո) և Վարդգեսը (Հովհաննես Սերենկուլյան), Մուշից՝ Գեղամ Տեր-Կարապետյանը, Սեբաստիայից՝ բժիշկ Նազարեթ Տաղավարյանը, Վանից՝ Վահան Փափազյանը (Կոմս), Հալեպից՝ Հարություն Պոշկեզենյանը: Փաստորեն խորհրդարան անցած հայ պատգամավորների միայն կեսն էր Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից: Եթե հաշվենք Արևմտյան Հայաստանի նահանգներում հայերի քանակը, ապա Արևմտյան Հայաստանից ընտրված հայ պատգամավորների թիվը պետք է հասներ 10-12-ի: Իսկ այդ դեպքում ամբողջ Օսմանյան կայսրությունից ընտրված հայ պատգամավորների թիվը կհասներ 18-ի: Այս պարզ թվաբանությունը ակնհայտ է դարձնում, թե որքան անխափան է գործել երիտթուրքների ընտրակեղծարար համակարգը:

Ինչ վերաբերում է կուսակցություններին ու կոմիտեներին, ապա՝ պատգամավորներից 160-ը իթթիհատականներ էին, 20-25-ը՝ ազատականներ (Ահրար կուսակցությունից), 4-ը՝ դաշնակցականներ, 2-ը՝ բուլղար կյուբիստներ, 1-ը՝ սոցիալ դեմոկրատ հնչակյան և 70-ը՝ անկուսակցականներ [9]: Ակնհայտ է, որ թուրքերը մեծամասնություն էին կազմել մի երկրի խորհրդարանում, որտեղ իրենք բնակչության թվով փոքրամասնություն էին: Իսկ իթթիհատը ապահովել էր կուսակցական մեծամասնություն: Խորհրդարանի նախագահ է ընտրվում իթթիհատական Ահմեդ Ռիզա բեյը: Առաջին փոխնախագահն էր Թալեաթ բեյը, իսկ երկրորդը՝ ազգությամբ հույն Յ. Արիստիդի փաշան:

Այսպիսով՝ չնայած հեղաշրջման միջոցով հաստատված «սահմանադրական կարգերին» և ընտրական օրենքի դրական ու բացասական փոփոխություններին, առաջինը հենց երիտթուրքերն էլ կոպտորեն ոտնահարեցին Օսմանյան հպատակների անձեռնմխելի ու հիմնարար իրավունքները, և առաջին հերթին ընտրության իրավունքը: Ընտրությունների անհավասար պայմանները և իրագործած ընտրակեղծիքները երևան հանեցին նրանց իրական նպատակները՝ խորհրդարանական մեծամասնության ապահովումը և իշխանության գաղտնի հակակշռողի քաղաքականությունը: Երիտթուրքերի կազմած խորհրդարանը իրականում չէր արտահայտում Օսմանյան Թուրքիայի ժողովուրդների կամքը: Խորհրդարանի հայ ներկայացուցչության թերությունը միայն քանակականը չէր, թեև սա առաջնահերթություն էր այնքանով, որքանով որ կապված էր հայ բնակչության իրական թվաքանակի և ընտրակեղծարարության տարբեր մեխանիզմների հետ:

Ոչ պակաս կարևոր բացթողում էր կուսակցությունների խիստ անհավասար ներկայացուցչությունը, հատկապես եթե հաշվի առնենք այն, որ իթթիհատը և դաշնակցությունը հանդես էին գալիս մեկ նախընտրական դաշինքով: Խորհրդարանում ներկայացուցչության նման պատկերը հետևանք էր արևմտահայության մի ստվար հատվածի քաղաքացիական ցածր գիտակցության, քարոզչական թերի աշխատանքի, ինչպես նաև իրենց իշխանությունն ամենուրեք չարաշահող և կրոնական անհանդուրժողականություն քարոզող երիտթուրքերի դիմաց՝ հայ քաղաքական կուսակցությունների պառակտվածության:

Գրականության ցանկ

1. Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Գիրք առաջին, Երևան 1982, էջ 119:
2. Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երևան 1992, էջ 424:
3. A. K u r a n. Osmanli İmparatorluğunda İnkılâp Hareketler ve Milli Mücadele. İstanbul, 1956, s. 445:
4. Tarik Zafer Tunaya, Türkiye’de Siyasal Partiler, Cilt 1: İkinci mesrutiyet donemi, 1908-1918, İstanbul 1988, s. 5.
5. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, Երևան 2006,

էջ 240:

6. Լեո, Անցյալից, Երևան 2009, էջ 206:
7. Տես՝ Լեո, նույն տեղում, էջ 208:
8. Սիմոնյան Հ., Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք III, Երևան 2006, էջ 487:
9. Համբարյան Ա.Ս., Հայ հասարակական քառօրյա պայքարի Արևմտահայության ազատագրության ուղիների մասին (XIX-րդ դարի վերջ և XX-րդ դարի սկիզբ), Երևան, 1990, էջ 351:
10. Ժամանակ, 21.02.1909:
11. Никифоров К.В., История Балкан. На переломе эпох (1878-1914гг.), Москва 2017, с 437.
12. Մանդելշտամ Ա., Օսմանյան կայսրության ճակատագիրը և Հայկական հարցը, Առաջին մաս, Կ.Պոլիս, 1919, էջ 32:
13. Тунян В.Г., Младотурки и Армянский вопрос, Часть первая, 1908-1912гг., Ереван, 2004, с.63-64.
14. Բյուզանդիոն, 10.09.08:
15. Տես՝ նույն տեղում:
16. Թովիչեան Ե., Երիտասարդ Թուրքիան և հայերը, Մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 140:
17. Хнкоян Н.С., Выборы 1912 года В Турции и формирование антимладотурецкого блока, Լրաբեր, Երևան 1990, N 7, с. 46.
18. Ճերեճյան Ե.Կ., Մեծն Մուրատ (Հ. Բոյաջյան), Եր., 2016, էջ 140:
19. Шпилькова В.И., Младотурецкая революция 1908-1909 гг., Москва, 1977, с. 194-195.
20. Սապահ Գիւլեան Ա., Երիտասարդ Թուրքիա, Պարիզ, 1908թ., էջ 27:
21. Բյուզանդիոն 11.12.1908:
22. Երամեան Հ., Յուզարձան Վան Վասպուրականի, հատոր Ա, Ալեքսանդրիա, 1929, էջ 428:
23. Ճերեճյան Ե.Կ., Մեծն Մուրատ (Համբարձում Բոյաջյան), Եր., 2016, էջ 141:
24. Տես՝ Шпилькова В.И., նշվ.աշխ., էջ 196:
25. Տես՝ Шпилькова В.И., նշվ.աշխ., էջ 198:
26. Բյուզանդիոն, 5.12.1908:
27. Տես՝ Шпилькова В.И., նույն տեղում:
28. Տես՝ Шпилькова В.И., նույն տեղում:
29. Տես՝ Փափազյան Վ., նույն տեղում:
30. A. K u r a n. Osmanleimparatorluğunda inkilâp hareketler ve milli mücadele. Istanbul, 1956, p 477:
31. Համբարյան Ա., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում(1908-1914), Երևան, 1979, էջ 14:
32. ՀԱԱ, ֆ. 57, ց 1., գ. 399, թ. 6:

33. M. Servet, Late Ottoman population and its ethnic distribution, Nüfusbilim dergisi, Turkish Journal of population Studies, 2003, 25, 3-38, p 11.
34. Տես՝ M. Servet, p 24:
35. Համբարյան Ա., Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, Երևան 1969, N2, էջ 98-114:

Торосян В., Мартиросян Н. - ОСНОВНАЯ ПРОБЛЕМА ОСУЩЕСТВЛЕНИЯ ИЗБИРАТЕЛЬНОГО ПРАВА В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ ВО ВРЕМЯ МЛАДОТУРКОВ. В конце 19 и начале 20 веков Османская империя продолжала рушиться из-за экономического и политического кризиса. Особо сложной была внутривнутриполитическая и внешнеполитическая обстановка. Хотя султану удалось победить «новых османов», члены их организаций продолжали выживать в европейских странах. Новым импульсом для активизации оппозиционных сил, берущей начало в конце 19 века и закончившейся в 1908 году, послужила активизация оппозиционных сил. обострился македонский кризис. Приоритетом новообразованных оппозиционных сил было спасение Османской империи от окончательного краха. В качестве средства для достижения этой цели оппозиционные силы считали неотложным свержение режима султана Абдул Хамида. Во главе антисултанского движения стоял комитет «Иттихат ве Теракк» («Союз и прогресс»), членов котор называли младотурками или младотурками.

Ключевые слова: Избирательное законодательство, Османская империя, геноцид, младотурки, избирательные права.

Torosyan V.E, Martirosyan N. - THE BASIC PROBLEM OF THE EXERCISE OF VOTING RIGHTS IN THE OTTOMAN EMPIRE DURING THE DAY OF THE YOUNG TURKS. In the late 19th and early 20th centuries, the Ottoman Empire continued to crumble due to economic and political crisis. The domestic and foreign political situation was particularly difficult. Although the sultan managed to defeat the “new Ottomans”, members of their organizations continued to survive in European countries. A new impetus for the activation of the opposition forces, originating in the late 19th century and ending in 1908, served. the Macedonian crisis escalated. The priority for the newly formed opposition forces was to save the Ottoman Empire from final collapse. As a means to that end, the opposition forces considered the overthrow of Sultan Abdul Hamid’s regime urgent. At the head of the anti-Sultan movement was the “Ittihat ve Teraqq” (“Union and Progress”) committee, whose members were called Young Turks or Young Turks.

Keywords: Electoral legislation, Ottoman Empire, genocide, Young Turks, electoral rights.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏԱՐԲԵՐԻՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Համլետ Ստեփանյան

*Երևանի «Հայբուսակ» համալսարան
Ընդունված է պապարության 03.06.2023*

Ամփոփագիր՝ Տրված են ավանդական հասարակության և քաղաքացիական հասարակության սահմանումները: Յուր իրավունք ու մեկնաբանված են քաղաքացիական հասարակության այն հատկանիշներն ու առանձնահատկությունները, որոնց շնորհիվ քաղաքացիական հասարակությունը տարբերվում է պարզապես հասարակությունից, և ձեռք է բերում միայն իրեն բնորոշ որակներ:

Հիմնաբառեր՝ քաղաքացիական հասարակություն, հատկանիշներ, սահմանում, ավանդական հասարակություն, ինքնակառավարվող միավորում, ինքնաբավություն:

Թեև արդեն մի քանի հարյուրամյակ «քաղաքացիական հասարակություն» անվանակոչված բացառիկ երևույթը գտնվում է իրավաբանների, քաղաքագետների, սոցիոլոգների և այլ հասարակական գիտությունների տեսադաշտում, սակայն մինչ այսօր ձևավորված չէ մի ընդհանուր մոտեցում, որը, կարողանա համատեղել նրա մասին տարբեր տեսակետների, մոտեցումների և պատկերացումների ամբողջությունը: Ընդհանուր կարծիք ձևավորված չէ նաև քաղաքացիական հասարակության ո՞չ «ավանդական» տարբերիչ հատկանիշների, ո՞չ էլ ինստիտուցիոնալ ու ֆունկցիոնալ և այլ առանձնահատկությունների մասին:

Քաղաքացիական հասարակության տարբեր կողմերի ուսումնասիրությանը նվիրված հրապարակումների, նրա շուրջ քաղաքական ու հասարակական գործիչների շուրթերից հաճախ հնչող հարցադրույցների բովանդակությունից դժվար է կռահել, թե խոսքը ինչպիսի հասարակության մասին է, քանի որ, նման դեպքերում, որպես կարգ, հստակ ցույց չեն տրվում նույնիսկ նրա հիմնական բնութագրիչ հատկությունները: Ի վերջո, խոսքը ինչպիսի հասարակության մասին է: Ինչնով է այն տարբերվում սովորական «դասական» հասարակությունից, որը գիտական գրականությունում լայն իմաստով ավանդաբար սահմանվում է որպես «պատմականորեն ձևավորված մարդկանց համատեղ գործունեության ձևերի ամբողջություն», իսկ նեղ իմաստով որպես «սոցիալական համակարգի պատմական կոնկրետ տիպ» [1]:

Ակամայից հարց է ծագում, թե ինչու՞ է այն կոչվում քաղաքացիական, այլ ոչ թե, օրինակ, զարգացած ժողովրդավարական հասարակություն, կամ այլ

կերպ: Իրականում «քաղաքացիական» եզրույթը հասարակության նկատմամբ կիրառելը ոչ միայն «հաջողված չէ», այլև ինչ որ չափով մոլորեցնող է: Քանզի այն, ի տարբերություն «մարդ» հասկացության, իրավունքում նշանակում է անձի անխզելի կապ պետության, այլ ոչ թե հասարակության հետ: Դա, ինչպես իրավացիորեն նշում է Ե. Չիրկինը, «պետության և անձի հատուկ կապ է, անձի իրավական վիճակ, որը քաղաքացու, որպես քաղաքական խմբակցության անդամի, և պետության միջև առաջացնում է որոշակի փոխադարձ իրավունքներ և պարտականություններ» [2]:

Հասարակության նկատմամբ կիրառվող «քաղաքացիական» եզրույթը ժառանգվել է հռոմեական *civilis*-ից, կիրառվել Արևմտյան Եվրոպայի երկրներում և քաղաքացիական հասարակության գաղափարի հետ միասին փոխանցվել մեզ: Անգլիական տարբերակով «քաղաքացիական» եզրույթը սովորաբար օգտագործվում է շեշտելու դրա և «զինվորական», «քրեական» եզրույթների միջև տարբերությունը: Որոշ դեպքերում (կենցաղում) նրան տրվում է առավել մեղմ (նուրբ) երանգավորում, ինչպես «դաստիարակված», «քաղաքավարի» նշանակություն և այլն: Համապատասխանաբար այս դիրքերից հասարակությունը դիտարկվում է որպես «ներքուստ փոխկապված և որոշակի կառավարման համակարգով օժտված քաղաքացիների համակեցություն», կամ պարզապես «մարդկանց միություն, համատեղ բնակվող մարդկանց ամբողջություն» [3]:

«Քաղաքացիական հասարակություն» երևույթը այս տերմինաբանությամբ ընդունելուն զուգահեռ, անհրաժեշտ է առավել ճշգրիտ կողմնորոշվել այն բանում, թե ինչ հասկանանք այս տեսակի հասարակության ներքո (հասարակության զարգացածության աստիճան, ձև, տարատեսակ և այլն), որի կառուցումը մեր երկրում դիտվում է ընդհանուր քաղաքականության խնդիրներից մեկը, եթե ոչ կարևորագույնը: Ընդ որում եթե սահմանափակվենք «քաղաքացիական» ֆենոմոնի անգլո-ամերիկյան մեկնաբանությամբ և բոլոր ջանքերը ուղղենք «ոչ քրեական», «ոչ զինվորական» կամ «դաստիարակված» հասարակության ստեղծմանը, ապա դա կլինի ակնհայտ անբավարար անկախությունից ի վեր պետության և հասարակության առջև ծառացած ազգային կարևոր նպատակներից մեկի՝ իրական քաղաքացիական հասարակության ձևավորման ու կայացման համար: Կարևոր է, որ այս նպատակը չնմանեցվի դեռևս խորհրդային տարիներին ոչ այնքան հասկանալի կոմունիզմի կառուցմանը կամ գորբաչովյան «Ժողովրդավարական» վերակառուցման, որոնք, թե ինչով ավարտվեցին, հայտնի է: Ասվածից հետևում է հետևյալ պրակտիկ և տասական հարցը՝ քաղաքացիական հասարակության կառուցումը երազանքների ժանրից չէ արդյո՞ք, դրա իրականացումը հնարավոր է, հասու՞ է, թե այն, որպես հույժ ցանկալի մարդասիրական երևույթ, ինչպես ազդարարվում է, պարզապես հերթական գրավիչ տեսությունների շարքից է: Գիտական միտքը այս հարցին դեռևս միանշանակ պատասխան չի տվել: Ընդ որում, եթե որոշ հեղինակներ գտնում են, որ Քաղաքացի-

ական հասարակությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ «վերացական կոնստրուկցիա («ցիվիլիզմ»), որից դժվար է օգտվել իրական հասարակության, պետության և իրավունքի խնդիրները ուսումնասիրելի» [4], ապա այլոք այլ կարծիք ունեն: Մասնավորապես, նրանք քաղաքացիական հասարակությունը միաժամանակ դիտարկում են և որպես տեսական կոնստրուկցիա, ավելի ճիշտ ձևավորված գիտական կատեգորիա, և որպես գոյություն ունեցող կամ ձևավորվող երևույթ՝ հասարակություն: Քաղաքացիական հասարակության նկատմամբ այսպիսի մոտեցման տիպիկ օրինակ կարող է ծառայել այն սահմանումը, համաձայն որի այն դիտարկվում է որպես «հասարակական կոմունիկացիաների և էմոցիոնալ կապերի, սոցիալական ինստիտուտների ու արժեքների, որոնց հեղինակը քաղաքացին և քաղաքացիական միախմբություններն են, ամբողջություն» [5], կամ երբ քաղաքացիական հասարակությունը սահմանվում է որպես «ինքնակամ ոչ պետական ինստիտուտների և հասարակության հոգևոր, սոսիալական, տնտեսական, քաղաքական կյանքում առաջացած հարաբերությունների ամբողջություն, որոնք արտահայտում ու պաշտպանում են տարբեր մարդկանց խմբերի պահանջմունքները, արժեքները և տարաբնույթ շահերը, քաղաքացիների ինքնագործունեության և ինքնաիրացման ոլորտ, նպատակ ունենալով լուծել իրենց կարևոր կենսական հարցերը և խնդիրները, պաշտպանել իրենց անքակտելի իրավունքները և ազատությունները» [6]: Այլ հեղինակների խումբ փիլիսոփայական-վերացական և, միաժամանակ, իրական կյանքի տեսանկյունից քաղաքացիական հասարակությունը դիտարկում է որպես «ոլորտ, որտեղ ժամանակակից մարդը օրինական կարգով բավարարում է իր սեփական շահերը և զարգացնում իր անհատականությունը, միաժամանակ գիտակցելով համատեղ գործելու, սոցիալական համերաշխության և իր բարեկեցությունը հասարակության մյուս անդամներից կախված լինելու նշանակությունը, որոնցից ընդօրինակում է քաղաքացիության հմտություններ ու պատրաստակամություն՝ մասնակցելու պետության քաղաքական ակցիաներին» [7]:

Հայրենական գիտական միտքը քաղաքացիական հասարակությունը սահմանում է որպես «ինքնակառավարվող մեխանիզմ, իր մեջ ներառում է բարոյական, իրավական, տնտեսական, քաղաքական հարաբերությունների ամբողջությունը, ինչպես նաև սեփականությունը, աշխատանքը, ձեռներեցությունը, հասարակական կազմավորումների գործունեությունը, կրթության, գիտության, մշակույթի, ընտանիքի բնագավառները, զանգվածային լրատվության միջոցները, մարդկանց վարվելակերպի չգրված կանոնների բնագավառները և այլն» [8]:

Քաղաքացիական հասարակության այսպիսի նմանակման շարքին կարելի է դասել որոշ հեղինակների դատողություններ, երբ, մի դեպքում, քաղաքացիական հասարակությունը ներկայացվում է որպես վաղբորժուական հասարակության հոմանիշ, մյուս դեպքում՝ որպես շուկայական մեխանիզմ [9]:

Վերջապես, քաղաքացիական հասարակության խնդիրների լուծման տարբեր մոտեցումների և հայեցակարգերի առկայությունը օժանդակում է հետազոտվող նյութի վերաբերյալ գիտելիքների կուտակմանը և քաղաքացիական հասարակության իրական պատկերը արտացոլող ամբողջական, ադեկվատ պատկերացումների ձևավորմանը:

Մեր կարծիքով քաղաքացիական հասարակության հասկացությունը առավել լակոնիկ կարել է ձևակերպել որպես պետությունից անկախ, սակայն նրա հետ համագործակցող, ինքնակառավարման վրա հիմնված սոցիալ-տնտեսական և քաղաքական հարաբերությունների համակարգ է, տարատեսակ հատկանիշներով միավորված քաղաքացիների ոչ պետական մեկուսախումբ, որը գործում է սոցիալական արդարության գոյակարգի, ազատության պայմաններում, և որի գլխավոր նպատակը մարդու նյութական ու հոգևոր պահանջմունքների բավարարումն է՝ ի շահ յուրաքանչյուրի և բոլորի:

Տարբեր երկրներում քաղաքացիական հասարակության կառուցման փորձի և գիտական մտքի, տարբեր հեղինակների հետազոտությունների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել նրա հետևյալ առանձնահատկությունները՝ հիմնական բնութագրիչները:

Առաջին, առանց բացառության հասարակության բոլոր անդամների նյութական ապահովվածության բարձր մակարդակ և դրա հետ անխզելիորեն կապված նրանց ընդհանուր և իրավական կուլտուրայի բարձր մակարդակ, ինչպես նաև դրանց համապատասխան իրավագիտակցության մակարդակ: Այս ելակետային և միաժամանակ վճռական պահանջների միջև չկա ուղղակի հիերարխիկ փոխկապվածություն: Սակայն, ինչպես ցույց է տալիս հետխորհրդային Հայաստանի և մյուս երկրների փորձը, նրանց միջև որոշակի կապի առկայությունը ակնհայտ է: Հարցի համատեքստում եթե փորձենք վերլուծել վերջին երեսուն տարիների ընթացքում տեղի ունեցած զարացումների շարժը մեծ երկրում, ապա կտեսնենք, որ այն նպաստավոր չէր քննարկվող արժեքների ձևավորման համար: Տնտեսության կտրուկ անկման, պատերազմի և այլ հայտնի պատճառներով պայմանավորված, 1990-րին կտրուկ անկում ապրեց նաև բնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակը, որը Ն. Սակալովի կողմից ընկալվում է որպես «պատմականորեն ձևավորված համամարդկային հոգևոր-բարոյական արժեքների համակարգ, համաձայն որի կերտվում է կյանքի ոճը և իրականացվում է մարդկանց միջև հարաբերությունների կարգավորում» [10], և դրա հետ մեկտեղ նույն ճակատագրին արժանացավ իրավական կուլտուրան, հանդես գալով որպես ընդհանուր կուլտուրայի բաղկացուցիչ մաս, և հասարակության ճնշող մասի իրավագիտակցությունը, որպես մարդկանց կյանքի մակարդակի աղետալի նվազեցման արդյունք: Ավելին, իրադրությունը առավել բարդացավ կոռուպցիայի անհավանական արմատավորմամբ, որի պարագայում իրավունքի, օրենքի նկատմամբ մարդկանց հավատը և վերաբերմունքը գրեթե

հավասարվեց զրոյի: Իհարկե, քաղաքացիական հասարակության անկապտելի հատկանշ՝ բնակչության ընդհանուր և իրավական կուլտուրայի և դրա հետ մեկտեղ իրավական գիտակցության անկումը ամենևին էլ չէր մշանակում, որ դրանք բացակայում են ընդհանրապես: Մարդը, անկախ այս կամ այն իրավիճակից, գիտակցական մակարդակից, օժտված է այս կամ այն մակարդակի կուլտուրայով, չի կարող չունենալ իրավագիտակցություն, հատկապես եթե հասկանում է, որ բացի իրենից այս աշխարհում կան նաև այլ մարդիկ:

Մեր երկրում, չնայած տարաբնույթ վերիվարումներին, 1990թ-ց ի վեր հարափոփոխ իրավակարգի պատմությունը զարգացավ ըստ երկրաչափական պրոգրեսիայի՝ պետական համակարգը, տնտեսությունը, իրավական դաշտը, դատական համակարգը և պետական ու հասարակական կյանքի մյուս ոլորտները, հատկապես 2018թ. հետո, ձեռք են բերել նոր, սկզբունքորեն այլ որակներ, որոնք պարարտ հիմք են քննարկվող արժեքների արմատավորման ու առաջնացի համար, առանց որոնց քաղաքացիական հասարակության կայացումը կդոփի տեղում:

Երկրորդ, սոցիալական ընդհանրության, որը կոչվում է քաղաքացիական հասարակության, ինքնակազմավորման, ինքնակառավարման բարձր աստիճան:

Ինքնակազմակերպումը որպես երևույթ և գործնառն բմորոշ է ցանկացած սոցիալական ընդհանրությանը: Ավելն, փիլիսոփայական գրականությունում, ինչպես հայտնի է, այն ներկայացվում է որպես ընդհանուր «տիրող միտում», հակադրված ապակառուցողականությանը ոչ միայն հասարակության, այլ նաև բնության մեջ: Ընդ որում նշվում է, որ «հասարակության և բնության ինքնակազմակերպումը ենթարկվում է որոշակի օրենքների: Այն իրականացվում է արդեն իսկ ստեղծվածի հիման վրա, ունի աստիճանական բնույթ, գնալով բարդանում ու աստիճանաբար արագացնում է իր ընթացքը, և կարող է տեղի ունենալ որոշակի պայմանների հետ փոխգործակցելով և հենվելով այդ պայմանների վրա՝ [11] :

Քաղաքացիական հասարակության ինքնակազմակերպման, ինչպես նաև նրա ինքնակառավարման առաջացման և գոյության այդպիսի պայմաններ պետք է լինեն, բացի հասարակության անդամների բարձր աստիճանի ինքնագիտակցության և ինքնակառավարվող ու ինքնակազմակերպվող միության անհրաժեշտության ու կարևորության գիտակցման, ինչպիսին քաղաքացիական հասարակությունն է, նրանց անմնացորդ համաձայնությունը այդպիսի միավորման նպատականների վերաբերյալ և լայնածավալ սոցիալական փոխհամաձայնություն:

Ընդ որում, որպեսզի ինքնակառավարվող միությունը լինի երկարաժամկետ, այլ ոչ թե վաղանցիկ, նրա անդամների միջև նախապես պետք է միանշանակորեն բացահայտվեն հետևյալ պայմանները.

ա) ինչպիսիք և ինչ՝ ձևերով պետք է իրականացվի միության գործունեությունը և որն է դրա իմաստը, այսինքն ինչպիսի հետևանքներ կլինեն միության մեջ միավորված անձամբ համար,

բ) միության նպատակներին հասնելու համար միավորման անդամները ինչ՝ պետք է անեն,

գ) միության ընդհանուր նպատակները կյանքի կոչելու համար մատչելի ինչպիսի «նյութական բարիքներ» և նվաճումներ պետք է օգտագործվեն,

դ) մասնակցելով միության գործունեությանը նրանք ինչպիսի առավելություններ կստանան և այլն:

Կարծում ենք, որ թվարկված պայմանները կանխորոշիչ նշանակություն ունեն քաղաքացիական հասարակության ինքնակազմակերպման և ինքնակառավարման ապահովման գործում, անկախ այն բանից, թե այն որ մակարդակի միություն է՝ ազգային, տարածքային, թե գլոբալ:

Երրորդ, քաղաքացիական հասարակության հարաբերական ինքնուրույնությունը և ինքնաբավությունը: Հայրենական իրավաբանական գրականության մեջ սովորաբար առավել ուշադրության է արժանանում հասարակությունից՝ պետության հարաբերական ինքնուրույնության և օտարվածության հարցերի ուսումնասիրությունը և ակնհայտ անուշադրության է մատված հարցի հակառակ կողմի ուսումնասիրությունը: Այսինքն՝ հասարակության հարաբերական ինքնուրույնությունը ինչպես պետությունից, այնպես էլ այլ տարբեր միջպետական և վերպետական ինստիտուտներից: Քաղաքացիական հասարակության ինքնուրույնությունը, և դրա հետ մեկտեղ նաև ինքնաբավությունը, արտահայտվում են տարաբնույթ ձևերով ու դրսևորվումներով:

- ընձեռնված հնարավորություն ունենալ իր սեփական (միասնական) շահերը և անհրաժեշտության դեպքում ընդունակություն պաշտպանել դրանք,

- ընդունակություն լինել հարաբերականորեն անկախ պետական և այլ կառույցներից, երբ որոշվում են ամբողջ հասարակությանը և նրա առանձին ինստիտուտներին վերաբերող հարցեր,

- պետության զարգացման մակարդակի և բնույթի պայմանավորվածությունը քաղաքացիական, նաև հավասարապես ցանկացած այլ հասարակության զարգացումով ու բնույթով [12]: Հարցը առավել պարզորոշ դարձնելու համար հիշատակենք Կ. Մարկսի հետևյալ անգնահատելի միտքը. «Վերցրեք մարդկանց արտադրական ուժերի զարգացման որոշակի մակարդակ, և փոխանակման ու սպառման որոշակի ձև կստանաք: Վերցրեք արտադրության, փոխանակման ու սպառման որոշակի աստիճան, և կստանաք հասարակական կարգ, ընտանիքի, դասերի, դասակարգերի որոշակի կազմակերպվածություն, այսինքն՝ քաղաքացիական հասարակություն: Վերցրեք որոշակի քաղաքացիական հասարակություն, և կստանաք որոշակի քաղաքական կարգ, որը լոկ քաղաքացիական հասարակության արտահայտությունն է» [13]: Պրակտիկ

կյանքում բազմաթիվ անգամ ստուգված և հաստատված այս դրույթները այժմ էլ են արդիական: Խոսելով քաղաքացիական հասարակության հարաբերական ինքնուրույնության և ինքնաբավության փոխկապվածության ու փոխկապվածության մասին, ուշադրությունից դուրս չպետք է թողնել լայն հանգամանքը, որ դրանք կանխորոշված են մեկը մյուսով: Պրակտիկ առումով դա նշանակում է, որ քաղաքացիական հասարակության ինքնուրույնությունը ամբողջ ծավալով կախված և պայմանավորված է նրա ինքնաբավության մակարդակով, այսինքն՝ ունակությամբ ինքնուրույն, առանց որևէ կողմնակի օգնության, առավել ևս արտաքին ճնշումների՝ պետական, միջպետական և վերապետական ինստիտուտների կողմից, լուծել իր հարցերը և խնդիրները, և հակառակը:

Չորրորդ, քաղաքացիական հասարակության կառուցումն ու գործառնումը այնպիսի ժողովրդավարական հիմքի վրա ինչպիսիք են՝

- քաղաքացիական հասարակության անդամների իրավահավասարությունը հասարակության կյանքի բոլոր ասպարեզներում և հավասարությունը քաղաքականության, իրավունքի և մի շարք այլ ոլորտներում,

- քաղաքացիների իրավունքների և ազատությունների իրական և բազմակողմանի երաշխավորվածությունը,

- գիտության, կրթության, առողջապահության, մշակույթի զարգացման համար անհրաժեշտ նյութական և մնացած այլ պայմանների ձևավորումը, և քաղաքացիների այնպիսի դաստիարակությունը, որ լինեն էությանմբ ազատ, կիրթ, բարոյապես մաքուր և սոցիալապես ակտիվ, օրենքի առջև պատասխանատու,

- քաղաքական և գաղափարախոսական բազմազանության սկզբունքը, որը թույլ է տալիս քաղաքացիներին ոչ միայն կիսել ցանկացած կարծիք և կողմնակից լինել ցանկացած աշխարհայացքի, այլ նաև ազատորեն ստեղծել քաղաքական կուսակցություններ և շարժումներ, ինչպես նաև միավորվել կոալերիտիվներում, արհմիություններում և այլ հասարակական կազմակերպություններում:

Հինգերորդ, քաղաքացիական հասարակության սկզբնական տարբերակի հիմքը ազատականության գաղափարախոսությունն էր, իսկ այժմեականին՝ նորազատականության գաղափարախոսությունը:

XX-րդ դարի վերջին տասնամյակների ընթացքում արևմտյան քաղաքագիտությունում և սոցիոլոգիայում տիրապետում էր սոցիալ-քաղաքական և տնտեսական մտքի նորազատական տարբերակը և այն որպես փիլիսոփայական հիմք էր ծառայում քաղաքացիական հասարակության արդիականացված կառուցվածքի համար: Սակայն XX-րդ դարի վերջում և XXI դարի սկզբում, ինչպես փաստում են հետազոտողները, վերջին տարիների ճգնաժամերը (1997-1999թթ., իսկ հետո 2001-2003թթ.) նորազատական տեսությանն ու պրակտիկային հասցրին անդառնալի հարված: Այդ ճգնաժամերը

վկայեցին այն մասին, որ նորազատականությունը սկսում է թուլանալ, մարել:

Նորազատականության ճգնաժամը անխուսափելիորեն իր հետևից կրքերի դրա տարբեր ձևերի վերափոխված տեսակներ, որն էլ անհրաժեշտություն կդարձնի ուղղումներ մտցնել ժամանակակից քաղաքացիական հասարակության պատկերացումների մեջ: Թվարկված հատկանիշներից բացի, քաղաքացիական հասարակությունը հասարակ հասարակությունից տարբերող առանձնահատկություն պետք է դիտարկել նաև նրա ձևավորման և գործառնության հիմնական նպատակը՝ մարդու նյութական և հոգևոր պահանջմունքների բավարարումը, նրա ազատ բազմակողմանի զարգացման համար պայմաններ ստեղծելը, որպես հիմնական գործառնություն՝ հասարակության անդամների համայնացումը, սոցիալական ինտեգրացիան, պետության և տարբեր սոցիալական խմբերի ու անհատների միջև ծագող լարվածության թուլացումը և այլն, և, վերջապես, քաղաքացիական հասարակությունն իր բնույթով համարվում է որպես իրավական մշակույթի և իրավական վարքի տիպ:

Գրականության ցանկ

1. Советский энциклопедический словарь. М., 1980. С. 923.
2. Чиркин Б.Е. Общечеловеческие ценности и государство//Государство и право. 2002. № 2. С. 10.
3. Webster's New Universal Unabridged Dictionary. P. 331. TheAdvanced Leanners Dictionary of Current English. Oxf.,1998.P.167.
4. Чиркин Б.Е. Общечеловеческие ценности и государство//Государство и право. 2002. № 2. С10.
5. Парасюк Е. А. Качественные характеристики гражданского общества: современный подход//Юридические науки в начале третьего тысячелетия. Материалы науч.-практической конференции. Майкоп. 2004. С. 76.
6. Энциклопедия государственного управления в России (под общ. ред. В. К. Егорова, отв. ред. И. Н. Барциц. М., 2004. Т. 1. С. 251.
7. Pelczunski Z. Solidarity and the Rebirth of Civil Society in Poland. 1976-81, Keane J. Democracy and Civil Society. L., 1988. P. 364.
8. Այվազյան Ն.Ա. ՀՀ սահմանադրական իրավունք: Երևանի պետական համալսարանի հրատարակչություն: 2008, էջ 120:
9. Avineri Sh. Hegels Theory of the Modern State. Cambr.1972.P. 12.
10. Право культура (отв. ред. Н. С. Соколова. М., 2002. С. 385.
11. Ковалев А. М.Общество-развивающийся организм. Т.4.Идеи, размышления, гипотезы. М., 2000. С.13.
12. Гулиев В. Е., Колесников А. В. Отчужденное государство. М., 199
13. Маркс К., Энгельс Ф. Сочинения. Том 13. Страница 135.

Степанян Г. - ОТЛИЧИТЕЛЬНЫЕ ЧЕРТЫ И ОСОБЕННОСТИ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА. Даны определения традиционного и гражданского общества. Указаны и интерпретированы те особенности и признаки гражданского общества, в силу которых оно отличается от простого общества, и приобретает только ему присущие качества.

***Ключевые слова.** Гражданское общество, особенности, признаки, определение, традиционное общество, самоуправляющиеся объединения, самодостаточность.*

Stepanyan H. - DISTINGUISHING FEATURES OF CIVIL SOCIETY. In the article, definitions of traditional and civil society are given. The features and characteristics of civil society, by virtue of which it differs from ordinary society, and acquires qualities inherent only to it, are indicated and interpreted.

***Key words:** Civil society, peculiarities, features, definition, traditional society, self-governing associations, self-sufficiency*

ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՐԴԸ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Գրիշա Առաքելյան

Սան-Պաուլոյի համալսարան, Երևանի Հայրուսակ համալսարան
Ընդունված է պապագրության 03.06.2023

Ամփոփագիր. 1946թ. սեպտեմբերի 19-ին Կյուրիխի համալսարանում Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը սկիզբ դրեց Եվրոպական իրավական համակարգի ձևավորմանը: Իր գոյության 73 տարիների ընթացքում եվրոպայի խորհուրդը համալրվեց արևելյան եվրոպայի երկրներով և մի շարք հետխորհրդային հանրապետություններով: Իր գոծունեության ընթացքում ԵԽ-ն մշակեց և ընդունեց 200-ից ավել կոնվենցիաներ և կից արձանագրություններ, որոնք հիմք հանդիսացան եվրոպայի խորհրդի իրավունքի շարունակական կայացմանը և զարգացմանը: Խնդրո առարկա հոդվածում փորձ է արվում վերհանել եվրոպայի խորհրդի իրավունքի և մարդու իրավունքների միջև օրգանական կապը և դրա նշանակությունը ժամանակակից իրավական համակարգում:

Հիմնաբառեր. Եվրոպական կոնվենցիա, կից արձանագրություններ երկրորդ աշխարհամարտ. եվրոպայի խորհրդի իրավունք:

Չնայած նրան, որ Եվրոպայի խորհրդի, որպես համաեվրոպական կառույցի, մասին բազմաթիվ աշխատություններ են լույս տեսել, այդուհանդերձ կազմակերպության իրավական գործառնությունների լայնածավալ ուսումնասիրությունները շարունակում են մնալ խնդրահարույց: Ահա թե ինչու այսօր անհրաժեշտ է շարունակել եվրոպայի խորհրդի իրավական հենքի համակողմանի ուսումնասիրությունը՝ ժամանակի պահանջներին համահունչ: Ի տարբերություն եվրոպական միության իրավունքի, եվրոպայի խորհրդի իրավունքը իրենից ներկայացնում լիարժեք իրավաբանական համակարգ և համարվում է միջազգային իրավունքի կարևորագույն բաղադրիչ՝ հիմք ընդունելով եվրոպայի խորհրդի կանոնադրությունը: Անշուշտ եվրոպայի խորհրդի հիմնադրմանը հաջորդած տարիների ընթացքում այն մեծ փոփոխությունների է ենթարկվել՝ հատկապես այն պատճառով, որ կազմակերպությունը համալրվել է նոր անդամներով, որն իր հերթին պահանջել է նոր չափանիշների ընդունում՝ տարածաշրջանային կոնվենցիաների տեսքով: Այն առնչությամբ անհրաժեշտ է նշել, որ կոնվենցիաների մշակումը և ընդունումը ժամանակատար է և պահանջում է ջանք և եռանդ բոլոր մակարդակներում: Խնդրո առարկա հարցի հետ կապված հաճախ են հիշատակվում ԵԽ 10 հիմնադիր անդամների համակարգված և համապարփակ մոտեցումները, որոնց շրջանակում առանձնակի դեր է ունեցել Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլի հիմնարար ելույթները 1946 թ. սեպտեմբերի 19-ին Կյուրիխի համալսարանում և 1948 թ Հաագայի կոնգրեսում: Իր ելույթները վարչապետը անդրադառնում էր

Եվրոպական համակարգի ստեղծման անհրաժեշտությանը, որի հենքում պետք է ամրագրվեր խաղաղությունը և անվտանգությունը որպես հիմնարար սկզբունքները: Միաժամանակ Չեռչիլը պնդում էր, որ անհրաժեշտ է ստեղծել այսպես կոչված «Եվրոպայի միացյալ նահանգներ»՝ աստիճանաբար ներառելով եվրոպայի բոլոր պետություններին: Նա կարծում էր, որ այդ խնդրում առաջնորդի դեր պետք է ստանձնեն Գերմանիան և Ֆրանսիան: Այս կապակցությամբ վարչապետը առանձնակի տեղ էր հատկացնում Մեծ Բրիտանիային և ԱՄՆ-ին: Տեղին է նշել, որ Չեռչիլի այդ մոտեցումները բացասական ընդունվեցին խորհրդային միության կողմից: Հատկապես ցավոտ ընկալեցին Հազայի կոնգրեսի արդյունքները, որտեղ նախագահում էր Չեռչիլը, և որին մասնակցում էին 1000-ից ավել պատվիրակներ այդ թվում եվրոպայի 19 պետությունների քաղաքական առաջնորդները: Եզրափակիչ փաստաթղթում կոչ էր արվում գումարել համաեվրոպական խորհրդաժողով՝ քննարկելու մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին վերաբերող հարցեր, որոնք պետք է իմի բերվեին համապատասխան կոնվենցիաների և դրանց լրացուցիչ արձանագրությունների մշակման միջոցով: Հարկ է նշել, որ լուրջ տարածայնություններ առաջացան Եխ կանոնադրության իրավական նորմերի ամրագրման կապակցությամբ: Պրակտիկորեն «սեղանի վրա» դրվել էին երկու տարբեր հայեցակարգեր: Ֆրանսիան և Բելգիան պահանջում էին նոր կազմակերպության իրավական հենքում ամրագրել լայն լիազորություններ ունեցող խորհրդարանական վեհաժողովին, սակայն Մեծ Բրիտանիան պնդում էր, որ համապարփակ լիազորություններ պետք է տրվեն բոլոր այն պետություններին, որոնց համապատասխան մարմինների ներկայացուցիչները կներառվեն խորհրդարանական վեհաժողովում: Երկար քննարկումների արդյունքում ընդունվեց փոխզիջումային տարբերակ, ըստ որի վեհաժողովը պետք է ձևավորվի Եխ անդամ պետությունների խորհրդարանական պատվիրակություններից, որոնք պետք է ունենան միայն խորհրդարանական գործառույթներ: Որոշումների կայացման լիազորությունները վերապահվում էին նախարարների միջկառավարական կոմիտեին: Ինչ վերաբերում էր բուն կազմակերպությանը, ապա այն օժտվում էր բազմաբովանդակ գործառույթներով՝ ունենալով սահմանափակ լիազորություններ: Նշված իրավական փաթեթն ամրագրվեց Լոնդոնի վերհաժողովում 1949 թ. մայիսի 5-ին, որին մասնակցում էին 10 եվրոպական երկրներ՝ Բելգիա, Դանիա, Ֆրանսիա, Իռլանդիա, Իտալիա, Լյուքսեմբուրգ, Նիդեռլանդների թագավորություն, Նորվեգիա և Մեծ Բրիտանիա: Այդպիսով եվրոպայում հիմնադրվեց միջկառավարական կազմակերպություն, որի անդամ պետությունները պահպանում էին իրենց ինքնիշխանությունը և խորհրդարանական վեհաժողովում ընդգրկված խորհրդարանական պատվիրակություններն իրենց գործառույթներով:

Գործնական առումով Եխ կանոնադրային փաստաթղթերը հնարա-

վորություն էին ընձեռնում ձևավորել քաղաքական մարմիններ և կանոնա-
կարգել դրանց միջև փոխհարաբերությունները: Փաստացի եվրոպայի խոր-
հուրդն այն առաջին միջազգային կազմակերպությունն էր, որն իր անդամ
պետությունների քաղաքացիներին մասնակից դարձրեց իր գործունեությանը
խորհրդարանական վեհաժողովի միջոցով: Այս կապակցությամբ կարևոր է
նշել, որ ԵԽ 1949 թ. կանոնադրությունը, ինչպես նաև կանոնադրային փաս-
տաթղթերը սահմանում են կազմակերպության ներքին իրավունքը, կանոնա-
դրության 1-ին հոդվածի առաջին պարբերությունում. եվրոպայի խորհրդի
նպատակն է հասնել առավել մեծ միասնության իր անդամների միջև՝ իրենց
ընդհանուր ժառանգությունը հանդիսացող, տնտեսական և սոցիալական
առաջընթացը դյուրին դարձնող գաղափարների և սկզբունքների պաշտպա-
նության և իրականացման նպատակով: Երկրորդ աշխարհամարտի հետևանք-
ները եվրոպական երկրների ժողովուրդներին համոզեցին, որ միջազգային
համագործակցությունը կենսական անհրաժեշտություն է նոր հակամարտու-
թյունները կախելու և այնպիսի նախապայմաններ ստեղծելու համար, որոնք
կնպաստեն պետությունների համատեղ արդյունավետ աշխատանքին: Այդպի-
սով եվրոպայի խորհրդի առաջին խնդիրն ընդհանուր ժողովրդավարական
արժեքներ դաժանող և անձի ազատության, քաղաքական ազատությունների
և իրավունքի գերակայության գաղափարների վրա հիմնված եվրոպական
պետություններին համախմբելն էր: Այսպիսով, եվրոպայի խորհուրդը վերած-
վեց լիբերյալ ժողովրդավարությանն արևմտյան եվրոպայի համախմբված
նվիրումի խորհրդանիշ և մարմնացում: Կարևոր գործառույթ է համարում այն,
որ ԵԽ իր անդամ պետություններին տնտեսական և սոցիալական աջակցու-
թյուն է ցուցաբերում: Այս կախակցությամբ եվրոպայի խորհրդի իրավական
գործունեության շրջանակն այնքան ընդգրկումն է, որ մշտապես պատրաստ
է պատասխանատվություն կրել անդամ պետությունների միջև ողջ համագոր-
ծակցության համար: Կանոնադրության 1-ին հոդվածում նշվում է, որ կազմա-
կերպությունը հետամուտ է ընդհանուր մտահոգության առարկա հարցերի
քննարկման: Մարդու ԵԽ անդամ պետությունների ներկայացուցիչները, աշ-
խատակազմը ունեն արտոնություններ և անձեռնմխելիություն, որոնք ամրա-
գրված են կանոնադրության 40-րդ հոդվածում: Ավելին, 1949 թ. եվրոպայի
խորհրդի արտոնությունների և անձեռնմխելիությունների գլխավոր համաձայ-
նագրում և 1952 թ. թիվ 10 արձանագրությունում մանրակրկիտ սահմանում են
դրանք: Ըստ նշված գլխավոր համաձայնագրի՝ ԵԽ իրավաբանական անձի
կարգավիճակ ունի: Նա կարող է պայմանագրեր կնքել, ձեռք բերել շարժական
և անշարժ գույք, հանդես գալ դատարաններում: Նշված համաձայնագիրը նաև
մանրամասնում է արտոնությունները և անձեռնմխելիությունները, որոնցից
օգտվում են նախարարների կոմիտեի անդամները՝ իրենց գործառույթներն
իրականացնելիս և հանդիպումների կազմակերպելիս: Այս արտոնություններն
ու անձեռնմխելիությունները ստեղծված են նրանց անկախությունը և խոսքի

լիակատար ազատությունը երաշխավորելու նպատակով: Այսպիսով կոմիտեի անդամներին չի կարելի ձերբակալել կամ ազատագրել, նրանց անձնական իրերը ենթական չեն առգրավման և չեն կարող հետապնդվել պարտավորությունների կատարման ընթացքում իրականացված գործողությունների համար: Անձեռնմխելի են նրանց գրագրությունները և փաստաթղթերը: Ինչ վերաբերում է խորհրդատվական վեհաժողովի անդամներին, ապա նրանք նույնպես օգտվում են արտոնություններով և անձեռնմխելիությամբ: Որևէ սահմանափակում չի կարող կիրառվել վեհաժողովի նիստերին մասնակցելու նպատակով պատգամավորների տեղաշարժի նկատմամբ: Նրանց չի կարելի խուղարկել, ազատագրել կամ հետապնդել արտահայտված կարծիքների կամ քվեարկությունների համար: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորները նույնպես օգտվում են դիվանագիտական արտոնություններից և անձեռնմխելիությունից: Եվրոպայի խորհրդի աշխատակազմը չի կարող հետապնդվել որևէ գործողության համար, որը կատարվում է իր լիազորությունների շրջանակներում: Աշխատակազմի անդամները ազատվում են ֆինանսական հարկումներից: Այդուհանդերձ աշխատակազմի անդամներին անձեռնմխելիությունից (կարևոր է զրկել միայն Եխ գլխավոր քարտուղարը): Եխ կանոնադրության 12-րդ հոդվածի համաձայն կազմակերպության պաշտոնական լեզուներն են անգլերենը և ֆրանսերենը: Միաժամանակ խորհրդարանական վեհաժողովն ունի բազմաթիվ աշխատանքային լեզուներ՝ այդ թվում գերմաներեն, իտալերեն, ռուսերեն: Անհրաժեշտության դեպքում կարող են թարգմանվել:

Եխ իրավունքում առանձնակի նշանակության է տրվում դիտորդի կարգավիճակի ինստիտուտին: Ցանկացած պետություն, որն ընդունում է Եվրոպայի խորհրդի արժեհամակարգը կարող է օժտվել դիտորդի կարգավիճակով:^[1] Այս գործընթացը վերապահված է նախարարների կոմիտեին: Նման կարգավիճակ կարող է տրամադրվել միջազգային միջկառավարական կազմակերպություններին, որոնք ցանկություն ունեն համագործակցելու Եվրոպայի խորհրդի հետ: Ներկա պահին նման կարգավիճակ ունեն ԱՄՆ, Կանադան, Ճապոնիան և Մեքսիկան: Կազմակերպություններից՝ ԵՄ, ԵԱՀԿ, ԱՊԿ: Եվրոպայի խորհուրդը առավել կարևոր նորմ է համարվում «Հատուկ հյուրի» կարգավիճակի շնորհումը: Նման ինստիտուտ ձևավորելու առաջարկն ամրագրվեց 1989 թ. Խորհրդարանական վեհաժողովում: Նմանկարգավիճակ շնորհելու նպատակը այսպես կոչված անցումային շրջանում գտնվող պետություններին (դրանք հիմնականում հետխորհրդային հանրապետություններն էին) ծանոթացնել Եվրոպական արժեքներին՝ հատկապես ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին: «Հատուկ հյուրի» կարգավիճակի շնորհումը նույնպես վերապահված է խորհրդարանական վեհաժողովին, որը պրակտիկորեն իրականանում է բյուրոյի որոշմամբ: Նման կարգավիճակ ունեցող պատվիրակությունները մասնակցում են վեհաժողովի աշխատանքներին՝ խորհրդակ-

ցական ծայնի իրավունքով: Պատմական փորձը ցույց է տալիս, որ նման պատվիրակություն ունեցող երկրները աստիճանաբար դառնում են եվրոպայի խորհրդի լիարժեք անդամներ:

Եխ իրավունքում առանցքային տեղ է զբաղեցնում խորհրդարանական վեհաժողովը: Այս առնչությամբ Լոնդոնում 1949թ. կայացած համաժողովում առաջարկում էր վեհաժողովին տալ խորհրդակցական ծայն իրավունք: Փաստացի նման կարգավիճակով վեհաժողովը հանդես եկավ մինչև 1974թ., որից հետո կառույցը որոշիչ քայլ կատարեց՝ հրաժարելով խորհրդակցական պիտակից և վերանվանվելով խորհրդարանի վեհաժողովի: Այսուհանդերձ միայն 1994 թ. նախարարների կոմիտեն հաստատեց նոր անվանումը: Սակայն նոր իրավական կարգավիճակը որևէ ազդեցություն չունեցավ վեհաժողովի գործառնությունների վրա: Այն շարունակում էր մնալ որպես խորհրդակցական մարմին և զրկված էր անմիջական վերահսկողությունից Եխ գործունեության նկատմամբ: Աստիճանաբար վեհաժողովը ամրապնդեց իր դիրքերը, որին նպաստեց Եխ անդամ պետությունների խորհրդարանական պատվիրակություններից ձևավորված գործուն: Պրակտիկորեն կառույցը վերածվեց լայնածավալ նշանակություն ունեցող եվրոպական հարթակի: Վեհաժողովի գործունեության բնագավառում կարևորվում է այն իրավական մեխանիզմը, համաձայն որի կարող է չհավաստագրվել և չվավերացվել ազգային խորհրդարանական պատվիրակության կազմը ինչպես նաև զրկել վեհաժողովի աշխատանքներին մասնակցելուց [2]: Միաժամանակ վեհաժողովը կարող է պատժել ստանձնած պարտավորությունները և հանձնարարությունները պատշաճ չկատարելու և վերահսկման գործընթացում համագործակցություն չտրամադրելու դեպքերում: Այն տեղի է ունենում համապատասխան բանաձևի ընդունման միջոցով: Որպես կանոն վեհաժողովը ձևավորում է հանձնաժողովներ և կոմիտեներ, ուսումնասիրությունների և քննարկումների արդյունքում զեկույցներ են պատրաստում և ներկայացնում հրատապ լուծում պահանջվող խնդիրների վերաբերյալ: Միաժամանակ կոմիտեները կարող են ստեղծվել ենթակոմիտեներ՝ որոշելով դրանց աշխատանքային իրավասությունների շրջանակը: Վեհաժողովը տարվա ընթացքում գումարում է մեկ նստաշրջան՝ բաղկացած չորս մասնակի նստաշրջաններից, որոնցից յուրաքանչյուրն անցկացվում է մեկ շաբաթյա տևողությամբ և գումարվում են հունվար, ապրիլ, հունիս և սեպտեմբեր ամիսների վերջերին: Վեհաժողովի ընթացիկ նստաշրջանները տեղի են ունենում եվրոպայի խորհրդում, Ստրասբուրգում: Կանոնադրության համաձայն վեհաժողովը կարող է գումարել արտահերթ նստաշրջան, նախարարների կոմիտեի կամ վեհաժողովի նախագահի նախաձեռնությամբ: Վեհաժողովի քննարկումները բաց են և երբեք չեն գումարվել դոնփակ, չնայած կանոնադրությունը այն թույլ է տալիս: Կարևոր իրավական նշանակություն է տրվում վեհաժողովի և նախարարների կոմիտեի փոխգործակցությանը: Վեհաժողովի նախաձեռնությամբ նախարարների կոմիտեն անդրադառնում է եվրոպայի խորհրդի նպատակները

խթանող անրաժեշտ միջոցառումներին [3]: Այս կապակցությամբ կոմիտեն պարտավոր է միջոցներ ձեռնարկել վեհաժողովի առաջարկությունների վերաբերյալ, որոնք կարող են լինել դրական կամ բացասական: Նախարարները իրավասու են մասնակցել վեհաժողովի կամ նրա կոմիտեների աշխատանքներին և կարող են ելույթ ունենալ անհրաժեշտության դեպքում: Իրավական տեսանկյունից վեհաժողովին վերապահված չէ որևէ վերահսկողություն սահմանում կոմիտեի նկատմամբ: Այդուհանդերձ կոմիտեն հաշվետու է իր կողմից կատարվող գործողությունների և որոշումների համար: Խնդրո առարկա բնագավառի հետ օրգանապես կապված է այն, որ վեհաժողովի անդամների կողմից առաջադրված գրավոր և բանավոր հարցերին կարող է պատասխանել այն անդամ պետության նախագահը, որի ներկայացուցիչը նախագահում է նախարարների կոմիտեին: Բանավոր հարցերին տրվում է բանավոր պատասխան լիազումար նիստի ընթացքում և թույլատրվում է լրացուցիչ հարց, եթե պատասխանը չի բավարարում:

Եվրոպայի խորհրդի կարևոր ձեռքբերումներից է «Վենետիկի հանձնաժողովի» (իրավունքի միջոցով հանուն ժողովրդավարության եվրոպական հանձնաժողով) ձևավորումը: Փաստացի այն հիմնադրեց նախարարների կոմիտեն 1990 թ. մայիսի 10-ին, Բեռլինի պատի փուլումից հետո: Հանձնաժողովին մասնակցում են Եխ բոլոր անդամ պետությունները ինչպես նաև դիտորդի կարգավիճակ ունեցող երկրները: Վենետիկի հանձնաժողովը, որի հեղինակությունը լայնորեն ճանաչված է եվրոպայում, կազմված է միջազգային վարկանիշ ունեցող անկախ փորձագետներից, որոնք ընտրվում են ծողովրդավարական հաստատություններում իրենց ունեցած փորձի կամ իրավունքի և քաղաքագիտության բնագավառում ունեցած ներդրման համար: Նրանք նշանակվում են չորս տարով հանձնաժողովի անդամ պետություններից: Հանձնաժողովը մասնագիտացված է սահմանադրությունների մշակման և վերանայման գործում և լուրջ ներդրում ունի նշված ոլորտում [4]: Այն կենսական նշանակություն է ունեցել արևելյան եվրոպայի և հետխորհրդային երկրներին փորձագիտական խորհրդատվություն տրամադրելու առումով՝ երաշխավորելով նրանց նոր սահմանադրությունների համապատասխանությունը եվրոպական չափանիշներին և օգնելով նրանց կատարել հետագա փոփոխություններ: Այսուհանդերձ այդ կառույցի գործառույթները չեն սահմանափակվում, սահմանադրություններով և ընդգրկում են իրավական գործընթացներ սահմանադրական դատարանների ձևավորման, ազգային փոքրամասնությունների մասին օրենքի մշակման հիմնախնդիրները: Այս ամենի հետ միասին հանձնաժողովը լայնածավալ իրավական օգնություն է ցուցաբերում սահմանադրական դատարաններին:

Եխ իրավունքի ուսումնասիրության կարևոր բնագավառ է համարվում այսպես կոչված GRECO (կոռուպցիայի դեմ պայքարող պետությունների խումբ) գործառույթները: Այն հիմնադրվել է 1999թ. մայիսինընդունված հա-

մաճայնագրով՝ տասնյոթ պետությունների մասնակցությամբ: Այն ապահովում է հակակոռուպցիոն միջոցառումներում կոնկրետ ուղենիշների ներառումը և վերահսկում է դրանց համապատասխանությունը կոռուպցիայի դեմ պայքարի գործողությունների ծրագրի շրջանակներում ընդունված միջազգային իավական փաստաթղթերին:[5] Այն օգնում է վերացնել բոլոր այն բացթողումները և թերությունները, որոնք տեղ են գտել ներպետական հակակոռուպցիոն օրենքներում և գործնական բարեփոխումներ իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի հիմնախնդիրներում:

Գլոբալ առումով եվրոպայի խորհրդի իրավական նորմերը կազմում են հանրային միջազգային իրավունքի որոշակի մաս և երբեմն լրացնում են նրա բաց թողումները: Այս առնչությամբ կարևորվում են դրանք համահունչ դարձնել եվրոպական չափանիշներին: Պրակտիկորեն ձևավորվում է տարածաշրջանային միջազգային իրավունք իր բոլոր բաղադրիչներով: Ձևավորված իրավական դաշտը հնարավորություններ է տալիս եվրոպայի խորհրդին հարաբերությունների մեջ մտնել այլ միջազգային կազմակերպությունների հետ: Այս հարցում հիմնական դերակատարությունը վերապահված է նախարարների կոմիտեին, որը կարող է եվրոպայի խորհրդի անունից ցանկացած միջկառավարական կազմակերպության հետ համաձայնագրեր ստորագրելով այնպիսի բնագավառների վերաբերյալ, որոնք ԵԽ իրավասությունների շրջանակում են: Նման համաձայնագրերը սահմանում են այն պայմանները, որոնց հիման վրա կառուցվելու են հարաբերությունները եվրոպայի խորհրդի և կազմակերպության միջև [6]: Այս կապակցությամբ կարգավորվում է նաև այն, որ նախարարների կոմիտեն ԵԽ անունից համապատասխան պայմանավորվածություններ ձեռք բերել ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների հետ տարբերխնդիրների քննարկման վերաբերյալ: Վերջին 30 տարիների ընթացքում լայնածավալ համագործակցություն է ձևավորվել ՄԱԿ-ի ղեկավար կառույցների, ինչպես նաև ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների և եվրոպայի խորհրդի միջև: Հատկապես կարևորվում է համագործակցությունը, Յունեսկոյի և Առողջապահության համաշխարհային կազմակերպության հետ [7]: Տարածաշրջանային և միջազգային հարաբերությունների բնագավառում առանձնակի նշանակություն է տրվում միջխորհրդարանական փոխհարաբերություններին: Այս կապակցությամբ գոյություն ունեն որոշակի խոչընդոտներ այն առումով, որ խորհրդարանների գործունեությունը չի կարգավորվում հանրային միջազգային իրավունքով և չեն համարվում միջազգային իրավունքի սուբյեկտներ: Սակայն նշվածը չի սահմանափակվում խորհրդարանների դերն ու նշանակությունը միջազգային հարաբերություններում, որի հենքի վրա ստեղծվում են նոր խորհրդարանական վեհաժողովներ: Որպես օրինակ կարելի է նշել եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի(ԵԽԽՎ) բազմակողմ համագործակցությունը ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի հետ: Այսպիսով իր

ստեղծման պահից ի վեր Եվրոպայի խորհուրդը հաջողությամբ սահմանել է եվրոպայի բոլոր պետություններին վերաբերող իրավական համակարգի հիմնարար նորմերը՝ հիմնված իրավունքի գերակայության և մարդու իրավունքների վրա: Փաստացի առաջին երկուսը օրգանապես կապված են երրորդի հետ: Ժողովրդավարությունը Եվրոպայի խորհրդի իրավունքում առանձնակի տեղ է զբաղեցնում և այդ կառույցը տարիներ շարունակ բազմակողմ իրավական օգնություն է ցուցաբերել անդամ պետություններին [8]: Եվրոպայի խորհուրդը Բեռլինի պատի փլուզումից հետո հանդես եկավ որպես նոր իրավաքաղաքացիական համակարգի ճարտարապետներից մեկը: Եվրոպական կազմակերպությունները հանդես եկան փոխլրացման քաղաքականությամբ, որը հնարավորություն ընձեռեց տարածել եվրոպայի խորհրդի իրավական նորմերը ողջ եվրոպական տարածաշրջանում: Ներկա իրավիճակում կաևորագույն խնդիր է եվրոպայի խորհրդի և այլ տարածաշրջանային կազմակերպությունների միջև հարաբերությունները և դրանց շրջանակը: Խնդրահարույց է այն, որ եվրոպական կառույցները ներառում են նույն պետություններին: Այնուամենայնիվ, արևմտյան եվրոպայի պետությունները եվրոպայի խորհրդում և նրանց արևելյան հարևանները շարունակում են տարբերվել իրենց ժողովրդավարությամբ, հիմնարար իրավական սկզբունքների և դատական համակարգերի որակական հատկանիշներով: Այս հենքի վրա հաճախ Եխ ղեկավար կառույցները հիմնավորվում են, որ նոր անդամները պետք է իրականացնեն կոնկրետ ինստիտուցիոնալ բարեփոխումները և ստորագրեն ու վավերացնեն Եխ կոնվենցիաները կարճ ժամանակահատվածում [9-11]: Բարեփոխումների իրականացումը խիստ անհրաժեշտ է, որպեսզի նորանդամ պետությունները հնարավորինս շուտ իրականացնեն անհրաժեշտ պահանջները: Այս կապակցությամբ եվրոպայի խորհուրդը վերածվել է յուրահատուկ իրավական դպրոցի:

Գրականության ցանկ

1. K. Pebes, H. «Human rights and parliamentary democracy in the Parliamentary Assendy, Srasbourg. 2000 pp. 660-678.
2. Polakiewicz J. «Treaty Making in the Concil of Europe, Strasbourg, 1999
3. Schwimmerew., The Euopian Dream, London, Continuum, 2004,
4. Law in Greater Europe, The Hague, 2000. pp. 376-408
5. De Vel, G ang Morkert . T., « Ymprtance and weakness of the Counsil of Europe, The Hague, 2000, pp 345-367
6. Kruger, H.C. and Petrold, H., Law in Greater Europe, Strasbourg, 2011. pp. 175-2010
7. Heinzich Klepes., «Toward a Commor Legal Area.,» The Hague., 2007., pp. 325-352
8. Kennedy, m. and O Halpin, E., EU and The Council of Europe, Strasbourg, Coucil

of Europe Publishing, 2007, pp. 34-45

9. Burbon. J. L, The Council of Europe., Strasbourg, 2005., pp. 317-340.
10. Scwimmer. W. One Europe – a Europe of partners., Strasbourg, 2014., pp. 9-32
11. Shabas, A., The abolition of the death Penalty in International Paw., Cambridge University Press, 2002, pp 297-315.

Араиелян Г. ПРАВА СОВЕТА ЕВРОПЫ И ПРАВА ЧЕЛОВЕКА. Совет Европы был создан 5 мая 1949г. для достижения большего единства между его членами в целях защиты и воплощения идеалов и принципов, являющихся их общим достоянием, а также в целях содействия их экономическому и социальному прогрессу. Основная цель Совета Европы состоит в соблюдении основных принципов прав человека, плюралистической демократии и верховенства закона. Совет Европы стремится к выполнению своего плана действий в сотрудничестве с европейскими и другими международными организациями, в частности, с Европейским союзом и ОБСЕ.

Ключевые слова: Совет Европы, права человека, верховенство закона, ОБСЕ.

Arakelyan G. THE COUCIL OF EUROPE AND HUMAN RIGHTS. The Council of Europe was established on 5 May 1949. To achieve a greater unity between its members for safeguarding and realizing the ideals and principles which are their common heritage and facilitating their economic and social progress. The Council's overall aim is to maintain the basic principles of human rights, pluralist democracy and the rule of law. The Council of Europe seeks implementation of this Action Plan in cooperation with European and other international organizations, notably the European Union and the OSCE.

Key words: Council of Europe, human rights, rule of law, OSCE.

ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Մկրտիչ Մուրադյան

Երևանի Հայրուսակ համալսարան
Ընդունված է տպագրության 03.06.2023

Ամփոփագիր. Սույն հոդվածում քննարկվում է իրավական ակտերի նախագծի նախապատրաստման և գործընթացի ժամանակ ծագած խնդիրները: Հեղինակը ներկայացնում է ՀՀ օրենսդրական բարեփոխումների համապեքսությամբ իրավական ակտերին նվիրված նախագծերի հիմնախնդիրները՝ կարևորելով միջազգային փորձի ուսումնասիրությունը: Առանձնահատուկ ընդգծվում է հանրաքվեի նշանակությունը ու դերակատարությունը՝ որպես ժողովրդի կամքի արտահայտման միջոց:

Նորմատիվ իրավական ակտերի գրագեյր և ճշիպ ընդունումը էապես նպաստում է ժողովրդավարության մակարդակի բարձրացմանը Հայաստանի Հանրապետությունում:

Հիմնաբառեր. իրավական ակտ, հանրաքվե, սահմանադրություն, օրենսդրություն, իրավական նորմ, իրավաստեղծ գործունեություն

1995թ. հուլիսի 5-ին ժողովրդական հանրաքվեով ընդունվեց Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրությունը, որով սկիզբ դրվեց օրենսդրության արմատական վերափոխմանը: Անհրաժեշտություն դարձավ սեղմ ժամկետներում ընդունել նոր օրենքներ և օրենսգրքեր, օրենսդրությունը համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը և համակարգել այն:

Նոր օրենքների մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (2002թ. ապրիլի 3-ին): Այս օրենքով սահմանվում էին ՀՀ իրավական ակտերին ներկայացվող ընդհանուր պահանջները, իրավական ակտերի համակարգը, իրավական ակտերի նախագծերի նախապատրաստման, պետական գրանցման, հրապարակման, ուժի մեջ մտնելու, փորձաքննության, մեկնաբանման ընդհանուր կարգը (հոդ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8) և այլն:

Օրենքի հոդված 2-ը սահմանում էր իրավական ակտերի կացությունը, ըստ որի իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի, Հայաստանի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, պետական կամ համայնքային հիմնարկների, ինչպես նաև իրավաբանական անձանց, դրանց առանձնացված ստորաբաժանումների կամ հիմնարկների օրենքով նախատեսված դեպքերում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած *պաշտոնական գրավոր փաստաթուղթ են*, որով սահմանվում են պարտադիր ճանաչման, պահպանության, պաշտպանու-

թյան, կատարման կամ կիրառման ենթակա իրավունքներ, պարտականություններ, սահմանափակումներ կամ այլ կանոններ[1]:

2018 թ. մարտի 21-ին ընդունվեց «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը, որն կարգավորում է նորմատիվ իրավական ակտի հանրային քննարկման, կարգավորման ազդեցության գնահատման, փորձաքննության, հրապարակման, ուժի մեջ մտնելու, գործողության, փոփոխման, լրացման և գործողության դադարեցման, ինչպես նաև իրավական հակասությունների (իրավական կոլիզիաների) և օրենսդրական բացերի դեպքում իրավական ակտերի նորմերի կիրառման, մեկնաբանման, պարզաբանման հետ կապված հարաբերությունները և օրենսդրական տեխնիկայի կանոնները[2]: Միաժամանակ «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 3-ի ՀՕ-320 օրենքն ուժը կորցրած էր ճանաչվում[3]:

Իրավական ակտը կարող է ունենալ ժամանակավոր կամ մշտական բնույթ, կարող է նախատեսված լինել մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար:

«Իրավական ակտ» հասկացությունը իրավագիտության մեջ ընկալվում է տարբեր իմաստներով:

Առաջին. այն նշանակում է գործողություն, ինչպես իրավաչափ, այնպես էլ ոչ իրավաչափ: Այս իմաստով իրավական ակտն իրավաբանական փաստի տեսակ է, որը ծագում է որոշակի իրավական հետևանքներ ստեղծելու նպատակով:

Երկրորդ. իրավական ակտ ասելով՝ հասկացվում է իրավաբանական փաստ- թուղություն: Այսինքն՝ կամքի ձևավորման և դրսևորման միջոց [4]:

Ըստ օրենքի իրավական ակտերն իրենց բնույթով լինում են նորմատիվ, անհատական (ոչ նորմատիվ) կամ ներքին (լուրյա):

Նորմատիվ իրավական ակտն օրենքով նախատեսված ՀՀ ժողովրդի, ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ՀՀ Սահմանադրությամբ, օրենքով սահմանված դեպքում և կարգով իրենց լիազորությունների շրջանակում ընդունած պաշտոնական գրավոր այն փաստաթուղթն է, որն ուղղված է իրավական նորմի կամ նորմերի սահմանմանը, փոփոխմանը կամ գործողության դադարեցմանը:

Նորմատիվ իրավական ակտը պետության գրավոր իրավասահման ակտն է, որը պարունակում է իրավունքի նոր նորմեր[5]: Իր իրավասահման բնույթով նորմատիվ իրավական ակտը տարբերվում է մնացած բոլոր իրավական ակտերից, ինչպես նաև տարբեր տեսակի ոչ իրավական բնույթի պաշտոնական պետական ակտերից:

Իրավական ակտը համարվում է նորմատիվ, եթե պարունակում է թեկուզ մեկ իրավական նորմ:

«Իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում էր, որ իրավական նորմն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ իրենց լիազորությունների շրջանակում ընդունած վարքագծի կանոն է, որն

ունի ժամանակավոր կամ մշտական բնույթ, նախատեսված է մեկանգամյա կամ բազմակի կիրառման համար և պաշտոնադիր է անորոշ կամ որոշակի (բայց ոչ անհատական) անձանց համար:

Իրավական նորմը պետության իրավասու մարմիններից բխող վարքի իրավաբանական պարտադիր կանոն է, իրավունքի համակարգի սկզբնական բջիջը, որն ամրագրված է կամ սանկցիավորված է պաշտոնական ակտում և խախտումներից պաշտպանվում է պետական հարկադրանքի միջոցներով [6]:

Իրավական նորմերը վարքագծի համապարտադիր կանոններ են՝ ընդունված պետական իրավասու մարմինների կողմից [7]:

Իրավունքի նորմը տիպային հասարակական հարաբերությունների նմուշ է (մոդել), որը ամրագրվում է պետության կողմից[8]:

Իրավունքի նորմը պետության կողմից սահմանված կամ հաստատված համապարտադիր կանոն է, որն օժտված է պետական հարկադրանքի հնարավորությամբ և կարգավորում է հասարակական հարաբերությունները[9]:

Իրավական նորմերը հատուկ սոցիալական նորմեր են:

Իրավական նորմի բնորոշ հատկանիշներն են՝

ա) սահմանվում կամ սանկցիավորվում են պետության իրավասու մարմնի կողմից և ամրագրված են պաշտոնական պետական ակտում,

բ) որոշում է սուբյեկտի վարքի հնարավոր և պարտադիր սահմանները,

գ) ունի վերապահող- պարտավորեցնող բնույթ,

դ) անհրաժեշտության դեպքում նրա կենսագործումն ապահովվում է պետության հարկադրանքի միջոցով,

ե) տիպային հասարակական հարաբերությունների պետական կարգավորիչ է:

Իրավական նորմն ունի ներքին կառուցվածք: Իրավական նորմի կառուցվածքը ցույց է տալիս, թե ինչ տարրերից է բաղկացած նորմը, և ինչպես են այդ մասերը փոխկապակցված: Իրավական նորմի կառուցվածքային տարրերն են՝

Հիպոթեզ (լատիներեն hypothesis – հիմք, հիմնավորում, ենթադրություն). նրանում շարադրված են այն հարցի հանգամանքները, որի առկայության դեպքում անձանց մոտ ծագում է իրավաբանական իրավունքներ և պարտականություններ:

Դիսպոզիցիա - (լատիներեն dispositio- տեղաբաշխում բառից). իրավական նորմի այն տարրն է, որում ցույց է տրվում, թե ինչպիսին կարող է կամ պետք է լինի վարքը հիպոթեզում նախատեսված պայմանների առկայության դեպքում:

Սանկցիա- (լատիներեն sanctio- խստագույն որոշումներ). իրավանորմի այն մասն է, որտեղ նախատեսված են ներգործության միջոցները՝ այն դեպքում, եթե չեն պահպանվել նորմի պահանջները:

Նորմի կառուցվածքում պետական հարկադրանքի միջոցն ապահովող սանկցիայի բացակայությունը զրկում է նրան իրավական նորմի հատկություններից, քանի որ իրավական նորմի կարևոր հատկանիշը նրա ապահո-

վումն է պետության կողմից: Իրավական նորմ ստեղծելը ոչ պակաս բարդ ու ծանր խնդիր է, քան մաթեմատիկայի կամ ֆիզիկայի գծով բանաձև ստեղծելը: Դրա համար անհրաժեշտ են մասնագիտական լայն գիտելիքներ և աշխատանքային մեծ փորձ: Օրենսդիրը պետք է ընդունակ լինի խորությամբ ընկալելու կարգավորելիք հասարակական հարաբերությունների ծագման ու զարգացման ողջ պատմությունը, դրա դրսևորման ազգային և միջազգային առանձնահատկությունները [10]:

Իրավաբանական գրականության մեջ տարբեր հեղինակներ իրավական նորմի կառուցվածքային տարրերի բնութագրումը տվել են տարբեր կերպ: Այսպես, Վ. Ներսիսյանցը իր «Իրավունքի և պետության տեսություն» բուհական դասագրքում իրավական նորմի տարրը՝ հիպոթեզը, սահմանում է որպես դիսպոզիցիայով նախատեսված իրավունքների և պարտականությունների գործողության պայման, իսկ նորմի դիսպոզիցիան նրա կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների (կողմերի) փոխադարձ իրավունքներ և պարտականություններ:

Իրավունքի նորմի սանկցիան դիսպոզիցիայի, հիպոթեզի և պահանջների, այսինքն՝ դիսպոզիցիայով նախատեսված դրանց գործողության պայմանների խախտման բացասական հետևանքներն են [11]:

Իսկ Գ. Սաֆարյանը հետևյալ կերպ է բնութագրել իրավական նորմի կառուցվածքային տարրերը. Հիպոթեզը իրավական նորմի այն մասն է, որը ցույց է տալիս որոշակի հանգամանքներ, որանց առկայության և բացակայության դեպքում գործում է իրավանորմը:

Դիսպոզիցիան իրավական նորմի այն մասն է, որտեղ մատնանշվում է մարդու այնպիսի վարքագիծ, որի առկայության դեպքում կիրառվում է իրավանորմի սանկցիան:

Սանկցիան՝ ներգործության միջոց, եթե չեն պահպանվել նորմի պահանջները:

Սակայն ինչպես դիսպոզիցիան, այնպես էլ սանկցիան ըստ արտահայտման բնույթի լինում են տարբեր:

Նորմատիվ իրավական ակտը հասարակական հարաբերությունների համընդհանուր կարգավորիչ է: Նորմատիվ իրավական ակտը ստեղծվում է պետության իրավասու մարմինների իրավաստեղծ գործունեության (հանրաքվեի) արդյունքում:

Իրավաստեղծ գործունեությունն այնպիսի պետական գործունեություն է, որը բաղկացած է իրավական նորմի հրապարակումից, ինչպես նաև հնացած իրավական ակտերի կատարելագործումից և բարեփոխումից:

Իրավաստեղծ գործունեությունը ձևավորվել և զարգացել է հին ժամանակներից: Պատմական և իրավական աղբյուրների վկայությամբ, հին և միջին դարերում իրավաստեղծ գործունեություն իրականացրել են Հայոց արքաները, ազգային եկեղեցական ժողովները և մասնավոր անձինք:

Իսկ հետագայում պետականորեն կազմավորված հասարակությունում օրենքները և ենթաօրենսդրական ակտերը ընդունվում, փոփոխվում և վերացվում են պետության իրավաստեղծ գործունեության միջոցով: Դրանք մարդկային գիտակցության, ընդհանրապես, և իրավագիտակցության, մասնավորապես, նպատակաուղղված գործունեության արդյունք են:

Իրավաբանական գրականության մեջ իրավաստեղծ գործունեության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր մոտեցումներ: Իրավաստեղծ գործունեությունը, ինչ ձևով էլ այն գոյություն ունենա, հասարակության ղեկավարման պետական ձևն է[12]:

Մեր կարծիքով ավելի ընդունելի է իրավաստեղծ գործունեության հետևյալ սահմանումը. այն գիտականորեն հիմնավորված ստեղծագործական ընթացակարգ է, որն իրականացնում են պետական մարմինները իրենց իրավասության շրջանակներում և կոչված է բավարարելու հասարակության և պետության իրավական պահանջմունքները:

Վերոհիշյալ սահմանումը հնարավորություն է տալիս առանձնացնել մի քանի կարևոր հատկանիշներ, մասնավորապես՝

- հասարակական հարաբերությունների որոշակի բնագավառի ճանաչումը, ուսումնասիրումը և վերլուծությունը, որտեղ պահանջվում է իրավական կարգավորում,
- պետության իրավասու մարմնի որոշարկումը, որը պետք է ընդունի համապատասխան նորմատիվ իրավական ակտը,
- ընդունելիք նորմատիվ իրավական ակտի ձևի որոշումը (օրենք, հրամանագիր, որոշում),
- իրավական ակտի նախապատրաստումը, ընդունումը կամ նրա փոփոխումը համապատասխան ընթացակարգով [13]:

Մենք նույնպես համամիտ ենք Գ. Սաֆարյանի այն տեսակետի հետ, որ իրավաստեղծ գործունեությունը մեխանիկական գործընթաց չէ, այն իրենից ներկայացնում է գիտական, ստեղծագործական բարդ ընթացակարգ, որտեղ խաչաձևվում են անհատական, խմբային, հասարակական և պետական շահերը, նրանց պահանջմունքները, ինչպես նաև իրավաստեղծ լուծումների նորմատիվ բովանդակության վրա ազդող օբյեկտիվ և սուբյեկտիվ բազմաթիվ գործոնները[14]:

Իրավաստեղծ գործունեությունը նորմատիվ իրավական ակտերի նախապատրաստմանը, հրապարակմանը և կատարելագործմանն ուղղված գործունեություն է: Իրավաստեղծ գործունեության յուրաքանչյուր տեսակ ունի իր առանձնահատկությունները, որոնք դրսևորվում են հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման ոլորտում, իրավաստեղծ ընթացակարգով ընդունված նորմատիվ ակտի իրավագործությամբ, ակտի սոցիալական ու հասարակական-քաղաքական նշանակությամբ:

Անմիջական իրավաստեղծումն իրականացվում է հանրաքվեների անց-

կացման միջոցով, ինչի դեպքում սահմանադրական կարգով ընդունում կամ մերժում են պետական օրենսդիր իշխանության կողմից առաջարկվող նորմատիվ ակտերը [15]:

Հանրաքվեի հայրենիքը Շվեյցարիան է, որտեղ առաջին անգամ 1439թ. Բեռնի կենտրոնում անցկացվել է հանրաքվե: Հայաստանի Հանրապետությունում անցկացվել է հինգ հանրաքվե, իսկ տեղական հանրաքվե դեռևս չի անցկացվել: Սահմանադրական հանրաքվեները որպես կանոնսահմանադրական ճգնաժամերից դուրս գալու ժամանակակից ժողովրդավարական միջոց են, և այդ եղանակով պետք է իրական արդյունք ակնկալվի, որը հնարավորություն է տալիս ժողովրդի կամքի արտահայտմամբ արագորեն հաղթահարել ճգնաժամը: Այդ կարևոր հանգամանքով է պայմանավորված արտասահմանյան շատ երկրներում ոչ բարձր քվորումի ամրագրումը [16]: Գերիշխում է այն տեսակետը, որ հանրաքվեի ինստիտուտի բովանդակությունը և կիրառությունը այս կամ այն երկրում հաշվի առնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել քաղաքական իրավիճակը և դրա կիրառության առանձնահատկությունները կոնկրետ երկրում [17]:

Միջնորդավորված (պետական) իրավաստեղծումն արտահայտվում է օրենքով սահմանված որոշակի կարգով՝ իրավական նորմի սահմանմամբ, փոփոխմամբ: Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի նախապատրաստումը կարող է իրականացվել ընթացիկ ծրագրերի համաձայն, որոնք կարող են լինել մեկ, երկու տարի ժամկետով: Նախագծերի մշակման համար կարող է ստեղծվել նախագծի մշակման հանձնաժողով, և իրավական ակտերի նախագծերի առաջին էջի վերին աջ անկյունում պետք է գրվի «նախագիծ» բառը:

Հայաստանի Հանրապետության «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 8-րդ գլխի 63-ից 73-րդ հոդվածները վերաբերվում են օրենքի նախագծի քննարկման ընթացակարգին: 63-րդ հոդվածում սահմանվում է օրենքի նախագծի քննարկման ընդհանուր կարգը: Օրենքի նախագիծն Ազգային ժողովում քննարկվում է երեք ընթերցմամբ, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

Առաջին ընթերցմամբ ընդունված օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթը 7 օրվա ընթացքում ուղարկվում է Հանրապետության Նախագահին, կառավարություն, գլխադասային հանձնաժողով, խմբակցություններին, պատգամավորական խմբերին և աշխատակազմ, տեղադրվում է Ազգային ժողովի էլեկտրոնային կայքում: Այլընտրանքային օրենքի նախագծերի քննարկումն առաջին ընթերցմամբ իրականացվում է հաջորդաբար՝ օրենքով սահմանված կարգով, այսինքն՝ ընդունված է համարվում առավել շատ «կողմ» ձայներ ստացած նախագիծը: Առաջին ընթերցմամբ քննարկված և ԱԺ կողմից չընդունված այլընտրանքային օրենքի նախագիծը հանվում է շրջանառությունից:

Առաջին ընթերցումից հետո՝ երեսուն օրվա ընթացքում, հեղինակը գլխադասային հանձնաժողով է ներկայացնում իր համար ընդունելի առաջարկությունների հիման վրա փոփոխված օրենքի նախագիծը՝ դրան կցելով սահմանված կարգով ներկայացրած բոլոր առաջարկությունների, ինչպես նաև ընդունված նախագծում իր նախաձեռնությամբ կատարված բոլոր փոփոխությունների և լրացումների ամփոփաթերթիկը, որում, ըստ հոդվածների հաջորդականության, նշվում են՝

- առաջարկության հեղինակը,
- հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերվում է առաջարկությունը,
- առաջարկությունը,
- առաջարկության վերաբերյալ հեղինակի եզրակացությունը:

Օրենքի նախագծում փոփոխությունները կատարվում են ընդունված նախագծի տեքստից տարբերվող տառատեսակներով: Օրենքի նախագծի երկրորդ ընթերցումը կատարվում է նույն կերպ, բայց հետևյալ բացառությամբ՝ զեկուցողներին հարցեր տալու իրավունք ունեն ամփոփաթերթիկում ընդգրկված առաջարկությունների հեղինակները: Երկրորդ ընթերցմամբ ընդունված օրենքի նախագիծը 7-օրյա ժամկետում ուղարկվում է Հանրապետության Նախագահին, կառավարություն և գլխադասային հանձնաժողով:

Օրենքի նախագիծը երրորդ ընթերցմամբ ընդունվելուց հետո՝ 30-օրյա ժամկետում, գլխադասային հանձնաժողովը, հեղինակի հետ համատեղ՝ կարող է այդ նախագծում կատարել խմբագրական փոփոխություններ, որոնք չեն փոխում ընդունված տեքստի իմաստը և ներկայացնել Ազգային ժողովի նախագահին:

Երրորդ ընթերցման ժամանակ 10 րոպե տևողությամբ ելույթ են ունենում գլխադասային հանձնաժողովի ներկայացուցիչն ու հեղինակը: Այդ ընթացքում հեղինակը կարող է առաջարկել օրենքի նախագիծը ընդունել որպես օրենք:

Ազգային ժողովի նախագահին ընդունված օրենքը 10-օրյա ժամկետում ուղարկվում է Հանրապետության Նախագահին, որն ստանալուց հետո՝ քսանմեկօրյա ժամկետում, ստորագրում և հրապարակում է այն, կամ առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնում է Ազգային ժողով:

Իսկ Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու և հանրաքվեի դրվելիք օրենքի նախագծերի քննարկման ընթացակարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքի 74 -րդ հոդվածով, ըստ որի, Սահմանադրության 111-րդ հոդվածին համապատասխան, Սահմանադրությունն ընդունվում կամ դրանում փոփոխություններ կատարվում են հանրաքվեի միջոցով՝ Հանրապետության Նախագահի կամ Ազգային ժողովի նախաձեռնությամբ:

Օրենքի նախագիծը հանրաքվեի դնելու առաջարկ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու իրավունք ունեն պատգամավորները և կառավարությունը, և այդ որոշումներն ընդունվում են պատգամավորների

ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Սահմանադրության կամ դրանում փոփոխությունների նախագծերը հանրաքվեի դնելիս կիրառում են՝

ա) Սահմանադրության ընդունման կամ դրանում փոփոխություններ կատարելու հիմնավորումը,

բ) Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու նախագիծը.

գ) Սահմանադրության կամ դրանում փոփոխություններ կատարելու հարցով հանրաքվե նշանակելու վերաբերյալ առաջարկի կամ համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Իսկ եթե օրենքի նախագիծն է դրվում հանրաքվեի՝

ա) օրենքի ընդունման հարցով հանրաքվե նշանակելու հիմնավորումը,

բ) հանրաքվեի դրվելիք օրենքի նախագիծը,

գ) հանրաքվեով օրենքն ընդունելու առնչությամբ ընդունվելիք այլ օրենքների նախագծեր,

դ) օրենքի ընդունման հարցով հանրաքվե նշանակելու վերաբերյալ առաջարկ անելու կամ համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագծերը,

ե) հանրաքվեով օրենքի ընդունման առնչությամբ այլ օրենքների միաժամանակ հանրաքվեի դնելու մասին առաջարկություն կամ տեղեկանք այդպիսի առաջարկության անհրաժեշտության բացակայության մասին:

Սահմանադրությունում կամ օրենքում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին նախագծին կցվում է տեղեկանք, որտեղ ներկայացվում է Սահմանադրության կամ օրենքի փոփոխվող հոդվածը:

Իրավական ակտի նախագծի որակը գնահատելու նպատակով իրավաստեղծ մարմնի որոշմամբ կարող է իրականացվել անկախ պաշտոնական փորձաքննություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից: Իրավական ակտերի նախագծերի պետական փորձագիտական եզրակացությունը տրվում է տասնհինգ օրվա ընթացքում, իսկ եթե ակտը ծավալուն է ու բարդ, տասնհինգ օրվան ավելանում է ևս տասը օր: Եթե համապատասխան ժամկետներում Արդարադատության նախարարությունը չի տալիս եզրակացություն, ապա իրավական ակտի նախագիծը քննարկվում է առանց պետական փորձագիտական եզրակացության: Ցանկացած իրավական ակտ պետք է շարադրվի ՀՀ պաշտոնական լեզվով՝ ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածի և ՀՀ «Լեզվի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:

Իրավական ակտն ունի ձևական հատկանիշներ, ինչն իր մեջ ներառում է՝

- նախաբան,
- նրա անվանումը,
- հիմնական մասը,

- եզրափակիչ մաս կամ անցումային դրույթներ:

Ակտի ընդունման օրը համարվում է վերջինիս Ազգային ժողովի կողմից վերջնական խմբագրությամբ ընդունվելու օրը: Իրավական ակտերի հաշվառումը իրականացվում է ՀՀ կառավարության սահմանած կարգով:

Այսպիսով, նորմատիվ իրավական ակտերի նախապտրաստումը և ընդունումը բավականին բարդ և պատասխանատու գործընթաց է, որի գրագետ ներկայացումը և իրականացումը միանշանակ նպաստելու է ժողովրդավարության զարգացմանը ՀՀ-ում:

Գրականություն

1. ՀՀ օրենքը իրավական ակտերի մասին (2002թ. ապրիլի 3):
2. ՀՀ օրենքը Նորմատիվ իրավական ակտերի մասին, 2018թ. մարտի 21, Հոդվ. 1:
3. ՀՀ օրենքը Նորմատիվ իրավական ակտերի մասին, 2018թ. մարտի 21, Հոդվ. 45:
4. Ս.Մնացականյան, ՀՀ գլխավոր դատախազի իրավական ակտերը որպես դատախազական քաղաքականության իրավական միջոց, Օրինականություն, Երևան, 2008, էջ 23:
5. Վ. Ս.Ներսիսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001, էջ 158:
6. Խ. Երեմյան, Իրավունքի նորմերի հատկանիշները, Օրենք և իրականություն, միջազգային իրավաբանական հանդես, Երևան, 2001, N 7-8 (93-94) ապրիլ, էջ 7:
7. Գ. Հ. Սաֆարյան, Պետության և իրավունքի տեսություն (ուսումնական ձեռնարկ) Երևան, «Մխիթար Գոշ», , էջ 45:
8. Վ.Ն. Խրոպանյուկ, Պետության և իրավունքի տեսություն (2-րդ հրատ.), Խաչիկ Հարությունյանի թարգմանությամբ, Երևան, 1997, էջ 272:
9. А. Б. Венгеров, Теория государства и права, Москва, 1998, с. 430.
10. Ն.Ա. Այվազյան, Իրավական պետության հորիզոններում, Երևան, 1999, էջ 165:
11. Վ.Ս. Ներսիսյանց, Իրավունքի և պետության տեսություն, Երևան, 2001թ., էջ 146:
12. В.С. Нерсисянц, Проблемы общей теории права и государства, Учебник для вузов, Москва, 1999, с. 46.
13. Գ. Սաֆարյան, Իրավաստեղծ գործունեության և օրենսդրության զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Երևան, 2004, էջ 7:
14. Նույն տեղում, էջ 71:
15. Վ. Ն. Խրոպանյուկ, նշվ. աշխ, էջ 287:
16. ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, Ե., 2011, էջ 142:

17. Այվազյան Ն., Օհանյան Մ., Ազատ ընտրություններ և հանրաքվե կազմակերպելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Ե., 2010, էջ 142:

Мурадян М. - ПРОЦЕСС ПОДГОТОВКИ И ПРИНЯТИЯ ПРОЕКТОВ ПРАВОВЫХ АКТОВ. В статье обсуждаются проблемы, возникшие в ходе подготовки и рассмотрения проектов правовых актов. Автор представляет проблемы проектов, посвященных правовым актам, в контексте законодательных реформ РА, делая акцент на изучении международного опыта. Особо подчеркивается значение и роль референдума как средства волеизъявления народа. Грамотное и точное принятие нормативных правовых актов в значительной степени способствует повышению уровня демократии в РА.

***Ключевые слова:** правовой акт, референдум, конституция, законодательство, правовая норма, правотворческая деятельность.*

Muradyan M. - PROCESS OF PREPARATION AND ADOPTION OF DRAFT LEGAL ACTS. The article discusses the problems that arose during the preparation and consideration of draft legal acts. The author presents the problems of projects devoted to legal acts in the context of the legislative reforms of the RA, focusing on the study of international experience. The significance and role of the referendum as a means of expressing the will of the people is especially emphasized. Competent and precise adoption of normative legal acts contributes greatly to raising the level of democracy in the Republic of Armenia.

***Key words:** legal act, referendum, constitution, legislation, legal norm, law-making active*

DOI: 10.61484/29538181-ss.8.23-180

ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԿՅԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԻՋՈՑ

Յանինա Մարինոսյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, ԵՀՀ
Ընդունված է տպագրության՝ 21.08.23

Ամփոփագիր. Հեղինակը հանգամանորեն քննարկում է բժշկական օգնությունը որպես կյանքի իրավունքի ապահովման միջոցի բովանդակային առանձնահատկությունները: Հեղինակի կարծիքով ՀՀ Սահմանադրությունում ամրագրված «առողջության պահպանման իրավունք» եզրույթը առավել լիարժեք է արտահայտում առողջության իրավունքի իմաստն ու բովանդակությունը: Այս սահմանադրական դրույթի բովանդակությունը կոնկրետացվել է գործող օրենսդրության նորմերում:

Հիմնաբառեր. բժշկական օգնություն, առողջության պահպանման իրավունք, սահմանադրություն, կյանքի իրավունքի իրավակարգավորում:

Հաշվի առնելով մարդու բնական իրավունքներից ամենակարևորի՝ կյանքի իրավունքի բազմակողմանիությունը, ուշադրություն դարձնելով սույն հետազոտության նպատակի և առաջադրված խնդիրների վրա, մեր կարծիքով անհրաժեշտ է համալիր կերպով վերլուծել բժշկական օգնության գործոնը՝ որպես կյանքի իրավունքի ապահովման միջոց: Բժշկական օգնության իրավական կարգավորման առանձնահատկությունների և կյանքի իրավունքի հետ նրա փոխկապակցվածության տեսանկյունից նպատակահարմար է առանձին լուսաբանել առողջության պահպանման մարդու իրավունքը և բժշկական օգնություն ստանալու իրավունքը:

Իրավաբանական գրականության մեջ հանդիպում է ավելի ընդարձակ «առողջության իրավունք» եզրույթ, քան «առողջության պահպանման իրավունք» եզրույթն է: Առողջության իրավունքի դրական բովանդակությունը կազմված է սեփական առողջության տիրապետման, օգտագործման և տնօրինման իրավասություններից: Սովորաբար այդ իրավասությունները փաստացիորեն իրականացվում են մշտապես, բայց, ասես, իրավաբանորեն «աննկատ», իսկ արտահայտվում են առողջության խախտման կամ յուրահատուկ իրավիճակներում:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված է «առողջության պահպանման իրավունք» եզրույթը, որը մեր կարծիքով ավելի համարժեք է արտահայտում առողջության իրավունքի բովանդակությունը (տես ՀՀ Սահ. 85 հոդված): Սեփական առողջության տնօրինման իրավասությունը ենթադրում է գործունակ անձի կողմից ինքնուրույն որոշումների ընդունում, այդ թվում այնպիսիք, որոնք անբարենպաստ են անդրադառնալու իր առողջության վրա(օրինակ՝

բժշկական միջամտությունից հրաժարվելը կամ դրա դադարեցումը): Այդպիսով, շեշտվում է առողջության իրավունքի իրականացման արտահայտման բավականին ընդարձակ սպեկտր: Տվյալ պարբերության մեջ դիտարկվել է առողջության պահպանման իրավունքը, միևնույն ժամանակ բժշկական օգնությունից հրաժարվելու իրավական մեկնաբանման, էվթանազիայի խնդիրները կուսումնասիրվեն հաջորդիվ կյանքի իրավունքի հարաբերակցության առումով:

Առողջության պահպանման իրավունքը կարևոր է ընկալել որպես մարդու հանդեպ պետության պատասխանատվության մասնավոր դեպք, որպես պետության սոցիալական գործառույթի արտահայտում: Այստեղ կա ինչպես հենց բժշկական բաղկացուցիչը՝ բժշկական-պրոֆիլակտիկ հաստատությունների առկայությունը և գործելը, այնպես էլ ավելի գլոբալ՝ պետության շրջանակներում այնպիսի պայմանների ստեղծում, որոնց դեպքում մարդու առողջությունը, առողջության պահպանման նրա իրավունքը կապահովվեն առավելագույն չափով: Միևնույն ժամանակ բժշկական օգնության իրավունքն ունի համալիր բնույթ՝ հենց մարդու, նրա առողջական վիճակի նկատմամբ և կայանում է մարդու կողմից տվյալ օգնության ստացման իրավունքի իրականացման հնարավորության մեջ հիվանդության կամ պաթոլոգիական վիճակի դեպքում: Հատկապես կարևոր է նշել, որ վերջին հաշվով մարդը չի կարող ամբողջությամբ իրականացնել կյանքի իր իրավունքը, երբ նա զրկված է կամ սահմանափակված է բժշկական օգնության իրավունքի մեջ:

Բժշկական բաղկացուցչի դերի և նշանակության կարևոր կողմը մարդու կողմից կյանքի իրավունքի իրականացման մեջ էվթանազիայի խնդիրն է: Ընդհանուր տեսքով գիտական միջավայրում ընդունված է, որ այդ հարցի որոշումը կախված է բազմաթիվ գործոններից, որոնցից մեկը հանդիսանում է իրավական դաշտի ստեղծումը, ժամանակակից հասարակության մեջ էվթանազիայի դիրքը որոշող նորմերի կազմումը: Անհրաժեշտ է որպես էվթանազիայի խնդրի կարևոր հարցերից մեկի առանձնացնել մարդու մահանալու իրավունքը: Արդյոք այն գոյություն ունի իրականում, պետք է արդյոք հասարակության և պետության մեջ ստեղծվեն այդ իրավունքի իրականացման մեխանիզմները՝ այս գործոնները նախևառաջ ունեն մանրակրկիտ իրավական վերլուծության կարիք:

Առողջության պահպանման իրավունքն իրականացվում է մարդու բազմաթիվ այլ, օրենսդրորեն ամրագրված իրավունքներով: Դա կապված է այն բանի հետ, որ հենց «քաղաքացիների առողջության պահպանություն» եզրույթի ներքո հասկանում ենք քաղաքական, տնտեսական, իրավական, սոցիալական, մշակութային, գիտական, բժշկական, սանիտարա-հիգիենիկ և հակահամաճարակային բնույթի միջոցների ամբողջություն՝ ուղղված յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանմանը և ամրապնդմանը, նրա երկարատև ակտիվ կյանքի ապահովմանը, նրան

բժշկական օգնության տրամադրմանը առողջությունը կորցնելու դեպքում: Առողջապահության համակարգի հիմնական նորմատիվա-իրավական ակտերի իրավական բնույթի միջոցների առանձնացման փաստը՝ որպես առողջության պահպանման ապահովման ուղղություն, խոսում է դիտարկվող խնդրի կարևորության աստիճանի մասին:

1948 թվականին Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրն ընդունելուց ի վեր առողջության պահպանման իրավունքն այս կամ այլ չափով առկա է բոլոր նշանակալից միջազգային-իրավական փաստաթղթերում՝ նվիրված առողջապահությանը և քաղաքացիների սոցիալական ապահովմանը: Հռչակագրի դրույթն այն մասին, որ յուրաքանչյուր մարդ ունի նման կենսական մակարդակի իրավունք՝ ներառյալ սնունդը, հագուստը, կեցավայրը, բժշկական խնամքը և անհրաժեշտ սոցիալական սպասարկումը, որն անհրաժեշտ է առողջության և բարեկեցության ապահովման համար [1], ազգային իրավական նորմերի կազմման համար դարձել է կանոն և օրինակ: Տվյալ թեզը հաստատվում է Մ. Կվաչարձեի կարծիքով այն մասին, որ առողջության իրավունքը զարգացել է և իր արտահայտությունն է գտել նաև ունիվերսալ, ռեգիոնալ մակարդակի այլ միջազգային փաստաթղթերում և միջազգային կազմակերպությունների փաստաթղթերում [2]:

Ենթադրվում է, որ առողջության պահպանման իրավունքի՝ որպես կյանքի իրավունքի ապահովման միջոցի ավելի որակյալ լուսաբանման համար անհրաժեշտ է անել սահմանում: Ա.Կոմզոլովը նշում է, որ առողջության պահպանման իրավունքը նորմերի ամբողջություն է, որոնք իրավաբանորեն միջնորդավորում են անձնական ազատությունը, և միևնույն ժամանակ կոնկրետ բարիքից օգտակար հատկությունները վերցնելու յուրաքանչյուր քաղաքացու սոցիալական հնարավորություններ են: Առողջության պահպանման իրավունքը կանխորոշում է ոչ միայն պահպանիչ, այլև կարգավորող իրավական միջոցների ազդեցությունները իրավահարաբերությունների մասնակիցների վրա [3]: Փիլիսոփայության և կենսաբժշկական էթիկայի ձեռնարկի հեղինակները սահմանում են, որ եթե առողջության պահպանումն իրավունք է, ապա այն իրավունք է բոլորի համար, ինչը ենթադրում է նրա բավարարման համար սոցիալական տեխնոլոգիաների և նրա արդարացման համար ինտելեկտուալ տեխնոլոգիաների(էթիկական և փիլիսոփայական) ստեղծում [4]:

Ինչպես երևում է հեղինակներն առանձնացնում են առողջության իրավունքի իրականացման ոչ միայն կազմակերպչական-իրավական առանձնահատկությունները, այլև առողջության պահպանման իրավունքի արդարացման ինտելեկտուալ բաղկացուցի իրականացմանը: պետության կողմից նպաստելու անհրաժեշտությունը

Մեր կարծիքով առողջության պահպանման իրավունք ասելիս անհրաժեշտ է հասկանալ յուրաքանչյուր մարդու՝ պետության կողմից այնպիսի պայմաններ ստեղծելու սահմանադրորեն ամրագրված իրավունք, որոնց

դեպքում առավելագույնս հնարավոր է սոցիալական և էկոլոգիական իրավունքների, իրավաբանական երաշխիքների իրականացումը առողջապահության ոլորտում, առողջապահության պետական և մունիցիպալ հաստատություններում անվճար բժշկական-սոցիալական օգնության ստացումը, ինչպես նաև մարդու առողջության ամրապնդմանը և պահպանմանը նպաստող այլ գործոնների: Ելնելով սահմանումից՝ կարելի է վերլուծել առողջության պահպանման իրավունքի բաղկացուցիչ մասերը: Դրանք վերաբերում են ինչպես զուտ բժշկական ուղղություններին (բժշկական-սոցիալական օգնության տրամադրում, իրավաբանական երաշխիքներ բժշկական ոլորտում և այլն), այնպես էլ՝ այլ, ուղղակի առողջապահության հետ կապ չունեցող, սակայն մարդու առողջական վիճակի և գործունեության պայմանների վրա էականորեն ազդող:

Անհրաժեշտ է դիտարկել առողջության պահպանման իրավունքի բաղկացուցիչ մասերը, ինչը հնարավորություն կընձեռի ավելի որակյալ իրականացնել տեսական-իրավական վերլուծությունը: Ֆրանսիացի իրավաբան Կ. Բիկն առանձնացնում է առողջության իրավունքի երեք բաղկացուցիչ՝

- բժշկական հաստատությունների հասանելիությունը կարիքավորներին,
- սոցիալական օգնության ստացում,
- պրոֆիլակտիկ միջոցների իրավունք [5] :

Ս.Դյուժիկովի աշխատանքի մեջ նշվում է, որ առողջության պահպանման իրավունքի ինստիտուտն իր մեջ համադրում է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ իրավունքի բնութագրեր, ինչը հանդիսանում է մարդու և քաղաքացու իրավական դրույթի սահմանադրական մակարդակի առանձնահատկություն [6]: Իսկապես, առողջության պահպանման իրավունքն ապահովող մի շարք իրավունքներ գրված են օրենսդրության մեջ, այդ իսկ պատճառով դրանք օբյեկտիվ են և և կախված չեն առանձին մարդու կամքից, գիտակցությունից և վարքից: Միևնույն ժամանակ հաշվի առնելով, որ առողջության պահպանման իրավունքը պատկանում է կոնկրետ մարդուն՝ այդ առումով այդպիսի իրավունքի իրականացումը, դրա պահպանման միջոցները մեծամասամբ կախված են կոնկրետ մարդու կամքից և գիտակցությունից՝ առողջության պահպանման իրավունքի տիրապետողից:

Հաշվի առնելով տվյալ ժամանակի պայմանները, ուշադրություն դարձնելով սույն հետազոտության նպատակի վրա՝ նպատակահարմար է առանձնացնել առողջության պահպանման իրավունքի հետևյալ կառուցվածքային տարրերը՝

- սոցիալ-իրավական ինստիտուտների խումբ (առողջապահության ռեսուրսներին հասանելիության իրավունք, բնակավայր, կրթություն, կրթություն, սոցիալական ապահովում և այլն),
- սահմանադրորեն ամրագրված անձնական ոչ գույքային իրավունքների խումբ (ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք),

- բարենպաստ շրջակա միջավայրի ապահովման հետ կապված իրավունքների խումբ,
- տնտեսական իրավունքների խումբ (մասնավոր սեփականության, աշխատանքի իրավունքի և այլն):

Ցավոք, Հայաստանում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական բարեփոխումների ժամանակաշրջանը վերջին 12-15 տարիների ընթացքում հիմնականում բացասական է անդրադարձել առողջապահության ռեսուրսներին հասանելիության հավասար պայմանների ապահովման, բնակության իրավունքի ապահովման, սոցիալական ապահովման վրա և այլն: Առանց որոշակի բնակավայր ունեցող, կյանքի հակասոցիալական պայմաններով և վարքագծով անձանց առաջացումը հանգեցրել է մեծ քանակությամբ խնդիրների ինչպես հենց այդպիսի մարդկանց, այնպես էլ հասարակության համար: Առողջության պահպանման իրավունքի իրականացումն ինչպես առանձին անհատի (սուբյեկտիվ իրավունք), այնպես էլ պետության մասշտաբով (օբյեկտիվ իրավունք), չնայած հավասար պոտենցիալ հնարավորությունների, անկասկած, հեռու է օպտիմալ լինելուց: Ընդ որում այդպիսի դրույթը խորացնում են նաև դիսպանսերացման անցկացման դժվարությունները (միջոցառումներ՝ ուղղված հիվանդությունների բացահայտմանը), որն արդեն մի քանի տարի չի հանդիսանում համատարած: Այստեղ մենք գործ ունենք վարակիչ և պարազիտային հիվանդությունների տարածման հետ, որոնք վնաս են հասցնում ինչպես հիվանդին, այնպես էլ նրա շրջապատին (դրանով իսկ նվազեցնելով առողջության պահպանման արտահայտվածության մակարդակը) :

Բավականին արդյունավետ կարող է համարվել նախագիծը, որը մշակվել է Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության Եվրոպական Տարածաշրջանային Բյուրոյի կողմից, որը նախատեսում է Եվրոպայի տարբեր երկրներում բժշկական օգնության որակի համակարգային վերլուծություն և գնահատում: Ընդ որում բժշկական ծառայությունների վերափոխման արդյունավետության հիմնական չափորոշիչ հանդիսանալու է մարդու իրավունքների պահպանումը: Ենթադրվում է, որ այսպիսի մոտեցումն առավել օպտիմալ է և կարող է որոշիչ համարվել քաղաքացիների առողջության պահպանման իրավունքի ապահովվածության վիճակի գնահատման համար:

Այդպիսով, առողջության պահպանման իրավունքը, որպես կյանքի իրավունքի և բժշկական օգնության փոխազդեցության և փոխադարձ ապահովվածության մասնավոր գործոն, հանդիսանում է համալիր կատեգորիա, որը վկայում է պետության մասշտաբներում նրա ամբողջական իրականացման համար մի ամբողջ խումբ պայմանների ստեղծման իրավունքի մասին: 90-ականներին Հայաստանում իրավիճակը բնակչության առողջության և առողջապահության ոլորտում հանգեցրեց քաղաքացիների առողջության պահպանման, բժշկական օգնության ցուցաբերման և առողջապահության ամբողջ համակարգի վերափոխման անհետաձգելի միջոցառումների

անցկացման խիստ անհրաժեշտության: Այս ամենը հանգեցրել է առողջության պահպանման իրավական հիմքի կատարելագործման անհրաժեշտությանը և հնարավորությանը և ժամանակակից պայմաններին, պահանջներին և միջազգային ստանդարտներին և նորմերին համապատասխանող առողջապահության նոր իրավական բազայի ստեղծմանը: Ենթադրվում է, որ առողջապահության բարեփոխումը ավելի հաջողված կլինի, եթե այն հիմնվում է բժշկական-իրավական գիտության նվաճումների վրա տեսական-իրավական, իսկ այնուհետև նաև ոլորտային հետազոտությունների հիման վրա:

Մարդու կյանքի իրավունքի ապահովման ինքնուրույն ուղղության առանձնացումը՝ բժշկական օգնություն ստանալու իրավունքի, պայմանավորված է բազմաթիվ պատճառներով, որոնցից հիմնականներն են՝

- առողջության պահպանման իրավունքի իրավական բնույթի և բժշկական օգնություն ստանալու իրավունքի տարբերությունները,
- բժշկական օգնության ստացման իրավունքի դրսևորումների բազմազանությունը,
- բժշկական ապահովագրության գործոնը՝ որպես առողջության ռեսուրսներին հավասար հասանելիություն ապահովող միջոց,
- մեր երկրում առողջապահության տարբեր համակարգերի գործելը և այլն:

Բժշկական օգնության ստացման իրավունքը, որպես կյանքի իրավունքի իրականացման գործոն, պայմանավորված է անհրաժեշտության դեպքում (հիվանդություն, պաթոլոգիական վիճակ և այլն) առողջապահության համակարգի ռեսուրսներից օգտվելու հնարավորությունով, այսինքն՝ օգնություն ստանալ բուժական աշխատողների կողմից: Ընդ որում հենց ինքը՝ բժշկական օգնության ստացման փաստը, կհանդիսանա բժշկական օգնության կարիք ունեցող մարդու սուբյեկտիվ իրավունքի ապահովման ապացույց: Այս առումով կարելի է սահմանել հիվանդի սուբյեկտիվ իրավունք հասկացությունը, համաձայն որի՝ վերջինս իրենից ներկայացնում է առողջապահության մասին օրենսդրության մեջ պարունակվող իրավունքի նորմերի օգտագործմանն ուղղված հիվանդի հնարավոր վարքագծի միջոց: Սոցիալական-կողմնորոշված պետության մեջ, որին ձգտում է Հայաստանը, հիվանդի սուբյեկտիվ իրավունքների իրավաբանական ապահովմանը պետք է հատկացվի ավելի մեծ ուշադրություն:

«Առողջության պահպանման իրավունք» և «բժշկական օգնության իրավունք» հասկացությունների էության տարբերությունները (բժշկական օգնություն ստանալու իրավունք) կայանում են նրանում, որ՝

- առողջության պահպանման իրավունքն ավելի ընդարձակ իրավաբանական կատեգորիա է, որն իր մեջ ներառում է սոցիալական, տնտեսական, էկոլոգիական բնույթի միջոցառումների ամբողջություն՝ ուղղված, ընդհանուր առմամբ, մարդու մոտ հիվանդությունների առա-

ջացումը կանխելուն,

- առողջության պահպանման իրավունքը յուրաքանչյուր մարդու անքակտելի իրավունքն է՝ անկախ նրա առողջական վիճակից, մինչդեռ բժշկական օգնության իրավունքը հիմնականում կապված է հիվանդության կամ պաթոլոգիկ վիճակի առկայության հետ,
- առողջության պահպանության իրավունքի իրականացման ապահովումը պետական ապարատի բազմաթիվ կառույցների խնդիր է, մինչդեռ բժշկական օգնության իրավունքի կյանքի կոչելը կախված է այն պետական օրգաններից, որոնք ապահովում են առողջապահության ոլորտը:

Խոսելով բժշկական օգնության ստացման իրավունքի դրսևորումների բազմազանության մասին՝ կարևոր է նշել, որ բժշկական գործունեության օրենսդրական բազան սահմանում է հիվանդների իրավունքների բավականին մեծ քանակ:

- բժշկի ընտրության իրավունքը, այդ թվում՝ ընտանեկան և բուժող՝ հաշվի առնելով նրա ցանկությունը, ինչպես նաև բուժական-պրոֆիլակտիկ հաստատության ընտրությունը՝ պարտադիր և կամավոր բժշկական ապահովագրության պայմանագրերին համապատասխան,
- հիվանդի խնդրանքով կոնսիլիումի անցկացումը և այլ մասնագետներից կոնսուլտացիա ստանալը,
- սեփական իրավունքների և պարտականությունների և առողջական վիճակի մասին տեղեկատվության ստացումը, ինչպես նաև այն անձանց ընտրությունը, որոնց, հիվանդի շահերին համապատասխան, կարող է փոխանցվել իր առողջական վիճակի մասին տեղեկատվությունը,
- բժշկական օգնություն ցուցաբերելիս առողջությանը վնաս պատճառելու դեպքում վնասի փոխհատուցում և այլն:

Յավիք, բժշկի ընտրության իրավունքն ամբողջությամբ իրականանալի չէ մեր երկրում: Դա կապված է ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառների հետ: Առաջիններին կարող են վերաբերել տվյալ բուժական-պրոֆիլակտիկ հաստատությունում (բնակավայրում) անհրաժեշտ մասնագետի բացակայությունը, հիվանդների շրջանում «հանրաճանաչ» բժշկի անհնարինությունը ֆիզիկապես տվյալ պրոֆիլով բոլոր հիվանդներին օգնություն ցուցաբերելու: Իսկ սուբյեկտիվ պատճառները կապված են այն բանի հետ, որ որոշակի բժշկին ընտրելու իրավունքը սահմանափակված է վերջինիս համաձայնությամբ: Պլանային հիվանդին բուժելուց հրաժարվելու չափանիշ է հանդիսանում, ըստ բժշկական կանոնների, բժշկի նշանակումները և ցուցումները չկատարելը: Պետք է համաձայնել բժշկության ոլորտում մարդու իրավունքների մասին ուսումնական և գործնական ձեռնարկի հեղինակ Մ.Ն. Մալեինայի կարծիքի հետ, որ այդպիսի իրավունքի (բժշկի ընտրության՝ Յա.Յա), բացարձակ ամրագրմանն օրենքում և գործնականում խանգարում

է հիվանդի ցանկության և բժշկական հաստատության (բժշկի) հնարավորությունների միջև անհամապատասխանությունը [7]: Այս առումով ավելի նախընտրելի է օրենսդրության մեջ սահմանել բժշկին ընտրելու իրավունքը՝ համաձայն բժշկական ապահովագրության տարածքային ծրագրերի: Ընդ որում կարևոր է ենթաօրենսդրական իրավական փաստաթղթերի մակարդակում բժշկին ընտրելու իրավունքի իրականացման մեխանիզմը: Բժշկական օգնություն ստանալու մարդու իրավունքի ապահովման կարևորագույն գործոններից է Հայաստանում գործող բժշկական ապահովագրությունը: Բժշկական ապահովագրության ներդնման հիմնական նպատակը առողջապահության հաստատությունների ֆինանսավորման համակարգի փոփոխությունն է:

Բժշկության մեջ ապահովագրության կոնցեպցիային համապատասխան՝ ֆինանսավորումն իրականացվում է մի քանի աղբյուրներից՝ բյուջեների միջոցներ, բժշկական ապահովագրության միջոցներ և այլ, օրենքով չարգելված մուտքեր: Ըստ էության, եթե խոսենք բժշկական ապահովագրության նախատեսվածության մասին, պետք է նշել այն փաստը, որ 20-րդ դարի 80-ական թվականներին ըստ մնացորդային սկզբունքի ֆինանսավորվող առողջապահությունը սկսեց դրսևորել ճգնաժամի բազմաթիվ նշաններ: Դա հիմք ծառայեց առողջապատության մի ամբողջ ուղղության առաջացմանը՝ ռացիոնալացում, երբ անհրաժեշտ էր ապահովել առավելագույն արդյունք բժշկությանը հատկացվող նվազագույն միջոցներով: Այնուհանդերձ, մեր կարծիքով, այդպիսի միջոցները թեև արդարացված են ներկայումս, սակայն դրանք նվազեցնում են բժշկական օգնության ստացման իրավունքի իրականացման հնարավորությունները:

Այդպիսով, բժշկական օգնության ստացման իրավունքը կյանքի իրավունքի ապահովման մասնավոր գործոն է: Ընդ որում, պացիենտի կյանքի իրավունքի ապահովման իրավաբանական երաշխիքներըն արտահայտվում են միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներում, ազգային օրենսդրությամբ առողջության պահպանման մասին: Հիվանդների մոտ դիտարկվող իրավունքի ապահովման երաշխիքները կայանում են նաև առողջապահության ոլորտի բժշկական աշխատողների, պաշտոնեական անձանց համապատասխան պարտականությունների առկայության մեջ: Ներկայումս գոյություն ունեն բազմաթիվ օրինակներ այն բանի, որ բժիշկները, իսկապես, նպաստում են մարդու կյանքի պահպանմանը: Ռեանիմատոլոգիան որպես գիտություն, զբաղվելով մարդու կյանքի և մահվան վիճակների սահմանի խնդիրների հետ, գենայինինժեներիան, կլոնավորումը՝ ահա բժշկության այն ուղղությունների ոչ ամբողջական ցանկը, որոնցով կարելի է դատել հիվանդի կյանքի իրավունքի ապահովման մասին: Բժշկության և իրավագիտության զարգացման ներկա փուլում իրավական կարգավորման խնդիրը հանդիսանում է մարդու կյանքի իրավունքի առավելագույնս ամբողջական և իրատեսական ապահովմանը ձգտելն այն պայմանների ստեղծման միջոցով, որոնք ուղղված են առողջության

սլախանմանը և բժշկական օգնությանը:

Գրականություն

1. Всеобщая декларация прав человека)) Международная защита прав и свобод человека.М., Юрид. лит. 1990. с. 17.
2. Квачарзе М.О. Вопросы защиты прав человека в современной медицине (международно-правовые и внутригосударственно-правовые аспекты) Автореф. дисс... д.-ра юрид. наук. Тбилиси,1999, с.44.
3. Комзалов А. И. Гражданско-правовое регулирование и защита прав участников медицинских отношений: дис... канд. юрид. наук.М., 1999, с. 171.
4. Философия и биомедицинская этика. Учебное пособие. СПб. 1998. с. 10.
5. Жалинская-Рерихт А.А. Актуальные проблемы французского медицинского права (Реферативный обзор))) Социальные и гуманитарные науки. Серия 4. Государство и право. 2001, с. 154.
6. Дюжиков С.А. Конституционное обеспечение права на охрану здоровья в РФ: Автореф.дис... канд. юрид. наук. Ростов-на-Дону, 2001, с. 9.
7. Малеина М.Н. Человек и медицина в современном мире. Учебное и практическое пособие.М., Изд.-во БЕК, 1995, с. 42.

Янина Яковлевна Мариносян - МЕДИЦИНСКАЯ ПОМОЩЬ КАК СРЕДСТВО ОБЕСПЕЧЕНИЯ ПРАВА НА ЖИЗНЬ. Автор подробно рассматривает содержательные особенности медицинской помощи как средства обеспечения права на жизнь. По мнению автора, закрепленный в Конституции РА термин «право на сохранение здоровья» более полно выражает смысл и содержание права на здоровье. Содержание данной конституционной нормы конкретизировано в нормах действующего законодательства.

Ключевые слова. медицинская помощь, право на охрану здоровья, конституция, правовое регулирование права на жизнь.

Yanina Yakov Marinosyan - MEDICAL CARE AS A MEANS OF ENSURING THE RIGHT TO LIFE. The author thoroughly discusses the substantive features of medical care as a means of ensuring the right to life. In the opinion of the author, the term “right to health maintenance” fixed in the RA Constitution expresses the meaning and content of the right to health more fully. The content of this constitutional provision has been specified in the norms of the current legislation.

Key words. Medical care, right to health care, constitution, legal regulation of right to life.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Յանինա Մարինոյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ, ԵՀՀ
Ընդունված է տպագրության՝ 21.08.23

Ամփոփագիր. Հեղինակը գտնում է, որ առողջապահության ոլորտում իրավական կարգավորման մեխանիզմի ընդհանուր բնութագիրը կայանում է նրանում, որ առողջապահությունը՝ որպես հասարակական հարաբերությունների համալիր ինստիտուտ, կանխորոշում է իրավաբանական միջոցների և գործընթացների բարձր համակարգի միջոցով, որի շնորհիվ լուծվում են բուժփմնարկի և պացիենտի հարաբերությունները:

Հիմնաբառեր. առողջապահություն, իրավական կարգավորում, իրավակարգավորման մեխանիզմ, արդիական հիմնախնդիրներ, բուժփմնարկ, պացիենտ, հասարակական հարաբերություններ, իրավաբանական միջոցներ և գործընթացներ:

Հասարակական հարաբերությունների համակարգում կարևոր է իրավական կարգավորումը: Նեղ իմաստով որպես իրավական կարգավորում կարելի է հասկանալ իրավունքի նորմերի (իրավական նորմերի ամբողջության), այլ հատուկ իրավաբանական միջոցների ազդեցությունը մարդկանց վարքագծի և հասարակական հարաբերությունների վրա՝ դրանց կանոնավորման և առաջընթացային զարգացման նպատակով: Իրավունքի տեսությունից [1] հայտնի է, որ իրավական կարգավորումը տարածվում է հասարակական կյանքի այն ոլորտների վրա՝

- որոնցում իրենց արտացոլումն են գտնում ինչպես հասարակության անդամների անհատական շահերը, այնպես էլ՝ համընդհանուր սոցիալական,
- որոնց հիմքում ընկած է որոշակի կանոններ կատարելը, այդ կանոնների պարտադիր լինելը ընդունելը,
- որոնք պահանջում են կանոնների պահպանում, որոնց պարտադիր լինելն ամրագրված է բավականին գործուն ուժով:

Բժշկությունն իրենից ներկայացնում է հասարակական հարաբերությունների զանազանություն, ընդ որում, այն, ինչպես ենթադրվում է, համապատասխանում է բոլոր վերոնշյալ պահանջներին: Դա իրավունք է տալիս ամբողջությամբ հիմնավորված վերագրել բժշկությունը և առողջապահությունը հասարակական հարաբերությունների այն ոլորտին, որի վրա տարածվում է իրավական կարգավորումը:

Առողջության պահպանության ոլորտում զարգացող հարաբերությունների

յուրահատուկ բնույթը հաշվի առնելով՝ նպատակահարմար է համարվում դրանք մտցնել արժեքների փոխանակման հասարակական հարաբերությունները կազմող խմբի մեջ: Ընդ որում այստեղ, որպես արժեքներ, ներկայացված են առաջնայինները՝ մարդու կյանքը և առողջությունը: Մեր կարծիքով իրավական կարգավորման դերի մեծացումը հանդիսանում է առողջապահության մեջ բարեփոխումների իրականացման անհրաժեշտ պայմաններից մեկը:

Իրավունքի և բժշկության փոխազդեցության առանձնահատկությունների որակյալ բացահայտման համար անհրաժեշտ է ավելի մանրակրկտորեն անդրադառնալ առողջապահության մեջ իրավական կարգավորման մեխանիզմի խնդիրներին [2]: Ներկայումս բավականին բարդ է քաղաքացիներին բժշկական օգնություն ցուցաբերելու հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորումը: Այսպիսի իրավիճակի առավել էական պատճառներից են այն խնդիրները, որոնք առաջանում են իրավական կարգավորման մեխանիզմի վերլուծության և օգտագործման հետ: Նպատակահարմար է ներկայացնել հայտնի գիտնական Ս.Ս. Ալեքսենի կողմից տրված հետևյալ սահմանումը, որը բնութագրում է իրավունքի տեսության տվյալ բաժինը. իրավական կարգավորման մեխանիզմը իրավական միջոցների մեկ ամբողջություն կազմող համակարգ է, որի օգնությամբ ապահովվում է արդյունավետ իրավական փոխազդեցությունը հասարակական հարաբերությունների վրա [3]: Սույն հետազոտության թեմայի առումով հատուկ շեշտ պետք է դնել իրավական միջոցների վերլուծության վրա:

Իրավունքի ընդհանուր տեսության տեսանկյունից իրավական կարգավորման մեխանիզմը բնութագրելիս կարևոր է նկարագրել հենց իրավական կարգավորման միջոցները և մեթոդները և նրա մեխանիզմի տարրերը: Բժշկական գործունեությունը, ինչպես նշվել է, համապատասխանում է իրավական հարաբերությունների ոլորտին անհրաժեշտ բոլոր չափանիշներին, որը ենթարկվում է իրավական կարգավորման: Իրավական կարգավորումն ինքնին հնարավոր է նրա մեխանիզմի աշխատեցման հաշվին: Այդ պատճառով պահանջված են նշված հասարակական հարաբերությունների մեխանիզմի բոլոր բաղկացուցիչ մասերի վերաբերյալ գիտելիքները: Նպատակահարմար է սահմանել, որ բժշկության ոլորտում իրավական կարգավորման մեխանիզմն իրավական միջոցների ամբողջություն է, որոնց օգնությամբ իրականացվում է բժշկական օգնության ցուցաբերման ոլորտում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը: Իրավական կարգավորման մեխանիզմը հանդիսանում է անհրաժեշտ պայման մարդու այն իրավունքների իրականացման ժամանակ, որոնք տրամադրված են նրան նորմատիվ իրավական ակտերի դրույթներով:

Թե ինչ է կոնկրետ մտնում իրավական միջոցների ցանկի մեջ, կնշվի հաջորդիվ՝ իրավական կարգավորման մեխանիզմի տարրերը վերլուծելիս: Բժշկական գործունեության ոլորտում իրավական կարգավորման միջոցները հանգեցվում

են հայտնի եռյակին՝ պարտավորեցում, արգելք և թույլտվություն: Դրանցից յուրաքանչյուրը սահմանում է այս կամ այն երևույթի այս կամ այն նշանը քաղաքացիների առողջության պահպանման ոլորտում: Օրինակ, բժշկության մեջ պարտավորեցման միջոցը կայանում է առողջապահության ոլորտում առաջացող իրավահարաբերությունների սուբյեկտների վարքի վրա ազդելու մեջ որոշակի դրական գործողությունների կատարման պարտավորության հանձնարարման ճանապարհով: Բժշկի՝ որպես իրավական հարաբերությունների սուբյեկտի համար պարտավորեցումը կարող է արտահայտվել բժշկական օգնություն ցուցաբերելու պարտականությամբ ամեն տեղ, որտեղ դրա կարիքը կլինի, այլ ոչ միայն անմիջականորեն աշխատավայրում: Ավելի մասնավոր դեպք է հիվանդի պարտադիր հոսպիտալացման անհրաժեշտությունը «սուր որովայն» ախտորոշման կասկածի պարագայում, այսինքն՝ որովայնի խոռոչում հնարավոր բորբոքային գործընթացի դեպքում: Տվյալ երկու օրինակների տարբերակող առանձնահատկությունն այդպիսի պարտավորություններն իրավաբանորեն ամրագրելու տարբերակն է: Եթե առաջին դեպքում խոսքը գնում է օրենսդրական մակարդակում ամրագրման մասին, ապա երկրորդ դեպքում՝ ենթաօրենսդրական գերատեսչական փաստաթղթի մակարդակում, որը սահմանում է ներքին օրգանների վիրաբուժական հիվանդությունների ախտորոշման կարգը: Բնութագրելով պարտավորեցումը՝ որպես բժշկական գործունեության ոլորտում իրավահարաբերությունների մասնակիցների վարքի վրա ներազդման միջոցներ, պետք է նշել իրավաբանական՝ առողջապահության կառավարման օրգանի օրինակը: Այդպես, ՀՀ Առողջապահության նախարարությունը պարտավոր է ՀՀ Արդարադատության նախարարությունում գրանցել այն գերատեսչական նորմատիվ իրավական փաստաթղթերը, որոնք վերաբերում են քաղաքացիների իրավունքներին և օրինական շահերին:

Արգելանքը, որպես իրավական կարգավորման միջոց, նույնպես բավականին հաճախ է կիրառվում բժշկական պրակտիկայում: Օրինակ, վերջերս ակտիվորեն քննարկվող էվթանազիային խնդիրը ազգային օրենսդրության մեջ որոշված է արգելանքի միջոցով. Բուժական անձնակազմին արգելվում է էվթանազիայի իրականացումը՝ որևէ գործողությամբ կամ միջոցներով իր մահն արագացնելու հիվանդի խնդրանքի բավարարումը, այդ թվում կյանքի արհեստական միջոցների դադարեցմամբ: Անշուշտ, դժվարագույն բարոյաէթիկական, սոցիալական և բժշկական խնդրի լուծման այսպիսի իրավական տարբերակը չի վկայում տվյալ հարցի վերջնական հանման մասին օրակարգից, սակայն այժմ մեր հասարակության զարգացման այսօրվա մակարդակի, իրավական և ընդհանուր մշակույթի մակարդակի համար արգելանքի կիրառման այդ տարբերակը բավականին հիմնավորված է համարվում:

Վերջին տասնամյակի ընթացքում մեր երկրում տեղի ունեցող ժողովրդավարական վերափոխումների դարաշրջանում առանձնակի արդիականություն է ձեռք բերում առողջապահության ոլորտում թույլտվության միջոցը: Խոս-

քը գնում է իրավական հնարավորության առկայության մասին, որի օգտագործումը կախված է բացառապես իրավահարաբերությունների սուբյեկտի սեփական հայեցողությունից; Ըստ էության, խոսքը գնում է այս կամ այն գործողությունների կատարման ընտրության ազատության մասին: Օրինակ, բուժաշխատողը մասնավոր բժշկական պրակտիկայի կամ մասնավոր սեփականության հիմքի վրա բուժական-պրոֆիլակտիկ հաստատության կազմակերպման իրավունք ունի: Կամ ինչ վերաբերում է հիվանդին, նա բժշկական օբնության դիմելու անհրաժեշտության դեպքում իրավունք ունի ընտրելու բուժական հաստատությունը՝ ըստ բնակության վայրի (պարտադիր բժշկական ապահովագրության պոլիսին համապատասխան) կամ օգտվել այլ հաստատության վճարովի բժշկական ծառայություններից, կամ դիմել մասնավոր բուժական հաստատություն:

Պետք է նշել, որ պարտավորեցումները, արգելքները և թույլտվությունները [4], կապված իրավունքի տեսության մեջ ունեցած իրենց առանձնահատուկ դերի հետ, հանդիսանում են ոչ միայն առաջնային, այլև հիմնական, հիմնարար իրավական միջոցներ: Այս տեսանկյունից բոլոր այլ իրավական միջոցները (այդ թվում իրավաբանական պատասխանատվության, պրոցեսուալ գործունեության ոլորտում և այլն) իրենցից ներկայացնում են իրավաբանական կարգավորման միջոցների հայտնի համադրումներ, որոնք պատկանում են նշված պարտավորեցումներին, արգելքներին և թույլտվություններին: Ընդհանուր առմամբ բժշկական գործունեության ոլորտում ներկայումս իրականացվում են իրավական կարգավորման բոլոր ավանդական միջոցները: Հատկապես պետք է նշել, որ միայն բոլոր դրանց հավասար կիրառման դեպքում բժշկության իրավական կարգավորումը կկարողանա զարգանալ պրոգրեսիվ ինչպես բժշկական օգնության ցուցաբերման որակի, այնպես էլ՝ բժիշկների և հիվանդների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության տեսանկյունից:

Իրավական կարգավորման մեթոդները, ավանդապես հայտնի իրավունքի տեսությունները (իմպերատիվ և դիսպոզիտիվ) ունեն բժշկական գործունեության մեջ կիրառման պրակտիկա: Մեր երկրի պատմության խորհրդային ժամանակաշրջանը հարուստ է առողջապահության մեջ իմպերատիվ մեթոդի կիրառման օրինակներով: Այսպիսի դրույթի հիմքում գտնվում էր առողջապահության տարբեր հաստատությունների ուղղահայաց հիերարխիկ ենթակայությունը: Խոսքը գնում է ամբողջ բժշկության և առողջապահության կոնկրետ ուղղությունների կառավարման վարչահրամայական մեթոդի մասին: Միևնույն ժամանակ դիսպոզիտիվ մեթոդն ավելի տարածված է այժմյան Հայաստանում, որտեղ բժշկական գործունեության ոլորտ ավելի լայնորեն ներթափանցում են մասնավոր-իրավական հիմքերը: Այդպիսի մեթոդը բնութագրվում է ապակենտրոնացված կարգավորմամբ, որի դեպքում իրավահարաբերությունների մասնակիցները հանդիսանում են

որպես հավասար կողմեր: Մենք հակված չենք միանշանակ բացասական ընկալելու առողջապահության մեջ իմպերատիվ մեթոդը և բացարձակ դրական՝ դիսպոզիտիվը: Դեմոկրատացման, որը անդրադարձել է նաև բժշկական գործունեությանը, բոլոր դրական կողմերի հետ մեկտեղ 20-րդ դարի 90-ականների սկզբին մասամբ կորցվել էր առողջապահության ոլորտի կառավարելիությունը, որը չէր կարող բացասական ազդեցությունն ունենալ ինչպես ինքնին բժշկության վրա, այնպես էլ հիվանդների և բժիշկների սոցիալ-իրավական պաշտպանվածության վրա: Այս առումով այն միջոցները, որոնք այսօր ընդունվում են ՀՀ կառավարության, Առողջապահության նախարարության մակարդակում՝ կապված բժշկության ողջ համակարգին ավելի շատ կարգավորվածություն տալու հետ, պետք է միայն ողջունել և ամեն կերպ աջակցել իրավական միջոցների օգնությամբ:

Ուսումնասիրելով առողջապահական գործունեության իրավական կարգավորման մեխանիզմի տարրերը՝ հիմնավորված կարելի է նշել, որ այստեղ առավել մեծ նշանակություն ունեն՝

- իրավունքի նորմերը,
- իրավահարաբերությունները,
- իրավաբանական փաստերը,
- իրավունքի և պարտականությունների իրականացման ակտերը,
- իրավունքի կիրառման ակտերը:

Իրավական կարգավորման մեխանիզմի ընդհանուր բնութագիրը կայանում է նրանում, որ առողջապահությունը՝ որպես հասարակական հարաբերությունների համալիր ինստիտուտ, կանխորոշվում է իրավաբանական միջոցների և գործընթացների բարդ համակարգի միջոցով: Բացի արդեն նշված տարրերից՝ այստեղ պետք է նաև նշել նորմատիվ իրավական հիմքը (ՀՀ Սահմանադրություն, սոցիալական-տնտեսական վերափոխումների ժամանակահատվածում ընդունված ՀՀ ավելի քան տասն օրենքների ամբողջություն, ենթաօրենսդրական գերատեսչական ակտեր) և բժշկության մասնավոր իրավական հարցերի կոնկրետ մշակումներ (բժշկական օգնություն ցուցաբերելու պայմանագիր, տեղեկացված համաձայնության ձևակերպման գործընթաց և այլն): Բժշկության իրավական կարգավորման ընդհանուր միտումը կայանում է նրանում, որ բժշկական օգնության ցուցաբերման ավելի ու ավելի մեծ քանակությամբ մասնավոր հարցեր չեն թողնվում բժշկի խղճին կամ բարոյաէթիկական նորմատիվներին [5], այլ կարգավորվում են իրավունքի միջոցով: Այս պարագայում ոչ վերջին տեղում է իրավապաշտպան շարժումների դերը: Չնայած, ընդհանուր առմամբ, բոլոր նշված ասպեկտները փոխկապակցված են, իրավունքների բազմակողմանի իրավաբանական պաշտպանությունը կարող է բերել պացիենտի իրավունքների իրական և երկարաժամկետ պաշտպանությանը:

Կարևոր նշանակություն ունի ինչպես բժիշկների, այնպես էլ հիվանդների

իրավական մշակույթի մակարդակի բարձրացումը, ինչը հանդիսանում է բժշկության ոլորտում օրինականության գործոններից մեկը:

Ընդհանուր առմամբ պետք է ենթադրել, որ առողջապահության ոլորտում իրավական կարգավորման մեխանիզմը թույլ է տալիս ամբողջական ընկալել բոլոր իրավական միջոցները, որոնք գործում են բժշկական գործունեության իրավաբանական կարգորոշման մեջ: Սա հնարավորություն է ընձեռում սահմանելու ինչպես բժշկության իրավական կարգավորման ընդհանուր կոնցեպցիան, այնպես էլ իրավական կարգավորման մեխանիզմի յուրաքանչյուր օղակի կոնկրետ դերը և նշանակությունը:

Գրականություն

1. Сорокин В.Д. Правовое регулирование: предмет, метод, процесс. СПб., 2003; Избранные труды. СПб., 2005; Абрамова А.А. Эффективность механизма. Красноярск, 2006.
2. Актуальные вопросы правового регулирования в области здравоохранения. Выпуск 27)) Государственная дума федерального Собрания РФ. 2001, с
3. Алексеев С.С., Общая теория права в 2-х томах.Том1., «Юрид.лит.» 1982, с.9.
4. Алексеев С.С., Восхождение к праву. Поиски и решение. М., Изд. Норма. 2001, с.268:
5. Стеценко С.Г. Право и медицина:проблемы соотношение. М., 2002, с. 45-46.

Янина Мариносян - ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА МЕХАНИЗМА ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ В СФЕРЕ ЗДРАВООХРАНЕНИЯ И АКТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ. Автор считает, что общая характеристика механизма правового регулирования в сфере здравоохранения состоит в том, что здравоохранение как сложный институт общественных отношений предопределяется высокой системой правовых средств и процессов, благодаря которым отношения между лечебное учреждение и больной разрешены.

Ключевые слова. *здравоохранение, правовое регулирование, механизм регулирования, актуальные вопросы, лечебное учреждение (учреждение), пациент, общественные отношения, правовые средства и процессы.*

Yanina Marinosyan – GENERAL CHARACTERISTICS OF THE LEGAL REGULATION MECHANISM IN HEALTH CARE AND CURRENT ISSUES. The author believes that the general characteristic of the mechanism of legal regulation in the health care sector is that health care, as a complex institution of public relations, is predetermined through a high system of legal means and processes, thanks to which the relations between the medical institution and the patient are resolved.

Key words. *Health care, legal regulation, regulatory mechanism, current issues, medical institution (facility), patient, public relations, legal means and processes*



ԵՐԵՎԱՆԻ «ՀԱՅԲՈՍԱԿ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
YEREVAN “HAYBUSAK” UNIVERSITY SCIENTIFIC JOURNAL

ԵՀՀ ԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Հատոր 8, 2023

YHU SCIENTIFIC JOURNAL

Vol 8, 2023

EDIT PRINT

43 D. Malyan str, Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



ԷԴԻՑ ՊՐԻՆՏ

Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am